

Քրիստոսի Ամբողջումը



ԽԱՐԱԿԱՆ
ԲԱՆԻԲԷ

ԿԵՂ

Պ ԶԱՅԱՍՏԱՆ Պ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ • ԵՐԵՎԱՆ •

ԳՄԴ 8437-44

U 259

Խմբագիր՝ Դավիթ Սարգսյան

Սարգսյան Ս.Դ.

U 259 Խաչված քաղաքը: Վեպ / Սկրտիչ Սարգսյան.-Եր.:

Հայաստան, 1996, 188 էջ:

«Խաչված քաղաքը» վեպում պատմվում է Չավախք լեռնաշխարհի Ախալքալաք քաղաքի հայ բնակիչների մասին, ովքեր 1918թ. մնացին ավերված և հայաթափված քաղաքում և ելան անհավասար ու անհեռանկար պայքարի Վեհիք փաշայի ավարառու և հայաջինջ նկրտումներ ունեցող ավազակների դեմ: Նրանք հերոսության արտառոց օրինակներ ցույց տվին: Հեղինակը ճանաչել և անչամբ ծանոթ է եղել վերապրած իր հերոսներից մի քանիսին: Թեման պարտադրում է նման սրեղծագործություններին բնորոշ արկածայնություն, որը նաև լրացնում է վավերականության պակասը և ավելի ուշագրավ ու հետաքրքրական դարձնում վիպական հյուսվածքը:

U $\frac{4702010201(01)}{701(01)-96}$ 96

ԳՄԴ 843 7-44

ISBN 5-540-01631-9

© «Հայաստան» հրատ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Չավախքի և Մեսիտեթիայի (Ախալքալաք, Ախալցխա) բնակչության 1918-1920թթ. մղած պայքարը բուրքական բանակի և նրան ընկերացած թուրք խուժանի դեմ, մեր ժողովրդի պարմության ամենաողբերգական և ամենահերոսական էջերից է: Չավախքի հայությունը, որ այսօր կազմում է այդ տարածքում ապրող ազգաբնակչության 95 %-ը, դեռևս 1917թ. վերջերից ելավ իր ինչքին ու արյանը րենչացող հարեւանների՝ թուրք խուժանի դեմ, որը օգրագործելով երկրի խառնակ ու անրեր վիճակը (ռուսական գահի փլուզումը և բանակի հեռանալը Անդրկովկասից), ցանկանում էր պղտոր ջրից որսալ ոսկե ձկներ, այսինքն, թալանել, կողոպտել իր քրիստոնյա հարեւաններին՝ չխորշելով նաև եղեռնը վերոհիշյալ գավառներում շարունակելու իր հանցավոր ցանկությունից: Պերք է նշել, որ Ախալցխայի, մասամբ Ախալքալաքի, Չղրի, Լոյնիսկ Աղբաբայի (այժմ Լեւախայի շրջան) գավառների բուրքական խուժանը ջարդեց իր արամները՝ դիպչելով հայերի և վրացիների դիմադրությանը:

1918թ. սկզբին, բուրքական բանակը Վեհիբ փաշայի հրամանատարությամբ սկսեց իր ռազմական գործողությունները Չավախք-Մեսիտեթիայի դեմ: Ախալցխայի ինքնապաշտպանությունը երկու ժողովուրդների՝ հայերի ու վրացիների եղբայրության (առանց ուռուցիկ կարգախոսի), նրանց հերոսականության և մարտավարական արվեստի փայլուն ապոթեոզի վերածվեց: Ախալցխայում թուրքերի փառաբանված բանակը և արյունիզակ խուժանը խայրառակ պարություն կրեցին: Գավառի քրիստոնյա տերերը թույլ չլրվին գիշարիչներին ուրևակոխ անելու իրենց հողը և ազգային արժանապարտությունը: Ախալցխան չգաղթեց, չրեղահանվեց: Այլ կերպ ընթացավ հայերի պաշտպանությունը: Չավախքում, որի բնակչությունը բռնահանվեց իր հայրենիքից: Չավախքը չունեցավ կազմակերպող ուժեղ չեռք, կենտրոն, որը միավորեր գավառի զենքի ընդունակ, հայրենասեր ուժերին. չունեք զենք (ի դեպ, Ախալցխայի ռուսական կայսզորը քաղաքից հեռանալուց առաջ իր զենքն ու ռազմական հանդերձանքը թողել էր ախալցխացիներին, մի բան, որ չարվեց Ախալքալաքի կայսզորի կողմից): Չունեք այնպիսի փորձված ու քաջարի ղեկավար, ինչպիսին էր Չորի Չորյանը՝ Ախալցխայի պաշտպանության ռզին ու հերոսը: Ախալքալաքը ընկավ: Չավախքի անկման (ոչ թե

պաշտպանության) մեջ քիչ դեր չունեցան պաշտոնական Վրաստանի դիվանագիտական նենգ խաղերն ու խաբեությունները, այլապես դժվար է հավատալ, որ Սաթխայի, Գունբուրդոյի, Դամալայի, Վաչխանի, Կարծախի և այլ ճակատամարտերում հերոսացող Ջավախքը կարող էր այդքան հեշտորեն մարտիկ Վեհիբ փաշայի և թուրք խուժանի կողմից: Ջավախքի ութսուն հազարանոց հայ բնակչությունը գաղթի ճանապարհներին ու գաղթավայրերում կորցրեց իր 40.000 զավակներին: Տուն դարձավ կեւր: Այսպես էդավ բանը:

«Խաչված քաղաքը» վեպը պատմում է այն մի բուռ հայերի մասին, որոնք մնացին ավերված ու պարտված քաղաքում և էլան անհավասար ու անհեռանկար պայքարի թուրքական զնդի դեմ: Նրանք հերոսության ու քաջության արտառոց օրինակներ ցույց տվին: Կանոնավոր բանակի դեմ մղվող մարտերից փրկվեցին զլիւհից ու կյանքից չեռք քաշած մի բուռ դոնկիխոտներ, որոնց մեծագույն հերոսականության շնորհիվ, այնուամենայնիվ, ինչ-որ չափով դանդաղում կամ կանգ էր առնում հայեր աղացող հողմաղացների աշխարանքը, և որոնցից ընդամենը 6-7 հոգու հաջողվեց փրկվել:

Հեղինակը ճանաչում էր անչամք ծանոթ է իր վերապրած հերոսներին, որոնք ապրել էին մինչև 40-ական թվականների վերջերը: Վեպը, մասամբ, ծնվել է այն զրույցներից, որոնք լսել է հեղինակը հերոսներից՝ Թոփալ Արսենից (Տոնականյան), Չիրուրաջոնց Էխրիարից, Քոթոթ Պողոսից (Չոլախյան), քառահար Քոսայից (ազգանունը անհայտ), Գեորգ Մադոյանից (գիրնական), նաև միակ հերոսուհուց՝ Չեքեթից և ուրիշներից: Մեզ համար օգտակար և շահեկան եղավ Ա Մանոյանի «Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918-ի ինքնապաշտպանությունը» աշխատությունը: Թեման պարտադրում է նման արեղծագործություններին բնորոշ արկածայնություն: Խոսարովանենք, վեպը վավերական չէ, թեև գեղարվեստական հյուսվածքում երթելեկող հերոսների զգալի մասը իրական կերպարներ են: Եվ թող այս գործը մի համեստ նվեր լինի այն անանուն հերոսների հիշարակին, որոնք զանց առնելով անհնարը, հնարավոր դարձրին՝ մեռնելով հաղթելու, գոյատևելու գաղտնիքը:

Հեղինակ

Չ էին հիշում, թե ով Եղիսաբեթ Սիրունյանին կնքեց Ձեբեթ մականունով, որը կպավ ու մնաց գավառական քաղաքի այդ գեղեցկուհուն, դադարելով մականուն լինելուց, դարձավ տիրուհու իսկական անունը: Ինքն էլ ընդունեց, հաշտվեց իր նոր անվանը: Գեղեցկուհի չէր բառի իսկական առումով, սակայն ավելին էր, քան գեղեցկուհին, քանզի նրան տեսնողը իր կամքից անկախ հիպնոսված ու վերացած քայլում էր նրա հետեւից, մինչեւ փոքրիկ քաղաքի նեղ նրբանցքում նրան աչքից կորցնելը: Երբ սովորելու գնաց Ռուսաստան, հետո խարկով քաղաքի օրիորդաց բարձրագույն լեզվագրական գիմնազիան, դեռ ողջ էր մայրը եւ միակ աղջկան օգնում էր, որքան թույլ էր տալիս այրի կնոջ կիսատված հարստությունը: Իսկ երբ Եղիսաբեթը ստացավ մոր ծանր վիճակը զուժող հեռագիրը, թողեց գիմնազիան ու վերադարձավ Ջավախքի իրենց բույնը, ուր ծնվել էր, մեծացել, թեւեր առել ու թռել Ռուսաստան: Համաքաղաքացիները զարմանքով տեսան, որ նրան ուղեկցում է Սերգեյ անունով գեղեցկադեմ ու թիկնեղ մի երիտասարդ: Սորաքրոջ առաջին հարցը վերաբերում էր տղային.

- Աղջի, էդ ո՞ւմ ես բերել, չլինի՞ մարդդ է ...

- Չէ, դեռ ամուսինս չէ, -պատասխանեց մորաքրոջը, -բայց կդառնա ...

Սորաքույրը ամոթից խաչակնքեց: Խոսակցությանը ներկա էին փոքրիկ քաղաքի պատվասեր ու մեծախոս կանայք: Սորաքույրը չդիմացավ.

- Աղջի՛, էդ ի՞նչ օրենք է, որ սկզբից մարդ ու կնիկ պիտի դառնան, հետո պսակվեն ... Ախր Աստված չի ների ...

- Սորաքույր, -փորձեց ժպտալ Եղիսաբեթը, բայց հիշելով, որ մայրը ծանր է, շրթունքները սեղմեց, - Աստված նման բաների չի խառնվում, իսկի նրա վեջն էլ չէ, թե պսակված կդառնան ամուսիններ, թե կամուսնանան՝ հետո կպսակվեն ... Մի վախենա, մորաքույր, սիրելիս ...

Այնքան լավ խոսեց, այնպես սրտանց «սիրելիս» ասաց, համբուրեց մորաքրոջ թորշոմած ձեռքը, որ խեղճ պառավը մտքում մտմտաց. «Կերեւա ամեն ինչ Աստծով է, հիմա աստված երեւի հաշտվել է անառա ...»

եւ լեզուն կծեց. «Չէ, երեւի էս աղջկա սիրունությունը Աստծո կողմից է պաշտպանվում: Սատկածը ոնց որ Մարիամ աստվածուհին լինի ...»:

- Աղջիկ ջան, մենակ կուզեմ իմանալ, էդ Սերգեյը հայ քրիստոնյա՞ է ...

- Չէ մորաքույր, Սերգեյը բուլղար քրիստոնյա է ...

- Իրար ծոց մտնելը արդա՞ր է, ախր ես էդ էլ կուզեմ իմանալ ...

-Է՛, մորաքույր, -կարծես մեղացավ եղիսաբեթը, -արի դատարան չսարքենք ու մեղավորներ չորոնենք ... Սիրո մեջ արդար ու մեղավոր չկա, բոլորն էլ արդար են, իմացա՞ր ...

- Բոզե՞րն էլ, - չդիմացավ պառավը:

- Նրանք էլ,- անվարան պատասխանեց եղիսաբեթը, առանց իրեն հաշիվ տալու, որ օր չանցած նրա ասածները, մեկը՝ տասը դարձած պիտի շրջագայեն տնետուն, տնօրհների ելած տերտերի պես եւ փոքրիկ քաղաքը արդեն նրա համար պատրաստել է «Անառակ» եւ «Ձեբեթ» մականունները, որոնք ազատամիտ աղջկան պիտի ուղեկցեն կյանքի ամբողջ ընթացքում:

Քաղաքը հիպնոսվեց Ձեբեթով, հմայվեց Ձեբեթով, գերվեց Ձեբեթով եւ ատեց Ձեբեթին: Կանանց ատելության մեջ խլրտում էր խանդի որդը, քանգի տղամարդկանց աչքերը լուսավորվում էին ոչ միայն նրան տեսնելիս, այլ նույնիսկ անունը լսելիս: Տղամարդկանց ատելությունը ծնվում էր անհույս ցանկությունից: Ծիշտն ասած, դա ատելություն չէր, այլ կնոջ անհասանելիության մորմոքից ծնված չարախոսություն: «Աղվեսը մսին չհասավ, ասաց հոտած է»:

Ձեբեթը սակայն ապրում էր չլսելով կամ չլսելու տալով իր եւ Սերգեյի շուրջ հյուսվող բամբասանքները: Նրանք ամեն օր առավոտից-երեկո գերեզմանոցում հարդարում էին Ձեբեթի մոր գերեզմանը: Հետո ասացին, որ նրանց տեսնողներ են եղել, որ Ձեբեթն ու Սերգեյը աշխատանքից հետո գնում են Տավշասթափա սարի ետեւ, Թափարվան գետի աչքից հեռու մի անկյունում լողանում, մաքրվում եւ վերադառնում տուն: Իսկ ձկնորս Առուստամը՝ չդիմանալով գայթակղությանը, ցանկանալով տեսնել Ձեբեթի բոլոր-հրապույրները, պահվեց նրանց լողարանի մեծ քարի ետեւում եւ արեւմուտքի բոսորագույն շողերի մեջ տեսավ Ձեբեթին նախատատի՝ Եվայի նման մերկ, ու նրա վրա իջավ մի այրող ջերմություն, աչքերը կորցրին ստվերը տեսնելու իրենց շնորհքը, եւ լույս, միայն կուրացնող լույս էին տեսնում մերկ կնոջ տեսքով ու բարեմասնություններով, որ բոցլխտում էր վերջալույսի կրակի շառափի մեջ: Առուստամը հարբել էր: Նման հրաշքի հանդիպած չկար, եւ զգուշությունը կորցրած մատնեց իր տեղը: Հետեւանքն այն եղավ, որ ինչ-որ մեկի երկաթե աքցանի նման ամուր եւ կառչուն մատները նրան պոկեցին իր թաքստոցից եւ հաջորդ վայրկյանին նա իրեն զգաց ոչ բարձրադիր ավից գետի մեջ թռչելիս: Խեղդվելուց փրկեց հենց նույն գորավոր ձեռքը, որ նրան հանեց կատաղի սահանքների միջից եւ ավի կանաչին պառկեցնելով, աշխատում էր նրանից դատարկել ջրի ահագին քանակությունը, որ կուլ էր տվել: Բացեց աչքերը, երբ արդեն երկնային տերը ցանկացավ, որ նա տեսնի իր կյանքի ամենալուսավոր հրաշքը: Փորին չոքել էր մերկ աստվածուհի՞ն,

մեղա քեզ տեր, մեղա՛, Աստծո ուղարկած փորձող սատանան եւ սեղմում էր ստամոքսը, որ դատարկեր ջրից: Աստվածուհու խենթացնող ստիճաններից Առուստամի կրծքին էին կաթում ջրի հուլունքները: Հետո աչքերն ընկան մարմնի այն մասերին, որ արգելված է տեսնել օտարներին, ինչպես ռազմական գաղտնիքը: Եվ կնոջ պատվի եւ առաքինության անձեռնմխելի սրբություններն են: Եվ աչքերն ու սիրտը ցավեցին. «Աստված, մեռնեն զորությանդ, որ ինձ լայեղ արիր իսկական կնոջ գաղտնիքները տեսնելուն: Հէ՛, չէ՛, սուտ է, գուցե սատանայի մատն է խառն էս գործում: Էսպիսի կին, որ ունեցած-չունեցածը անծանոթ մարդուն ցույց տա, Աստծո գործ չէ...»:

- Սերգեյ, նա ուշքի է եկել եւ աչքերով քիչ է մնում ուտի ինձ ... -լսեց կնոջ մեղմ ու նվազուն ձայնը: -Բարձրացրու, թող գնա, կարծում եմ արդեն վնասազերծված է: -Նրան բարձրացրին.- առանց հետ նայելու գնա, մյուս անգամ սրանով չես փրկվի:

Գնաց: Եվ աչքերի առաջ տանում էր մերկ Ձեբեթին: Ցանկանում էր չտեսնել հրաշք կնոջը, իսկ նա վազում էր իր առջեւից, երկար մազերը քամելով եւ փոքրիկ ու ձիգ ստիճաններից հուլունքներ էին կաթում Առուստամի վառվող դեմքին: Մարմնի ջերմությունից այրվում էին թաց շորերը: Հանկարծ հավատաց, որ տեսածը կին չէ, այլ՝ սատանա: Ուրեմն ինքը սատանափայ է դարձել: Հետո կարծես ոչ ինքը, այլ մեկ ուրիշը իր ձայնով գոռաց.

- Սատանա, չքացի՛ր, թե չէ կխաչակնքեմ, -բայց երեսին խաչ չէր հանում: Ուզում էր, որ մերկ սատանան վազեր իր առջեւից, գեղեցկացներ իր աչքերի աշխարհը, եփեր, եռացներ իր արյունը:

... Կինը Առուստամին գտավ դռան առջեւ ընկած: Թաց շորերով: Այրող ջերմությամբ: Ինչ-որ անհասկանալի բառեր մոլտալիս.

- Սա..նան մերկ է լինում, առանց կյանք չկա ...

Կինը տազնապահար ծեծեց ծնկները, թեւ ամուսնու խոսքերից ոչինչ չհասկացավ:

- Գիտեի, գիտեի, որ ամբողջ օրը ջրերի հետ գործ բռնողի վերջը ես է լինելու: Չարքերը ես հարիճիին ես ինչ օրն են գցել: Դիվահար է դարձել, տաքության մեջ չարքերի լեզուն է փորձում: Տեր Աստված, դու օգնիր սրան, չմեռնի, խելքը չթոցնի, իր լակոտ-լուկուտները անտեր, անհեր չմնան, տե՛ր Աստված:

- Կնիկ չէր, Մարիամ Աստվածածին էր, - պարզ ու հստակ արտասանեց Առուստամը:

- Ո՞վ, ո՞վ էր Մարիամ Աստվածածինը,- պարզության էր ձգտում կինը:

- Սատանան, ինձ մեր տուն բերեց ...

Կինը սրտի նվաղում ունեցավ. «Չարքերով լեցուն է տունը, ինքը ձեռքից գնացել է, հիմա հերթը ինձ ու ձագերուս կհասնի»: Հարեւանուհին հասավ, արագ ուշքի բերեց նրան ու կարգին նախատեց.

- Աղջի, ի՞նչ ես թաժա մեռելի մման ձեռքերդ դարսել դոչիդ ու պառկել: Մարդդ տաքության մեջ գառանցում է, դու էդ ի՞նչ բանի ես ...

Առուստամն անկողին ընկավ: Հիվանդ էր, բայց ավելի շուտ խելքը

բոցրած էր երեւում: Խոսում էր, ավելի շուտ բլբլացնում ինչ-որ կնոջ բարեմասնություններից, մարմնամասերի աստվածային գեղեցկություններից՝ «ես էնոր ծիծիկներն ուտեմ ...»: Ախ էր քաշում, հառաչում, իսկ երբ մի օր ոտքի կանգնեց, կնոջն արագորեն մերկացրեց, քաշեց անկողին եւ մինչեւ լույս իր տղամարդկային առնականությամբ կարծես կնոջից կամ ինչ-որ մեկից վրեժ էր լուծում, այնպես հալից զցեց նրան, որ սա հաջորդ օրը դժվարությամբ էր շարժվում տան մեջ, սակայն երազելով ամուսնու սիրային հերթական խենթությունը, որ չէր տեսել հարսանեկան առագաստից մինչեւ հիշարժան գիշերը:

- Աստված կա', կա', մեռնեմ իր զորությանը,- խոսում էր ինքնիրեն, - Աստված լսեց ձայնս եւ օգնեց, որ իմ դմբոն սիրի ինձ տղամարդու նման: Սա էլ իմ բախտից դարձավ զազան ...

Առուստամի այս արկածը անհայտ ճանապարհներով հասավ քաղաքի ականջին եւ դարձավ քաղաքի մեծագույն նորություններից մեկը: Մարդիկ սկսեցին հետաքրքրվել այն ամենով, ինչ վերաբերում էր Եղիսաբեթ-Ձեբեթին: Նրա շուկա մտնելուց, գերեզմանատուն այցելելուց մինչեւ սպիտակեղենի վրացքը. ամեն ինչ հետաքրքրում էր փոքրիկ քաղաքի մարդկանց: Շուտով քաղաքը մեծ, անսահման մեծ հետաքրքրություն ցուցաբերեց Եղիսաբեթի ամուսնու՝ Սերգեյի նկատմամբ. ո՞վ է նա, ինչու՞ է իրենց համաքաղաքացի գեղեցկուհի Եղիսաբեթի հետ: Ի՞նչ է՝ քաղաքս հայոց չուներ հարմար փեսացու, որ նա պետք է դրսից հրավիրվեր: Հետո քաղաքով մեկ սկսեց պատվել հերթական նորությունը: Սերգեյը հոգեկան հիվանդ է: Քաղաքի լեզվով՝ խելառ է: Տեսնողներ էրն եղել, որ երբ Ձեբեթի մոր գերեզմանին հաջողվել էր շիրմաքարը դնել, իսկ դա արել էր Սերգեյն իր ահռելի ուժով, գործը հաջողությամբ ավարտելուց հետո, Սերգեյը ոչ ավել, ոչ պակաս իր չկայացած զոքանչի շիրմաքարին չեչոտկա էր պարել: Խոսու՞մ էին, ճշմարտությունն ո՞վ կարող էր իմանալ: Ջոքանչը քարի տակից մատ էր թափ տվել խելառ փեսացուի վրա, իսկ Եղիսաբեթն ապտակել էր իր փեսացուին: Խոսու՞մ էին ...

Իսկ դպրոցի բնագիտության դասատու Օնիկյանը վարժապետների նեղ շրջանում կարողացել էր գիտականորեն բացատրել զեբեթյան էության իմաստը.

- Տեսե՛ք,-ասել էր Օնիկյանը, -Սերգեյը շփվել է Ձեբեթին եւ խելագարվել: Այդ թշվառ Առուստամը տեսել է Ձեբեթին, այն էլ նախամոր տեսքով եւ խելագարվել: Նախանցյալ.օրը այդ թշվառին տարել են Սուրամի հոգեբուժարանը: Քաղաքիս գլխին կանգնել է խենթանալու վտանգը: Հերթական զոհը միայն Աստծուն է հայտնի, թե ո՞վ է լինելու: Հա', մոռացա ձեզ գիտականորեն բացատրել այս ելույթի բուն պատճառը: Ենթադրում եմ, այո', այո', առաջժմ միայն ենթադրում եմ, որ Եղիսաբեթը հանդիսանում է հոգեկան հիվանդության բացիլակիր, գուցե ասեք, որ հոգեկան ախտը վարակիչ չէ, եւ դուք ճիշտ կլինեք: Պետք է ենթադրել, այո', այո', պետք է ենթադրել, որ կան հոգեկան հիվանդություններ, որ վարակիչ են, ինչպես Ձեբեթի դեպքում, այ-

սինքն, հաղորդակցվողը պարտավոր է ախտահանվել, այստեղ գուցե օգնի ինեկցիոն ձեւը ...

- Մինչեւ ինեկցիոն ձեւին հասնելը քիչ-քիչ հասկացանք ... - խոսեց մաթեմատիկայի դասատու Ատրյանը:

- Ինեկցիոն ձեւը ոչ այլ ինչ է, քան սովորական սրսկում: ... -բացատրեց Օնիկյանը:

- Բայց ի՞նչ դեղ պետք է սրսկել, որ օգնի խելագարության կանխմանը ... -աղմկեցին այս ու այն կողմից:

- Ափսոս, հազա՛ր ափսոս, պարոնա՛յք, նման դեղ երեւի կամ չի ստեղծված կամ մեզ տակավին հայտնի չէ , -պատասխանեց Օնիկյանն ու գլուխն անգոր կերպով կախեց կրծքին:

- Ասել է՝ քաղաքս դատապարտված է խելագարության, -այս տխուր եզրակացությանը հանգեցին վարժապետներն ու ցրվեցին իրենց տները:

Բայց եղան նաեւ չհավատացողներ: Ձեբեթն ու Սերգեյը ապրում էին շատ սովորական իրենց առօրյան: Ոչ ոքի չէին նեղացնում, մանավանդ, Եղիսաբեթը սիրում էր դուռ-դրկցի հետ հարեւանություն անել: Բայց միաժամանակ նրանք թույլ չէին տալիս, որ նեղացնեն, վիրավորեն իրենց: Ձեբեթը շատ զգույշ էր Սերգեյի հարցում: Վերջինս միշտ չէ, որ երեւում էր հասարակության մեջ: Թեւեւ շուկա գնում էր Սերգեյը: Եթե թիֆլիսից կամ Ալեքսանդրապոլից դերասաններ կամ երգիչ-աշուղներ՝ էին գալիս Ջավախք, Ձեբեթը մորաքրոջ կամ դեղատան վարիչի եւ նրա կնոջ հետ հաճախում էր ներկայացումներին: Նման միջոցառումներին Սերգեյը սովորաբար մնում էր տանը: Հետո փորձեցին պարզել առեղծվածը: Սկսեցին հորինել, իբր Սերգեյը սիրահարվել է Եղիսաբեթին բուռն սիրով եւ չի արժանացել աղջկա ուշադրությանը: Երկար է տեսել այս վիճակը: Աղջիկը մնացել է անդրդվելի: Վերջը խախտվել է տղայի հոգեվիճակը, եւ նա դառնակը մխել է իր ստամոքսը: Երկաթյա ուժն ու առողջությունը, նաեւ Եղիսաբեթի օգնությունը, որը խղճի խայթից գիշերցերեկ պահակել է տղայի մահճակալի մոտ, կատարել են իրենց բարի գործը: Սերգեյն ապաքինվել է, իսկ խղճի խայթից տառապող աղջիկը, գերի նախախնայմությանը, թե՛ երեւի իմ բախտն այս տղան է, կապվել է Սերգեյի հետ եւ սարսափով նկատել, որ տղայի հոգեկան աշխարհում լուրջ խախտումներ կան: Հլու իր ճակատագրին, նա ապրել է տղայի հետ, եւ քանի որ քաղաքացիական ակտերում հոգեկան հիվանդներին ամուսնական գրանցման չեն ենթարկում, նրանք ապրել են իրենց կյանքը՝ ապօրինի ձեւով:

Պետք է ասել, որ Սերգեյը խելոք եւ անվնաս երիտասարդ էր: Նա խառնվում էր միայն այն գործերին, որ հրամայում էր տիրուհին: Պատմում էին նաեւ, որ լսելով Առուստամի հիվանդանալու մասին, Ձեբեթը քիչ է մնացել, որ խելագարվի: Ի՞նչ ճակատագիր է, տե՛ր Աստված, որ իրեն մատով անգամ չկպած տղամարդիկ հոգեկան հիվանդ են դառնում: Լավ է, որ Առուստամը շուտ վերադարձավ Սուրամից, այլապես փոքր քաղաքի մեծ ինքնասիրություն ունեցող կանայք փող հավաքելու կոչ էին արել, որ մարդասպան վարձեն եւ Եղիսաբեթին սպանեն, փրկելով իրենց ամուսիններին եւ երիտա-

սարդներին, որոնց վզները ծռվել էին նրա տան պատուհաններին նայելով: Առուստամը վերադարձավ եւ նրանց մարտական ոգին նահանջեց: «Մարդ սպանելն անաստված գործ է, հրաժարիմք ի սատանայե ...» - այս ասելով ձեռք քաշեցին Ձեբեթից: Վերջին հաշվով այդ կինը չէր փորձել ոչ ոքի հմայել: Ոչ մի տղամարդ սիրտ չէր արել որեւէ ակնարկով սիրաշահել կամ վիրավորել նրան: Թեւեւ քաղաքի ջահելներն սպասում էին իրենց օրվան: Եղիսաբեթը նրանց հրեղեն կուռքն էր: Նրա խաժ աչքերը, որ սիրտ էին գերում, հոշոտում էին ոչ միայն սիրուց խենթացող նրանց սրտերը, այլեւ ինքնասիրությունը: Ախր, իրենք ավելի լավն են նրա ընտրյալից: Անարդար բան է մեծ գեղեցկուհուն օտարին զիջելը: Բայց որովհետեւ փոքր քաղաքի ջահելները փափուկ բնավորություն ունեին, չէին ցանկանում կոտորել գեղեցկուհու սիրտը: Թեւեւ տաքգլուխ ջահելներ էին, զգում էին, որ եթե Սերգեյին շարքից հանեն եւ մաքրեն Եղիսաբեթի տան ճանապարհը, ապա անխուսափելի կլինի բախումը ջահելների միջեւ եւ, եթե պիտի բախտավորվի մեկը, ապա կարող են դժբախտանալ մեկից ավելի իրենց ընկերները: Եվ հանգիստ թողին գեղեցկուհուն, թեւ նրանց պատուհանների մաքուր փայլեցրած ապակիները դարձել էին յուրատեսակ հայելիներ, ուր արտացոլվում էին երիտասարդների գեղեցիկ դեմքերը եւ մեկ-մեկ էլ նրանք էին որսում Ձեբեթի հայացքը:

Աշխարհում 1917 թ. էր: Մի խառնակ տարի, որ լուրերը ուշացած թերթերի միջոցով հասնում էին գավառական քաղաք, թեթևորեն այլեկոծում քաղաքի քաղաքական անշարժ կյանքն ու մարում: Քաղաքում եւ գավառում չկային ոչ հակամարտ կուսակցություններ, ոչ խոշոր բուրժուազիա, հետեւաբար եւ պրոլետարներ, մի խոսքով, հող չկար քաղաքական պայքարի, եւ ամբողջ գավառը ապրում եւ բարգավաճում էր մանր վաճառատների շնորհիվ: Մի խոսքով, քաղաքը «մանր բուրժուական» էր, թեւ պատմության դասատու Նորայր Նորունին զբաղված էր պրոլետարների որսով, որ չկային, գոյություն չունեին: Նա կոշկակարների եւ ոսկերիչների աշակերտներին գրգռել էր վարպետների դեմ, իսկ առաջինները ցանկանում էին սպանել Նորունուն, որովհետեւ վարպետներն իրենց մարդ են դարձնում, փեշակ սովորեցնում եւ ոչ թե շահագործում կամ ծծում իրենց արյունն ու քրտինքը: Կարճ ասած, լենինյան գաղափարախոսությունը, որ քաղաքում ուներ մեկ համակիր, հանձին Նորայր Նորունու՝ արծազանք չգտավ քաղաքի մտավորականության մեջ, մանավանդ, որ Նորունին, ըստ հայոց լեզվի եւ գրականության դասատու Մեհրաբ Չոբանյանի, ինքն էլ չգիտեր, թե ո՞րն է Լենինի ուսմունքի էությունը եւ բոլշևիկներին ու մենշևիկներին խառնում էր իրար, մենշևիկների քաղաքական ծրագիրը վերագրելով Լենինին եւ արժանանալով Չոբանյանի կծու ծաղրին ու հեզմանքին: Նրանց վեճը միշտ ավարտվում էր կռվով, որովհետեւ ոչ կոմունիստ, բայց բոլշևիկյան անմարսելի հովեր ունեցող Նորունին չգիտեր իր անելիքը, իսկ Մեհրաբ Չոբանյանը դաշնակցական էր եւ գիտեր, թե ինչ են ուզում դաշնակները:

- Ա՛յ Նորունի, ա՛յ խելոք, մեր ժողովրդի լինել-չլինելու հարցը թողել, ընկել ես դասակարգային պայքարի մեջ եւ անելիքդ չիմանալով, ուզում ես

ազգը երկու մասի բաժանել: Բա հիմա դրա ժամանակն է, թուրքը մեզ մորթում է, իսկ դու ուրիշ երգ ես երգում, ուզում ես հային, ռուսին ու թուրքին մեկտեղել, որ միանգամից ուտեն հային ... Լա՛վ ծրագիր է, մեր բաց քամակին կատու շալակելն է պակաս ...

- Դու չես հասկանում, -թնդում էր Նորունին, -ռուսներն ուզում էին թագավորին գահընկեց անել եւ արին, հիմա մնում է Կերենսկին էլ ընկնի, եւ ժողովուրդների բախտը կբացվի ...

- Իսկ հային դրանից ի՞նչ օգուտ ...

- Օգուտն այն կլինի, որ հայերի ու թուրքերի միջեւ դասակարգերի մերձեցում կլինի: Էլ իրար հետ չեն կռվի ...

- Չե՞ն կռվի: Կկռվեն՝ թուրքերի հետ մերձեցում չի լինելու: Մեր երկիրը մեզնից խլել են: Պարտատիրոջ իրավունքով ուզելու ենք մեր կորցրածը, իսկ նա, որպեսզի այլեւս պարտապան չունենա պիտի հայաթափի ու կոտորի նաեւ Արեւելյան Հայաստանը, աչքից էլ պրծնի, աչքացավից էլ ... Դասակարգային մերձեցում ... Չէ՛ մի, պոզե՛ր ... Հիմա դու ինձ ասա, թե քո թշնամին Մանթաշո՞վն է, որ քո քաղաքի եկեղեցին է կառուցել, որ օգնում է հայերին: Մեր տեղացի աղա Վարդան Շահպարոնյա՞նն է, որ տպարան ու էլեկտրակայան է կառուցել մեր քաղաքում, որ քեզ նման կույր մարդիկ լույս եւ մանավանդ խելք ունենան: Քո թշնամին Վահրամ աղ՞ան է, որ ութ բանվորով լիճնոնադի գործարան է պահում, որ քեզ նմանների բերանից աղբի եւ հիմարության հոտ չգա: Հիմա ասա, սրա՞նք են քո թշնամիները, թե քո եւ քո ժողովրդի արյան ծարավի քեմալիստական թուրքիան, ասա ընկեր կիսաբուլշեւիկ ու կիսամենշեւիկ ... Ո՛ր կռիվը շարունակվում է: Կռվող կողմերը նման են զինվորներ չունեցող զորավարների: Կիսաբուլշեւիկ Նորունին մենակ է, նա այն կարծիքին է, որ մարտադաշտում մեկն էլ զինվոր է, որ մի ձեռքով էլ կարելի է ծափ տալ, իսկ Չոբանյանն ասում է, որ ձեռքը ծափ կտա միայն այն դեպքում, եթե այն գլխիդ խփես, մանավանդ եթե գլուխդ էլ դատարկ է: Չոբանյանը, այսինքն ՀՀ դաշնակցությունը համակիրներ շատ ունի, սակայն նրանց միավորող ձեռք չունի: Նորունին գտնում է, որ անկազմակերպ շատը ամբոխ է, որ ոչ թե կօգնի գործին, այլ կքանդի, կվերածի ամբոխավարության:

Ո՛ր կռիվը շարունակվում է: Նորունին շուտով համակիր է ճարում: Քաղաքապետարանի աշխատակից Շավո Մորիկյանին անգրագիտության պատճառով քաղաքագլուխ Մ. Մարգարյանն ազատում է պաշտոնից եւ դառնացած Մորիկյանն ընկնում է Նորունու ճանկը.

- Դրանցից՝ տիրապետող դասակարգից փրկվելու միայն մի ձեւ կա՝ հեղափոխությունը: Հիմա ցարը ոչ եւս է, բայց ցարի պոչերը մեղուզաների նման վերաճելու, ամբողջանալու եւ, որ կարելորեն է, վերակենդանանալու հատկություն ունեն, դրանք նորից թագավոր ու մինիստր կդառնան եւ կծծեն մեր արյունն ու քրտինքը:

- Լավ ես ասում, - հեշտ համաձայնվում է Շավո Մորիկյանը, -բայց էդ հեղափոխությունն ինչպե՞ս պիտի անել ...

- Ժողովրդի գիտակից ուժերը համախմբելով:

-Է՛, կհամախմբվե՞մ որ ...

-Բա ես ու դու ինչո՞ւ ենք պայքարի ելել ...

-Հիմա մենք պայքարի ենք ելել, պրն. Նորայր, բա որ ոստիկանապետ Սաքոն իմանա, ի՞նչ պատասխան ենք տալու: Օրինական կառավարության դեմ պայքարելը՝ պետական հանցագործություն է, կարող է Սիբիրի ճամփան մեզ ցույց տան:

-Պրն Շավարշ, խնդրում եմ չնեղանալ, դու քաղաքական հարցերում դեռեւս թերուս ես, անգրագետ չեմ ասում, որ չնեղանաս, բայց դու Նորայր Նորունու համակիրն ես, հետեւաբար շուտով ամեն բան կիմանաս նրանից ոչ վատ ... Իմացիր, հարկավոր է որսալ հեղափոխության հասունացման պահը: Այս օրերը այդ տեսակետից պատմական են: Ցարը գլորվել է գահից, Ռուսաստանում խառնակություն է, պահը հասունանում է, մենք պետք է պատրաստ լինենք ...

Իսկ պրն. Շավոն, որ քիչ բան էր հասկացել Նորունու խոսքերից, դառնացած մտածում էր. «Բոլորն էլ նույնն են, քաղաքագլուխ Մարգարյանն ինձ անգրագետ անվանելով՝ պաշտոնանկ արեց, սա էլ ինձ նույնն է ասում եւ հետն էլ ավելացնում, որ ինձ չնեղացնելու համար անգրագետ չի կոչում: Սրա մտքինն այլ է, մարդ է հավաքում, որ ճառերը լսող եւ կռիվ անող ունենա, ինձ էլ ուզում է իր աշակերտը դարձնել, հեղափոխություն անելու պահերը սովորեցնել: Ի՞նչ անել ... Գուցե սրա պոչից բռնելն ավելի՞ ճիշտ է ... Կա՛մ Սիբիր, կամ մեծ պաշտոնյա, տեսնենք ո՞րն է իմ բախտն ու ճակատագիրը»:

-Էդ հեղափոխության ժամանակ մարդկանց կոտորո՞ւմ են ...

- Բա ո՞նց ... Հազարներով, բայց մենք ղեկավար ենք լինելու, այսինքն, մեր հրամանով են կոտորելու կամ կոտորվելու ... Դու արիացիր, իմ բուլշեիկացու բարեկամ ...

Շավոն գլուխը քորեց, մտածում էր: Գուցե համաձայնելը ճի՞շտ կլինի: Ապրել է հարկավոր, մանավանդ որ ասում է՝ հեղափոխության հարմար օրեր են, Ռուսաստանում շունը տիրոջը չի ճանաչում:

- Կարելորդ, պրն. Շավարշ, քեզ չեմ ասել: Ախր, հեղափոխությունը հաղթելուն պես պետության, այդ թվում հարուստների՝ կապիտալիստների ու կալվածատերերի ունեցվածքը ազգայնացվում է: Դա հեղափոխության ամենասրբազան հետեւանքն է, երբ հարուստներն աղքատանում են, իսկ չունեւորները՝ հարստանում ...

- Ես այդ ազգայնացնելը չեմ հասկանում, պրն. Նորունի: Էդ ո՞նց ենք անելու, որ հարուստն աղքատանա եւ չքավորը՝ հարստանա: Հեղափոխությունը ֆոկլունիկություն է, ի՞նչ է:

- Մոտավորապես, -ժիծաղեց Նորունին, -հեղափոխությունը, սիրելիս, լուծում է սոցիալական հարցեր, դու գիտես, թե ի՞նչ է նշանակում սոցիալական ...

- Որտեղի՞ց իմանամ, -խեղճացավ Շավոն:

-Հասկանալի է. քեզ հետ շատ աշխատել է հարկավոր: Բայց նախ պարզաբանենք ազգայնացնելու իմաստը: Երբ տիրող դասակարգը գալիս է.

իշխանության գլուխ, նա խլում է պարտվողի ունեցվածքը՝ գործարանն ու այգին, ոսկին ու պալատները, մի խոսքով, նրա ունեցվածքը ...

- Էդ հոթալան է, պրն. Նորունի ...

- Պետական թալան, ազգայնացման օրենքին համապատասխան: Բա ինչո՞ւ են արյուն թափել, սպանել ու ջարդել, որ օրինական, զոնե օրինական ճանապարհով չթալանեն, չլուծեն սոցիալական հարցեր: Հիմա գլխի ընկա՞ր, թե ինչ է նշանակում սոցիալական հարցի լուծում:

- Սոցիալական հարցի լուծում նշանակում է, -աշակերտի նման պատրաստական պատասխանեց Շավրն, -թալանով ապրուստի հարց լուծել ...

- Թալանից առաջ օրինական բառը չմոռանալ, օրինական թալան: Աջքաբաց ես երեսում, պրն. Շավարշ, քեզնից հրաշալի կոմունիստ կատացվի...

Սիրով ու ջերմությամբ բաժանվեցին: Հեռանկարը իհարկե գրավիչ էր, բայց՝ վտանգավոր: Սակայն առանց դժվարության ո՞վ է հարստացել կամ ղեկավար դարձել: Մի քանի օրից Շավարշ Մրրիկյանը մեկնեց գավառի գյուղերը՝ բուլշեւիկյան համակիրներ հայթայթելու Նորունուն: Գնաց ու մի տասնհինգ օր ոտքով-գլխով կորավ: Հետո երեսաց, բավականին հաջողությամբ հանձնարարությունը կատարած.

- Ո՞ր հոգու բուլշեւիկ են գրանցել, լավ տղաներ են, միայն ազգայնացմամբ, թալանի ժամանակ վախենում են սրիկայություն անենք ու իրենց փայլ մենք ուտենք: Երդվել են Աստծո անունով ...

- Էդ մեկը պիտի երդվեիր Լենինի անունով: Հիմա մեր Աստվածը նա է ...

- Էդ մեկը չէիր սովորեցրել: Մյուս անգամ կերդվեմ նրա անունով: Լենինն էլ Աստծո նման երկնայի՞ն է, թե հողեղեն: Կարող է հարցնեն՝ իմանամ: Նրա անունով մոմեր վառել չի կարելի՞ ...

- Այ տղա, Լենինը հողեղեն է, բայց երեւի մեջը երկնային լիցք ունի: Էդ պետք է լավ իմանալ: Բայց կարելու բան, հանկարծ նրա անունով մոմեր չվառեք ... Լենինն Աստծո անհաշտ թշնամին է, նրանց միջու սկզբունքային հակառակություն կա: Ենթադրում են, որ Աստված երեւի ուզում է խանգարել Լենինին, որ չնստի Նիկոլայի գահին ...

- Թե՞ վախենում է Լենինն իր աստվածությունը խլի ձեռքից ... - Կարող է, շատ հնարավոր է, որ նման վեճ էլ ունենան: Թեեւ Լենինը հողեղեն է եւ երկնքում հազիվ թե ցանկանա թագավորել ...

- Ո՞րեմն Լենինն աստված չէ ...

- Մի՞թե քիչ առաջ չասացի, որ նա Աստծո անհաշտ թշնամին է: Երդվիր Լենինի անունով, Աստծո հետ գործ չունես ...

- Բայց պրն. Նորունի, Աստծո պատժից վախենում են, էդ մի բանում ներող եղիր ...

- Ո՞րեմն, երդվիր հորդ գերեզմանով ...

- Բայց հայրս ողջ է ...

- Դե, լավ էլի՞, էդ գյուղացիներն ի՞նչ գիտեն, որ հայրդ ողջ է ...

- Գիտեն, ախր հայրս պայտար է, կլոր տարին գյուղերում է ...

- Փակեցինք այս հարցը, պրն. Մրրիկյան, ուրեմն ութ հոգով մեր բա-

նակն ավելացավ: Ապրե՛ս, կեցցե՛ս, իմ խոսքն իրականացրիր: Ասում էի, չէ՞, թե մի ծաղկով գարուն կգա եւ մի ձեռքը ծափ կտա...

* * *

Երեկո էր, ուշ երեկո: Ջավախքի մութ կապույտ երկինքն իջել էր երկիր: Աստղերը վառվում էին շուշանների նման եւ այնքան էին մոտ, որ երկնքից կարելի էր շուշաններ փնջել: Այստեղ երկնքի եւ երկրի հարեւանությունն ավելի ամուր է: Պատրանք չէ, երբ լուսինը սկավառակի նման գլորվում է լեռնագագաթից ներքեւ, ոչ էլ տեսողության խաբկանք, երբ լեռնագագաթները զարդարվում են բյուրավոր շուշաններով եւ քանի որ մթության մեջ ուրվագծվում են լեռները, ապա լեռնաշղթան երեւում է լեռնաստանի գետերի նվազի ներքո, շուշան-ադամանդի զարդերը շողշողացնող հարսնեպարի տեսքով: ՈՒրի՜շ են Ջավախքի երեկոներն ու գիշերները: Բայց թողենք քնարական զեղումներն ու իջնենք փոքրիկ քաղաքի նեղլիկ փողոցները եւ մտնենք այն նրբանցքը, ուր ապրում են մեր հերոսները՝ Եղիսաբեթն ու Սերգեյը: Նրանք հյուրեր ունեն, որ նրանց տուն է առաջնորդել հայոց լեզվի ու գրականության դասատու Մեհրաբ Չոբանյանը:

Հյուրերը երեք հոգի են եւ եկել են Թիֆլիսից: Անմիջապես նկատվեց, որ հյուրերն ու հյուրընկալները ճանոթներ են, որ առաջինները լավ գիտեն Մեհրաբ Չոբանյանին, որը գլխավորում է տեղական դաշնակցական փոքրաթիվ խումբը: Թեյի սեղանի շուրջ ծայր առավ տազնապալի մի գրույց, որի մեջ անհանգստություն կար գավառի հայ եւ վրացի ազգաբնակչության ճակատագրի նկատմամբ: Թուրքական բանակը Վեհիբ փաշայի հրամանատարությամբ դանդաղ, աննկատելի սողում էր դեպի ռուս-թուրքական սահմանը, առանց մատնելու իր շարժման նպատակը, առանց նեղություն տալու քրիստոնյա բնակիչներին: Նրա առաջացումն այնքան էր աննշմար, որ չէր արժանացել հայերի ուշադրությանը, կամ դիտվել էր որպես գործերի տեղակայման վայրերի սովորական փոփոխություններ: Սակայն հետեւող աչքերը տեսնում էին շարժվող վիշապի դեպի հյուսիս ուղղված գլուխը եւ չանթել էին մի քանի լրտեսների եւ պարզել, որ նրանց գործունեության շառավիղը այնքան է մեծ, որ ակնառու էր արշավանքի նախապատրաստությունը: Սկսած Աղբաբայի, Ջավախքի, Մեսխեթի թուրքերից մինչեւ Ախալցխայի թուրքական համայնքն ստանում էին Թուրքիայի բանակի հրամանատարության հրահանգները՝ պատրաստ լինելու այդ շրջանների հայ եւ վրացի ազգաբնակչություն ունեցող գյուղերի վրա, թուրքական կանոնավոր բանակի երեւալուն պես, հարձակվելու համար: Թուրքական համայնքների դեկավարներին թույլատրվում էր նաեւ ինքնուրույն գործողություններ ծավալել, եթե վերջիններս վստահ լինեին իրենց ուժերին եւ հաղթանակին: Ջարտուղի ճամփաներով վերոհիշյալ գավառներն էր հոսում թուրքական զենքը, նույնիսկ հրետանին: Թուրքերը չէին ցանկանում կորցնել հարմար պահը, որ մոտենում էր օրեցօր: Սպասում էին ռուսական հեղափոխության նոր պայթյունին: Գորշ գայլերը

արջի բերանից ցանկանում էին թոցնել այն համեղ պատառները, որոնք նա կթողներ բախտի քմահաճույքին եւ կհեռանար իր որջը: Տարածքային զավթողական մտադրությունից բացի, թուրքերը ցանկանում էին նաեւ մեկընդմիջտ փակել հայկական հարցը: Չէ՞ որ Արեւելյան Հայաստանը դեռ կայր, գոյություն ուներ եւ նրա կամավորները՝ հայ ֆիդայիները, երազում էին իրենց պապենական հողերն ու ոչ հեշտին կռիվ էին մղում թուրքերի դեմ:

- Այս անգամ ավելի քան դժվար է լինելու հայերիս համար, մանավանդ որ ցարի անկումից հետո հնարավոր է նաեւ Կերենսկու իշխանության տապալումը, քանզի այն ժամանակավոր է եւ, թեւ ոչ ժամանակավրեպ, բայց մեր ունեցած տեղեկությունների համաձայն կորցրել է իր ազդեցությունը բանակի վրա, որը այս էլ քանի տարի է հոգնած ծանր աշխարհամարտից, երազում է տուն վերադառնալ: Ի՞նչ է լինելու մեր վիճակը, եթե ռուս զինվորները լքեն Անդրկովկասը: Հայերը կմնան դեմ հանդիման թուրքերի եւ նրանց անդրկովկասյան զինակիցների... -խոսողը՝ ակնոցավոր պարոնը, դառնությամբ էր նայում ակնոցի տակից, եւ շարժուն աղամախնձորը հայտնվում եւ արագորեն կորչում էր կոկորդում:

- Աստված եթե փակում է մեկ դուռը, ապա բացում է մյուսը, ասում է մեր ժողովուրդը, -ցանկացավ խոսել դիմացինը, բայց խոսողը չթողեց նրան շարունակելու.

- Աստված սիրես, Աբե՛լ, Աստծո անունը մի տուր: Հիշեք, թե այս քանի տարում քանի՞ դուռ է փակել, եւ փորձեք ցույց տալ գոնե մեկը, որ բացվել է մեր առջեւ: Եթե մենք ունենայինք մեր պետականությունը, մեր պատմական տարածքի գոնե կեսը մերը լիներ, գուցե մեր ուժերով խցանեինք, չեմ ասում հաղթեինք, մեր թշնամու ճանապարհը: Կանոնավոր բանակի նկատմամբ ֆիդայական մանր ու մեծ խմբերը ի վիճակի չեն հաղթանակ տանելու, թեկուզ ունենան Անդրանիկի մման մեծագույն հրամանատարներ: Լավագույն դեպքում նրանք կարող են խանգարել, դանդաղեցնել բանակների շարժումը, բայց հաղթել անկարող են...

- Պարոննե՛ր, շեղվում ենք հիմնական հարցից, -հնչեց Եղիսաբեթի փափուկ կրծքային ձայնը, -Թիֆլիսի ազգային խորհուրդը մեզ այլ առաջադրանք է տվել. տեղական ուժերը պահել զորահավաքային վիճակում, ավելի ճիշտ, մարտական վիճակում: Մենք դեռեւս լավ չգիտենք Ջավախքի երիտասարդության տրամադրությունը. պատրաստ են պաշտպանելու հայրենի հողը: Ազգային խորհուրդը մեզ խնդրել է թույլատրելի, նաեւ անթույլատրելի ճանապարհներով գինվել, ձեռք բերել զենք եւ խոստացել է մեզ զենքի եւ հանդերձանքի հիմնական մասը, ինչպես նաեւ հրամկազմը ինքը տրամադրել ...

- Հարգարժան օրիորդ, -պատասխանեց Մարգարյանը, քաղաքի ազդեցիկ մարդկանցից մեկը, -կարող եմ անսխալ եւ նույնիսկ հպարտությամբ ասել, որ զավառիս ոչ միայն երիտասարդությունը, այլեւ ամբողջ արական բնակչությունը լի են վճռականությամբ դիմագրավելու թուրքերին, եթե նրանք հանդգնեն մտնել մեր տարածքները: Մեր ժողովուրդն արդեն տեսել է եւ գիտի, որ թուրքիան մեզ բերելու է բնաջնջում, ինչպես այդ արեց հայոց

արեւմտյան հողերում: Թուրք զորքի առջեւ ձեռքերը ծալած նստելը, կամ առճակատումից խուսափելը, առանց մարտնչելու նահանջելը համազոր են ոչ թե պարտության, այլ մահվան, ավելի ճիշտ ինքնասպանության: Ժողովուրդը կարծում են կկատարի իր հայրենասիրական պարտքը, եթե ունենա զենք ու զորավար, կազմակերպող ձեռք ... Ժողովրդի հայրենասիրության եւ կռվելու պատրաստակամության նկատմամբ խնդրում են չուեննալ ոչ մի կասկած: Կա նաեւ այս հարցի մյուս կողմը. մեզ հայտնի է, որ Վեհիբ փաշան, ինչպես ասում են, ճամփա է ընկել: Գալիս է դանդաղ, անշտապ, ճանապարհին իր բանակը լրացնելով տեղացի թուրքերով եւ քրդերով: Նա մեր սահմաններին չի մոտենա, եթե Ռուսաստանում նոր խժոժություններ չսկսվեն: Բոլշեւիկների պետերբուրգյան հուլիսյան ցույցը թեեւ ճնշված է, բայց ռուսական թերթերը տագնապահար են եւ գտնում են, որ ցույցի գնդակոծումը անխուսափելիորեն մոտեցնում է ժամանակավոր կառավարության վախճանը, որը նույնպես չգիտի անելիքը եւ հույսը դրել է միապետական գեներալների վրա, որոնց նկատմամբ եւս վստահություն չունի, քանի որ միապետականները նույնքան չհանդուրժող դիրքորոշում ունեն բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ղեկավարության նկատմամբ, որքան կոմունիստների, ասելով, որ սոխը սխտորից քաղցր չէ: Սակայն ժամանակավոր կառավարությունն, այնուամենայնիվ, փայփայում է միապետականների հետ լեզու գտնելու կոմպրոմիսային ճանապարհը: Տա Աստված, որ հայոց ազգային խորհուրդը իզորու դառնա մեր ժողովրդին ղեկավարելու այս ծանր ժամանակներում: Բարեկամներ՝, քանի որ ժամանել եք, ինչպես ասում են, սուրբ նպատակներով, մենք տեղացիներս ձեր տրամադրության տակ ենք: Ինչո՞վ կարող ենք ձեզ ծառայել:

- Մենք եկել ենք նախազգուշացնելու սպասվող ռազմական գործողությունների մասին, մանավանդ մեզ հայտնի է, որ Ախալցխայի թուրքական համայնքը գաղտնի զորահավաք է հայտարարել: Լավ զինվել են եւ զենքի պակասություն չեն զգում: Կյանքը ցույց է տալիս, որ եթե զենքի կուտակումներ են լինում, ապա նրանք մի անբացատրելի, անիմանալի օրինաչափությամբ կրակում են նույնիսկ առանց կրակողի կամքի: Սա իմիջիայլոց: Որպես գործողության ծրագիր կկամենայի մատնացույց անել Ախալցխայի ուսանելի փորձը, որի քաղաքագուլիս Ջորի Ջորյանը բանակցություններ է վարում քաղաքի ռուսական կայազորի հրամանատարության հետ, որպեսզի ռուսները հեռանալիս զենքն ու հանդերձանքը թողնեն հայերին ինքնապաշտպանության նպատակով: Դեռեւս արդյունք չկա, սակայն ռուսական հրամանատարությունը ըմբռնումով է վերաբերվում հայերի խնդրին. «Առայժմ նման խոստումներ տալ անկարող ենք, սակայն եթե գնալիս լինենք, մեր հավատակիցներին անպաշտպան չենք թողնի»: Ասելս այն է, պարոն Մարգարյան, որ եթե հնարավոր համարեք բանակցել ձեր կայազորի հրամանատարության հետ, հիանալի կլինի: Հաջողության հասնելու համար, խնդրում են ինձ սխալ չհասկանալ, մի խորշեք անգամ կաշառատվությունից, որը այս հզոր հայկական ութսուն հազարանոց համայնքի լինել-չլինելու հարցն է: Չբամ-

բասենք ռուս զինվորականությանը, բայց արձանագրենք այն ճշմարտությունը, որ ռուս չինովնիկությունը բնավ անտարբեր չէ կաշառակերության նկատմամբ: Եթե հարկ լինի զորահավաքից առաջ ոսկեհավաք հայտարարեք, միայն փրկեք հայությունը: Կծախողվեք, ի՞նչ արած, փորձը փորձանք չէ: Յետո, ժողովրդի մեջ զգաստամտություն սերմանելու հետ միաժամանակ զգուշացեք վախի ու խուճապի տրամադրություն ստեղծելուց: Պետք է ջանալ, որ արիության եւ հաստատակամության տրամադրությունները հող գտնեն մարդկանց հոգիներում: Ո՛չ մի պարտվողական տրամադրություն, ո՛չ մի սնապարծություն, պարոնայք ... -խոսողը ազգային խորհրդի անդամ Սամսոն Անտաշյանն էր, որի ելույթով էլ ավարտվեց խորհրդակցություն-թեյախմությունը:

Հաջորդ օրը հյուրերը մեկնեցին գավառի հատկապես մեծ, մարդաշատ գյուղերը: Վերադարձան չորս-հինգ օրից, բարձր տրամադրությամբ: թխացած եւ թարմացած տեսքով: Սկսվել է հունձը, բերքն այնքան է առատ, որ գյուղացիները գիշերները ցերեկ արած աշխատում են: Օգոստոսյան լուսնկա գիշերները լուսավորվում են նաեւ նրանց գերանդիների փայլից: Չափազանցություն է, բայց փաստ է: Կարելոր հարց է՝ գյուղացիներին տեղյակ դարձնել աշխարհի անցուդարձին: Ասում ենք, շատ հնարավոր է, որ թուրքերը օգտվելով խառնակ վիճակից հարձակվեն Ջավախքի վրա: Չեն հավատում: Մեր ռուս ցարը չի թողնի: Ասում ենք՝ էլ ցար չկա: Չեն հավատում: Ցանքս ինչպե՞ս կարող է չլինել: Նրան գահընկեց են արել: Չեն հավատում: Գահը հո Փուչիկենց ջարդած սելը չէ, որ տերը վրայից ընկնի: Մինչեւ հավատացրինք՝ հոգեհան եղանք: Պետք է աշխատել ժողովրդի հետ:

... Հետաքրքիր դեպքեր պատմեցին Գումբուրդա գյուղից: Ջորի Նաքալաքելի եւ Սարգաստանի քրդերը խնձորով լիքը զամբյուղները ձիերին բարձած բարձրանում են գյուղ: Քրդերից մեկի ձիու մեջքից երկու քոց էր կախ տված, գյուղամիջով անցնելիս, երեխաներից մեկը քոցից թռցնում է մի խնձոր: Քուրդն ահավոր դաժանությամբ ճիպտում է տղային: Երեխայի ճիչը ուտքի է հանում տան դռանը նստած տրեխները կարկատող ութսունամյա ծերունուն. «ծո՛, քեզի ի՞նչ պատահավ: Ինչի՞ կճվճվաս»: «էս քուրդը ծեծեց»: «Ինչի՞ ծեծեց»: «Հե՛, մե խնձորըն թռցրի, ծեծեց ...»: «Լավ չես էրե, շան լակոտ», -ասել է ծերունին եւ մոտեցել դեպքի վայրին: Սարսափով տեսել է երեխայի արյունլվիկ վիճակը: «Ինչո՞ւ էս խեղճ երեխային էս օրը զցել, շան որդի»: «Լավ եմ արել» -գոռացել է քուրդը եւ տեսնելով, որ շրջապատում հայեր չկան, խոյացել է ծերունու վրա: Բայց ծերունին զումբուրդեցի էր: Մի բան, որ շրջապատի մուսուլմաններն իրավունք չունեն մոռանալու: Մինչ ճիպտը ֆշացել է ծերունու գլխավերելում, դժվար է ասել ի՞նչ հնարքով, քուրդը հայտնվել է փոշոտ գետնին: Ծերունին ծալովի դանակով կտրել է խնձորով լեփլեցուն քոցների կաշվե փոկերն ու դանակի ծայրով բզել ձիուն: Ձին նետվել է առաջ, փողոցով մեկ շաղ տալով քոցների ամբողջ պարունակությունը: «խնձորը լավ ծախեցի՞ր, շան որդի»: Եվ երեխայի նման, որի ձեռքից խել են խաղալիքը, քուրդը բարձրացելով փորձել է հավաքել փողոցի փոշուն

խառնված խնձորները. «Ծո՛, այ հիմար, -ասել է ծերուկը, -դու, որ խնձորների համար քածի նման վնգստում ես, ինչո՞ւ էիր երեխային արյունվիկ անում: Մի խնձոր էր վերցրել, թող ուտեր, աշխարհը չէր քանդվի: Գնա՛, գնա՛ քո Մարգաստանը եւ էլ մտքովդ չանցնի էս գյուղ խնձոր բերես կամ էստեղով խնձոր տանես ծախելու: Գնա՛ »...: Այդ ծորը գյուղի կեսը, մանավանդ երեխաները լիացել են խնձորով: Բայց ավելի զորեղ պատմություն է խաչիկ անունով մի մանչուկի արարքը, որը կերպարավորում է այս գյուղի բնավորությունը: Տասներեք-տասնչորս տարեկան այդ տղան, պարզվում է, կատարում է տանն ու ընտանիքին վերաբերող այն բոլոր գործերը, որ կատարել է հանգուցյալ հայրը: Չորալանջի թեք արոտներում խաչիկը արածացնելիս է եղել իրենց ողջ ունեցվածքը՝ երեք ոչխար եւ մի այծ: Դե՛, երեխան մնում է երեխա: Տեսնելով վայրի տանձի հասած պտուղները, բարձրանում է վայելելու: Երբ իջնում է, որ գնա իր բան ու գործին, տեսնում է իր փոքրիկ հոտը չկա: Որոնում է, որոնում եւ, իվերջո, ընկնում է հետքին եւ աննկատելիորեն հետեւում անասնագողին: Մի տափարակում տեսնում է ածղահա, արծաթ խանջալը գոտկատեղից կախած քրփին: Մենք խոսեցինք երեխայի հետ եւ պարզվեց, որ նա գիտակցել է զինված քրդի հետ գլուխ դնելու անհմաստ լինելը եւ սկսել է որոնել իր ոչխարների փրկության ամենահանդուգն ու հնարամիտ տարբերակը, գործողության համար ընտրելով ամենապարզն ու, իր ասելով, ամենահեշտը: Քուրդը թիկունքը տղայի կողմն արած, չարչարվելիս է եղել կայծքարե կրակվառիչով ծխախոտը վառելու, խաչիկը սուր չախուն (դանակը) ձեռքին նետվում է նրա վրա: Մինչեւ քրդի ուշքի գալը, դանակի երկու խոր վերք է հասցնում նրա ազդրերին, զրկելով նրան իրեն հետապնդող հնարավորությունից, միաժամանակ իմանալով, որ այդ վերքերից նա չի մեռնի եւ մինչեւ արնաքամ լինելը կհասնի ներքեւում գտնվող Մարգաստան գյուղը: Հետո հավաքում է իր փոքրիկ հոտը եւ արագ քշում դեպի Գումբուրդա: «Ասում եմ, խաչիկ, տղա՛ս, -պատմում է ակնատես Աբելը, -չէի՞ր մտածում, որ քուրդը կարող է հանկարծ, չանթել քեզ»: «Մտածում էի, -ասում է, -բայց հո չէի՞ թողնելու, որ մեր տան ապրուստը քշեր իր տուն»: «Չէի՞ր մտածում, որ քուրդը կարող է սպանել քեզ ...»: «Եթե ձեռքից գար կսպաներ, բայց իմ օղորմած հոգի հերն ինձ աշխարհ է բերել, պահել ու հաց տվել, որ քուրդը սպանի՞: Չէ՛, սպանել չէր կարող ...»: «Իսկ ի՞նչ եղավ քո քրդին, չի՞ արնաքամվել, չի՞ մեռել ...»: «Չգիտեմ,- ուսերն է թոթվում, -մուսուլմանը եթե մեռնում է, սպանվում գողություն անելիս, շեյխը նրան հերոս է հռչակում: Եթե Մարգաստան գյուղում նոր հերոս է լույս ընկել, ուրեմն նա մեռել է, իսկ եթե հերոս չկա, ուրեմն գողը ողջ է ...»: Դե արի ու հավատա, որ խաչիկը երեխա է: Մարդ չգիտի խնդա՞, թե՞ լա ... Երեխաների մանուկ հոգիներն արդեն լցվել են հայ ու թուրք, քրիստոնյա ու մուսուլման իրարամերժ հասկացություններով: Մեր օրերը, մեր ժամանակներն այնպիսին են, որ մարդկանց հոգիներում կարծես թե Աստված դադարել է բնակվել, չարությունը, արյունով սեփական ունեցվածքը, աշխատանքի արդար վաստակը պահպանելը՝ հալածել են Աստծուն եւ աստվածայինը մարդկանց հոգիներից: Գումբուրդեցին

քաջ՛, բայց գող չէ: Գումբուրդեցին աշխատասեր է, բայց մարդասպան չէ: Ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ գումբուրդեցին ուզի, թե չուզի՝ հրացանով պիտի գնա արտը վարելու եւ հնձելու: Եթե հարձակվեն, պիտի սպանի: Ահա մեր օրերի տրամաբանությունը:

Պարզ խոսենք, այդ գյուղն այցելելը սրտապնդեց ինձ: Խոսեցի ինքնապաշտպանության խմբի ղեկավար Ջարմայր Խանոյանի հետ: Մուսուլմանական ծովի մեջ Գումբուրդան, որ մի Կրճյակ էր, ունի ստրատեգիական կարեւոր նշանակություն: Թշնամական ժանրագույն հարվածն առաջինը նա է ընդունելու, Ջարմայրը հետեւողականորեն զինում է գյուղը: Վաշտն արդեն երեք հարյուր զինվոր ունի, երկու հարյուր հրացան եւ երկու «Մաքսիմ» գնդացիր: Նա ասում է, որ թուրքական գյուղերի հարեւանությամբ մի քանի մանր վրացական գյուղեր կան, որոնք հազիվ թե կարողանան իրենք իրենց պաշտպանել: Ասել է, Գումբուրդան իր վրացի հարեւաններին թուրքերից պաշտպանելու պարտք ունի: Ո՛րեմն, գյուղը կռվելու է զավառի հարավ-արեւմտյան մասի անվտանգությունը պաշտպանելու համար: Ջարմայրն ասում է, որ թուրքերի եւ քրդերի տրամադրությամբ իրենք անսխալ որոշում են, թե ի՞նչ է մտածում Թուրքիան եւ ինչ հրահանգ են ստանում այնտեղից: Եթե Լլտիանում են, անվախություն են ցուցադրում, նշանակում է զենքի նոր բեռներ են ստացել, եւ ձորում, ուր նրանց գյուղերն են, սկսում են կրակել այնքան ժամանակ մինչեւ մեր ջախելները ճարահատյալ վերելից քարեր եւ ժայռեր են փլցնում՝ քանդելով նրանց տները, մարելով նրանց խանդավառությունը:

... Կանցնեն ամիսներ եւ Գումբուրդայի անունը կսրբագործվի, կփառաբանվի զավառի հայ ու մասնավորապես վրացի ազգաբնակչության կողմից (Քիլդա, Գոգաշեն, Չուրչխել, Ափնյա, Ջեղա-Թմոզվի եւ այլն), որոնց փրկությանը վճռորոշ մասնակցություն են ունեցել հայ կտրիճները: Յատկանշական է այն փաստը, որ Գումբուրդա գյուղը մնաց ոչ միայն աննվաճ, այլեւ կարողացավ դիմադրել թուրքական կանոնավոր զորքերին եւ նրան միացած խուժանի միացյալ ուժերին: Մայիսին, երբ թուրքական կանոնավոր բանակը սկսեց իր ռազմական գործողությունը, ժանրացավ Գումբուրդայի վիճակը: Երկարատեւ ընդհարումները թուրքական բանակի հետ, եթե մարդկային ծանր կորուստներ էին պատճառել Վեհիբ փաշայի զինվորական ստորաբաժանումներին ու թուրք խուժանին, ապա խժռել էին գումբուրդացիների առանց այն էլ ոչ հարուստ զինամթերքը: Փամփուշտը վերջանում էր: Եվ գյուղի պաշտպանության հրամանատարը որոշեց ռազմական ուժը հարստացնել հնարամտությամբ, միայն թե թուրքական զորամասը դադարեցներ ռամական գործողությունները, միայն թե բացվեր պաշարման կրակե օդակը, եւ Զավախքի հարավ-արեւմտյան մասը չդառնար վայրենի թշնամու կրքերի եւ յաթաղանի զոհը:

Գյուղն ուներ նավթի զգալի պաշար, որն օգտագործելու համար, բացի նավթի լամպից, որ գյուղում մի քանի տներ ունեին, ուրիշ պիտանիություն չուներ: Ջարմայր Խանոյանը տեսավ նավթի պատկառելի պաշարը եւ հղա-

ցավ թշնամու դեմ մարտնչելու նոր ձեռք: Հաջորդ օրը գյուղն զբաղված էր աթարի դեզերից մեծ-մեծ գնդեր կապելով, որոնք երկու մարդաչափ բարձրություն ունեին: Մի քանի տասնյակ աթարի դեզեր վերածվեցին պարաններով, կաշվե փոկերով ու նույնիսկ պղնձալարերով կապկապված գնդերի: Իրիկնադեմին աթարի գնդերը թրջվեցին նավթով, իսկ մութն իջնելուն պես, հրամանատարի «Կրա՛կ ...» հրամանով, ասես համազարկով նետվեցին ձոր, դեպի Նաքալաքեւ եւ Մարգաստան գյուղերը, ուր տեղակայված էին թուրքական զորամասի ստորաբաժանումները: Հրեղեն գնդերի ներքեւ սուրալը ուղեկցվում էր Գումբուրդա գյուղի բնակիչների սարքած խլացուցիչ աղմուկաղաղակով: Պետք է, որ գիշերային տեսարանը սաստիկ զգայացունց լիներ, ստեղծեր աստվածային միջամտության պատրանք: Երկնքից ներքեւ սուրացող աստղերը, որ պատռում էին գիշերային մթությունն ու կործանում թուրքական վրաններն ու մահմեդական քրդերի տները, գերբնական ազդեցությամբ, սարսափի ու խուճապի մատնելով ասկյարներին ու քրդերին, որոնք «Ալլա՛հ, ալլա՛հ...» եւ ալլահի բոլոր զինակիցներին օգնության կանչելով փախան գյուղերից եւ լուրջ զոհեր տալով (զարնանը Քուռը վարարել էր եւ կլանեց ոչ քիչ թվով ասկյարների ու բնակիչների) անցան Քռի ձախ ափն ու փրկեցին իրենց մեղավոր հոգիները: Քրդական գյուղերը հրո ճարակ դարձան: Որսը կերավ որսորդին: Թուրքական բանակն այս խայտառակ պարտությունից հետո, այլեւս իվիճակի չեղավ գրոհելու հայկական գյուղը, որին հովանավորում է հայոց Աստվածը:

Եղիսաբեթը գնաց ամենահեռավոր Դամալա գյուղը, որ գտնվում էր Ախալցխայի գավառում, սակայն ավելի մոտ լինելով Ախալքալաքին, նրա ամենօրյա կապերը Ջավախքի հետ էին: Մերգեյի հետ Թթուկծուեցնց Վաղոյի կառքով ճանապարհվեցին: Մարգարյանը նույնիսկ կատակեց.

- Իմացե՛ք, օրիորդ, եթե թուրքերն իմանան, որ դուք գտնվում եք Դամալայում, օր առաջ կհարձակվեն գյուղի վրա, հայերի ամենաթանկ հարստությունը գողանալու ...

Եղիսաբեթը ծիծաղեց.

- Դուք պետք է, որ ինձանից լավ իմանաք, պարոն Մարգարյան, որ Դամալան հերոսների գյուղ է: Շրջապատված լինելով թուրքական քսան գյուղերով՝ նա միշտ եղել է անառիկ ու անմատչելի, եւ վախ, նույնիսկ պատկառանք ներշնչել թուրքերին: Հետո ես մենակ չեմ, ինձ ուղեկցում են երկու քաջասիրտ տղամարդ, ինձ պաշտպանում է նաեւ սա, -եւ ցույց տվեց թաշկինակի մեջ փաթաթած ատրճանակը:

- Ուրեմն, ես լիովին հանգիստ եմ ձեր անվտանգության համար: Սա կառք չէ, այլ անվավոր, շարժվող ամրոց: Բարի ճանապարհ ...

Եվ կառքը գլորվեց ու ոստոստալով սկսեց հաղթահարել խճուղու անհարթություններն ու դարուփոսերը: Եղիսաբեթը սիրահարված էր իր ծննդավայրին, նրա աշխատասեր ու բարի մարդկանց: Նա մանկական խանդավառությամբ էր նայում խոր ձորով, գետին ընկերացած խճուղուն, որ անտարբեր հազարամյակների ընթացքին շարունակում էր իր ոլոր-մոլորը վայ-

րեջքներն ու վերելքները, թավալվում էր ժայռերի տակով, գետի նվազակցությամբ: Եղիսաբեթը կառքում փափուկ բարձերին ընկողմանած հայտնագործում էր բնության գաղտնիքները: Նրան զարմացրել էր խոր ծորի խաղաղությունը: Առաջին պահ թվում էր, թե ծորը խեղդվում է լեռնային գետի հարայ-հրոցից, որը քարերի գլխից լոք տալով, ափերին զարկվելով, գլուխը ջարդելով ժայռերին եւ ծառս լինելով նրանց դեմ, իր վշտոցով, հառաչով, գոռգոռոցով եւ սանձակոծ արագությամբ լռեցրել էր բնության բոլոր ձայները: Կատարվում էր մի անհմանալի, առեղծվածային ծայնային խաբկա՞նք, թե՞ պատրանք. բավական է ուշադրությունը շեղվեր մի այլ երեւոյթի վրա, ասենք թռչնային համերգի, եւ գետի ձայնն անմիջապէս հեռանում էր, մարում, լսելի դարձնելով թռչունների: «Ի՞նչ լռություն է, Աստված իմ, աշխարհը կարծես գործ չունի այս կողմերում: Կյանքի, նույնիսկ բնության ձայներն ասես անէացել են եւ խաղաղությունը դարձել է խլացուցիչ: Եվ բավական է, որ ներքնապէս տրամադրվես լսել գետի նվազները եւ գետը կարթնանա: Զարմանալի՛ է ...»: Կառապանն ընտրել էր ծորի ճանապարհը, որն ավելի բարեկարգ էր, սակայն ավելի վտանգավոր, որովհետեւ անցնում էր թուրքական գյուղերի եւ այգիների միջով: Վերելի ճանապարհն անվտանգ էր, սակայն անսարք, քարուքանդ եւ սպառնում էր կառքին, որը կարող էր ջարդվել քարերին խփվելով ու փոսերն ընկնելով: Ահա այստեղ միանում են Քունն ու Թափարվանը: Գրկախառնման կետի բարձունքի վրա դեպի երկինք են խոյանում խըրթթգ բերդի ավերակները: Նույնանուն թուրքական մեծ գյուղը հաճախ գոցում է խճուղին, շրջափակելով Ջավախք աշխարհը, իսկ ըստ էության, փակելով նաեւ իր ճանապարհը դեպի հացի աղբյուրը, որովհետեւ ցորենն ու գարին, միսն ու յուղը թուրքերը ստանում են Ջավախքից՝ փոխանակելով մրգի հետ: Դայերը հաճախ չտեսնելու, չնկատելու են տալիս այս պարզ հիմարությունը մինչեւ թուրքերը իրենք էլ բացում են ճանապարհը: Լինում է նաեւ հակառակը՝ այս ճանապարհի մի ժայռին Ջավախքն է, մյուս ժայռին՝ Ախալցխան, հայկական խոշոր համայնքները: Եթե թուրքերի չարությունը դառնում է տեւական, իսկ ազգակիցների հանդիպումները՝ անհրաժեշտ, պարզապէս ճեղքում են շրջափակումը ուժով: Այդ բախումներին երկուստեք լինում են նաեւ զոհեր: Վերջերս ավելի լկտի ու հանդուգն են դարձել թուրքերը: Եթե Ջավախքում նրանք զորեղ ուժ չեն ներկայացնում, ապա Մեսխեթիաչի գոտում բազմաքանակ են եւ ավելի վտանգավոր: Ախալքալաքից Ախալցխա ձգվող ամբողջ ճանապարհին, որն անցնում է Քռի հովտով չկան ո՛չ հայկական, ո՛չ էլ վրացական բնակավայրեր, հետեւապէս չնայած այս ճանապարհի աշխույժ երթելւթյանն ու անցուդարձին անպակաս են բախումները թուրքերի եւ մուսուլման քրդերի հետ, որոնք իրենց համարում են Քռի հովտի տերերը, բայց հաճախ ստիպված են նահանջել ու քաշվել իրենց որջերը ավելի ուժեղ հակառակորդի՝ հայերի առջեւ, որոնք հազար կապերով կապված են միմյանց հետ, մանավանդ որ այս ճանապարհով են անցնում նաեւ մեծ ու բարեշէն Գյումրի քաղաքի արհեստավորներն ու առեւտրականները: Թուրքերն այստեղ ունեն տեւական հանգստի եւ տեւական տուրուղմ-

բոցի միմյանց հաջորդող ժամանակներ, երբ չարության հողմը փչում է Թուրքիայից՝ թուրքերն հլու իրենց արյան ձայնին ըմբոստանում են հայերի ու վրացիների դեմ, թեև առանց նրանց անկարող են ապրել: Այս պահերին սովորական մարդկային հարաբերություններն ու առեւտուրը թուրքերը գերադասում են վերածել ալան-թալանի, անասնազոհության ու գողության ընդհանրապես: Նրանց մեջ ցեղական մութ բնազդներն արթնանում են անմիջապես. սպանությունը, բռնաբարությունը, թալանը նրանց բարոյականության չափանիշ ուղեկիցներն են: Այս խորհրդածություններով էր զբաղված Եղիսաբեթի միտքը մինչեւ հասան Ասպինձա խոշոր եւ բազմամարդ թուրքական գյուղը, որից մինչեւ Դամալա գյուղը հինգ կմ էր: Կառապան Վաղոն ինչ որ բան ցույց տվեց: Նայեցին: Գյուղի հրապարակում խտանում էին զինավառ մարդիկ, մեկը բարձրածայն խոսում էր, երեւի ճառ էր ասում.

- Ափսո՛ւս, որ չենք կարող մոտենալ ու լսել, -ասաց կառապանը, -եթե զինված թուրքերի հավաք է, ուրեմն հայերի ու վրացիների դեմ է: Սրանք գիտե՞ք ինչ են ուզում. Ախալքալաքի եւ Ախալցխայի հողերը միացնել Թուրքիային, սրի քաշել բնակիչներին, լայնացնել իրենց տարածքը մեր հաշվին ու հարստանալ: Վարժապետ Նորայր Նորունին էն օրը Խասս բախչայում ճառ էր ասում, որ մինչեւ ռուսական զորքերի հաղթանակը թուրքերի դեմ, էս մեր հողերը՝ Ախալցխայի եւ Ախալքալաքի սանջակները եղել են թուրքերինը, որը կոչվել է Ախալցխայի փաշայություն: Նորունին ասում էր, որ քանի որ ռուս ցարը թախտից ընկել է, սպասում են, որ ռուսական զորքը քաշվի Ռուսաստան եւ թուրքերը մտնեն մեր հողն ու Ախալցխայի փաշայությունը նորից վերականգնվի:

Կառքն արագ եւ անաղմուկ շրջանցեց Ասպինձան: Հայտնի չէ թուրքերը տեսան ու չտեսնելո՞ւ տվին, թե պարզապես շատ էին զբաղված ճառասացի կրակոտ ելույթով, քանի որ լսվում էին նրանց բացականչությունները, չոքելն ու բարձրանալը, ձեռքերով դեմքերն ու մորուքները շոշափելը:

- Եթե վրա տային, ի՞նչ էինք անելու, -ասաց Եղիսաբեթը: - Կռվելու էինք, -ասաց կառապանը:

- Սերյոժա, դու ի՞նչ կանեիր ...
- Եթե հարձակում է լինում զինված մարդու վրա, գործի է դրվում զենքը ...
- Սերգեյը ձեռքը տարավ գրպանը, բայց ատրճանակը չհանեց:
- Կկռվեի նաեւ ես՝ վերջին փամփուշտը թողնելով ինձ համար: Բայց ինչպես երեւում է այսօր մեր հերոսանալու կամ անմահանալու օրը չէր, պարոնա՛յք ... Ճիշտն ասած, չնայած ճանապարհի գեղեցկությանը ես անսահման հոգնած եմ, -խոսեց Եղիսաբեթը:

Վերջին ուրորանն արդեն անցան եւ հայտնվեցին անտառափեշին գտնվող հայկական գյուղում: Մեղաճանում (հրապարակում) մի քանի տղամարդ թթենու տակ խաղաղ գրուցում էին եւ ծխում չիբուխները:

- Բարեւ ձեզ, -ողջունեցին եկվորները:
- Բարի աջողում, - եղավ պատասխանը:
- Որտե՞ղ է լինում գյուղի տանուտերը:

- Ա՛յ լակոտ, գնա մարդկանց ցույց տուր ... -Տղան թառեց կառքի ոտնակին, -Օնե՛ս, դու էդ կնկանը տեսա՞ր, չէ ասենք քոռ ես, չես տեսել եւ բախտավոր ես, որ չես տեսել: Տեսնելու բան չէր: Աչքս աչքին առավ, քիչ մնաց կուրանայի, -հետո փիլիսոփայեց, - մարդ կուրանում է, աչքերը սեւա-նում են, երբ արեւին է նայում: Էդ կնկա լույսը շա՛տ-շա՛տ էր ...

Խոսակիցը ծանորրեն վեր կացավ տեղից եւ ձեռքը դրեց խոսողի ճակատին:

- Չէ՛, տաքություն չունի: Բայց ինչո՞ւ հանկարծ խելագարվեց, հասկանալի չէ: Տնաշեն, կնիկ էր, էլի՛, հա, սիրուն կնիկ էր, համաձայն են, բայց կուրանալուն համաձայն չեն, մանավանդ համաձայն չեն խելագարվելուն ...

- Սա էսպես է, -խոսեց մեկ ուրիշը, -ջուրը չտեսած բոբիկանում է: Այ տղա, սիրուն կնիկ տեսնելուն պես մարդ էդպես կխեղճանա՞, խեղճ Օնեսին էլ կույր սարքեցիր, դու էլ կուրանալու ցանկություն ունեցար, տղամարդն էդքան թույլ չպետք է լինի ...

- Ի՞նչ եք գազազած թագինների նման ընկել վրես ու գզգզում: Անճաշակ մարդ եք, սիրուն կնկա տեսնելու շնորհք էլ չունեք ... Ասենք էդ անծանոթ կնոջը շատ հավանեցի, ձեզ է՞նչ ... Խանդո՞ւմ եք, ձեր բարեկա՞մն է, ձեր ի՞նչն է, որ նրան հավանելը մեղք եք համարում ...

- Վերջ տո՛ւր, հավանում ես, հավանիր, մենակ մի բան իմացիր, որ արեւին նայելիս մարդկանց աչքերը ոչ միայն կուրանում են, այլեւ շլվում: Կուրանալն էնքան չի այլանդակում մարդուն, որքան շլվելը, երբ աչքերից մեկը հարավ է նայում, մյուսը՝ հյուսիս: Ո՛ւզում ենք, որ աչքերիդ տեր կանգ-նես, այ կնկա խելառ ...

* * *

Դամալա գյուղից փոքրաթիվ պատվիրակությունը Ախալքալաք վե-րադարձավ բարձր տրամադրությամբ: Գյուղն զգալով թուրքերի անհանգս-տությունը, սկսել էր զինվել: Գյուղն ապրում էր իր սովորական աշնանային առօրյան, իր այգեկութը, իր կալուկուտը, բայց առանց մոռանալու, որ ինքը շրջապատված է թուրքական քսան գյուղով, որ մարդաշատ են, ռազմատենչ, կողոպուտի եւ հայի արյան ծարավ: Մարտիրոս Սախակյանն արդեն ավար-տում էր երկու հարյուր հիսուն հոգուց բաղկացած վաշտի կազմակերպումն ու հանդերձավորումը, որ հետագայում պետք է փառքով պսակեր Դամալա գյուղի անունը, դառնար շրջապատի թուրքական գյուղերի սարսափն ու իրեն կոչեր Ձեյթուն անունով: Վեց ամիս մնալով թուրքական շրջապատման մեջ, աշխարհից կտրված հայկական այս գյուղը հերոսության հրաշքներ գործեց: Դեռ գալու էր գյուղի համար դժվարագույն 1918 թ., հատկապես ապ-րիլը, երբ յուրաքանչյուր բացվող օր ողբերգական հերոսությունների աննա-խաղեպ պատմություն պիտի հյուսեր, ապրեր ու գոյատևեր, դառնար թուր-քական խուժանի եւ զորքի զսպիչը: Այս առունով պիտի նշանավորվեր ապ-

րիլի 4-ի միջադեպը, երբ երեք հարյուր հոգուց բաղկացած թուրքական հրոսակախմբի ճանապարհը դեպի Դամալա փակեց Արսեն Պետրոսյանի տասնինը հոգուց բաղկացած ջոկատը: (Վաշտն այդ ժամանակ օգնության էր գնացել վրացական փոքր ու սակավաթիվ գյուղերին, որոնց եւս թուրքական դաժանությունը մատնել էր թալանի, սպանության եւ բռնաբարման): Թուրքական հետախուզությունը գիտեր, որ գյուղի պաշտպանները զբաղված են այլ տեղամասում, եւ հեշտ հաղթանակի ու հարուստ ավարի ակնկալությամբ զորքը նետվեց Դամալա: Ծանր բախում եղավ մի բուռ հայերի եւ մինչեւ ատամները զինված թուրք վաշտի միջեւ: Ավելի քան ողբերգական եղավ մարտի ելքը թուրքերի համար: Տալով բազմաթիվ զոհեր, առանց ետ նայելու նրանք ճողոպրեցին, քանզի հայերի դիպուկ ու համերաշխ համազարկերը սպառնում էին նորանոր կյանքեր խլել ավարառուներից: Գյուղն այդ ընդհարմանը կորցրեց մեկ հոգի:

Մենք պատմեցինք մեկ դրվագ այն հերոսական օրերից, որ գալու էին ամիսներ անց, որոնց մասին եղիսաբեթի փոքրիկ պատվիրակությունը չգիտեր եւ չէր էլ կարող իմանալ, թեւէ կարող էր գուշակել, որովհետեւ պատվիրակությունը բավական խանդավառ էր գյուղում իր տեսածից, լսածից, նաեւ այն բանից, որ ոչ մի սատանայական ուժ չի կարող ստիպել գուղացիներին լքելու գյուղը, արմատահան անել այն ծառերը, որոնք դարերով ամրացել ու խորացել են այս քարերի ու ժայռերի մեջ, որ գյուղն է իրենց, ուր ննջում են պապերն ու ապուպապերն իրենց, ուր օրորվում են մանուկների օրորոցներն իրենց, ուր ծխում են օջախները հայոց, ուր եկեղեցին հայոց իրենց հոգու սերն ու խռովքն է հասցնում երկնային տիրոջը, ուր ծխում է հայոց հարատեւման ծուխ ծխանին: Նման երդման խոսքեր խոսեց գյուղը, վարակեց նրանց լավատեսությամբ ու հավատով, որ այնքան անհրաժեշտ են ճակատագրական ժամանակներին բախվելուց առաջ:

Եղիսաբեթը, որին այստեղ քիչ մնաց երկնային համարեին, խանդավառվելով գյուղում իշխող հայրենասիրական բարձր ոգով, ինքն էլ իր անձով, իր գեղեցկությամբ, իր խոսքով խանդավառեց գյուղացիներին: Երիտասարդները գյուղացու պարզ հիացմունքով, չկարողանալով զսպել իրենց ջերմությունն ու հուզումները, նայում էին նրան: Մի ծերունի նույնիսկ կասկած հայտնեց.

- Էս է, հարյուր տարեկան եմ դառնում, քեզ նման սիրուն կնիկ տեսած չկամ: Հիմի դու ինձ ասա, եթե դու Աստծո կողմից չես եկել, բա ո՞ւմ կողմից ես եկել, չլինի՞ սատանայի: Չնեղանաս, աղջիկ ջան, սատանան էլ է սիրուն լինում ...

- Ո՛չ Աստծո, ո՛չ էլ մանավանդ սատանայի, հայրիկ ջան: Եկել եմ Ախալքալաքի պաշտպանության կոմիտեի կողմից: Ծնվել եմ հողեղեն հորից ու մորից ...

Իսկ երիտասարդ, դեռեւս չկայացած հերոս Արսեն Պետրոսյանը չդիմացավ.

- Եթե մեզ մոտ մնաս, գյուղին ոչ ոք մոտենալ չի համարձակվի, կօգնես պաշտպանությանը ... Քեզ համար ոչ սիրտ, ոչ կյանք չենք խնայի ...

Ծերունին համաձայն չեղավ.

- Ուզում եք գյուղում պահել, որ թուրք շներին ու գելերին կապեք գյուղի ջանին: Սրան գողանալու համար թուրքերն իրենց ամբողջ զորքը կքշեն գյուղի վրա: Չհավատաս էս ջահելներին, աղջիկ ջա՛ն, սրանց արյունը դեռ տաք է, խոսում են, բայց չգիտեն, որ էս աշխարհի ամենամեծ կռիվները եղել են սիրուն կնիկների պատճառով: Դրանք կռվախնձոր են, կռվախնձոր ...

Խոսեցին, սրախոսեցին, ծիծաղեցին եւ հյուրերին ճանապարհեցին ամբողջ գյուղով:

- Իմացեք, որ մենք կանք, էդքան բան ...

Գյուղեր մեկնող պատվիրակությունները վերադարձան գոհունակությամբ: Գավառի մեջ նկատելի չէին պարտվողական տրամադրություններ, անկազմակերպվածության միտումներ: Բոլորը խոսում էին հայրենի հողը, տունուտեղը պաշտպանելու իրենց վճռականությունից, թշնամուն օջախներին մոտ չթողնելու անհրաժեշտությունից:

Գյուղի մեծագույն պահանջը գենքն էր, որի սակավությունը հաճախ մարում էր գավառի պաշտպանների ոգելորությունը: Նման դեպքերում պատվիրակները հուսադրում էին Թիֆլիսի ազգային խորհրդի խոստումներով. խորհուրդը խոստացել է գենքի հարցը օր առաջ լուծել: Խոսում էին քաղաքում տեղակայված ռուսական զորամասի հետ բանակցությունների միջոցով հայրենիք վերադարձող ռուս զինվորների գենքը գավառի ինքնապաշտպանությանը հանձնելու մասին: Խոստանում էին: Բայց խոստումը, ցավոք սրտի, կախված չէր խոստացողներից: Տարեւերջին Ախալցխայից հուսադրող լուր ստացվեց, թե ռուսական կայազորը ամբողջ գենքը, զինամթերքը եւ զինհանդերձանքը թողնելով ժողովրդին՝ բռնել է Ռուսաստանի ճանապարհը: Ասվեց, որ ընկել է նաեւ ժամանակավոր կառավարությունը, իսկ նրա ղեկավարը՝ Կերենսկին, ճողոպրել է արտասահման: Թիֆլիսում կազմակերպվել է Անդրկովկասյան կոմիսարիատը, որը փաստորեն անջատել է Անդրկովկասը Ռուսաստանից: Երկրում քաոս է: Անդրկովկասում քաոս է: Այդ քաոսում անդրկովկասյան ժողովուրդները ներկայացնող ազգային կուսակցությունները, մասնավորապես, հայ հեղափոխական դաշնակցությունը պատեպատ են զարկվում՝ որոնելով փրկության ուղիներ: Ախալքալաքի գավառից եւս հեռացավ կայսերական զորամասը, սակայն իր հետ տանելով գենքն ու զինամթերքը՝ մինչեւ վերջին փամփուշտը: Ախալցխայից եկան նոր, սակայն տափնապալի լուրեր: Տեղի թուրք բնակչությունը, որ կազմում է գավառի վաթսուն տոկոսը՝ 1917 թ. դեկտեմբերի 27-ին, տասնհինգ հազարանոց բաշիբոզուկներով շրջապատել է Ախալցխան, եւ ժողովուրդը ոտքի է ելել պաշտպանելու իր քաղաքն ու քաղաքամերձ հայկական ու վրացական բնակավայրերը: Պաշտպանությունը գլխավորում է երիտասարդ քաղաքագլուխ Ջորի Ջորյանը, որն օժտված է կազմակերպչական, դիվանագիտական եւ ռազմական իմացությամբ: Անդրկովկասում ծանրացավ վրացիների եւ, հատկապես, հայերի վիճակը: Այս անգամ եւս խուժանին նետելով առաջ, Կեհիբ փաշան որսաց քրիստոնյա վրացիներին եւ հայերին դատաստանելու պահը: Սկսվեց

Ախալցխայի եւ Ախալքալաքի մահու եւ կենաց կռիւլը թուրքերի հետ, որ փոխանակի հաջողություններով՝ Ջավախքում տեւեց չորս-հինգ ամիս, իսկ Ախալցխայում ընթացավ հայերի փառապանծ հաղթանակով։ Ախալցխան եւ նրա գավառը չբռնեցին գաղթի ճանապարհը։ Թուրքն իր ատամները ջարդեց, հետեւաբար, փակվեց նրա ախորժակը, եւ չնայած Վրաստանի մենշեւիկները տասնութ թվականի կեսերին Ախալցխայի գավառը հարկադրաբար զիջեցին Թուրքիային, սակայն հայերն ու վրացիները չլքեցին իրենց հայրենի եզերքը, եւ գազանության ու բարբարոսության ասպարեզներում պարտություններ ու զիջումներ չճանաչող թուրքերը, ստիպված եղան՝ իշտահիդ քացախ, առածի սկզբունքով զսպել իրենց ախորժակը, որպեսզի չարթնացնեն տեղացի հերոսների երբեք չննջող հայրենասիրությունը։

Ջավախքը, չնայած ժողովրդական հերոսությունների եւ անօրինակ սխրանքների՝ տեղահան եղավ։ Դժվար է գրել պարտվեց բառը, որովհետեւ Ջավախքը չպարտվեց։ Նա կռվեց եւ կռվելով թողեց հայրենի հողը։ Պատճառները շատ էին. չկար կազմակերպող մի զորեղ ուժ, որ միավորեր բռունցքներ եւ կռվող ուժերը նետեր թշնամու դեմ։ Չնայած Թիֆլիսի ազգային խորհրդի խոստումներին, նա իվիճակի չեղավ զինել հայկական գավառը, որն ուներ տասնյակ հազար մարտունակ մարդիկ եւ շատ աննշան զենք ու զինամթերք։ Կարելի է ենթադրել, թե ի՞նչ հուսահատություն ապրեցին հայրենասեր ուժերը, երբ պարզվեց, որ զորամասը ամենայն բժախնդրությամբ Ռուսաստան է տարել իր զենքը, որ այլեւս անհնար էր կանգնել մինչեւ ատամները զինված թուրքական կանոնավոր բանակի խորտակիչ զորության եւ թալանչի խուժանի դեմ։

1918 թ. ապրիլի վերջին եւ մայիսին Ջավախքը դատարկվեց հայերից։ Ծանր նստեց այդ գաղթը, որ երկու մեծ հոսանքով գնում էր Վրաստանի առավել ապահով խորքերը. Ծալկայով դեպի Մանգլիս ու Թիֆլիս եւ Բակուրյանով դեպի Թիֆլիս։ Գաղթականների մի հոծ զանգված էլ ցրվեց Կովկասով մեկ։ Գաղթի ճամփաներին քաղցի եւ անտերության ծանր պայմաններում, տարափոխիկ հիվանդությունների, արշավանքների դիմաց մերկ ու անօգնական, անտուն եւ անօթեւան Ջավախքի ութսուն հազարանոց հայ համայնքը կես տարվա ընթացքում կիսվեց, եւ հետագայում տուն դարձան քառասուն հազարը, որոնք նոր Ջավախք պիտի արարեին, որովհետեւ նախկինը թալանված, հրդեհված ու քարուքանդ էր։ Հարյուր հազարավոր գլուխ մանր ու խոշոր անասունները քշված էին Թուրքիա։ Անփառունակ վախճան ունեցան նույնիսկ սխրանքներն ու հերոսությունները։ Այնուամենայնիվ, ջավախքցի մի խումբ գլխից ձեռք վերցրած մարդիկ մնացին թշնամու թիկունքում, գրավված Ջավախքում, եւ ծանր ու անպատմելի սխրանքների գնով, վրեժխնդիր եղան թշնամուց։

Խուճապն սկսեց միանգամից: Թուրքական հրետանու ձայնը քաղաք հասավ նախ հեռավոր ամպրոպի նման, հետո լռեց: Մայիս էր, արեւ: Երկինքը նաքուր կապույտ, եւ մարդիկ զարմացած ու շվարած նայեցին միմյանց: Բավական երկար ընդմիջումից հետո լսվեց երկրորդ համազարկը: Արկերը պայթեցին հեռվում, զինվորական ավանի հետեւում, որովհետեւ ձայնը, պայթյունների վնգոցը լսելի էր, իսկ երեւացող ոչինչ չկար: Փոքր ծորակի բնակիչներն ավելի շուտ եւ առավել սուր արձագանքեցին մոտեցող դժբախտութիւնը:

- Ամա՛ն, թուրք կուգա, չէ՛, չէ՛, եկավ, ամա՛ն ...

- Ելման ջրերու պես կուգա, ինքը իր ձեռնի տետեն կուգա ... Փախե՛ք ...

Տղամարդիկ երեւացին: Վազում էին: Հարկավոր էր րոպե առաջ թողնել քաղաքը: Հրետակոծությունը մոտենում էր: Երրորդ համազարկը խփեց Չամբուրայի ճանապարհի ուրբանին: Խարազենց հարսի վախից ու զարմանքից լայնացած աչքերի առջեւ, դրոշոցից վայրկյան անց, հանկարծ տասնյակ սեւ փուչիկներ շարվեցին կողք-կողքի, հետո պայթեցին՝ վարագուրելով ճանապարհն ու իջնելով ճանապարհին: Փոշին ու ծուխը կպան հողին ու մնացին: Մարդկային ձայները կորցրին իրենց մաքրությունը, խռպոտվեցին, խզվեցին, վերածվեցին ճիչերի ու վայնասունի: Չգիտես ինչու, տղամարդիկ սկսեցին հայիոյել, անգամ նրանք, ովքեր իրենց կյանքում հայիոյած չկային: Չորափի փողոցամերձ հրապարակում կանգնեց լավաշով բեռնված ֆուրգոնը: Հացթուխը հաց էր բաժանում, բայց շվարած մարդիկ համառորեն չէին տեսնում հացը, որ մեկ- երկու օր անց պետք է դառնար փրկություն ու երազանք:

- Հա՛ցը, հա՛ցը մի թողեք, տարե՛ք, հետո կփոշմանեք ...

Շփոթվածությունը, խուճապը մարդկանց հուշում էին վերցնելու բաներ, որոնց կարիքը բոլորովին չէր զգացնելու: Մի ջահել հարս գրկել էր «Ձիւնգեր» կարի մեքենան ու ճչում էր: Սկեսուրը շտապեցնում էր:

- Աղջի՛, ինչո՞ւ ես գրկել էդ անտերը, սենյակից ծծկերիդ հանի...

Սա քնից արթնացածի նման նետեց մեքենան ու վազեց տուն: Բարուրած մանկանը գրկած դուրս եկավ ու խառնվեց այս ու այն կողմ նետվող բազմադեմ ու բազմազուլխ ամբոխին, ուշադրություն չդարձնելով սկեսրոջ ճիչերին, որ որոնում էր մյուս թռռանը: Այդ պահին թուրքական հրետանին արդեն շոշափում էր քաղաքի մատույցները: Արկեր էին պայթում փոքր ծորում, մի երկու արկ պայթեցին ջրաղացի տարածքում, քանդելով ջրի ամբարտակը եւ ջարդելով թափանիվը սնող նովերը: Մի արկ պայթեց բաղնիքի վրա՝ քանդելով լողարանի գմբեթը: Արկեր պայթեցին Պապույենց, Օմփոսենց եւ Տափխենց բոստաններում: Կրակն առանց շտապելու բարձրանում էր քաղաք: Ջղայնությունից աղավաղված դեմքով կառապան Վարդոն անխնա մտրակում էր կնոջը, որովհետեւ սա ցանկանում էր կառքը բեռնել մուրաբայի պղնձով:

- Աղջի՛, խելա՛ն, տնեցիներին պետք է փրկել, ոչ թե պղինձները... Աղջի՛, խելքի արի, էշի նահատակ կղառնանք ...

Բայց ո՞ւմ ես ասում, պղինձը նորից պատվում ու թառում էր կառքին, որպեսզի վայրկյան անց արեւի տակ շողշողալով նորից բախվեր սալահատակին, եւ կինը ճաշակեր ծեծն ու ջարդը:

- Ջահել աղջիկներին լավ նայեք, հանկարծ չմնան, թուրքի ձեռը չընկնեն ...

Պառավ Սաթոն էր: Հինգ հասած աղջիկ ու թոռ ուներ: Պառավը նրանց հավաքեց, զոռով զգեց փայտե արտաքնոցն ու զգեց փականը: Նրանց մայրը անսխալ գտավ իր աղջիկներին եւ ազատեց աչքերն արտասվելուց ուռած իր սիրունիկ բալիկներին:

- Մատաղ եմ խոստացել, ես դժոխքից եթե փրկվեցինք, եզ պիտի մորթեմ ...

Պայտար Օնեսն էր: Օղու շիշը բերանին, մատաղ էր խոստանում: Արկերը սկսեցին պայթել քաղաքում: Առաջին զոհերն ավելի զարհուրելի վիճակի հասցրին շփոթահար մարդկանց: Մարդիկ ամեն ինչ՝ իր, առարկա, պիտանի, ոչ պիտանի դեն էին նետում եւ երեխաներին գրկած՝ փախչում դեպի Մեծ ձորը, բռնում Բակուրյանի ճանապարհը, քանի որ Ախալցխայի ճամփան փակ էր: Խռովահույզ բնակչությունը լցվել էր ձորը, բռնել նեղ ճանապարհը: Կարմիր կամուրջն այնպես էր խցանվել, որ խեղդվել էր ամեն մի շարժում: Թափարվան գետը զարնանային ելման ջրերից ուռել, փշաքաղվել եւ սեւացել էր: Վա՛յ նրան, ով հանկարծ սայթաքեր ու ընկներ ջուրը: Անմիջապես կղառնար չարացած գետի զոհը: Նույնիսկ լողալ իմանալը փրկություն չէր: Ջուրը ծանրացած էր, սահանքները մեծացած, կխփեին քարերին ու ժայռերին եւ ոչ եւս կլինեիր նույնիսկ ամենախիզախ լողորդը: Վիճակը կտրուկ փոխվեց, երբ առաջին արկերը հասան փախչողների հետեւից եւ պայթեցին ձորում: Երեւում էր, որ թուրք հրետանավորները գիտեն տեղանքը, քաղաքի դիրքը, մուտքնուելքը, որովհետեւ կրակը ճշգրտում էին փախչողների ճանապարհի եւ մարդկային կուտակումների վրա: Կամուրջի խցանման վերացնելը տասնյակ մարդկանց կյանք կերավ: Կառքերը եւ ֆուրգոնները չցանկանալով ճանապարհը զիջել միմյանց թափով կպան իրար: Մի կառքի անիվներն ինչ-որ սատանայական հնարքով մտել էին ֆուրգոնի անիվների մեջ եւ անհնար դարձրել մի քայլ առաջ կամ հետ շարժվելը: Անպատմելի ճիչ ու վայնասուն էր: Տղաների մի խումբ ու մի աղջիկ մնացել էին կառքի եւ ֆուրգոնի արանքում եւ ճգմվում ու ճխլտվում էին: Օգնել նրանց անկարելի էր, որովհետեւ կամուրջը բերնեբերան լցված էր փախստականներով: Միմիայնց սեղմելուց ու հրելուց կամուրջի բազրիքի արանքներից ջուրն էին թափվում կանայք, երիտասարդներ ու երեխաներ: Սահմոկեցուցիչ վայնասունի մեջ խլանում էին խեղդվողների ճիչերը, ձայները խեղդվում էին գետի շառաչի մեջ: Աղմուկն իր գագաթնակետին հասավ, երբ քաղաքի բերդի պարիսպների առջեւ երեւացին թուրք հրետանավորները, որոնք թնդանոթները տեղադրում էին ամրոցի առջեւ, ուղիղ նշանառությամբ փախստականներին գնդակոծելու համար:

- Սրիկանե՛ր, հետեւակը դեռ չի երեւում, իսկ հրետանին առաջ են գցել: Մինչդեռ հակառակը պիտի լիներ, -խոսում էր սեւ մորուքով մի հսկա անձնավորություն, -է՛յ, ջահելներ, եթե մի դասակ կազմեք, խոստանում եմ էդ թնդանոթները կես ժամից հետո գլորել ձորը ...

Նրա ձայնը լսվեց: Ջարմանալի էր, որ լսվեց: Եվ ասես հրամանով անբոխից անջատվեցին մի քանի տասնյակ երիտասարդներ եւ հնազանդ շարվեցին նրա առջեւ:

- Դուք գիտե՞ք, որ մեզնից առնվազն կեսը զոհվելու է, -չթաքցրեց մորուքավորը, -գիտե՞ք ...

- Գիտենք, -եղավ պատասխանը:

- Դե, ուրեմն, Աստված օգնական, գնացի՛նք ...

- Սպասեցե՛ք, կանգ առե՛ք, տո՛ խելագարներ: Ռապատից դեպի գետն է իջնում թուրքական գունդը, կա՛նգ առեք ...

Բերդի հետնամասից դեպի ձորն էր հոսում ասկյարների հոծ լավան: Իջնում էին կրակելով: Երեւում էր, որ նրանք հարմար տեղ են որոնում գետանցելու համար: Իսկ գետը գնալով վարարում էր, թույլ չտալով, որ օտար զավթիչը խլի նաեւ իր ազատությունը: Ասկյարներն ակնհայտորեն վախեցնում էին գետանցումից: Եվ շուտով կայացրին ամենաընդունելի որոշումը: Գունդը հանկարծ կտրուկ շրջվեց ձախ եւ շարժվեց դեպի կամուրջը:

- Թուրքը գալիս է դեպի կամուրջը, գլուխներիդ ճարը տեսեք ...

- Կամուրջն արագ դատարկել, կտրտել ձիերի փոկերը, անջատել կառքերից ...

... Վախը մարդկանց դարձրեց կարգապահ ու նախաձեռնող: Արագ դատարկվեց կամուրջը: Ջահելներից մի քանիսը դարձան հեծյալներ, նրանց ձեռքերում երեւացին հրացաններ: Ձիերը վարգեցին դեպի Բակուրյանի ճանապարհի ուղորանը եւ դիրքավորվեցին: Խոււմբը սկսեց մեծանալ եւ նրանց առաջին համազարկը պետք է գնահատել ութ-տաս ասկյարի կյանք: Հրետանին թնդանոթների փողերն ուղղեց դեպի խիզախները, սակայն հրետանավորները արկերն ուղարկեցին Բավրա գյուղի արտերը: Դա հնարավորություն տվեց մարտնչող հայերին մի քանի համազարկով եւս զգալի կորուստներ պատճառել ասկյարներին, որոնք արագորեն շարժվում էին դեպի Կարմիր կամուրջը: Օգտվելով հետեւակի շփոթմունքից՝ տղաները փոխեցին իրենց կրակակետերը, իսկ հրետանավորները մինչեւ կճշգրտեին իրենց նշանացույցը եւ կհարվածեին նպատակակետին, այն արդեն լքել էին հայերը, որոնք նոր, ավելի անմատույց դիրքերից սկսեցին անխնա գնդակահարել իրենց բռան մեջ գտնվող ասկյարներին: Շփոթությունն ու խուճապը կամուրջի եւ կամրջամերձ տարածքում գնալով ավելանում էր: Պատվախնդիր ջավախքցիները գերադասում էին զոհել հարսներին եւ աղջիկներին, քան նրանց պատիվն ու նամուսը կերակուր դարձնել թուրքերին:

- Սերը մանուկին ուրացել է, Աստվա՛ծ ... -կուրծքն էր ծեծում մի խելագարված պառավ, ուրացել է ... -Նա կրծքին գնդակ ստացավ: Երերաց: Առաջացավ դեպի կամրջի եզրը, կանգնեց պղտոր ջրերի գլխին, -ին դիակին

անգամ թուրքը չպիտի ձեռք տա ... -ասելով նետվեց կամուրջից ներքե։ Ալիքներն անմիջապես գրկեցին նրան ու տարան։ Երկու ջահել հարս գետը նետվեցին բարուրները գրկած։ Մի քանիսը ջուրը նետեցին երեխաներին ու փախան։ Բայց նրանց չանթեցին թուրքերն ու դարավոր ավանդույթին հավատարիմ քարշ տվին դեպի ոչ հեռվում գտնվող սպանդանոցի շենքը։ Սակայն եւ նրանց, եւ ջահել հարսներին գտան քողարկված տղաների գնդակները եւ առանց հայ ու թուրք ջոկելու, բոլորին գնդակահար տապալվեցին գետնին։ Ահազարհուր պատկերները խառնվել էին իրար։ Կռվում էին հուսահատությունից հերոսացած փախստականները հաստատ իմանալով, որ պիտի մեռնեն։ Կրծում էին իրենց լլկել, նվաստացնել ցանկացողների կոկորդները։ Հանում էին աչքերը, մեռնում էին առանց հաշվի առնելու կյանքի ու մահվան տարբերությունը։ Թուրքական հրետանին չէր կարողանում ուղիղ դիմահար կրակ բանալ փախստականների վրա։ Երկու փորձը տապալվեց։ Հետեւեակը խառնվել էր փախչող ամբոխին, եւ թուրքական արկերը վնասում էին նաեւ սեփական հետեւեակին։ Հրետանին որոնում էր մարտնչող հայերին, որոնք կրակում էին արդեն նշանառությամբ, խլելով նորանոր զոհեր ասկյարներից։ Հրետանավորների եւ կռվող հայերի միջեւ սկսվել եւ ընթանում էր կատվի ու մկան մի հետապնդում։ Միայն հայտնի չէր, ովքեր էին մկները եւ ովքեր կատուները։ Հայերը, ակնդետ հետեւակի շարժումներին՝ նոր զոհեր էին որոնում։ Հրետանին ցանկանում էր հայտնաբերել հանդուգն կռվողներին, բայց միշտ ուշանում էր, քանզի երիտասարդ վրիժառուները փոխած էին լինում իրենց տեղը։ Ընդհանուր իրարանցման մեջ, ինչպես ասում են, շունը տիրոջը չէր ճանաչում։ Կամուրջը հաղթահարող ասկյարներն ընկան բազմության մեջ եւ լուծվեցին նրա մեջ։ Նրանց առաջին տասնյակը զոհ դարձավ կատաղած կանանց։ Ճնկոյեց մշեցի հարսը՝ Հայաստանը, շիկավուն ու հսկա մի կին, դժվարությամբ պոկվելով թուրք օնբաշուց (տասնապես), որ երկու ձեռքով քցանել էր նրա ստինքները եւ քաշում էր դեպի ժայռերը, իվերջո, օնբաշին հանկարծ բոլորի աչքերի առաջ, պոկվեց գետնից։ Հայաստանը բառաչող թուրքին նետեց գետը։ Եվ անմիջապես նրա կողը խրվեց այդտեղ հայտնված ասկյարի վրիժառու սվինը։ Հարսը ճչաց եւ մի պահ ցավն ասես մոռացած, փաթաթվեց իրեն խոշտանգողին, իր հետ քաշեց դեպի բարձրահիր ափն ու նրանք՝ արյան թշնամիները գրկված նետվեցին ջուրը։ Հետո ուրիշ բան կատարվեց թուրքական զորքին։ Հրետանին իր կրակը տեղափոխեց հեռու։ Գնդակոծվում էին Մաջադիա գյուղն ու սարը։ Հետեւեակը բաժանվեց երկու մասի։ Կեսը շարժվում էր դեպի Մաջադիա գյուղի հովիտը, ուր թուրքական հրետանին կրակի ահավոր փոթորիկ էր սարքել։ Մյուս կեսը շարժվեց ձորալանջով, քաղաքի հին գերեզմանոցով դեպի Տաշվանթափա սարը։ Փախստական տղամարդիկ գլխի ընկան կատարվածը։ Ուրեմն, Մաջադիա գյուղի առջեւ խրամատավորվել են Ջավախքի վերջին եւ գուցե ամենամարտական ուժերը։ Թուրքական զորամասը հրետանու միջոցով քանդում է նրանց պաշտպանությունը։ Ճակատից հարձակվում էին ձորի շուրթերից արդեն բացազատվող հրաձգային գումարտակը ու նրան օգնող քաղա-

քի ծայրին երեւացող հեծյալ հեծելավաշտը: Տաշվանթափա սարի ներքեւում գտնվող Բավրա գյուղի կամրջով պետք է գետանցեր մյուս գումարտակը, որպեսզի Կուլիկան գյուղից մտներ հայ աշխարհագրորհի թիկունքը եւ փակեր Մաջարիայի դիմադրության հարցը:

- Աստված իմ, -ինքնիրեն խոսեց մորուքավորը Սեւ Արսենը, -թուրքերը կկտորեն ողջ հայկական գունդն ու կոչնչացնեն բոլոր փախստականներին:

- Տղաներ, մենք պարտավոր ենք օգնել հայոց աշխարհագրորհին: Հարկավոր է ձորի ճանապարհով արագ հասնել Բավրայի փայտե կամուրջը, քանզէլ կամ այրել այն. ափսոս, որ պայթուցիկ չունենք ... Առաջադրանքը կատարելուց հետո վերադարձեք ճգնավորի քարայրները: Վերադարձի ճանապարհը չփոխեք, որպեսզի չկորցնենք միմյանց: Քայլեցեք իծաշարուկ մեկ-մեկ ... Ոչ մի կրակոց, ո՛չ մի ինքնագործունեություն: Ես կլինեմ հակառակ ափին՝ ճգնավորի մատուռում: Մնացածի մասին կպայմանավորվենք հետո: Հաջողություն ձեզ...

Թուրքական գումարտակը բարձրացավ ձորալանջը եւ բացազատվեց: Ասկյարների շղթան, զգուշորեն հոտոտելով ճանապարհը, շարժվում էր առաջ: Հրետանին թիրախ դարձրած քարոտ սարալանջը քար էր աղում, որը ոչ մի վնաս չէր պատճառում հայերին: Իսկ հայոց գունդը լռում էր, որովհետեւ հրետանու աղմուկը կար, սակայն թուրքական զորքը չկար, չէր երեւում: Բավրայի կամուրջի կողմն ուղարկված հետախույզը վերադարձավ եւ հրամանատարին Սեւ Արսենին զեկուցեց, որ Բավրայի կամուրջը այլեւս գոյութուն չունի, հրդեհվել է եւ փակել թիկունքը սողոսկող գումարտակի ճանապարհը:

- Ապրեն հերոսները, կեցցե՛ն ... -Որոտաց խրամատավորած գունդը:

Հայոց գունդ անվանումը թող ընթերցողին թյուրիմացության մեջ չզցի: Գունդը ենթադրում է առնվազն երկու-երեք հազար մարտիկ ունեցող զորամիավորում, որ ունի հրետանային, հեծելազորային եւ այլ զորատեսակներ, որոնք կարող են լուծել ռազմական ստրատեգիական բարդ խնդիրներ: Հայոց գունդը կազմված էր գավառի ողջ մնացած ժողովրդական ստորաբաժանումներից, որոնք դեռեւս ունեին կրակային միջոցներ՝ հրացան, փամփուշտ եւ անկոտրում, չնվաճված ոգի՝ կռիվը մինչեւ վերջ շարունակելու եւ կռվելով ավարտելու իրենց կյանքը, որովհետեւ պարտվող զինվորը, նրանց կարծիքով, ոչ մի առավելություն չուներ սպանված զինվորից: Մեռնել պարտքը կատարած, ահա մի բուռ՝ երեք հարյուր հոգի հաշվվող մարտիկների քանակը, որ սպասում էին ապրելու եւ մեռնելու օրհասական պահին:

Թուրքական զնդի հրամանատար բինբաշի (հազարապետ) Օմար փաշան լսելով Բավրայի կամրջի խորտակումը, զազազեց եւ սկսեց փողոցային հիշոցներով լիցքաթափել իր կատաղությունը: Հայիոյում էր հայերին, որ մեռած էին եւ կենդանացան: Հայիոյում էր հայի Աստծուն, որ հովանավոր է իր անհավատներին՝ գյավուրներին: Բողոքում էր ալլահից, որ թույլ է տալիս հայերի Աստծուն կենդանացնելու գյավուրներին: Հետո կատաղած վրապրծավ հետախուզության պետին, որ վերջինս գլխի չի ընկել այնքան լուրջ

հաղթանակը» պսակված բազմաթիվ գոհերով: Ի՞նչ անել: Ձեկուցեցին գնդի հրամանատարին, որ հայերի խրամատները դատարկ են, նույնիսկ սպանվածներ չկան, որ հազար անգամ սպանելով, հազեցնեն հայերի նկատմամբ ունեցած վրեժն ու ատելությունը:

- Ինչպե՞ս թե չկան ... Ի՞նչ եղան, բարձրացան երկի՞նք, ցնդեցի՞ն, ինչպե՞ս թե չկան ... նայեցեք դիմացի սարին՝ ճաղատ է, մերկ, ինչպես ներքինու գլուխ, եթե սարով գնային, էլի տեսանելի կլինեին, ուրեմն ճանապարհը գտեք, նրանք շատ հեռու գնացած չեն լինի ...

- Ճանապարհը գտել ենք, սակայն մարդկանց հետքեր չկան, -խոսեց հետախուզության պետը:

- Կանչեք գնդի բժշկին, -հրամայեց Օմար փաշան: -Լսիր բե՛յ, հենց հիմա իմ ներկայությամբ չափիր մեր հետախուզության պետի ջերմությունը: Դիվանդ է, թե չէ՛ նշանակություն չունի: Սրսկեք նրան ջերմության դեմ, ձիու դոզաներով, այն դեղից, որ սրսկում ենք դիզերտիրներին: Նա խելագարվել է, ասում է հայերը ցնդել են, գոլորշիացել կամ Փեյղամբարի նման համբարձվել երկինք: Թե խելագար է, թող իսկականից խելագարվի: Այս էլ քանի անգամ նրա պատճառով բաց ենք թողնում ձեռքբերված հաղթանակը ...

Կրակոց լսվեց: Օմար փաշան վախից նետվեց գետնին: Իսկ նրա ոտքերի մոտ թաքտում էր հետախուզության պետի ջղաձգվող մարմինը: Օմարը բարձրացավ.

- Իշու նահատակ, -զգվանքով նայեց մեռնողին, -այնուամենայնիվ, կարողացավ մարդավարի մեռնել ... Տարե՛ք դրա լեշը ...

Ցամաք ձորակով հայերին հետապնդել թույլ չտրվեց: Առանց այն էլ գունդը անփոխարինելի կորուստներ էր կրել: Կարող էին հայերը ծանրագեն ասկյարներին քաշել լեռներն ու կարկառները, ուր կարող է կրակ տեղալ յուրաքանչյուր քար ու թուփ, յուրաքանչյուր ժայռ ու այր: Չէ՛, գնդի հրամանատարը խելքը հացի հետ չի կերել, որ կանոնավոր զորամասը նետի ֆիդայիների բերանը: ԿԿռվե՞ն իր դեմ, թող իջնեն դաշտ, քաղաք, գյուղ, միայն թե վայրի չուերը չընկնեն իր թշվառ ասկյարները: Ախր այս ռուսահայերն էլ ունեն իրենց ռուսացած ֆիդայիները՝ պարտիզանները: Խե՛ղճ թուրքեր, հիմա էլ կռվեք պարտիզանների դեմ, երբ ոչ նրանց կռվի մեթոդները գիտեք, ոչ էլ տեղանքի կանոնավոր ռազմական քարտեզը ունեք: Երբ քո հետախուզության պետը իր նապաստակի սրտով մեռնելը գերադասում է սրսկվելուց ... Այս ի՞նչ օրի ես, Օմար ... Բայց սպասի՛ր, Ինչո՞ւ ես դանջդի նման վնգստում: Ջավախքը պիտի գրավելի՛ր՝ գրավում ես: Դեմդ կանգնած էր հայոց գունդը, է՛, թող գունդ չլինի, ո՞վ է հաշվողը. հա, դեմդ հայոց գունդն էր կանգնած, հիմա չկա, ցնդել է, գոլորշիացել ...

Երկու հարյուր հոգի կորցրիր, հայոց գունդը ուղարկեցիր մեռելատուն, դա մեծ հաղթանակ է, իսկ դու քիչ է մնում սգո մուղամներ երգես քո դժբախտության մասին:

- Լսի՛ր, Նազրմ, կազմիր հեռագիր Վեհիբ փաշայի անունով. գրիր, որ Ջավախքի վերջին գունդը գլխովին ջարդվեց Մաջադիա բնակավայրի մոտ

տեղի ունեցած ճակատամարտերում: Մեր կորուստներն են՝ երկու հարյուր սպանված, այդքան էլ վիրավոր: Ճակատամարտում հերոսաբար զոհվեց հետախուզության պետ Յուզբաշի Յեյդարը, ավաիի փառքը նրան եւ մյուս զոհերին: Օմար փաշա, բինբաշի, 19 մայիսի, 1918 թ:

- Ալլահը վկա, իմաստուն հեռագիր է: Պետք է, որ պարգևները չուշանան ... - Նկատեց Նազըմը:

- Ալլահը մերն է, մեզ մենակ չի թողնի: Իսկ պարգևի մասին անհոգ մնա, - ժպտաց Օմարը:

* * *

Օմբաշի Ռեմուդը կասկածանքով նայում էր կիսաբաց դռանը: Տանից ձայներ էին գալիս: Բայց չգիտեր երեխայի՞, թե՞ կնոջ ձայն: Ուզում էր կիսաբաց դռնից ներս կրակել, բայց մտածում էր. գուցե՞ հայի մի սիրուն հարս է մնացել այս տանը, ինչո՞ւ սպանեմ, կվայելեմ, իսկ սպանելը կա ու կա: Ախպեր, եկել, հասել ենք Ախալքալաք, հաղթել ենք, բայց պարտվողն ավելի է թշնամի, քան հաղթողը: Հաղթողն ավելի ջոմարդ, ավելի բացսիրտ է լինում: Պարտվողից վախեցիր, նա հող է կորցրել, հարազատ է կորցրել, հարստություն է կորցրել, վերջապես հաղթանակ է կորցրել եւ վրեժի իրավունքն իրենն է: Ես էս դատարկ քաղաքից ավելի եմ վախենում, քան եթե նա կրակեր ու կռվեր: Մեկ էլ տեսար այս խուլ ու կույր տնից թռավ գյուլլեն ու խնվեց սիրտդ, դե Ռեմուդ, ումուդդ կտրվեց, գնա խառնվիր հազար տարվա մեռելներին: Մեռնելը, Ռեմուդ, ավելի նաղդ է, քան ապրելը: Հայերը մեզ կսպանեն, որովհետեւ մենք նրանց սպանել ենք, երբ կամեցել ենք: Կողոպտել ենք, երբ ցանկացել ենք: Բռնաբարել ենք, երբ ուզել ենք: Մեր արածը նրանք երբեք չեն մոռանա: Հիմա էլ քշում ենք իրենց հող ու ջրից եւ քուրդ խուժանին հանձնում նրանց ունեցվածքը: Նրանք իրենց հողն ու ջուրը չեն մոռանա, ուրեմն, Ռեմուդ քանի քեզ էն աշխարհը չեն-ուղարկել, վայելիր նրանց հարստությունը, նրանց գյոզալներին, հետո սպանիր, որ չչրջվեն ու քեզ սպանեն ...

Այս մտորումների մեջ էր Ումուդը, երբ կիսաբաց դռնից շապկանց, բաց պուսուկիկով կավաշի կտորը կրծելով դուրս եկավ երեք-չորս տարեկան մի մանչուկ: «Տղա է ... Պիտի սպանեմ, ի՞նչ անեմ, որ սիրուն է ... »:

Երեխան ժպտում էր արեւին ու աշխարհին: Հետո տեսավ աժդահա Ռեմուդին՝ ամպի նման կախված հայացքով: Երեխան զարմանքով նայում էր նրան: Իրեն տեսնելիս բոլորը ժպտում էին, փաղաքշում, համբուրում, քաղցրավենիք նվիրում, իսկ այս մեկը բացահայտորեն չէր հրապուրում երեխային: Նա երկու քայլ արեց դեպի Ռեմուդը.

- Դու փիս քեռի ես, չէ՞ ...

- Դու արի՛, ինձ մոտ, -ասաց Ռեմուդը թուրքերեն ու քայլ արավ դեպի մանչուկը:

- Մա՛, -ճչաց երեխան ու ցանկացավ փախչել: Բայց մարդասպան Ռե-

մուղից փախչել կլինե՞ր ...» Սրա մայրը պետք է, որ լավը լինի, իսկական գյուղալ լինի ...» եւ չանթեց երեխայի ռտքը: Մանչուկը նորից ճչաց: Դռնից դուրս նետվեց տատն ու քարացավ: Ոտքից բռնած ավազակը թափով պտտեցնում էր երեխային գլխավերելով: Պտտեցրեց, պտտեցրեց ու երեխայի գլուխը թափով խփեց ծառի բնին: Պառավը մի պահ միայն տեսավ երեխայի փշրված գլխի արյան հետ խառնված դեղնավուն ուղեղը, որ թափվեց ծառի տակ: Պառավի մայիսյան արեւը մեռավ: Նա ընկավ ու մնաց: Ռժմուղը բռնել էր երեխայի ոտքն ու դիտում էր նրա ջղածգվող մարմնի վերջին թրթռումները, երբ աքցանի նման երկաթե սառնություն ունեցող մի զույգ ձեռքեր օդակեցին վիզը, հեշտությամբ տապալեցին գետնին եւ դանդաղ, ասես մտածելով, չափուկ-չիռ անելով սկսեցին խեղդել նրան: Հետո խեղդողը խոսեց ինքնիրեն. - Ինչ անել երեք մահ միանգամից ... Ի՞նչ անել ...

Սովերների նման անաղմուկ երեւացին երկու հոգի եւ ներս տարան սպանվածներին: Հետո սկսեցին մաքրել ու հարդարել դեպքի վայրը, որ թուրք պարեկները չնկատեն արյան հետքերը: Այգում ծաղկող յասամանի տակ փորվեց հորի նմանություն ունեցող մի խոր փոս, ուր իջեցվեց Ռժմուղի դիակը: Նրան թաղեցին կանգնեցրած, որ գերեզմանը տարածք չունենա եւ գերեզմանի չնմանվի: Յասամանի կանաչ ճյուղերը ծածկեցին փոքր տարածքը, եւ Ռժմուղն այսուհետեւ պիտի համարվեր անհետ կորած: Պառավն աչքերը բացեց երեկոյան: Խոսել չկարողացավ, քթարմատին արցունքներ լճացան: Հարեւան Սերգեյն արցունքներից հասկացավ, որ պառավի գիտակցությունը տեղն է: Գիշերը պառավը մեռավ: Թուրք պարեկի թույլտվությամբ նրան թաղեցին գերեզմանոցում, իսկ թոռանը՝ այգում, պատուհանի տակ: Ոչ ոք չփնտրեց Ռժմուղին, ոչ ոք չհետաքրքրվեց նրանով: Կարծես նման մարդ չէր էլ եղել: Մանավանդ, որ նա օմբաշի էր: Երեւի այդպես են թուրքերը, կորածներին ու մեռելներին չեն փնտրում: Իսկ ովքե՞ր էին պառավի հարեւանները:

Խառը վիճակ էր քաղաքում եւ զորքի հետեւից քաղաք լցվեց գավառի թուրք գյուղերի խուժանը: Թալանում էին ամեն ինչ, ինչ ձեռքներն ընկներ. պետքական ու անպետք, հավաքում իրար գլխի, գյուղերից թալանած սայլերի վրա բարձում եւ քշում իրենց գյուղերն ու իրենց տները: Աննախաղեպ թալանն այնպիսի չափերի հասավ, որ հանում էին տների դռներն ու պատուհանները, քանդում էին կտուրները եւ գերանները տանում: Թալանում էին հատակի, նույնիսկ արտաքնոցների տախտակները: Թալանը թուրքի էութունն է. թալանելը, անասնագողությամբ զբաղվելը նրա բնավորության ամենակայուն, ամենատիպական հատկանիշներն են, որ հարատեւելու միտում ունեն: Տա՛ Աստված, այդ ամենը շուտ հաղթահարվեն, եւ մարդասպան այդ էակները մարդ դառնան:

* * *

Քաղաքը նման էր հսկայական հանգած փեթակի. փորված աչք-պատուհաններով ու դռներով: Թեւեւ թալանված ու կողոպտված էր ամենայն բժախնդրությամբ, սակայն կողոպտիչներն աշխատում էին հայտնաբերել

կողոպուտի արժանի նորանոր առարկաներ ու իրեր եւ փորփրում ու քանդում էին ամենուր եւ ամեն ինչ: Բանը հասավ դիակապտության: Ազահությունը, կողոպուտի մոլուցքը խուժանին մղում էր փողոցներում նեխող սպանվածների արյունով ներծծված հագուստների թալանի: Քաղաքում սկսվեցին կատարվել տարօրինակ դեպքեր ու իրադարձություններ, որոնք ոչ այն է թուրքական զինվորականներին մղում էին զգուշության եւ սթափության, ոչ այն է վախեցնում էին՝ արթնացնելով նրանց մեջ կիսաքնած նախապաշարումները զուգակցվող կրոնական մոլեռանդությանը: Թուրքական ծուլությունը, որ սնում էր առասպելական կեղտոտություն, ուր որ է վերածվելու էր աղետի, որովհետեւ սպանվածների, նույնիսկ ասկյարների դիակները հոտում էին այստեղ ու այնտեղ, սպառնալով դաժան հիվանդությունների՝ խլերայի, ժանտախտի, փորհարինքի բռնկման: Յետո պարզվեց, որ սպանվածները օժտված են կենդանանալու աստվածային շնորհով, որովհետեւ կարճ միջոցում երկու տասնյակ կողոպտիչներ զոհ դարձան մեռելներին: Սպանվածներն սպանում էին սպանողներին՝ անծայն, անաղմուկ, սուսուփուս: Բավական էր ամայի փողոցում կողոպտիչը նկատեր սպանվածին, որի հագին կոշիկներ կան, որ առանց զանց առնելու զգուշություն ու հետեւանք, փորձեր մերկացնել նրան: Յետո, երբ կողոպտվողները սկսեցին կենդանանալ եւ դանակել խուժանին ու նաեւ միայնակ ասկյարներին, պարետը հրամայեց քաղաքը մաքրել դիակներից, եւ դրանով կանխվեց նաեւ վերահաս հիվանդությունների մուտքը թուրքական կայազոր: Յետո ուրիշ երեւույթներ ավելի խորհրդավոր ու առավել սնրսափազդու անհանգստացրին եւ սարսափեցրին թուրքերին, մանավանդ պահակող պարեկներին, որոնք գիշերային ակնակիր մթության մեջ տեսնում էին ուրվականներ, որոնք երեւում էին նաեւ սպիտակ ներքնաշորերով եւ անհետանում, լուծվում էին քաղաքի ավերակներին եւ գերեզմանոցներին: Նրանք համարյա չէին վնասում թուրքերին, չէին սպանում ու մորթում, պարզապես երեւում էին մի պահ, տատանում անշարժ մթությունը, սարսափեցնում նվաճողներին եւ ցնդում, տեսւանում:

- Սիրելի բե՛յ, դու Եվրոպայում ուսում առած մարդ ես եւ չեմ կասկածում, որ չես հավատում գոռնափշտիկների գոյությանը, մեռելների հարություն առնելուն: Ես այն կարծիքին եմ, որ տեղացի հայերը, այսինքն ֆիդայիները, ուզում ես՝ կոչիր պարտիզանները, մեր վզին են փաթաթել պատերազմի մի տեսակ, որ ոչ միայն դժվար է հաղթահարել, այլեւ իմ կարծիքով նաեւ անթույլատրելի է կանոնավոր բանակի դեմ նման մեթոդներով պատերազմ մղելը: Չարկավոր է մեկընդմիջտ վերջ տալ նման վիճակին ...

- Դու ճիշտ ես, Օմար փաշա, իսկ ի՞նչ անել ...

- Ամեն բան պիտի ճշտիվ դնել իր տեղը, բեյ, այսինքն մեռելը պիտի լինի մեռած, կենդանի ասկյարը՝ ասկյար, քաղաքը, որ մենք՝ ես ու դու գիտենք, թե ինչ զոհերի գնով ենք նվաճել, պետք է լինի մերը, ոչ թե գոռնափշտիկներինը, նույնիսկ բոզերը, այո՛, այո՛, հայ, թե թուրք պետք է լինեն մերը, ծառայեն մեզ: Չրամայիր կրակ բանալ երեւացող բոլոր շարժվող առարկաների, կենդանիների, մարդկանց վրա, առանց հաշվի առնելու նրանց ով եւ

ինչ լինելը ...

- Լսում եմ, փաշա, հրամանդ ի կատար ...

- Հիմա մի քիչ էն խանութից պատմիր: Ախր էնօրը այնպիսի բաներ
ասացիր, տղաս, որ եփվեց ծերունուս արյունը: Ասում ես նրա նմանը Տոլմա-
բախչեի հարեմում էլ չկա՞ ...

- Չկա՛, չկա՛, փաշա, այդպիսի գյոզալ աշխարհում էլ չկա, ես սիրա-
հարված եմ, այն էլ խենթի պես ...

- Փախցրու Ստամբուլ, տղաս, փախցրու, քանի ուրիշը չի փախցրել ...

Օմար փաշան հազիվ վերախմբագրեց իր խոսքի վերջին մասը եւ
չասաց. «քանի ես չեմ փախցրել»:

- Նրան ես ակնարկեցի այդ մասին, նա ցույց տվեց բուլղար ամուս-
նուն: Ասացի՝ նրան վերացնելը թող մեզ վրա ... Ասաց՝ ես սիրո այդ տեսակը
չեմ ընդունում, սերը մահվան հետ չի կարելի համերաշխել: Սիրողն իր սի-
րած էակի սիրտը ոչ միայն չպետք է ցավեցնի, այլ հակառակը՝ ցավածը բու-
ժի: Դու ինձ եթե սիրում ես, աշխատիր, որ ես էլ կարողանամ տրամադրվել
քո նկատմամբ իմ եվրոպացի թուրք:

- Տե՛ս, թույլ չտաս, որ քթիցդ բռնի եւ արջի նման պար ածի ... Սիրե-
լի բեյ, չգիտեմ, զուցե ես պահպանել եմ հին գինվորի սովորությունները,
նույնիսկ կասկածամտությունը, բայց Ախալքալաքի ամբողջ սանջակը հա-
մարյա գաղթել է, փախել, իսկ այդ երիտասարդ ամուսինները մնացել են:
Պետք է զգոն լինել, որ ռուսական լրտեսները չքանդեն մեր ոտքի տակի հողը:

- Նա ամուսնու հետ եկել է ու մնացել այստեղ, էլ ո՛ր պետք է գնար,
իրենց տունն այստեղ է ... Հետո էլ կարծեմ ամուսինը աքսորյալ է:

- Հիմա Ռուսաստանում ուրիշ իշխանություն է, բե՛յ, նախկին աքսոր-
վածները հիմա դարձել են աքսորող ...

- Նրա աքսորը քաղաքական պատճառներ չունի: Նա քրեական է,
կարծեմ այս գյոզալին տիրելու համար արյուն է թափել:

- Չբաղվիր, բե՛յ, զբաղվիր այդ գյոզալով, բայց ավելի լրջորեն զբաղ-
վիր այդ երկուսի անձով: Մենք իրավունք չունենք սիրահարի դերը ստանձ-
նելու, եթե մեր դերը լավ չենք կարողանում կատարել: Ի վերջո իմ խորհուրդն
է՛ դուրդ եկել է՝ տիրացի առանց ձեւականությունների հետեւից ընկնելու :
Է՛հ, բեյ, բեյ, քաղաքակիրթ ազգ դառնալդ սիրելու պահին հիշեցիր եւ մոռա-
ցար, որ մեր ճանապարհին հազարավոր կանանց ենք բռնաբարել, խոշտան-
գել, սպանել ... Սիրտդ կպել է սիրուն կնոջը եւ հինգ բոպեում քաղաքակիրթ
դարձար ... Է՛հ, տղա՛ս, տղա՛ս, թուրքն ու՛ր, քաղաքակրթությունն ու՛ր ... Այս
քաղաքակրթությունը մեր թշնամին է, նա է թուլացնելու թուրք ազգը: Մերը
յաթաղանն է, եթե այն սուր է, բռնող բազուկը՝ հզոր եւ նվաճված հողերը շատ
ու հարուստ, ուրեմն քաղաքակրթությունը գրիր Թուրքիայի օգտին, հակա-
ռակ դեպքում գեղեցիկ բեղերը եւ նուրբ եվրոպական մաներաները կնիկ
կդարձնեն մեզ եւ քաղաքակրթությունը քամու նման կանցնի մեր կողքով ...

- Փաշա՛, այսօր տրամադրությունդ քաղաքակրթությանը ներհակ է,
հավատա ինձ, այն մեզ հարկավոր է օդի եւ ջրի նման: Քաղաքակրթությունը

մեզ կուժեղացնի նույնիսկ ռազմական առումով: Կմողեռնացնի թուրքական ռազմական մեքենան: Այն ճանապարհը, որ մենք անցնում ենք մեկ ամսում, կանցնենք մեկ շաբաթում: Այն զոհերը, որ հաշվում են տասնյակ ու տասնյակ հազարներով, կհաշվեն հարյուրներով: Այնպես, որ քաղաքակրթությունը չի թողնի բռնաբարողներին ու կողոպտիչներին անպատիժ իրենց գործն անելու ...

- Տղա՛ս, քո քաղաքակրթությունից, քո մողեռնացունից ես բան չեմ հասկանում: Ես հին սերնդից եմ: Մինչեւ հիմա ես պատերազմում հաղթելը համարել եմ թալանի, սպանության, բռնաբարության թույլտվություն: Մեր հաղթանակը եղել է մեր պատիժը պարտված թշնամու նկատմամբ, այնպես ինչպես մեր պարտությունը՝ հաղթողի իրավունքը մեզ կողոպտելու, սպանելու եւ անվանարկելու: Պատերազմում փլավ չեն բաժանում, տղա՛ս: Պատերազմի օրենքները ուժի եւ արյան օրենքներ են, ինչպես խաղաղության օրենքները՝ իրավական, մարդուն հարգելու եւ այլն:

- Փաշա՛, այս վիճակը երկու համանման նպատակ ունեցող զենքի բարեկամների վեճ է, որոնք նպատակին հասնելու ուղիների տարբերությունը չեն կարող դարձնել գործունեության տարբեր ծրագրեր: Պիցուք, հայերից Յայաստանը հայաթափելու խնդիրը սրբազան ծրագիր է ե՛լ ինձ, ե՛լ քեզ համար: Բայց ես մարդկանց ոչնչացնելու, հոշոտելու մեր փորձերը համարում եմ հանցագործություն քաղաքակրթության դեմ: Իսկ մենք նրանց հանենք եւ խաղաղությամբ ճանապարհենք մեր սահմաններից, նման մոտեցումը չի լինի քաղաքակրթության դեմ:

Օմար բեյը նեղսրտեց: Թեեւ Նազըմը Վեհիբ փաշայի հեռավոր ազգականներից էր եւ օժտված ամենալայն իրավունքներով, սակայն Օմարը հովանավորողի, խորհրդատուի իրավունքով էր նրան վերաբերում, բայց մեկ-մեկ անկարող լինելով զսպել ջղայնությունը, ասում էր բաներ, որոնց համար հետո զոջում էր, որովհետեւ Վեհիբ փաշան սիրում եւ հավատում էր Նազըմին: Այս անգամ էլ Օմարը պայթեց.

- Տղա՛ս, ինչ որ ասում ես, նախ մտածիր, հետո դուրս տուր: Քո էլ քաղաքակրթությունն էլ կշռաքարի նման մի կախիր վզիցդ: Ուրեմն, հայերին տեղահանելու համար ես պետք է թակեմ նրանց դռները, ներողություն խնդրեմ անհանգստացնելու համար, գրանցեմ նրանց հարստությունը եւ ցույց տալով ճանապարհը՝ ապահովեմ նրանց տրանսպորտով եւ բարի ճանապարհ մաղթեմ: Այո՞ ... Եթե չցանկանա գնալ, թող չգնա: Կամ իմ հերոս ասկյարը հավանել է հայ աղջկան. ես պետք է արգելեմ, որ նա չտիրի, չվայելի նրան, որպեսզի քաղաքակի՞րթ կոչվեմ ... Ես թքել եմ քո քաղաքակրթության վրա, նման փուչ բաներով ձեռքերս ու ոտքերս կապողը չեմ: Ես կռիվ եմ վարում իմ հին թշնամու դեմ եւ նրան ջարդելու, կողոպտելու իրավունքը ժառանգել եմ ալլահի երկնային տեղապահներից՝ սուլթաններից:

Օմար բեյի զայրույթը հրամայում էր Նազըմին, որ նա դադարեցներ վեճը հրամանատարի հետ եւ հեռանար: Բինբաշու հրամանը՝ ուժեղացնել քաղաքի հսկողությունը, առանց գզուշացնելու կրակել շարժվող ամեն մարդու եւ կենդանիների վրա, տվեց դրական ու բացասական արդյունքներ: Քա-

ղաքն ուրվականներից, այնուամենայնիվ, չմաքրվեց: Ծայրահեղությունն իր հետ բերում էր ծայրահեղ վիճակներ: Պարեկների առատանալով առատացան նաեւ ուրվականները: Շարժվող բարեկամն անգամ մթության մեջ թշնամու կերպարանք ուներ: Եվ պարեկները մի քանի օր շարունակ հոշոտում էին իրար: Մտցվեց նշանաբանի օգտագործում: Այս անգամ նշանաբանն իմացող ուրվականները մոտենում էին ասկյարներին եւ դանակահարում նրանց: Դժվար կացությունից փրկության ելք չկար: Վերջին որոշումը քաղաքից պարետային ծառայությունը հանել էր: Մեռած քաղաքի հսկողությունը անտեղի էր համարվում, եւ պարետային ծառայությունը տեղափոխվեց ռազմական ավան : Սակայն ավան գնացին նաեւ ուրվականները, որոնց նկատմամբ անհնար էր ձեռնարկել որեւէ հաջողություն խոստացող գործողություն: Թուրք կրտսեր սպաների կողմից մի երկու փորձ եղավ մտնելու Եղիսաբեթի բնակարանը, բայց նրանք հաջողություն չունեցան: Նրանց առջեւ բացվում էր ցանկալի դուռը, իսկ հետո ... Արագ զինաթափվում եւ հայտնվում էին նեղլիկ նրբանցքի ցեխերի մեջ եւ ուրվականների ձեռքն ընկնելու ահից սողում էին ձորափ եւ բռնում ռազմական ավանի ճանապարհը: Պարետատունը կարճ ժամանակից հետո նորից վերադարձավ քաղաք: Եղիսաբեթն ու Սերգեյը ապրում էին իրենց ոչ այնքան խաղաղ կյանքը, մանավանդ որ գեղեցիկ եւ անպաշտպան կինը թուրքերի շրջապատում խաղաղ կյանք եւ ապագա ունենալ չէր կարող:

* * *

Չավաքվածների վիճակը նախանձելի չէր: Թվով մոտ տասը հոգի նրանք խորհրդակցում էին Եղիսաբեթի բնակարանի ներքնահարկում: Ժամանակին ներքնահարկը կառուցել էին նաեւ թոնրատան տակ: Մուտքը, ինչպես նաեւ ամբողջ հատակը ծածկել էին խսիրով: Խորհրդակցության գաղտնիությունը երաշխավորված էր, մնում էր միայն հավաքվածների զգուշությունը, այսինքն ավելորդ շարժումը, աղմկելը, բարձրաձայն վեճը պետք է բացառվեին, որովհետեւ նրանց հաղորդել էին , որ տանտերերին այցելության է եկել թուրքական զորամասի շտաբի պետը՝ Նազըմ բեյը, իսկ մուտքը հսկում էր նրա համհարզը:

- Նազըմ բեյը սիրահարվա՞ծ է մեր գեղեցկուհուն ...

- Նույնիսկ առաջարկություն է արել: Մեր աղջիկը սակայն կտրատվում է: «Ախր ամուսնացած եմ»: -Ամուսնուդ վերացնելը տեխնիկայի հարց է: «Մերն արյան հետ անհամատեղելի է: Ես սիրելով եմ ամուսնացել Սերգեյի հետ»: -Չիմա էլ ատելով բաժանվիր:—«Կարծում եք դա այդքան հե՞շտ է: Սիրելի բեյ, դուք մոռանում եք ամենակարեւորը՝ հավատի հարցը: Մեր Աստվածն ու ձեր ալլահը արյունակիցներ չեն»: -Մեր ամուսնանալուն պես արյունակիցներ կդառնան: Տոլմաբախչեի հարեմների զարդերը միշտ էլ հայերն ու հույներն են եղել: -«Տեսնո՞ւմ եք, բեյ, դուք չցանկանալով դիպաք ամենացավոտ հարցին: Մենք՝ քրիստոնյաներս միասեր ենք, ոչ թե ձերոնց նման բազմասեր: Ռեսուսնաությունն ավելի ամրապնդեց իմ մեջ այդ կարեւոր խնդի-

րը: Քաղաքակիրթ մարդը չի կարող հարեմ պահել: Քաղաքակրթված կինը չի կարող դառնալ ոչ հարեմի զարդը, ոչ էլ ստրուկը»: -Օ՛, դուք իմ սրտից ջուր խմեցիք, խանում, դուք ոչ թե հարեմի, այլ Նազըմ բեյի իշխանական տան միակ զարդը կդառնաք:«-Բայց սրտին հրամայել չի լինի, բեյ, իմ սիրտը դեռևս անտարբեր է ձեր նկատմամբ: Երեւում է, որ այս պարագայում բացառվում է՝ սեր առաջին հայացքից թվացյալ ճշմարտությունը»: -Գուցե, խանում, գուցե բացառվում է սերն առաջին հայացքից, բայց հուսով եմ, որ չի կարող բացառվել սերն ընդհանրապես: - «Ա՛խ, չգիտեմ, բեյ, չգիտեմ»:

- Գիտեք, խանում, այնուամենայնիվ, մենք՝ թուրքերս արեւելյան ժողովուրդ ենք, երբեմն էլ, ով իմանա, կարող ենք մոռանալ քաղաքակրթությունն ու Եվրոպան եւ արյան բնագոյին հավատարիմ, դառնալ բռի ասիացի ... -«Այսինքն, բեյ, դրանով ի՞նչ եք ակնարկում»: -Այն, որ կարող եմ գողանալ խանումին, գլխատել նրա ամուսնուն եւ ...-«Եվ արթնացնել նաեւ իմ մեջ ննջող ասիացուն, որ կարող է նույնքան վտանգավոր դառնալ, որքան էգ վագրը», -ծիծաղել է Եղիսաբեթը: Յետո լեզվագիտական այս մենամարտը ընթացել է առավել խաղաղ հունով: Եղիսաբեթի մերժումը չի կրել անվերապահ բնույթ: Առայժմ բեյն անհույս մերժված սիրահար չէ, այլ սիրահար, որ զբաղված է սիրածին նվաճելու հոգսով: Բայց ենթադրում եմ, որ այս խաղը երկար շարունակվել չի կարող: Բեյի մեջ թուրքը քնած չէ, այլ ննջում է՝ արթնանալու պատրաստ: Իսկ թուրքը մնում է թուրք: Յարկավոր է զգույշ գործելակերպ, որ հանկարծ մեր աղջկան զոհ չտանք ...

- Նազըմ բեյը իր մասին խոսել է արդյո՞ք Օմար փաշայի հետ ...

- Այո՛, Օմար փաշայի թիկնապահը թուրքի շորեր հագած մեր Սուրենի եւ ասկյարների ներկայությամբ պատմել էր, որ այնքան է գովել Նազըմ բեյը հայ գեղեցկուհուն փաշայի մոտ, որ վերջինս ցանկություն է հայտնել անծամբ ծանոթանալ նրա հետ: Յարկավոր է Եղիսաբեթին նախապատրաստել այդ հանդիպմանը: Նա պետք է հրապուրի բինբաշուն, որն այնքան ծեր չէ, որ չզայթակղվի գեղեցկուհով, ոչ էլ այնքան ջահել, որ չկարողանա իրեն արժանապատվորեն պահել նրա ներկայությամբ: Եղիսաբեթը պետք է հասնի այդ երկուսի առճակատմանը, այսինքն հանի իրար դեմ: Սիրահարն ինքնին Գսանդոտ է՝ գումարած թրջությունը, եւ արդյունքում կստացվի գազանի մի նոր տեսակ՝ սիրահար թուրք անունով: Մեր կապը այս տան հետ հարկավոր է սերտացնել, որովհետեւ մենք պարտավոր ենք հսկել ու պաշտպանել մեր հայրենակցուհու եւ՝ կյանքը, եւ՝ արժանապատվությունը: Շատ հնարավոր է, որ նրան փորձեն փախցնել, փորձեն տիրանալ, նույնիսկ սպանել: Այս տունը կարող են ներխուժել նաեւ թուրք այլ սպաներ, ասկյարներ, որոնց դիմագրավել տնեցիների կողմից անհնար կլինի: Պետք է պատրաստ լինել ամեն անակնկալի: Մի խոսքով, Եղիսաբեթը կարող է մեզ տալ այնպիսի տեղեկություններ, որոնք անգնահատելի դեր ունենան մեր գործողությունների համար: Յազիվ թե հարկ կա անվերջ խաղալ գոռնափշտիկի եւ դիակի դերեր, որոնք կարող են շփոթի մատնել թուրքերին, սակայն անկարող են լուրջ հարցեր լուծել: Մեզ հարկավոր է իմանալ թուրքական գնդի խոցելի կողմերը: Եր-

բեք չպետք է մոռանալ, որ գաղթական ջախախտքները բռնել են ողջ Հարավային Վրաստանի ճանապարհներն ու բաց երկնքի տակ, սովի ու տարափոխիկ հիվանդությունների ճանկերում մաշվում է մեր հարստությունը, առաջին հերթին՝ երեխաներն ու տարեցները: Մենք՝ քառասուն ուխտյալներս, գնդի դեմ ելնել չենք կարող, սակայն կարող ենք այնպիսի հարվածներ հասցնել, որ նրան տանի դեպի անկում: Այժմ առաջին հերթին հրամանատարության մեջ սեպ խրելն է, սա մեկ: Երկրորդը, գնդի հրամանատարության գլխատունը, որը հարկավոր է իրականացնել յուրաքանչյուր օր, ամեն ժամ ու թույլ, ստեղծել անհանդուրժելի միջավայր ու պայմաններ, պարտության մատնել այս սնապարծ, արյունռուչտ գազաններին: Հարկավոր է բարի նախանձով նայել մեր արյունակիցների՝ ախալցխացիների հերոսական պայքարին, ընդօրինակել նրանց փորձը, եւ մեր պարտված գավառին նոր շունչ ու նոր կյանք ներարկել:

Իսկ այդ պահին ճաշասենյակում դեմ-դիմաց նստած, խաղաղ զրուցում էին Եղիսաբեթն ու Նազըմ բեյը: Սեղանիկի վրա դրված էին շամպայնի երկարավուն բաժակները՝ փրփրուն խմիչքով, եւ թուրքական սուրճի կիսատված գավաթները: Նազըմ բեյը զորահանդեսային շքեղ համազգեստի մեջ էր: Ածիլված, էնվերական սրածայր բեղերով, գեղեցկադեմ ու բարձրահասակ մի անձնավորություն, որն այնքան էլ եվրոպացու նման չէր, սակայն ճգնում էր եվրոպացի խաղալ եւ դա մասամբ հաջողվում էր նրան, որովհետեւ Բեռլինի զինվորական ակադեմիայի ջանասեր ունկնդիրը ոչ միայն տիրապետում էր գերմաներենին, այլեւ նրանց նիստուկացին, թեւ շարժումների մեջ զգացվում էր արիեստականություն, ավելորդ ջանք՝ քաղաքակիրթ գերմանացուն հանկարծ չմոռանալու համար: Եղիսաբեթի համաձայնությամբ Նազըմը նրան կոչում էր Ձեյնաբ խանում, որ այնուհետեւ կպավ ու մնաց եւ հեշտացրեց թուրք սպաների գործը՝ նրան դիմելիս.

- Ի՞նչ էի անելու, Ձեյնաբ խանում, եթե չտիրապետեիք գերմաներենին ...

- Ստիպված պիտի լինեիք սովորել հայերեն ... - Այո՛, միայն ձեզ հետ հաղորդակցվելու համար արժե սովորել հայերեն, -ասաց բեյը՝ նրա ձեռքը մոտեցնելով շուրթերին:

- Եվ անցած քառասունհինգ դարերին հաղորդակցվելու համար, - ժպտաց Եղիսաբեթը:

- Մի՞թե հայերն այդքան հին ժողովուրդ են, -կասկածեց Նազըմը:

- Այո՛, բեյ, այդ դուք՝ քաղաքակիրթ թուրքը, իմացեք, պետք կգա ...

- Արդեն ու՞չ է, խանում, հայերն արդեն դառնում են պատմություն:

- Մի՞թե դուք այդ կարծիքին եք, բեյ: Կանցնի որոշ ժամանակ եւ կտեսնեք, որ հայերը ավելի են շատացել, վերածնվել են: Եվ եթե նույնիսկ նրանց վիճակված է հեռանալ իրական կյանքից եւ դառնալ պատմություն, ապա դուք պարտավոր եք չորսուկես հազար տարեկան ազգի պատմությունն իմանալ իսկական քաղաքագետ մարդ դառնալու համար ...

- Ճիշտն ասած, Ձեյնաբ խանում, ուզում եք հավատացեք, ուզում եք ոչ, երդվում եմ, ես ոչ մի ատելություն չունեմ ձեր ազգի նկատմամբ, ես ոչ մի

վատություն չեն տեսել ձեր ազգից, բացի այն, որ դուք ռուսներին եք ծառայում ի հակակշիռ թուրքերի, եւ մերոնք ձերոնց ուզում են ոչնչացնել ...

- Մենք երկար ժամանակ ծառայել ենք նաեւ ձեզ, եղել ենք ձեր ուսուցիչը ճարտարապետության, դիվանագիտության, գիտության, թատրոնի ու առեւտրի ասպարեզներում, եւ դուք ոչ միայն չէք գնահատել մեր ծառայությունները, այլեւ ձեր յաթաղանը միշտ պահել եք մեր գլխին եւ մեզ պարբերաբար գլխատել: Մի՞թե այդքան երախտամոռ կլինեն բարերարի ու ուսուցչի նկատմամբ: Այ դուք, իմ քաղաքակիրթ բարեկամ, գիտե՞ք, որ երբ երկրաշարժից տապալվեց Այա Սոֆիայի տաճարի գմբեթը, 'եւ նույնիսկ Բյուզանդիայի վարպետներն անկարող եղան վերականգնել, միայն այդ գործին ձեռնամուխ լինելու հանդգնությունն ունեցավ հայ ճարտարապետ Տրդատը եւ վերականգնեց աստվածայինը իր աստվածային հանճարով: Գիտե՞ք արդյոք, որ Տոլմաբախչեն, սուլթանների այդ շքեղ նստավայրը Պալյան ճարտարապետական գերդաստանի գործն է, գիտե՞ք: Այսօր էլ հայ գիտնական Դիլաչարը գրում է թուրքերենի քերականությունը, որ թուրքն իմանա իր լեզուն, միաժամանակ աշխատում է թուրք առաջին հանրագիտարանը ստեղծելու վրա ... Զգիտեք եւ խոսում եք քաղաքակրթությունի՞ց: Եվ կոտորում եք մի ժողովրդի, որի պատվին ըստ օրինաց պարտավոր էիք օրհներգեր հյուսել եւ հուշարձաններ կանգնեցնել: -Եղիսաբեթը խոսելով տաքացավ, զգում էր, որ խեղդվում է, կում արեց շամպայնի բաժակից, -մերողություն, բեյ, տաքացա ...

Նազըմ բեյը լռում էր: Ի՞նչ է ասում իրեն այս հայ գեղեցկուհին: Մի՞թե ճիշտ է ասում: Եթե ճիշտ է, ապա այս գեղեցկուհին ինչպե՞ս է սիրելու իր բարերարին, իր ուսուցչին ոչնչացնող գազաններին, որպիսիք են թուրքերը:

- Բայց մի՞թե ձեր ասածը ճշմարտություն է, խանո՛ւմ ...

- Դուք իմ ասածների ապացույցներն ինձանից մի պահանջեք, բեյ, այլ ուսումնասիրեք ինքներդ, տեսեք ձեր աչքով եւ ինքներդ հանգեք եզրակացության: Գնա՛րտությունն ինքներդ որոնեք, թեւ կասկածում եմ, որ թուրք զինվորականին հետաքրքրի հայոց ճշմարտությունը:

Նազըմ բեյն ակնհայտորեն ջղայնանում էր: «Ի՞նչ է, չլինի՞ խանումն ուզում է ինձ հայացնել, հայկական հարցը ե՞ս եմ հմարել: Ես թուրք զինվորական եմ եւ կատարում եմ իմ պետության հրամանը: Ես սիրում եմ այս հայ գեղեցկուհուն եւ սիրում եմ նաեւ թուրքական պետականությունը: Առանց նրանց ապրել չեմ կարող: Բայց հայ կնոջը սիրելով ես չեմ կարող հայոց գոյությանը սատարել, եթե այն չի ցանկանում իմ պետությունը: Միաժամանակ ես չեմ կարող ձեռք քաշել այս կնոջից, եթե նույնիսկ Մեջլիսը հրամայի: Երկուսն էլ սրբություն են ինձ համար, իսկ հայ ժողովրդի գոյության հարցը, դա հայ եւ թուրք ժողովուրդների իրավասության ենթակա հարց է, եւ զուր եմ Ձեյնաբ խանումի պրոպագանդիստական, գաղափարախոսական ելույթներն այնտեղ, ուր սերն է եփում իմ արյունն ու արագացնում սրտիս զարկերը ...»: Նազըմ բեյը երկար հավեց Եղիսաբեթի ձեռքին: Վերջինս երկար ժամանակ ձեռքը հետ չէր քաշում եւ թողեց, որ թուրքի արյունն իրոք եռար: Սերգեյը հարեւան սենյակից մտավ հյուրասենյակ:

Յետախուզությունից վերադարձել էր Լոմանը՝ կարճահասակ, կաղ, մի բուռ մարդ, ոչ այն է հասուն, ոչ այն է երեխա: Բայց արտասովոր ճարակություն ունեցող գաճաճ, որ ինչպես ժողովուրդն է ասում հազար մաղի անցքով եւ հազար մագե կամրջով կանցներ: Եկել էր ծանր լուրերով: Պարզվում է, որ թուրքերը Ախալքալաքի սանջակի ամբողջ տարածքից հավաքել են գաղթի փախեփախից կորած, անտեր մնացած երեխաներին եւ առաջիկա շաբաթում մտադիր են տանել Ալմալու ձորը եւ ոչնչացնել: Երեխաները չորս-հինգ հարյուր հոգի են: Պարզվում է, որ ութ տարեկանից բարձր մանչուկներին թուրքերը թրատել են գաղթի հաջորդ օրերին, իսկ աղջիկներին ուղարկել են Չըլդըր, երեւի այնտեղից էլ դեպի Թուրքիայի խորքերը: Պիտի թրքացնեն եւ ստրկացնեն: Իսկ այս երեխաները շատ են փոքր: Մինչեւ երեք տարեկաններին հայտնի չէ, թե ինչ են արել, մնացածներին քաղաքի զինվորական ավանից մինչեւ Ալմալու, որ համարյա տաս կմ է, պիտի տեղափոխեն սայլերով: Ուղեկցող պահակախումբը փոքր է, որովհետեւ մանկահասակներից դիմադրություն չի ակնկալվում: Սակայն եթե փախչողներ լինեն հրամայված է կրակ բանալ: Իսկ ընդհանրապես պետք է գործեն յաթաղաններով եւ անձայն:

- Ի՞նչ անել ..., -զնալով մեծանում էր հարցականը: Խմբապետ Սեւ Արսենը մտածում էր երեխաների փրկության հազար ու մի տարբերակի մասին եւ չէր կարողանում գտնել հարմարը, ընդունելին, ամենափրկարարը:

- Այս գործում ամենահեշտը երեխաներին ազատելն է: Կոչնչացնենք ուղեկցող եւ հրամանը կատարող պահակախմբին, եւ երեխաները մերն են: Յետո ինչ ենք անելու: Ո՞ր եւ ինչպես աչքից հեռու մի ապահով տեղ ընտրենք պատսպարելու նրանց: Ինչպե՞ս կազմակերպենք նրանց սնունդը: Ախր գավառի այս մասում անտառներ չկան, քարայրներն անմատչելի են երեխաներին: Ասենք նրանց մի կերպ բարձրացրինք ... Չորաժայռերը դիք են, անմատչելի, երեխաների եւ փրկարարների առնվազն կեսը զոհ կդառնան, կընկնեն ժայռերը մազլցելիս: Ի՞նչ անել ...

Խումբը երկար քննարկեց այդ հարցը եւ որոշեց. նախօրոք կլինեն Ալմալուի ձորում: Կաշխատեն թուրքերին առանց կռվի զինաթափել: Կերաշխավորեն պահպանել նրանց անվտանգությունն ու կյանքը, եթե երեխաներին սայլերով թողնեն ու հեռանան: Իսկ սայլերն առանց կանգ առնելու կքրշվեն սարերով Յեշտիայով, Գանձայով, Փոկայով, դեպի ծալկայի տարածքը: Բավական է հասնեն Նարդեւան գյուղը, եւ երեխաները փրկված են: Բայց այս անցումը կտեւի երկու օր, եթե առանց կանգնելու գնան: Յնարավոր է թուրքերին հանդիպելը, թեւ այս գյուղերում թինբաշի Օմարը ոչ կայազորներ, ոչ էլ պահակախմբեր ունի: Պետք է հեռու մնալ Սաղամո թուրքական գյուղից, որն ունի թալանիչների զինված իր ջոկատը:

Ա՛յ եթե տղաներից մի երկուսը կարողանան Սաղամո գյուղից թուրքական սաջու հաց թոցնել, հրաշալի կլիներ: Այնուհետեւ ծալկայի սահմանագիծը պետք է խնամքով ուսումնասիրել, թուրքական սահմանապահ զին-

վորներին չհանդիպելու, իսկ հանդիպելիս հանկարծակի չգալու համար ...

- Դու երեխաներին տեսա՞ր ... -հարցրին ի վերջո Լոմանին:
- Ես նրանց մեջ էի, -ասաց:
- Երեխաներն ի՞նչ էին անում, -հարցնողները հայրեր էին, որոնց եւս անհայտ էր իրենց զավակների ճակատագիրը:
- Երեխաներն ի՞նչ պիտի անեն. իրենց մայրիկներին, տատիկներին են ուզում, ուտել են ուզում, տուն գնալ են ուզում: Ջորանոցի առաջին հարկում, ուր տեղավորել են նրանց, սարսափելի նեղվածք է, գարշահոտություն, այնտեղ ուտում են, այնտեղ էլ կեղտոտում: Եվ լալիս են, լալիս: Հիվանդներ էլ կան ...
- Դու այնտեղ ինչքա՞ն մնացիր ...
- Երկու օր ...
- Երկու օ՞ր, ի՞նչ էիր անում ...
- Երեխաների հետ լալիս էի, ուրիշ ի՞նչ կարող էի անել ...
- Իսկ ինչպե՞ս դուրս պրծար այնտեղից ...
- Լոմանին էլ կասեն, ինչպես դուրս պրծար ... -Ցանկանում է ժպտալ , բայց փոխարենը լալիս է :

* * *

Եկավ սպասված օրը: Սայլերի շարանը ձգվել էր առմվազն մեկ կմ երկարությամբ: Սեւ Արսենի խումբը Խոսսպիա գյուղից արդեն հետեւում եւ աննկատելիորեն շրջապատել էր առաջխաղացման, նահանջի, փախուստի ճանապարհները: Ավնալուի ձորագլխին սայլերը կանգնեցրին:

- Անկյարներ, դուք շրջապատված եք, -ծայնեց Սեւ Արսենը, -այլեւս չմոտենաք սայլերին: Սայլերը կքշեն մերոնք՝ ֆիդայիները: Եթե հիմարություն չանեք, այսինքն չկրակեք, դիմադրություն ցույց չտաք, եւ որ կարելորն է, չփախչեք քաղաք, մենք խոստանում ենք ձեզ ձեռք չտալ, չսպանել եւ չգերել: Հիմա սայլ առ սայլ երեխաներին հանձնեք մեզ ...

Սեւ Արսենի երեւալն անգամ պհավոր ներգործություն ունեցավ թուրքերի վրա, ասես միանգամից կաթվածահար արեց նրանց: Մորուքը սեւ, ասես մելանի մեջ թաթախված, աչքերը խոշոր՝ մի տեսակ սպիտակ լույս արծակող սպիտակուցներով, բարձրահասակ ու թիկնեղ նա կանգնեց թուրքերի ճանապարհին, ասես խլելով ապրելու եւ գործելու իրավունքը: Հանկարծ Սեւ Արսենը կրակեց եւ օմբաշին, որ հրացանն իջեցրել էր ուսից, ձիուց ընկավ ու անշարժացավ:

- Կարծում եմ դուք ձեր օմբաշու հիմարությունը չեք կրկնի եւ կուզենաք ապրել: Չեզնից յուրաքանչյուրն այս պահին գտնվում է նշանացույցի տակ: Վերջապես, եթե դուք մարդ եք եւ ոչ գազան, ինչպե՞ս եք թրատելու այս երեխաներին: Դուք երեխաներ չունե՞ք, դուք սիրտ չունե՞ք ...

Ասկյարները մեկիկ-մեկիկ նետեցին հրացաններն ու յաթաղանները եւ հավաքվեցին գլուխ-գլխի, իրենց ճակատագրին հնազանդ՝ սպասելով Սեւ Արսենի հետագա հրամաններին: Մի կողմից սայլերը գալիս էին ու գալիս,

մյուս կողմից նրանք շարժվում էին Ջիգրաշեն գյուղի կամուրջն անցնելու եւ ճանապարհը լեռներով շարունակելու: Այնքան կազմակերպված ու հանգիստ անցավ այս գործողությունը, որ ժամ չանցած երեխաներով բարձված սայլերի քարավանը արդեն հեռանում էր դեպքի վայրից: Ուղեկցող թուրքերը՝ տասներկու հոգի, ձեռքերն ու ոտքերը կապած՝ ընկած էին ճանապարհի եզրին: Թող յուրայինները գան ու ազատեն: Հայերը չցանկացան ձեռքերը կեղտոտել: Թող կապված մեկ-երկու օր նստեն ու խորհեն իրենց գազանաբարո արարքները: Թող մայիսյան արեւի տակ նեխվի իրենց օմբաշու դիակը, գուցե նրանցից որեւէ մեկն ապրի ինքնախարազանման առողջացնող տառապանքը, գնահատի իր ապրած կյանքի այլանդակությունն ու անբարոյականությունը: Բայց ո՞վ գիտե, գուցե՞ նվաստացումն ավելի խորացնի ատելությունը հայերի նկատմամբ, վրեժխնդրությամբ լցնի նրանց ցուրտ հոգիները: Հայե՛ր, հայե՛ր, դուք թուրքերին ցանկանում եք մարդասիրությամբ մարդացնել: Ցանկանում եք նրանց մեջ արթնացնել մարդուն, որին ոչ միայն մորթել են, այլ մորթելով ուրիշներին, սպանել են ամենից առաջ իրենց մեջ նստած բանական արարածին՝ մարդուն: Ո՞վ է շատ կորցնում, թուրքե՛ր, դո՞ւք, որ վերածվում եք ջարդարարների ու գազանների, թե՞ հայերը, որոնք դադարում են գոյություն ունենալուց, բայց մեռնում են որպես Մարդ:

Իսկ երեխաները սայլերով ճեղքում էին մայիսյան կանաչով զուգված բաց սարերն ու, ինչպես կանաչի ծովում նավարկող նավեր, հեռանում էին մահվան ձորի պռունկից, որի բաց երախը չցանկացավ ընդունել իր ընդերքից ելած երեխաներին: Խմբի տղաները սարերում մի քանի անտեր ոչխարներ գտան, գյուղերից հանեցին չորացած ու արդեն մզված լավաշներ, որ փրկվել էին կողոպտիչներից, եւ անմարդաբնակ լեռներում աթարից խարույկներ վառեցին, միս խորովեցին երեխաների համար: Հեշտիա գյուղի կողքով անցնելիս թուրքական հեծելազորային ջոկատը տեսավ նրանց եւ սկսեց հետապնդել: Նախագուշական կրակոցը թշնամու խմբին մարտական վիճակ թելադրեց: Ստիպված բավական հեռացան սայլերից, որպեսզի երեխաները չընկնեն կրակի տակ եւ զոհեր չլինեն: Հետո առանց թուրքերի կրակին սպասելու հարձակվեցին նրանց վրա: Դա պատասխանատու եւ ծանր առաջադրանք կատարող խմբի կողմից խելահեղ քայլ էր: Հայերն զգուշանում էին, եթե թուրքերը համալրում ստանան եւ ձախողվի իրենց սրբազան գործը: Եվ հանդգնեցին: Թուրքերը չէին սպասում դեպքերի նման զարգացմանը, նման ընթացքին, ընկրկեցին եւ տեղահան եղան իրենց հարմարագույն դիրքերից: Այդ էլ որոշեց բախման ելքը:

- Տղանե՛ր, առանց նշանառության չկրակել,- եղավ հրամանը, -իմացե՛ք, թուրքերից ոչ ոք չպիտի ազատվի այլապես գործին կներգրավվեն նորանոր ուժեր եւ կծախողվի երեխաների փրկությունը ...

Խմբի բախտից թուրքական ջոկատը մարդաշատ չէր: Փախուստի դիմելով նրանք հայերին հնարավորություն տվին մեկիկ-մեկիկ գնդակահարելու իրենց: Ութ հոգի էին եւ բոլորն էլ ընկան: Մինչեւ ոլորուն ճամփաներով Նարդեւան գյուղին հասնելը խումբն այլ արգելքների չհանդիպեց: Երեխա-

ներին, ինչպես ասում են, տերը տերով անելով, տասնյակ սայլերն ու լծկանները տեղացի հայերին նվիրաբերելով, Սեւ Արսենի խումբը նորից բռնեց Ախալքալաքի ճանապարհը: Ջիգրաշեն չհասած նրանք քիչ մնաց բախվեց թուրքական հեծելազորին, որը գնում էր հանդուզն ֆիդայիներին զինաթափելու եւ մանուկներին հոշոտելու: Բլրի հետեւից խմբի տղաները մայում էին հեծելազորի ահեղ տեսքին, որը երկու օրով ուշացել էր եւ այդ էլ փրկել էր երեխաներին եւ հայ ֆիդայիներին:

- Եթե մեր տղաները բոլորն այստեղ լինեին, կարելի էր հեծելավաշտը գլխովին ոչնչացնել: Թուրքերը բաց տեղանքում տղամարդու կռիվ անելիս խեղճանում են: Ա՛յ, եթե հակառակորդը փախչի, հերոսաբար կհետապնդեն: Եթե գերակշիռ ուժ ունենան՝ կհարձակվեն, եթե թիկունքը տեսնեն՝ կխփեն, դեմքով իրենց շրջվես՝ կժողոպրեն: Թուրքը լավ է կռվում, եթե վստահ է ոչ միայն իր ուժին, իր առավելությանը, այլեւ հակառակորդի թուլությանը: Նա հիմնականում հաջողությամբ է կռվում հայերի դեմ, որոնց կոտորելու ավանդույթ է մշակվել նրանց մեջ:

- Դուք տեսե՞լ եք, թե ինչպես են շփոթվում թուրքերը, երբ հայերը հետապնդում են նրանց: Նույնիսկ փախչել չեն կարողանում, որովհետեւ սպանվողը դառնում է սպանող, զոհը՝ վրիժառու, եւ նրանց կարծիքով, վախկոտ հայը՝ հերոս: Նման բախումներում թուրքերին խուճապի է մատնում անսպասելին, երբ արթնանում է մի քնած ժողովուրդ՝ տեր դառնալու ինքնիրեն, իր պատմությանը, իր ավանդներին, երբ հազարամյա շիրիմներն արթնանում են, երբ Անդրանիկներն ու Նժդեհները դառնում են Վարդանների, Տիգրանների արյան ու հերոսության ժառանգորդները:

* * *

Հունիսն սկսվեց զովաշունչ Ջավախքին անհարիր շոգերով: Հանդերում, լեռնալանջերին խոտը դեղնեց ու չորացավ: Բայց Ջավախքին ի՞նչ: Արտերն անտեր, մարգագետիններն ու արոտները՝ առանց անասունների, երկիրն անայացած է՝, թող երաշտն ուտեր հողի չունեցած բարիքները, ի՞նչ վնաս ... Թուրքերը, որ հպարտանում էին հաղթանակներով եւ երազում օր առաջ գրավել Թիֆլիսը՝ Ախալցխայում եւ Ախալքալաքում կանգ էին առել. ո՛չ առաջ, ո՛չ ետ: Հանգամանքները փոխվել էին. նախ՝ Թիֆլիսը գրավելն այնքան էլ հեշտ չէր: Այնտեղ նստած էին օտարերկրյա մի քանի ներկայացուցիչներ, որոնք ոչ միայն օգնում էին վրաց կառավարությանը, այլեւ հենց իրենք էլ թելադրում էին վրացական դիվանագիտության անելիքները: Անգլիական, գերմանական, ինչպես նաեւ թուրքական դիվանագետներին, նրանց կառավարություններին անհանգստացնում էր Բաքվի բուլշեւիկյան կոմիսարիատի գործունեությունը, որը ղեկավարում էր Ստեփան Շահումյանը: Բաքվի նավթը ուղղակի հմայում էր ռուս բուլշեւիկյան եւ արտասահմանյան երկրներին, գրգռում նրանց անսահման ախորժակը: Բաքուն դարձել էր դիվանագիտական զանազան խաղերի եւ հետախուզությունների մրցասպարեզ: Փաստորեն Բաքվի ճակատագիրը դադարել էր տեղական բնիկ ժո-

ղովուրդների մենաշնորհը լինելուց եւ դարձել էր ռուս ու եվրոպական երկրների առայժմ աներեւույթ զգվռտոցների կռվախնձորը: Բաքվի անկումը կարող էր մեծ փոփոխություններ մտցնել Անդրկովկասում, նոր կազմակերպված հանրապետությունների փոխհարաբերությունների մեջ: Բաքվի կոմունային օգնելու ոչ մի քայլ էր կարող լինել հանրապետությունների կողմից: Ոչ Վրաստանն ու Ադրբեջանը, եւ ոչ էլ Հայաստանը չէին ցանկանում օգնել կոմունիստական նորընծա վարչակարգին: Եվ թուրքիան ընտրեց Բաքուն գրավելու ռազմական գործողությունների հայամտանյա տարբերակը: Ենթադրվում էր, որ արյունաքամ ու հազարավերք իր ժողովրդով եւ աղքատիկ ու քայքայված իր տնտեսությամբ Հայաստանն ավելի հարմար ճանապարհ էր օր առաջ Բաքու հասնելու համար: Թուրքիան ցանկանում էր մի գնդակով երկու նապաստակ սպանել. նախ՝ վերջնականապես լուծել հայկական հարցը. ամայացրել էր Արեւմտյան Հայաստանը, այժմ կամայացներ Արեւելյանը եւ աչքից էլ կփրկվեր, աչքացավից էլ: Կթաղեր Հայաստանը, կթաղեր նաեւ հայկական հարցը: Մինչդեռ Ստեփան Շահումյանի հույսը հայկական բանակի վրա էր: Գիտեր, որ հայերն առանց կռվի Հայաստանը թուրքերին չեն հանձնի: Գիտեր նաեւ հայոց բանակի զորության մասին, որն ի վիճակի էր նույնիսկ պարտության դեպքում արյունաքամ անելու թուրքական ուժերը: Եվ այդպես էլ եղավ:

Աղբաբայի թուրքերը, որոնք իրենց կողոպուտն ու թալանը մաս առ մաս կրում էին Ջավախքից, վերջերս վերադարձել էին քթները կախ: Պարզվում է, որ եղել են Ալեքսանդրապոլում, իսկ այնտեղ տեղակայված թուրքական բանակում խուճապ է: Սարդարապատը գրոհող թուրքական զորքերը խայտառակ պարտություն են կրել եւ դեռ մայիսի վերջերին փախել Երեւանի ու Էջմիածնի դարպասը հանդիսացող Սարդարապատից: Նույնպիսի բախտի են արժանացել թուրքերը նաեւ Բաշ Ապարանում: Միակ պարտությունը հայերը կրել են Ղարաքիլիսայում, որը սակայն թուրքերից խլել է վեց հազարից ավելի ասկյար:

- Դու որտեղի՞ց, ինչպե՞ս իմացար այդ բոլորը, -հարցրին Լոմանին:

- Լոմանի՞ն էլ կասեն՝ որտեղից ... -ծիծաղում է, -իրենց քթի տակ նստած լսում էի: Շատ էին տխրել թուրքերը: Վախենում են հայերի վրեժից: Մի օր, ասում են, այս ալան-թալանը մեր քթից է գալու, հաշիվ են պահանջելու: Եվ արագ-արագ թալանը կրում են Աղբաբա: Ճանապարհին ինչ-որ գյուղում նրանց վրա հարձակվել են եւ թալանել: Հարձակվողները եղել են թուրքեր: Թալանիչները կպել են իրար, յուրաքանչյուր կողմից երկու-երեք հոգի սպանվել են: Մի խոսքով, թալանողներին թալանել են: Իսկ հիմա տուժողները վերադարձել են ավելի մեծ ուժերով: Ցանկանում են թալանը հետ վերադարձնել: Կարծում են, որ լավ արյունահեղություն է լինելու: Էստեղ են ասել՝ գողը գողից գողացավ, Աստված տեսավ զարմացավ ...

- Թուրքը թուրքին, ըստ օրինաց, չպիտի թալանի, -խոսեց Քոթոթ Պողոսը, -հային թողած թուրքն իր արյունակցին ինչո՞ւ պիտի թալանի ...

- Թալանողի համար հայ, թուրք չկա: Գողն ազգություն չունի, -փիլի-

սովայեց թուփալ Արսենը:

- Չիմացած բաներից մի՛ խոսեք: Թուրքը թուրքին կթալանի, եթե հայերի մեջ կամ նրանց հարեւանութեամբ չեն ապրում, այլ չորս կողմը միայն թուրքեր են: Հայը փրկում է թուրքերին իրար ուռելուց: Եթե ուրիշ ազգի թալանվող չկա, ի՞նչ անի խեղճ թուրքը, առանց թալանի ո՞նց ապրի, ո՞նց պահի իր տունուտեղը: Աշխատել չի ուզում, ուզենա էլ չի կարողանում, գլուխը ո՞ր քարին տա: Պիտի՛ ապրի, չէ՞ ... -խոսեց վարժապետ Համոն: -Թուրքն առանց թալանելու ապրել չի կարող ... Դրանց ղեկավարը Քեմալ փաշան, իր մի ճառի մեջ ասել է՝ թուրքը ազգ չէ, ժողովուրդ չէ, խաժամուժ է: Որպեսզի թուրքը մարդ դառնա, գոնե մի հիսուն, հարյուր տարի ինքը պիտի վարի, ցանի ու հավաքի իր հողն ու բերքը ...

- Հենց էդպես էլ ասե՞լ է ...

- Հենց էդպես, Աստված վկա, ռուսերեն գրքերից եմ կարդացել:

- Էդ հո իր ժողովուրդին փետրահան է արել, -նկատեց մեկը:

- Ախր, թուրքը թալանելու հիվանդություն ունի, -նորից խոսեց վարժապետ Համոն, -էդ հիվանդությունը մինչեւ օրս անբուժելի է: Ուրեմն, Քեմալ փաշան երեւի հասկացող թուրք է, հայերն ասում են ախտորոշել է հիվանդությունը եւ գտել դարմանը: Թալանից, կողոպուտից բուժելու մի դեղ, մի բալասան կա՝ ազնիվ աշխատանքը: Կաշխատես՝ մարդ ես, չես աշխատի՛ գայլ ես: Հիմա թուրքերն արյունարբու գայլեր են, տա Աստված, մարդ դառնան: Եվ քանի որ հայերս հավիտյանս դատապարտված ենք գայլերի հարեւանը լինելու դժբախտությամբ, պետք է, որ առաջինը մենք ցանկանանք, ո՞ր նրանք մարդանան: Այո՛, այո՛, մենք նրանցից մեր հողի ու ջրի, մեր արյունակիցների վրեժը լուծելուց առաջ եւ հետո պետք է ցանկանանք, որ նրանք, մարդանման լինելով հանդերձ, նաեւ մարդ դառնան: Ցանկանանք, որ երկնային տերը չարությունը քամի դրանց սրտից, արյան թույնը եւս, իսկ եթե չի ցանկանա թուրքին մարդացնել, գոնե զորացնի մեր բազուկը ...

- Բարդ ես խոսում, վարժապետ, ինչո՞ւ չես ասում, որ եթե մեկը մարդ է սպանում, օրենքով նրան գնդակահարություն է հասնում: Իսկ թուրքերն սպանում ու չեն պատժվում: Եթե պետությունները նրանց դատել չեն կարող, ապա տուժողը, ասել է մենք՝ հայերս, պիտի անենք էդ բանը, սպանողին սպանենք, որ ինքներս իրավունք ունենանք ապրելու, համ էլ մեր սրբազան մեռելները շուռ չգան իրենց շիրիմներում եւ մեզ չանիծեն, իրենց վրեժն անպատիժ թողնելու համար, համ էլ թուրքը չհամարձակվի հարձակվել եւ քամել մեր արյունը, -խոսեց Պողոսը:

- Ես խնդրում եմ թուրքերի նկատմամբ պահել վրիժառության անմարզ գագացում, -Աեւ Արսենն էր, -մեր խումբը ոչ վարժապետների խումբ է, ոչ ոստիկանների դասակ, մենք վրիժառուներ ենք, կուզեք մեզ ֆիդայի կոչեք, կուզեք պարտիզան, բայց այսօրվա մեր նպատակը թուրքերին դաստիարակելը չէ: Այնպես եք խոսում, որ կարծես երեխաները չարություն են արել, պիտի կրթենք, մարդ դարձնենք, որ իրար չհայիոյեն, հարեւանների ապակիները չջարդեն: Թուրքերը մեր պարտապաններն են, խլել եւ շարունակում են խլել

մեր հողը, մեր տունուտեղը, մեր օդն ու ջուրը: Նաեւ արյունապարտ են. հազարներ, միլիոններ են մորթել ու ոչնչացրել աքսորների ճանապարհներին: Մենք պետք է պարտատիրոջ, տուժողի իրավունքով պահանջենք մեր կորցրածը. կորուստների բարոյական, եթե ուզում եք ճիշտն իմանալ, իսկական գինը այն է՝ արյան դիմաց մահ, այս պետք է լինի մեր նշանաբանը: Վե՛րջ տվեք վարժապետական մարդասիրության փորձերին ...

Լռություն տիրեց: Գճնավորի անմատչելի քարանձավում մարմրում էր մոմը: Լուսնկա էր, ամռան տաք գիշեր: Քարանձավում մեկ-մեկ լսվում էր թեւերի շափշափյուն: Ծիծեռնակների բներն անհանգստանում էին մարդկանց անսովոր ներկայությունից, իսկ չղջիկները տատանում էին մոմերի թույլ բոցը:

Աշխարհը ե՛լ արթուն էր, եւ քնած: Վշշում էր Թափարվանը: Իսկ քարանձավի դեմ-դիմաց քարե բարձունքից գետի մեջ էր նետվում Կուլիկամի ջրվեժը՝ արծաթագույն եւ արծաթածայն, որի ջրի սառնությունն ու համը սնում են կարմրախայտ ձկներին՝ դարձնելով տեղացիների ոչ միայն համեղ, այլեւ բուժիչ սնունդը: Ջրերի ի՛նչ երգեցողություն, թռչունների ծափոճափյուն ու հեքիաթների վրա իշխող Աբուլ լեռ, որ լուսնի լույսի տակ երեւում էր իր ամբողջ վեհությամբ: Լսվեց ազդանշանային սուլոց: Եվ պատասխան սուլոց:

- Լոմանն այս ժամին չպետք է վերադառնար, -անհանգստացավ Սեւ Արսենը:

- Թուրքերը շտաբ տարան Եղիսաբեթին եւ Սերգեյին, -հեւասպառ ներս ընկավ Լոմանը:

- Ինչպե՞ս թե տարան, բանտարկեցի՞ն, թե՞ ...

- Ֆայտոնով տարան, բայց մի տաս ծիավորի ուղեկցությամբ: Չհասկացա՝ ֆայտոնով բանտ չեն տանում, իսկ այդքան ծիավոր ինչո՞ւ են ուղեկցում, հասկանալի չէ, մանավանդ որ նրանց տանելուց հետո հիմա տունը տակնուվրա արած-վնասություններ են անում ...

«Հազիվ թե հիմա նրանց տանը որեւէ բան գտնեն, բայց նրանց իրոք հարցաքննելու են: Եվ գնդի հրամանատարները: Ո՛րեմն կասկածում են հայրենասիրական գործունեության մեջ կամ ցանկանում են վախեցնել: Իսկ թե ի՞նչ հիմք ունեն, այդ կասկածը երեւի շուտով կերեւա»: -Մտմտում է Սեւ Արսենը:

Տղաները լուռ էին: Լուրը ծանր տպավորություն էր գործել բոլորի վրա: Նրանք բոլորն էլ իսկական եղբոր յուրահատուկ սիրով ու նվիրվածությամբ էին վերաբերում Եղիսաբեթին: Նրա ժպիտի ու քաջալերանքի կարիքն էին զգում բոլորը: Եթե չլիներ այս ծանր վիճակը, եթե չլիներ Սերգեյի ամուսնության իրողությունը, գուցե բոլորը մեկիկ-մեկիկ բացեին իրենց սրտերը խաժաչք, ցորնագույն դեմքով գեղեցկուհուն: Բայց այսօր նման «հիմարություն» ոչ ոքի մտքով անգամ չէր անցնի: Տարին սիրային չէր: Մանավանդ պարտվածները սիրելու հետ գլուխ չունեին եւ ամաչում էին նույնիսկ սիրո մասին մտածել: Եղիսաբեթն ու Սերգեյն արդեն հասցրել էին կատարել հայրենասիրական այնպիսի գործեր, որ ֆիդայի տղամարդիկ բարի ճախանձով

ու ջերմությամբ էին նայում նրանց կատարածին:

- Ա՛յ թե լուր էր, -մռտաց Սեւ Արսենն ու փչեց, հանգրեց մոմը:

* * *

Բինբաշի Օմարի սենյակում սեղանի շուրջ նստած էին երեքով՝ տանտերը՝ բինբաշի Օմարը, շտաբի պետը՝ Նազըմ բեյը եւ նրանց գերուհին՝ Եղիսաբեթը: Խոսակիցների մեջ գերի եւ գերող, ենթարկող եւ ենթարկվող, քննիչ ու ամբաստանյալ դժվար էր առանձնացնել: Այնուամենայնիվ, հարցնողը բինբաշին էր, պատասխանողը՝ Եղիսաբեթը եւ լսողի դերում՝ Նազըմը: Հարցաքննությունը պատշաճության սահմաններից բավական ժամանակ դուրս չէր գալիս: Ամեն ինչից երեւում էր, որ Օմարը ոչ թե գերողի, այլ գերու դերում էր: Շանթահարված էր հայ կնոջ հմայքով եւ նմանվում էր մագնիսական հզոր դաշտի մեջ ընկած մետաղի: Այս հանդիպումն Օմար փաշայի կյանքի հիսուն տարիներից, ասես, բեռնաթափել էր կեսից ավելին եւ նրա հայացքում պղտորվում էին կրքի բռնկումները՝ անդաշն կերպով հյուսվելով սիրալիրությունների հեղեղին: Նազըմ բեյը լավ գիտեր հրամանատարի կոշտ ու վայրագ բնավորությունը, մանավանդ՝ երբ նա հարցաքննում էր, եւ հիմա զարմացած էր այդ ծերացող գայլի հեզությամբ, որը դարձել էր մի տեսակ ձեռնասուն, անատամ, հարցերի մեջ՝ խնդիրք, խռպոտ ծայնի մեջ՝ նվազում հոգի եւ, ընդհակառակը՝ զինվորական կեցվածքով հրամանատարին վայել պատշաճություն՝ նման զորահանդես գնացող հրամանատարի:

- Խանո՛ւմ, ես ուրախ եմ քեզ տեսնելու այստեղ, քո այցելությունը մեզ՝ կոպիտ զինվորականներիս, շոյում է մեր ինքնասիրությունը ...

- Փաշա՛, ես ուրախ կլինեի, եթե ինձ վերապահվեր այցելության իրավունքը, բայց ես՝ այստեղ հայտնվել եմ ոչ իմ կամքով, այլ ինձ բերել են...

- Օ՛, Ձեյնաբ խանում, դա եւս մեր կողմից սիրալիրության դրսեւորման ձեւ է, քեզ այստեղ են բերել կառքով եւ ուղեկցող պատվո պահակախմբով: Եթե դա դիտվում է որպես քո կամքը չհարգելու կամ անտեսելու փորձ, ուրեմն ընդունիր իմ ներողությունը ...

- Ես ձեզ ներելու կամ չներելու իրավունք չունեմ: Դուք այս՝ արդեն անմարդաբնակ սանջակի տերն եք, եւ այստեղ միակ թելադրողը դուք եք: Ես կկամենայի, որ դու՛ք, փաշա, ուղղակի անցնեիք ձեզ հետաքրքրող հարցերին, որոնց ես սիրով կպատասխանեմ ...

- Հարգելի խանում, ես զինվորական եմ, այն էլ հին սերնդից: Բայց նույնիսկ կոշտ զինվորականս ի վիճակի չեմ քեզ՝ գեղեցկուհուդ հարցաքննելու: Ճիշտ կլինի այս հանդիպումը կոչել ծանոթության հանդիպում: Ինձ հետաքրքրող հարցերը ես քեզ կտամ, բայց չեմ պարտադրի պատասխանելու, եթե դու չցանկանաս: Ամբողջ սանջակը այսօր հայաթափ է, իսկ ինչո՞ւ դու հայրենակիցներիդ հետ չգնացիր: Ամայի քաղաքում ապրելու մռայլ հարմարավետությունը ինձ կասկածելի է թվում: Սակայն խնդրում եմ իմ կասկածի մեջ չարամտություն կամ վիրավորանք չտեսնել ...

- Հարգելի Օմար փաշա, ես ծնունդով այս երկրից եմ, կրթությամբ՝

Եվրոպացի: Ես չեմ վերադարձել, դեռ չեմ ավարտել իմ ուսումնառությունը: Ինձ այստեղ է բերել զավակի պարտքը մորս հանդեպ, որը մահացել է թաղվել էր ձեր զորական մուտքից մի երկու ամիս առաջ: Նոր են թառամել, սակայն չեն չորացել նրա շիրիմին ծաղիկները: Մենք՝ ես եւ ամուսինս, զբաղված էինք մորս շիրիմի հարդարումով, երբ երեւացին թուրքական օկուպանտները: Մենք փախչել չէինք կարող, մեր ճանապարհը դեպի Ախալցխա եւ դեպի Ալեքսանդրապոլ փակ էր: Սերգեյը խիստ վախենում էր ինձ համար: Էյս օրերին, երբ զենքը դարձել է մարդկանց հաղորդակցվելու, շփվելու կրակե լեզուն, կնոջը հեշտ չէ պատահականությանը հանձնել: Մենք մնացինք մեր կյանքն ու ապահովությունը վստահելով թուրքերին, հավատալով նրանց հրամանատարության ասպետական բարյացկամությանը: Որպեսզի նոր հարցապնդում չլինի, անմիջապես ասեմ, որ մենք լրտեսներ չենք եւ իմ կարծիքով այստեղ լրտեսելու որեւէ բան էլ չկա: Եկել եմ Եվրոպայից, հետեւապես տեղական վրիժառուների հետ կապեր ունենալ չեմ կարող եւ նույնիսկ չգիտեմ՝ նրանք այս գավառում գոյություն ունեն, թե՛ ոչ: Ահավասիկ, իմ աձնագիրը, ծանոթացե՛ք ...

- Այո՛, -խոր շունչ քաշեց փաշան, -պաշտելիս, ես չէի էլ կասկածում, որ դու մեր քթի տակ կարող ես ծառայել ուրիշներին, թեկուզ հայերին: Բայց այս աշխարհը, գոգալ, զարմանալի է: Մեր հետախույզներն ասում են, որ գոռնափշտիկներն ավելի հաճախ են երեւում ձեր փողոցում, ձեր դռների ու պատուհանների առջեւ ...

- Ներողություն, փաշա՛, այդ ովքե՞ր կամ ի՞նչ են գոռնափշտիկները, մենք նրանց չգիտենք, չենք ճանաչում ...

- Նրանք ը՛ ը՛ ը՛... -Կմկմաց բինբաշին, -ինչպես ասել, որ հասկանալի լինի ...

- Գոռնափշտիկներ, -ընդմիջեց Նազըմ բեյը, -թուրքերն ասում են ուրվականներին ...

- Ուրվականների՞ն ... - Անկեղծ զարմացավ Եղիսաբեթն առանց դերասանության, -այդ ի՞նչ ուրվականներ են, նրանք ի՞նչ գործ ունեն մեր քաղաքում, առավել եւս մեր տան շրջակայքում: Դա ի՞նչ հանելուկ է, ասացե՛ք, ի սեր Աստծո՛ ...

- Դրանց մենք էլ չենք տեսել, բայց նրանք արդեն սպանել են մի քանի ասկյարների: Եթե հավատանք հետախուզությանը, դրանք լավ ծափված ֆիդայիներ են ...

- Տեսնում եք, փաշա՛, դուք էլ չգիտեք ձեր ներկայացրած մեղադրանքների էությունը: Ուրվականները, որոնք շրջում են այս ամայի քաղաքում եւ անպատիժ ասկյարներ են ոչնչացնում, ձեր զորաց թուլությունից է: Ինչո՞ւ եք թողնում, որ նրանք անարգել գործեն քաղաքում եւ անեն իրենց սեւ գործը: Իսկ եթե որսալ կարողանաք, ապա, խնդրում եմ, բերեք մեզ հետ առերեսման եւ փարատեցեք կամ հաստատեցեք ձեր կասկածը ...

- Փաշա, որքան էլ չցանկացանք, բայց մեր միջեւ զրոյցը, այնուամենայնիվ, վերածվեց սովորական, ես կասեի նվաստացնող հարցաքննության:

Փաշա, դու ցանկանում ես այս կնոջը վերագրել մեղքեր առանց հիմքի, առանց ապացուցման: Երբ որ բռնվի Ձեյնաբը հակաթուրքական գործունեության մեջ, այն ժամանակ փաստերի եւ առերեսման միջոցով միայն այս հարգարժան տիկնոջ հետ կխոսես այսօրվա լեզվով: Դու նրան, փաշա՛, ցանկանում ես ցույց տալ քո ուժը, քո իրավունքները, որ նա առանց քո օգնության էլ գիտի: Յետո, քո իրավունքների սահմանները տարածվում են նաեւ իմ վրա, որ նրա աչքում ստորանամ նաեւ ես, քանի որ գիտես, թե որքա՞ն թանկ է նա ինձ համար, եւ գիտես իմ մտադրության լրջությունը այս կնոջ նկատմամբ ... -մեղացած խոսք էր, որ խոսեց Նազըմ բեյը թուրքերեն, որը չհասկացավ Եղիսաբեթը, բայց գլխի ընկավ, որ նրանց միջեւ ուր որ է ընդհարում է լինելու:

- Բե՛յ, դու քեզ պահել չգիտես, ավելի ճիշտ դու քեզ վատ ես պահում: Ես կասկածներ ունեմ այս կնոջ մասին եւ իմ գործն է՝ կնվաստացնեմ նրան, թե ոչ: Դու գիտես, որ նրանց տան շրջակայքում անհետացել է օմբաշի Ռե՛մուդը, գիտե՞ս ...

- Իսկ նրանց տանը գտե՞լ են օմբաշուն ողջ կամ մեռած, եթե չես գտել, բարի եղիր գտնել եւ նոր միայն հանցագործ համարել նրան: Հակառակ դեպքում ներողություն խնդրիր այս կնոջից: Ես հասկանում եմ, որ հավանում ես նրան, ուզում ես տիրանալ նրան, բայց նույնիսկ այդ դեպքում ո՛չ նրա ոտքերի տակ ընկիր, ո՛չ էլ փորձիր նրան օգել քո ոտքերի տակ ...

- Ես կհամբուրեմ նրա ձեռքը, կասեմ սիրալիկ խոսքեր, բայց ներողություն խնդրել հայուհուց, այդքան չեմ ստորանա: Ես նրան չեմ օգել իմ ոտքերի տակ, ո՛չ: Իմ եւ քո ոտքերի տակ է ողջ Հայաստանը: Այդ իմացիր նաեւ դու, մենք թուրք ենք, եւ չեմ կարող չասել, որ Թուրքիայում նման գյուղալի տաս տարին մեկ հազիվ թե հանդիպի մարդ: Ես այս կնոջը նայելուց անգամ չփոթվում եմ, նա լա՛վն է, բայց այս հայուհին կարող է զարդարել լոկ իմ հարեմը եւ ոչ թե իմ կյանքը: Իմացա՞ր, մոզի՛ ...

- Եթե չլիներ այս կնոջ ներկայությունը, ես քեզ, փաշա, կսպանեի, որպես կատաղած շան, բայց իմացիր, այն կոնֆլիկտը, որ դու ստեղծեցիր, չի ավարտվելու, եթե քեզ չաստիճանագրկեն կամ, ընդհանրապես, շարքից չհանեն: Դու ինձ մատասխան ես տալու ...

- Սոզի՛, իսկական մոզի, դու երբեւէ լսել ես, որ Թուրքիայում հայի սպանողին կամ վիրավորողին աստիճանագրկեն: Չե՛ս լսել, չե՛ս էլ լսի: Ա՛յ, այս գեղեցիկ հայ լրտեսուհուն դու սիրահարվել ես, գուցե քեզ կախեն: Որպեսզի այս գեղեցկուհին քոնը չդառնա, ես նրան կգնդակահարեմ, եւ մեր միջադեպը կհամարեմ ավարտված ...

- Պարոնա՛յք, ձեզ ի՞նչ պատահեց: Խոսում եք միայն թուրքերեն, որ ես չեմ հասկանում: Նեղացած տոնով, որը նույնպես հասկանալի չէ ինձ: Գուցե ինձ ուղարկեք տուն, հրավիրեք մեկ ուրիշ անգամ կամ ինքներդ այցելեք մեր տուն: Ձեզ խոստանում եմ ավելի սիրալիկ ընդունելություն եւ եվրոպական սեղան: Պարոնայք ...

Թուրք գինվորականների չարությունը հայուհու խոսքերից, նրա աչ-

քերի լույսից, նահանջեց: Նրանք վեր կացան նստած տեղերից եւ ձեռքերը կրծքերին ներողություն խնդրեցին Ձեյնաբ խանումից, ավելի խոր խոնարհվեց Օմար փաշան՝ մինչեւ գետին: Հետո նպատակահարմար գտան տուն ուղեկցել նրան եւ կառքի անիվները հետ գլորվեցին դեպի քաղաքի ոչ լայնահուն փողոցը, ուր տակնուվրայնությունը ոչինչ չէր տվել խուզարկողներին եւ նրանք հեռացել էին:

- Դե՛, ի՞նչ նորություն, -հարցրեց Սերգեյը, -ի՞նչ են ուզում ...

- Ամեն ինչ, սկսած սիրուց եւ վերջացրած իմ լրտես չլինելու խոստովանությամբ. Օմար փաշան եւ Նազըմ բեյը խանդի տեսարան սարքեցին: Պարզվում է, որ բինբաշին, այդ ծեր գայլը աչք ունի վրաս: Ամենայն հավանականությամբ նրանք կռվախնձոր կսարքեն ինձ եւ կծվատեն իրար: Իսկ թե ի՞նչ կպատահի մեզ հետ, Աստված գիտի: Խմբին տեղյակ պիտի պահել, որ վտանգի դեպքում մեզ փախցնեն այստեղից: Շատ սիրահարներ են ունեցել, բայց որ թուրք սպաների սիրելին էլ կարող են դառնալ, չէի պատկերացնում: Ի՞նչ անեն, չգիտեմ: Սիրահարներիցս մեկը քաղաքակրթված եվրոպացի է խաղում, մյուսը՝ քաղաքակրթված թուրք: Սակայն երկուսն էլ թուրք են: Ընդ որում՝ մեկն ինձ կնության է վերցնելու, մյուսը դարձնելու է հարեմի զարդը: Եվ նրանցից ոչ մեկը չի հարցնում իմ կամքը: Նրանք, մանավանդ հայ կնոջ տիրելը համարում են իրենց անկապտելի իրավունքը: Սիրուն ես, Ձեյնաբ խանո՛ւմ, եւ մենք ցանկանում ենք, որ գեղեցկացնես մեր կյանքը, որ ունենանք քո սերը որպես ավար ջավախքյան ռազմերթի: Այս խոսքերով ինձ միշտ դիմել է եվրոպազու հակում ունեցող Նազըմ բեյը, որը մի քանի տարի թափառել է Բեռլինի գինվորական ուսումնարաններում, հաուպտմանի աստիճանով վերադարձել Թուրքիա: Մյուսը՝ ծերը, ցանկանում է ինձ գնդակահարել որպես լրտեսուհու, որպեսզի ես չդառնամ հատկապես Նազըմ բեյի կինը եւ, միջադեպը վերանա, չքվի գրողի ծոցը ...

- Այդ մասին նրանք խոսո՞ւմ էին քո ներկայությամբ ...

- Այո՛, բայց թուրքերեն, առանց կասկածելու, որ ես հասկանում եմ ...

* * *

Այնուհետեւ դեպքերը սկսեցին զարգանալ արագությամբ: Մի քանի օր էր անցել հիշարժան հանդիպումից, երբ ուշ երեկոյան, մի թուրք սպա ոչ թե թակում, այլ ջարդում էր նրանց դուռը: Դուռը բացեց Սերգեյը: Սպան գրգռված տեսք ուներ: Ամմիջապես դեն հրեց Սերգեյին եւ մտավ ներս.

- Ո՞ւր է խանումը:

- Դուք նրան ճանաչո՞ւմ եք - հարցրեց Սերգեյը:

- Ո՛չ, ուզում եմ ճանաչել: Մի երկու օր առաջ տեսել եմ կառքով՝ փողոցով անցնելիս ... Նրան ուղեկցում էր ասկյարների պատվո ջուրը: Նրան ճանաչում եւ սիրահարված են մեր հրամանատարները: Բայց ես թթել եմ նրանց վրա: Եկել եմ խանումին սիրտս բանամ:

- Այդպե՞ս, միանգամի՞ց ... Ախր նա քեզ չի ճանաչում ...

- ճանաչում է: Ես թուրք եմ: Այստեղ մտել եմ իրավունքով, որպես հաղթող եւ ձեւականությունների հետեւից ընկնելու ժամանակ չունեմ: Այստեղ թույլատրելի է մեր յուրաքանչյուր ցանկությունը ...

- Եվ ուժով ձեր պահանջելու իրավունքը ...

- Ես ասացի՝ մեր ցանկությունը այստեղ օրենք է ...

- Դե, որ այդպես է, պարոն հաղթող, չքվիր այստեղից, քանի գլուխդ ուսերիդ է ...

- Ի՞նչ, ի՞նչ ասացիր, գյավո՛ւր, շո՛ւն, ես քեզ հիմա շանսատակ կանեմ ... -Եվ ձեռքը տարավ դեպի ատրճանակը: Եվ ձեռքը դեռ պատյանին վզակոթին այնպիսի մի հարված ստացավ, որ աչքերի առջև շաղվեցին միջանցքի բոլոր առարկաները. նավթի լամպը բազմապատկվեց, դարձավ հազար հատ, վերածվեց բեկորների, հետո լամպը իր բյուր լեզուները համած սկսեց ծփծաղել խեղճ հաղթողի վրա, որ արդեն չոքել էր հողե հատակին եւ ուր որ է թավալվելու էր ներքեւ:

- Տեսնո՞ւմ ես, հաղթող թուրք, քեզ սեր չեն տալիս, իսկ ատելության պակաս չկա, կտանք, հետո տար Մուհամեդի դրախտ ... -Սպան գլորվեց ներքեւ ու անշարժացավ: Նրա ատրճանակը Սերգեյը դրեց գրպանը եւ սկսեց մտածել անելիքը, երբ սենյակի դռան մեջ արձանացավ Եղիսաբեթը:

- Այդ ե՞րբ հասցրիր դրան էլ օրը օգեւ, Սերգե՛յ, ախր հինգ րոպե էլ չի անցել դուռը բացելուց ...

- Թուրք հերոսն ուզում էր, որ դու սիրով վարձահատույց լինես իր հերոսությանը, նրա ցանկությունն այստեղ օրենք է ...

- Նա ո՞ղջ է, թե՞ մեռած ...

- Նա ուշակորույս վիճակում է, բայց պիտի մեռնի, ուրիշ ճանապարհ չկա: Կենդանի մնաց, մեռնողը մենք կլինենք: Բայց մենք նույնիսկ չգիտենք, թե նրա հետ արդյոք զինվոր կամ հետեւող չկա՞ ...

Սերգեյը դուրս եկավ փողոց եւ քիչ անց վերադարձավ.

- Սրան հետեւել եմ մեր տղաները: Եթե չտեսնեի նրանց, ներխուժելու էին տուն եւ վերջացնելու էին սրան: Սեւ Արսենը նրանց հետ է: Ասում է՝ նրան հարկավոր է թաղել տան շրջակայքում, որովհետեւ ծորագլխի ճանապարհը բեռնված է թուրքական տրանսպորտային գումակներով: Հիմա մերոնք կգան եւ իրենք էլ կտնօրհինեն սրա հավերժական հանգստի հարցը: Տղաներն այնքան անաղմուկ մտան բակ, որ ոչ ոք չլսեց եւ չտեսավ նրանց մտնելը:

- Բարի իրիկուն, հիմա դու, քուրո ջան, մտիր քո սենյակը, դու այստեղ այլեւս գործ չունես: Մնացածը Եղիսաբեթը չլսեց: Նա ինչ որ ծայներ որսաց տան կտուրից, բան չհասկացավ: Առեղծվածը ուշ պարզվեց: Սպային խեղդել էին տան հողածածկ կտուրին, քանի որ սալաքար էր բակը, իսկ մյուս կողմում փողոցն էր: Հարմար շիրմատեղը մնացել էր կտուրը: (Կանցնեն երկու, թե երեք տասնյակ տարի, եւ կտուրը վերանորոգելիս կխանգարվի թուրք սպայի հավերժական քունը: Նրա աճյունը կխառնվի փտած գերաններին եւ կտարվի քաղաքային աղբամոց: Քաղաքի բնակիչները երախտագիտորեն կնայեն արդեն սպիտակած Եղիսաբեթին ու Սերգեյին, որոնց «աշխատան-

քի» արդյունքները ի հայտ կգան թոնրատան նկուղում թաղված տասներեք թուրք սպաների աճյունները հանելիս: Եղիսաբեթի սիրո զոհերը, որոնք սերը իրենց իրավունքն էին սեպում այս գավառում, սակայն չգիտեին, որ պարտվածներն ունեն ատելության իրավունք, որը կարող էր գերեզմանել իրենց բոլոր իրավունքներն ու պահանջները, եւ զրկել նույնիսկ կյանքից ու ապրելու իրավունքից):

Երկու օր անց երկու սպաներ վաղ առավոտյան բախեցին Եղիսաբեթենց դուռը եւ խնդրեցին ստուգելու իրավունք, ավելի ճիշտ խուզարկության իրավունք: Նրանք երկար որոնումներ չկատարեցին: Երեւում էր, որ նրանց մանր-մուկ բաները չեն հետաքրքրում, որովհետեւ Եղիսաբեթը զարմանքով նկատեց, որ զարդասեղանին դրված իր ոսկեղենը՝ մատանիներն ու ականջօղերը, թեւոցներն ու վզնոցները մնացել են իրենց տեղերում: Մաշալլահ թուրքեր, չէին տարել: Արմանք-զարմանք բան: Գնալիս տանտիրուհին ժպտալով դիմեց նրանց.

- Պարոնայք, զոնե ինձ չէի՞ք ասի, թե ինչ էիք փնտրում այստեղ ...

Բայց այնպես ասաց, որ սպաների լեզուների փականքն անմիջապես ընկավ: Նրանք սիրով պատասխանեցին տանտիրուհու հարցին:

- Երկու օր առաջ ձեր տուն պետք է այցելել մեր սպաներից մեկը: Նա կատարում էր բինբաշի Օմարի հրամանը: Այսինքն պետք է մտներ ձեր տուն եւ ... -Այստեղ երիտասարդ սպաների լեզուները մեկեն բռնվեցին: Լռեցին եւ նայում էին իրար:

- Մնացածը գաղտնի՞ք է, -ժպտաց տանտիրուհին, -եթե գաղտնիք է, կարող եք չասել ...

- Այո՛, մնացածը գաղտնիք է, -թեթևացած խոսեցին սպաները: -Այդ սպան ո՞ր է, խանում ...

- Դուք մահճակալների, սեղանների տակ, թոնրի մեջ սպա՞ էիք որոնում, -բարձրաձայն ծիծաղեց Եղիսաբեթը, -ախր նա եթե այստեղ լիներ, ինչո՞ւ պիտի մտներ այդ ծակուծուկերը, փա՞ռք Աստծո, մեր տանը աթոռներ կան, օթոցներ, բազմոցներ, կնստեր դրանց վրա: Չէ՛, պարոնայք, մեր տուն թուրք սպա չի այցելել, մեզ ոչ ոք չի անհանգստացրել, իսկ դուք չգիտե՞ք ինչ առաքելություն ուներ սպան, ի՞նչ ուներ մեր տանը ...

Սպաները նայեցին իրար: Չէ՛, ասել չէին կարող, որ նա պիտի սիրեր, պիտի տիրեր խանումին կամ մերժվելու դեպքում սպաներ նրան: Հրամանն այդպիսին էր: Ուրեմն, կամ պիտի անվանարկվեր, կամ սպանվեր Եղիսաբեթը, որպեսզի դադարեր կռվախնձոր լինելուց գնդի հրամանատարի եւ շտաբի պետի միջեւ: Այդպես էր որոշել բինբաշի Օմարը:

- Բայց ո՞ր է, իրոք, այստեղ չի եղել մեր սպան ...

- Պարոնայք, սպան իր չէ, կամ առարկա չէ, որ նրան պահենք կամ թաքցնենք: Մեզ մոտ սպա չի երեւացել, նրան հարկավոր է այլ տեղ որոնել: Եթե հարկավոր է իմ տունն հանգամանորեն, առավել մանրամասնորեն խուզարկեցեք ... Որեւէ անկյուն բաց չէ՞ք թողել, նորից նայեցեք ...

Սպաները գլուխները քորելով, քաղաքավարությամբ գլուխ տվին ու

հեռացան: Փողոցի սալահատակին լավեց ձիերի սմբակների ռիթմիկ աղմուկն ու շուտով մարեց: Եղիսաբեթն ու Սերգեյը նայեցին միմյանց՝ չիմանալով, թե ի՞նչ խաղի մեջ են քաշվում իրենք: Մի բան էր մեխվել Եղիսաբեթի գլխում. «Նա, այդ սպան կատարում էր բինբաշի Օմարի հրամանը»: Ուրեմն, հանգուցյալ սպան կատարում էր բինբաշի Օմարի հրամանը: Առաջադրանք էր ստացել անվանարկել իրեն, անհաջողության դեպքում՝ սպանել: Գործը ձախողելն անպայման պետք է որ մտներ բինբաշու դիվային ծրագրի մեջ: Նա չէր կարող բացառել սպայի սպանվելու տարբերակը: Շատ նուրբ եւ խորամանկ խաղ էր կազմակերպել Օմարը:

Ի՞նչ ձեռով էլ ավարտվեր սպայի առաքելությունը՝ շարքից հանվում էր Եղիսաբեթը կամ ֆիզիկապես կամ բարոյապես կամ որպես հանցագործմարդասպան: Այս դիվային խաղից փրկություն չպետք է ունենար Եղիսաբեթը: Բայց խաղն ավարտված չէր, եւ վերջը տեսանելի չէր: Եղիսաբեթը չգիտեր եւ չէր էլ կարող իմանալ, որ իրենց տունը գտնվում էր հետախույզ ասկյարների սեղմ օղակում, որ հավքն իր թելով, օձն իր պորտով անկարող են մոտենալ նրանց տանը, առանց ընկնելու ասկյարների ձեռքը: Առաջին երեկոյան նրանց հրաշքով փրկեցին Սեւ Արսենն ու իր տղաները, ասկյարներին քաշելով Եղիսաբեթենց տանից հեռու: Եղիսաբեթը չգիտեր նաեւ եւ չէր էլ կարող իմանալ, որ տղաների գիշերային հայտնությունը, հետազայում սպայի անհետանալու փաստը կվերագրվի հայ գոռնափշտիկներին, որոնք հայտնվել են այդ կողմերում եւ չանթել են ու անհետացրել թուրք սպային: Այս վարկածը հետազայում ստանում է միակ ճշմարիտ, միակ տրամաբանական իրողությունը, հուրախություն Եղիսաբեթի եւ Սերգեյի, որ որոշ ժամանակ դադարում են հետապնդվելուց: Իսկ ամուսինների ամենօրյա թեման այդ դժվարին խնդրի լուծումն էր, որ առաջադրել էր բինբաշի Օմարը, եւ ինքն էլ դժվարանում էր գլուխ հանել եւ դուրս գալ իր իսկ սարքած որոգայթից: Կասկածի եւ տվյալանքների այս ժանր օրերին իրեն բավականին լավ դրսևորեց Նազըմ բեյը: Խուզարկու սպանների այցելության հաջորդ օրը նա տեսակցեց իր «սիրեցյալին»: Մխիթարեց նրան, զարմանք ապրեց, լսելով, որ բինբաշի Օմարի հրամանով է եղել սպայի այցելությունը, իսկ վերջում, վերստին, անցավ իր փորագավին.

- Ձեյնաբ խանում, դու այդ հարցում մեծ մեղք ունես, մեղավոր ես ... Ձգձգելով եւ մեր հարաբերությունների մեջ պարզություն մտցնել չցանկանալով տեսնո՞ւմ ես ուր հասցրիր ե՛ւ քո, ե՛ւ իմ ճակատագիրը: Ինձ համար դժվար չէ գնդակահարել այդ ցնդած ծերուկին կամ քեռուս՝ Վեհիբ փաշայի միջոցով հեռացնել նրան այստեղից, սակայն այդ միջոցներով մեր սիրո հարցի լուծումը ավելի կհեռանա, ավելի կձգձգվի: Նա չի նահանջելու, նա ասում է՝ ի՞նչ ես ուզում, դու չգիտե՞ս, որ ծեր ձին եւս ուզում է գարի ուտել: Իսկ դու, խանում, ինձ դրել ես անհարմար վիճակի մեջ ...

Նրա այս մեղադրանքն արդեն սպառեց Եղիսաբեթի համբերությունը, նրան հանեց հունից.

- Լսե՛ք բեյ, դուք ո՞ր իրավունքով եք ինձ մեղադրում ձեր եւ ձեր հրա-

մանատարի անմարդկային սադրանքների համար: Ես սիրո խոստում ձեզ տվե՞լ եմ կամ դուք տեղյակ չե՞ք, ես ամուսին ունեմ, որ իմ ամուսինն այստեղ, ձեր քթի տակ նստած, դուք ցանկանում եք ինձ նրա գրկից խլել: Ա՞յդ է թուրքական քաղաքակրթությունը, ա՞յդ է սիրո գնահատման ձեր չափանիշը: Չէ՛, դուք էլ, ձեր շեֆն էլ միեւնույն կտավից եք հյուսված: Բավական է, բեյ, եթե դուք փոքր-ինչ մարդկային սիրտ ունենայիք, գոնե մեկ անգամ կհարցնեիք, թե ես սիրո՞ւմ եմ ձեզ, ցանկանո՞ւմ եմ բաժանվել իմ ամուսնուց, որին սիրելով եմ ամուսնացել, թե՞ դուք էլ հաղթողի իրավունքով եք ինձ սիրահետում, թե ձեզ թվո՞ւմ է հաղթողներն ուրիշի հողը սեփականելով իրենց իրավունք են վերապահում սեփականելու նաեւ նրանց սերը՝ թքելով նրանց պատվասիրության վրա: Հասկացե՛ք, ի սեր Աստծո, ես պատրաստ չեմ ձեզ սիրելու, չեմ ցանկանում դավաճանել իմ ամուսնուն, հասկացե՛ք:

Նազըմ բեյն անձայն վեր կացավ.

- Դու այսօր անտրամադիր ես, խանո՛ւմ, խնդրում եմ ներել ինձ ...

- Հանգիստ թողնելու համար էլ շնորհակալ եմ, ցտեսություն ...

* * *

- Օրը ցերեկով այդպիսի հանդուգն հարձակում, այն էլ ո՞ւմ վրա ... - Խոսում էր հետախուզության մպան, որը նոր էր նշանակում ստացել բինբաշի Օմարի գրասենյակում, - ո՞ւմ վրա, ալլահի զինվորներ, ախր խելագարվելու բան է, բինբաշի Օմարի վրա: Եվ ի՞նչ, մի բուռ հայ վախկոտներից, իրենց ֆիդայի կոչող մի խումբ ավազակներից սրտաճաք եղած քիչ մնաց մենք բինբաշուն գերի թողնեինք հայերին ...

- Լսի՛ր, դու, ջահել աքաղաղ, դու քո խոսքերին հավատո՞ւմ ես, որ մի բուռ վախկոտներ հանդուգն հարձակում կարողանան գործել ... Վախկոտներ եւ հանդուգն հարձակում՝ հա՛յ-հու՛յ, դու ասացիր, ես էլ Օմար բինբաշիս հավատացի: Իսկ դու, դու ինչո՞ւ էիր նապաստակի նման փախչում: Կարծեմ քեզ էլ կամուրջը փրկեց, գորտերի հարեւանությունը: Եվ ընդհանրապես, դու ինձ ասա, ինչի՞ց է, որ հետախուզության սպաները, որպես օրենք, վախկոտ ու հիմար են լինում:

Հետախուզության սպան սմքեց, փոքրացավ: Ուրեմն, բինբաշին տեսել է իր ճողոպրելը: Իրոք, ինքը շատ վախեցավ, շա՛տ, որովհետեւ չէր հավատում, թե ամայի, անմարդաբնակ քաղաքի ծանծաղ ձորում թուրքական զորամասի քթի տակ մի քանի հոգով կարող է փորձեն գողանալ բինբաշուն, նման բան իր մտքով իսկ անցնել չէր կարող: Ստամբուլի հետախուզության ուսումնարանում անգամ նման անօրինակ հարձակման փաստեր չուներին, հետեւաբար տեսության մեջ նման երեւույթի մասին հետեւություններ ու եզրակացություններ չուներին: Եվ եթե ձորում զորավարժություններով զբաղված քոռ Ջամալի վաշտը չլիներ բինբաշուն ուղեկցող խմբին մի բաժակ ջրի տեղ կխմեին հայերը եւ փաշային կտանեին իրենց հետ, ո՞վ իմանա, ուր կտանեին, հետո արի ու սարի քամուն գտիր ... Իսկ հիմա սպաների այս հա-

վաքույթում Քոռ Ջամալը նստել է բիրդան հերոսի նման: Ինքը հետախույզ է եւ գիտի Քոռ Ջամալի գինը. գիտի, որ նա դաժան է, գլուխը քարը, գոնե դաժան լինելը միայն հայերի հետ, դաժան է նաեւ յուրայինների հետ: Կգնդակահարի նույնիսկ թուրքերին, եթե իր սրտով, իր ուզածի պես չկատարեն իր հրամանները: Վերջերս Արդահանում մի սիրունիկ հայուհու զգել էր իր վաշտի մի հերոսի առջեւ բռնաբարելու համար, մի պայմանով, որ սա երկու ժամվա ընթացքում տասն անգամ ի կատար ածեր իր հրամանը: Երջանիկ հերոսը, սակայն, անզորացել էր կատարել իր պետի հրամանը, եւ անաշի թույնով գազազած Քոռ Ջամալն առանց այլեւայլության գնդակահարել էր նրան: Յետախուզության սպան սակայն չգիտեր, թե ի՞նչ հնարքով կամ ու՞մ հովանավորությամբ էր ազատվել պատժից Քոռ Ջամալը: Դեռ ինչե՛ր, ի՞նչ փորձություններ ու անպատվություններ է բերելու Քոռ Ջամալը իրենց գլխին, որն իրեն համարում է զոտեմարտի, կոխ բռնելու վարպետ: Սիրուն է իրենից թուլելին գետնովը տալ այնպես, որ եթե պարտվողն ասկյար է՝ անպետքանում է զինծառայության համար եւ զորացրվում, իսկ եթե Քոռ Ջամալը վստահ չէ իր հաղթանակին, ապա զոտեմարտից խուսափելու մի պատճառ է հնարում խուսափելով հնարավոր պարտությունից: Այնքան է չարագործություններ արել յուրայինների նկատմամբ, որ զորամասի սպաների շրջանում նույնիսկ հաշվառում են կատարել եւ այն կարծիքը կա, որ նա հայ ֆիդայու չափ, խոսքը ոչ շարքային ֆիդայու մասին է, թուրք ասկյարներ է շարքից հանել: Եվ շատերը նրա ծառայական երկարակեցությունը բացատրում են նրանով, որ ֆիդայիների գնդակը խնայում է նրան, որովհետեւ նա ավելի շատ թուրք է սպանել, քան հայ: Իհարկե, Քոռ Ջամալի նկատմամբ թուրք սպաների ատելությանմբ պետք է բացատրել այս ասեկոսների ծնունդը, նրանք ուրանում են այն դիվային չարչարանքները, տանջանքները, որ նա պատճառում է հայերին, սակայն նրան կպցրել են հայ-ֆիդայի մականունը: Եվ ոչ մի ասպետություն, ոչ մի տղամարդկային կամ ազգային արժանապատվություն չկա նրա կողմից դեպի իրեն հաղթող կամ իրենից պարտվող ըմբիշը կամ պատերազմական գերին ու պատանդը: Նրանք դատապարտված են մահվան կամ հաշմանդամության: Այս մտածումներն ունի հետախուզության նորընծա սպան, որը հասցրել է բավական տեղեկություններ հավաքել Քոռ Ջամալի մասին, որովհետեւ նրանից վախենում է, ինչպես ֆիդայիներից:

Բինբաշի Օմարը, որ կողքանց դիտում էր Քոռ Ջամալին, հանկարծ կատարեց իր երեւի «հանճարեղագույն» գյուտը. Ահա թե ո՞վ է լինելու իր վրիժառուն եւ Նազըմ բեյից, ե՛ւ Ջեյնաբ խանումից: Ահա թե ո՞վ կարող է կատարել ամենահանդուգն ծրագրերը, առանց հաշիվ տալու խղճին, ճշմարտությանը, նույնիսկ ալլահին: Թող Քոռ Ջամալը անվանարկի խանումին, դրանով հիմնավորապես կխափանի Նազըմ բեյի ամուսնական ծրագրերը, իր բինբաշու նկատմամբ ունեցած առավելություններն ու ամեն բան կշրջի գլխիվայր: Սակայն ծերացող զինվորականի սիրտը ծակեց խանդի թունավոր յոթգլխանի հիդրան, քանզի այլեւս անկարող լսելու հռետոր սպաների ելույթները, նա պատկերացրեց այդ հրաշալի կնոջը Քոռ հրեշի անկողնում ե-

ւ այդ միտքը այնպես ցավեցրեց նրա հոգին, որ նա դեմքից ուզեց քշել այդ անհեթեթ միտքը՝ ձեռքը թափ տալով, ասես հալածում էր ճանճերի պարսե-
րը: Չէ՛, այդ թանկ կնոջը Քոռ Ջամալին նվիրելը, հաշիվ մաքրելու զգվելի
պատճառաբանությամբ, հանցավոր եւ ահավոր սխալ կլիներ իր կողմից:
Մանավանդ, որ Քոռ Ջամալի համար սիրուն ու տգեղ, հրաշալի ու հրեշ հաս-
կացություններ չկային: Նրա համար կինը կին էր: Բարեմասնությունները
նրա համար գոյություն չունեին, մինչդեռ Նազըմ բեյի համար այդ կինը գեղեց-
կության եւ սիրո աստվածուհի էր: Այդ պահին ձայն խնդրեց Քոռ Ջամալը.

«Էս հիմարը ի՞նչ պիտի խոսի: Բայց փրկիչս է, ուզած-չուզած ձայն
պիտի տամ»: Եվ տվեց: Ջամալի մի աչքը, որ կաշվով ծածկված էր, կույր էր:
Մյուսը առողջ էր, սակայն չարությամբ էր նայում աշխարհին ու մարդկանց,
ինչպես սրված դանակ, ինչպես թունավոր գուրգայի հայացք, որից վախե-
նում էին զինվորները, ատում եւ երկյուղում սպա գործընկերներն ու զինա-
կիցները: Աչքը մահվան դատավճիռ էր հայերի, մանավանդ կանանց ու երե-
խաների համար: Քոռ Ջամալը կուրծքը դուրս գցեց եւ սկսեց.

- Ասենք ես չլինեի, իմ վաշտը չլիներ, դեպքը ձորում չլիներ՝ դաշտում
լիներ: Ասենք, ֆիդայիները ութ հոգի չլինեին, լինեին, ասենք, քսանուրբ: Ի՞նչ
էիք անելու:

- Ասենք բինբաշին լիներ ամբողջ զորամասի հետ, ախր, «ասենքով»,
ենթադրություններով խոսել չի կարելի, խոսիր, ասա ասելիքդ ... - Նազըմ
բեյն էր:

- Դա՛, ասեմ, բախտ էր, որ ես էդտեղ էի, իմ վաշտն էդտեղ էր, - վրա
տվինք ու չթողինք, որ բինբաշուն գերի տանեին ...

- Ջամալ, ես գերի չէի ընկնի, - ընդմիջեց Օմար փաշան, - ինքս ինձ
կսպանեի, հասկանում ես ...

- Այո՛, այո՛, փաշա, ես լավ հասա են շանորդի հայի ձեռքից քեզ
փախցրի, չթողի, որ դու քեզ փչացնեիր ... - Ավարտեց իր ելույթը Ջամալը ե-
ւ նստեց:

Սպաները նայեցին միմյանց: Մի՞թե այդ ապուշի համար, որ Ջամալ է
կոչվում, օրենք գոյություն չունի, փաստորեն բինբաշու հերոսական կեցված-
քը սպաների ներկայությամբ, հօդս ցնդեցրեց, ապացուցելով, որ բինբաշու
անվերապահ հայտարարությունը, որ գերվելիս ինքնասպան էր լինելու,
մեղմ ասած, սուտ էր, որովհետեւ բինբաշուն գերությունից ազատել էին
միանգամայն առողջ վիճակում: Իսկ բինբաշին սփրթնել էր եւ ջղայնությու-
նից լեզուն էր ծամում. «է՛շ, է՛շ, իշու թրի՛ք, երբ որ խելք էին բաժանում, դու
որտե՞ղ էիր, տո՛, իթօղլիթ ... Դեհ, արի ու ես իշուն գովի: Էնքան է էշ, որ նույ-
նիսկ չցանկանալով՝ ինձ խայտառակեց ողջ զորամասի սպայության աչքին:
Ես պատմության համար, իզուր էսքան ժողովուրդ հավաքեցի զլխիս: Ախր,
ուզում էի ես դիմք հայվաններին դիտողություն անել, որ զգույշ ու սթափ լի-
նեն, չգան ու իրենց ոտքով դարանը ընկնեն: Անցած օրը Նազըմ բեյը ցուցակ
էր բերել, այս անմարդաբնակ, ամայի քաղաքում մեր ունեցած կորուստների
մասին, մեկուկես ամսում: Ոչ մի կրակոց չի եղել, բայց սպանվել են տասնե-

րեք սպա, տասնութ ենթասպա եւ քառասունից ավելի ասկյար: Պատերազմ է: Հաղթողները կան, պարտվողները փախել, գաղթել են, չկան: Բայց զոհեր տալիս են հաղթողները, պարտվողները չկան ու չկան, կրակողներ չկան, սպանվածներ չկան, զորամասը դասալքողներ չկան, իսկ կորուստները կան: Մարդիկ կորչում են: Գոնե դիակները գտնվեին, իմանալիք որտե՞ղ են սպանվել, ինչպե՞ս են սպանվել: Տնաքանդո՞ւն: Կորչում են ու վերջ. կամ ալլաիի մոտ են բարձրանում, կամ ընկնում դժոխքի խորխորատները: Ասում են հետախուզություն, քաղաքում հայերից մարդ մնացել է, ասում են՝ երեք հոգի: Ովքե՞ր են: Ձեյնաբ խանումն ու իր Սերգեյ ամուսինը եւ մեկ էլ Լոմանը, խելագար ու թուփալ տղան: Ուրիշ մարդ չկա: Հա՛, բինբաշի, մեկ էլ գոռնափշտիկները: Ասում են՝ ախր, իշու ծնունդներ, գոռնափշտիկները սաղացող մեռելներ են: Դա էլ սուտ հեքիաթ է: Ինչո՞ւ պիտի մեռելները սաղանան ու մեզ վնասեն: Կանգնել ինձ ձեռ են առնում: Դե՛, հայերը չկան, գուցե լինեին, նրանց էլ վնասեին: Ի՞նչ ասեմ, ասում են, գնամ փախստական հայերին հե՞տ բերեմ, որ անհայտացող մարդկանց, սպանվող մարդկանց վնասը կիսողե՞ր ունենանք, այ շանորդիներ: Բերանները բաց ինձ են նայում: Էդ ի՞նչ եք դուրս տալիս: Դեհ, որ գոռնափշտիկները էդքան շատացել են, ի՞նչ են անում: Մեր մարդկանց հափշտակում են, տանում. մեր աչքերով ենք տեսել: Որ տեսել եք, ինչո՞ւ չեք կրակել: Վախենում ենք, հանկարծ մի բան դուրս չգա: Ախր, գոռնափշտիկը մերոնք համարում են չգիտեմ ինչ, ալլաիի, թե չարքի ձեռքի գործ: Մի խոսքով. «Է՛հ, Քոռ Ջամալին ի՞նչ անեմ, հանձնարարե՞մ Ձեյնաբ խանումին խայտառակելու գործը: Էդ շան աղջիկը շատ լավն է, Ջամալին հանձնարարած, թե՛ շանը, միեւնույնն է: Խանումն ափսո՛ւ է: Գուցե մի քիչ սպասեմ, տեսեմ, մի բան թե ինձ հաջողվի՛ լավ, թե չհաջողվի, նրան շան բերանը գցելը կա ու կա: Ինչ էլ որ լինի, բախումը Նազըմ բեյի հետ՝ կա ու կա: Ի՞նչ անել, ինչպե՞ս վարվել, որ Վեհիբ փաշան նրան այստեղից տանի: Թե ամբաստանենք, կարող է մեր տունն ենք քանդում: Շատ հավանական է, որ նրան թողնի ու ինձ տանի: Չէ՛, սաղրանքներն ավելի ճիշտ կլինեն: Հարկավոր է նրան պատահականության զոհ դարձնելը: Ասում են՝ վերջերս նրա տրամադրությունն ընկած է: Շշուկներ կան, Ձեյնաբ խանումը նրան վռնդել է: Մենք շանորդի ժողովուրդ ենք: Հայերին բանի տեղ չենք դնում, սակայն հախներից գալ չենք կարողանում: Ախր, էդ կինն ամուսին ունի: Մեր կանանց, որ մեր ձեռքից խլեն, մենք ի՞նչ կարող ենք մտածել նրանց շանորդության մասին: Կըմբոստանանք, չէ՛: Իհարկե, կըմբոստանանք: Էլ ինչո՞ւ ենք նեղանում հայերից, երբ նրանք ըմբոստանում են: Հա՛, մենք իրավունք ունենք: Մենք հաղթողներ ենք: Մեր հաղթությամբ, մեր ուժով մենք արդար ենք: Նրանց մտածողությամբ էլ մենք թալանիչներ ենք, սպանողներ ենք, կողոպտիչներ ենք, բռնաբարողներ ենք, մի խոսքով, շուն ենք եւ մեզ հարկավոր է ոչնչացնել: Եվ ոչնչացնում են: Մեր բախտից է, որ հայերը քվոր են, մենք՝ շատվոր, թե չէ մեր հերը կանխօժեին: Ամեն տեղ նրանք մեր հերն անիծում են: Իրենց մեռելներով անգամ մեր հերն անիծում են: Վերցրին մեր զորամասից հայ տղաներին, տարան իբր ճանապարհ կառուցելու, բայց մենք

գիտեինք, որ տանում են կոտորելու: Հիմա ո՛չ կոշկակարներ ունենք, ո՛չ խոհարարներ, ո՛չ հացթուխներ, ո՛չ զինագործներ, ընկել ենք կրակը: Մեր հայվաններն էլ թալանից, սպանելուց բացի ոչ մի բանի պետք չեն: Էս թալանիչները գոնե անասունների արժեք ունենային, գոնե դրանց միսն ուտվեր: Թե չէ դրանք աղբանոց նետելու բան են, թյո՛ւ: Տեսա՞ք, տեսա՞ք, թե հայվան Ջամալը ոնց խայտառակեց ինձ, անիծեց հերս, անունս ոտնատակ տվեց ...»

«Չէ՛, այսօր իմ տրամադրությունը, քեֆը տեղը չէ: Չախորդությունները ձեռ չեն քաշում ինձանից: Երբ հիշում եմ, թե որքա՛ն հեշտ փետուրի նման ինձ թոցրին կառքից, կայծակի արագությամբ զինաթափեցին պահակախումբը, երբ աչքերիս առջեւ կանգնում է էն սեւ սեւամորուքը՝ ատելությունից, ցասումից վառվող աչքերով, ջանս դող է ընկնում: Էդպիսի ատելությամբ հայերն իրավունք ունեն մեզ նայելու, մենք կոտորել, կողոպտել, անվանարկել ենք նրանց, զրկել իրենց վաթսնից, նրանք իրավունք ունեն մեզ ատելությամբ նայելու, որովհետեւ մենք միշտ արհամարհանքով ենք նայել նրանց: Արհամարհանքի, թշնամանքի փոխարեն վաստակել ենք ատելություն ու թշնամություն: Դեհ, ի՛նչ, քաղաքական, բարոյական առետուր է, որը վերածվել է՝ մահվան դիմաց մահ, արյան դիմաց արյուն, դարավոր ճշմարտությամբ: Է՛հ, թքած ամեն բանի վրա էլ, էս հայերից բան չեմ հասկանում, առաջին հայացքից թվում է, թե գլուխ չունեն կռվի, պատերազմի հետ եւ, իրող, չունեն: Տարին տասներկու ամիս սրանք աշխատում են, մրջյունի, մեղվի նման աշխատում են, իսկ մենք թուրքերս բռռերի նման թալանում, լափում ենք սրանց վաստակն ու աշխատանքը: Թուրքերի սխալն էն է, որ կարծում են հայերը կռվել չգիտեն, մեր էշերը երկու բան խառնում են իրար: Հայը կռվել չի սիրում, մինչեւ դանակը ոսկորին չի հասնում, նա կռվի դուրս չի գալիս: Կռվում է այնպես, ասես չի կռվում: Ասես աշխատում է: Կռվելը չես տեսնում, որովհետեւ տեսնելու ժամանակ չես ունենում: Մինչեւ գլխի ես ընկնում ինչն ինչոց է, գլուխդ թոցնում են: Չէ՛, չէ՛, ես այսօր ձախ կողքի վրա եմ արթնացել: Չեմ կարողանում մտքերս մի բանի վրա կենտրոնացնել: Ահա, հենց այս Ախալքալաքը, զորամասը փերթ-փերթ ծամեց, կուլ տվեց: Սրանց բոլոր գյուղերը՝ հայ եւ վրացու, կռվով ենք առել: Քաղաքին մոտեցանք, հետախուզությունը օր առաջ զեկուցեց, որ քաղաքը տեղահան եղած փախչում է: Ծիշտ էր, մենք էլ տեսանք, գլխապատառ փախչում էին, բայց իմ գունդն ո՞վ կերավ, ո՞վ ջարդեց, չիմացա: Գաղթողները ձորում, ձորալանջերին խառնվեցին մերոնց, իրենք փախան, մերոնց թողին ձորում, գետին հանձնեցին: Խառնվել էին իրար: Մեր էշերն էլ ալան-թալանին իրենց սովորությամբ հավատարիմ աղջիկների ու հարսների հետեւից ընկած, ընկնում էին նրանց դանակի վրա: Կատաղած կանայք կրծում էին մերոնց կոկորդները, իսկ մենք հրամանատարակա՛ն կետից հեռադիտակով նայում ու խանդում էինք հայ կանանց հետ թավալվող մեր ցուլերին.» Աֆերի՛մ, տղե՛րք, կանանցով լիացաք, հիմա շուռ եկեք տղամարդկանց վրա»: Իսկ հայերը փախչում էին, իրենց հողը թողնելով սպանված նվաճողներին: Էսպիսի՛ հաղթանակ ... Հիմա էլ ասում են մի քանի հոգի քաղաքում դերասանություն են անում, գոռ-

նափշտիկի դեր են կատարում: Սրանցից ամեն բան հավատալու է: Սրանք են թուրքերին թատրոն ու դերասանություն սովորեցրել, նշանակում է՝ իրենք էլ գործը հրաշալի գիտեն: Գոռնափշտիկ են խաղում, մեր էշերին լեղաճաք են անում, սպանում, նույնիսկ մեռելները մեզ չեն տալիս, թե ուր են տանում, հետո ո՞ւր են չքվում, ալլահը գիտի: Կռվում են, բա դա կռի՞վ է: Կռիվ են խաղում, բայց մեռնողը միշտ մենք ենք լինում: Մի կարգին հեռախուզություն էլ չունենք, որ հետքերին ընկնեն, մենք էլ դրանց մի լավ սղկենք, ջարդենք, պրծնենք դրանցից: Լա՛վ, լա՛վ, հետաքրքիր է, սպաներն իրար հետ վիճում են, երեւի լուրջ հարցեր ունեն»:

- Ո՛վգո՞ւմ եք քաղաքն ամբողջապես ավերակների վերածեմ, -խոսում էր հրետանու պետը, - ոչ մի տուն չթողնեմ կանգուն, բայց քանի՞ մարդ կարող ենք տեղահանել դատարկ քաղաքից: Իմ կարծիքով, քաղաքում բնավորված ոչ ոք չկա, երկուսից բացի: Իմ այս կարծիքը պաշտպանում է նաեւ հետախուզության սպան: Առանց լուրջ առիթի քաղաքն ավերակների վերածելը կարծում եմ հանցագործություն կլինի: Չէ՞ որ մենք վերականգնում ենք Ախալցխայի փաշայությունը: Չէ՞ որ այստեղ ապրելու ենք մենք, ոչ թե հայերն ու վրացիները ...

Չայն վերցրեց զորամասի կրոնական առաջնորդը՝ մոլլան.

- Ալլահը գիտի, որ իր զավակների գործն արդար է: Այս հողը մի քանի հարյուր տարի շարունակ մերն է եղել, եւ այսօր մեր ասկյարները մեզ են վերադարձրել: Հիմա հայերն ու վրացիները մեզ հետ կռիվ են անում, այս հողը սեպում են իրենցը: Ամեն խարդախության դիմում են դժոխքի այդ զավակները: Ժողովրդի սնահավատության վրա հաղթության ակնկալություններ ունենալը պետք է պատժվի ալլահի անունով: Իսկ քաղաքը փոքր է, հո Ստամբուլ չէ, քամիդելու փոխարեն, զորամասը բերեք քաղաք, թող միանգամից լցվեն բոլոր տները, եթե մարդիկ կան գյավուրներից, հանձնեն ալլահի դատաստանին: Սպաների մեջ քրթմնջյուն ընկավ: Հետեւակային ստորաբաժանումների հրամանատարները ցանկանում էին ավերակների վերածել ամբողջ քաղաքը, այնպես, որ ոչ ոք ողջ չմնար: Հրետանավորներն առարկում էին: Շտաբի պետը՝ Նազըմ բեյը, վճռականորեն դեմ էր նման հիմարությանը:

- Մենք՝ մեծ թուրքիայի զինվորներս, ինքներս ենք հնարել գոռնափշտիկի հեքիաթը եւ վախենում ենք մեր իսկ հնարած հեքիաթից: Իմացե՛ք, պարոնայք սպաներ, գոռնափշտիկի մասին սարքված հիմարավուն գրույցները հայկական ծագում չունեն, մրանց հեղինակը մենք ենք՝ թուրքերս, հետեւապես մենք ենք հեղինակել հայկական այս քաղաքում գոռնափշտիկներին, որովհետեւ գոռնափշտիկի դեմ կռվելը համարում ենք գերբնական, գերմարդկային զորություն պահանջող գործ. թուլացրել ենք մեր թեւերը եւ հայ ֆիդայիներին համարելով սատանայի զավակներ, նույնիսկ մեր մեջ հրացանի ձգանը քաշելու ուժ չունենալով, դառնում ենք նրանց զոհերը: Իսկ նրանք նույնիսկ հրազեն չեն օգտագործում մեր դեմ, որպեսզի ոտքի չհանեն կայազորը, որից հասկանալի է՝ վախենում են: Նրանք շատ չեն, երեւի մի քանի տասնյակ մարդ, քանի որ քաղաքը պատսպարելու թաքստոցներ չունի, տե-

դանքը ծառագուրկ է եւ այլն, եւ այլն:

Նազըմ բեյի խոսքը դեռ բերանում՝ ներս ընկավ բանբերը: Ձեռքը ճակատին խոնարհություն արեց.

- Պարոնա՛յք, հայերը հրդեհել են ամբողջ ավարը, որ վեր արյունակից եղբայրները երկար ժամանակ հավաքել էին Աղբաբա տանելու համար: Ամբողջ ավարը կրակի մեջ է: Քաղաքը ծխածածկույտի տակ է: Ի՞նչ անել ...

- Ոչինչ անել չենք կարող, - միջամտեց բինբաշին, - կրակը պիտի ուտի թալանը: Այդ Աղբաբայի էշերին ասացեք, որ եթե շնորհք չունեն թալանն անվթար պահելու, թող չզբաղվեն այդ գործով: Տես, է՛, որտեղից են եկել, հասել Ջավախք՝ թալանի: Ի՞նչ է այստեղի թուրքերը սատկել են, թալանելու ախորժակները փակվել են, որ աղբաբացիք այսքան հեռվից գալիս են թալանելու: Անասուններն էլ նրանցից խլել են Ալեքսանդրապոլում, հենց թուրք ասկյարների քթի տակից: Էդպես անորակ թալանչիներ կլինե՞ն, որ թալանը չկարողանան տեղ հասցնել: Տեսեք ինչ են ասում. խոսք կա, թե խեղդվողը ձեռքը տաշեղին է զցում: Աշխատեցեք որսալ գոնե մի կիսասատկած հայ, դարձրեք մեր գործակալը՝ եթե պետք է ոսկու մեջ լողացրեք նրան, գուցե ընկնենք էդ չարաբաստիկ գոռնափշտիկների հետքի վրա: Հետախուզության սպաները սովորաբար ամենալավ նարդի խաղացողներն են զորամասում, որովհետեւ անբան ու ավարա մարդիկ են, եւ դրանց հոգսը նարդի խաղալն է: Անգործ մարդիկ ինչ-որ բան պիտի անեն, սրանք էլ անում են՝ նարդի են խաղում, իսկ իրենց քթի տակ Աղբաբայի հիմարները թալանում են: Տեղա՛կ եք, ի՞նչ է վառվում այնտեղ ...

- Ինչ ասես, փաշա՛. խալիներ, կահույք, ամանեղեն ...

- Ոսկի՞ն ...

- Ոսկին տարել են, փաշա՛ ... Բայց ճանապարհին կորցրել են, այսինքն, խլել են ձեռքերից ...

- Վա՛յ, իթօղլիթներ, չլինի՞ եդ էլ գոռնափշտիկների գործն է ...

- Չէ՛, ալեքսանդրապոլցիներն իրենց հայրենակիցների ունեցվածքը նորից հետ են վերցրել:

- Աչքերն էլ հանել են, չուտողի մալը՝ ուտողին հալալ է... Լավ, անցնենք առաջ, Աղբաբայի թուրքերն իրենց հարցը թող լուծեն, բանակը նրանց դուլը չէ: Ո՞ւր է մեր հետախուզության սպան: Չայն հանի, լեզուդ կո՞ւլ ես տվել: Դու ոչ մի ծրագիր չունե՞ս զորամասին օգնելու, հայ ֆիդայիներին որսալու համար ...

Հետախուզության սպան վեր կացավ, երկար մաքրում էր կոկորդը, երեւի մտքերն էր հավաքում.

- Դու, փաշա՛, դու ինձ բաշխեցիր գործունեության հզոր ծրագիր: Այո՛, հարկավոր է որսալ հայ ֆիդայիներին, նրանցից գործակալներ պատրաստել ...

Օմար փաշան գազազած թռավ տեղից.

- Լսի՛ր, տո իշու՛ թրիք, ի՞նչ ես դուրս տալիս: Դու իմ մտքերն ինձ վրա ես ծախսում: Դու ոչինչ նոր բան չունե՞ս ասելու ...

- Մի՛ նեղացեք, փաշա, նոր բան ասելու համար պիտի համազործակցող ունենալ: Եվրոպական, ասենք առաջին հերթին գերմանական բանակը հետախուզությանը զուգահեռ ունի նաեւ հակահետախուզության բաժին, որը ...

- Ի՞նչ, ի՞նչ ... - Բարձրացավ տեղից Օմար փաշան, - ուրեմն, դու ցանկանում ես մեր զորամասում շատացնել անգործ սպաների՞թիվը: Ո՞ւզում ես ջիուդի հարսանիք սարքել այստեղ, որ շունը տիրոջը չճանաչի, որ քո մեղքը ուրիշի վրա զցելով, չո՞ր դուրս գաս ... Լսի՛ր, տո՛, ես քեզ անձ եմ ասում դու տա՛նձ ես հասկանում: Հետախուզությունից խերվեցինք, մնաց հակահետախուզո՞ւյթը... Հիմա լսիր, ինչ եմ ասում. եթե առաջիկա տաս - տասնհինգ օրում, քաղաքից չարտաքսվեցին գոռնափշտիկները, ես քեզ աստիճանագրելե կտամ եւ որպէս շարքային ասկյար կքշեմ հայ ֆիդայի գոռնափշտիկների վրա: Թող քո կոկորդն էլ ծամեն, ինչպէս շարքային ասկյարներինը, որ իմանաս, թե ինչ է նշանակում անգործությունից վարպետանալ նարդի խաղալու մեջ ... Հասկացա՞ր ...

- Ես քո դուլն եմ փաշա, եղքան խիստ մի լինի, ես հետախուզության մեր ուսումնարանի պարծանքն էի, ինձ մեծ ապագա էին գուշակում իմ դասատուները, ախր, այստեղ պատերազմը չի մղվում կանոնագրքերի համաձայն, այստեղ ուրիշ օրենքներ են, որոնցից գլուխ հանելը դժվար է: Ես կաշխատեմ արդարացնել ինձ վրա դրված պարտականությունները ...

Օմար փաշան այդ պահին նույնիսկ խղճաց նրան. «Իրոք, մեղք է ես հիմարը: Սրան սովորեցրել եմ, որ երկու գումարած երկու հավասար է չորսի, իսկ այստեղ այս հաշվարկները փուչ են դուրս գալիս: Եվ սպան կորցրել է գլուխը: Բայց ոչինչ, թող դադարի աքլորի մման թելերը ուռեցրած, փքված ման գալուց: Ես շան տղերքը, որ ինձանից ու Նազըմ բեյից չքաշվեն ու չվախենան, կթռչեն Ձեյնաբ խանումի ծոցը, էլ հարցերում դրանք քաջ են, բայց կլանչելով փախչում են հայ ֆիդայիներից, որոնց կոչել են գոռնափշտիկներ, որ արդարացնեն իրենց վախկոտությունը, իրենց անկյալությունը»:

- Լսե՛ք, ով սպաներ, - այնուհետեւ շարունակեց Օմար փաշան, -մենք ձեզ հետ մեկտեղ անցել ենք հուր ու կրակի միջով, հազարավոր հաղթանակներ եւ բազում անհաջողություններ ենք անցել: Հավաքեցեք ձեր կամքը, ձեր քաջությունը, քիչ գնացեք խավեթի ու Հոգամի կնիկների մոտ: Այնպես արեք, որ զորամասը ոչ բոզանոց դառնա, ոչ էլ անկյալանոց: Մեր զորամասը պիտի դառնա հերոսների դարբնոց: Հաջողություն ձեզ ...

* * *

Թուրքի խուժանը, որը ձիով, որը սայլով, որը հետիոտն թափարվանի ձորով դանդաղ շարժվում էր դեպի թուրքական գյուղերը՝ իր հետ տանելով ահռելի քանակությամբ կողոպուտը: Նման դեպքերում կողոպտիչների տրամադրությունը բարձր էր լինում: Երեկվա աղքատը, ընչազուրկը, մանավանդ սրիկան մեկ օրվա ընթացքում դառնում է հարուստ մարդ: Ձորն ամ-

բողջապես լցված էր սայլերով, անասուններով, հարյուրամյակների ընթացքում կուտակված արդար վաստակի արդյունքները քշում էին դեպի թուրքական գյուղերը: Կողոպտիչները հովտում բնավորված տարբեր գյուղերի բնակիչներ էին, որոնք, քանի որ մեծ մասամբ այգեգործներ էին, միշտ գտնվում էին Տավախքի իրենց քրիստոնյա հարեւանների հետ առեւտրի, ապրանքների պարզ փոխանակության մեջ եւ հիւանալի գիտեին, ճանաչում էին տեղահանված հայերին, նրանց տունուտեղը, որ հիմա իրենց «քիրվաներին» մինչեւ վերջին թելը կողոպտած, քշում էին իրենց տները: Ինչ կարող ես ասել. անտեր հարստությունը տանելը եւս թուրքական «մարդասիրության» արդյունք է: Ինչո՞ւ թողնեն մարդկանց հարստությունը փչանա եւ կեր դառնա բնությանը, արեւին ու անձրեւին, վայրի գազաններին՝ գայլերին, բորենիներին, աղվեսներին: Եվ քշում էին: Թալանողներն ամենից առաջ ավելի մտահոգված էին անասուններով, որոնք քանի որ իրենցը չէին, քանի որ տեր ու անասուն իրար չէին ճանաչում, շատերին թվում էր, թե իր թալանը խառնվել էր ուրիշներին եւ ողջ ճանապարհին կռվում էին իրենց ընկերների հետ, ծեծկռտում միմյանց, նույնիսկ դաշունահարում, սպանում իրար: Այս երեւույթը բնական ուղեկից է թալանչիության ու կողոպուտի, երբ գնալով սրվում է թալանողի աչքը: Ազահությունն ու ընչաքաղցությունը մարդուն գողանում են մարդու միջից, նրա փոխարեն դնելով երկտանի գազանին, որն ավելի է վտանգավոր չորքոտանի գազանից եւ մահացու թշնամին է մարդու եւ մարդկայնության:

Կորխի կամուրջին չհասած բռնվեց տուրուդմբոց, որի պատճառը բուրդովին էլ անասունների միմյանց խառնվելու կամ իրարից գողանալու առիթը չէր: Թուրք դոչիների մի ստվար խումբ ցանկացավ դառնալ այդ ամբողջ հարստության տերը, առանց ժամանակ կորցնելու անցավ կողոպտիչներին կողոպտելուն: Սակայն հանդիպեց սկզբում լուրջ առարկության, ապա նաեւ դիմադրության: Չէ՞ որ կողոպուտի դուրս եկող ոչ մի մարդ առանց զենքի, ինքնապաշտպանության եւ մանավանդ առանց հարձակման համար հարկավոր զինվածության տանից դուրս չի գա եւ չի մտնի ասպարեզ: Հանդգնողները բուրդը ձիավոր էին եւ զինված հրազենով: Չորում լսվեց նրանց վերջնագիրը.

- Բուրդը թողեք ձեր ունեցվածքը եւ վերադարձեք գյուղերը՝ նոր թալան բերելու: Չենթարկվողները կգնդակահարվեն անմիջապես... Մենք սպասում ենք ...

Թալանիչներն իրար անցան.

- Չլինի հայերն են, եկել են իրենց ունեցվածքի հետեւից ...

- Չէ՛, հայերը փախել են, մերոնք են ուզում մեզ թալանել ... - Մի երկու հասակավոր թուրք գնացին հրամայողին ընդառաջ.

- Տղերք, ինչո՞ւ եք ուզում մեզ թալանել: Դուք ձեր թալանով բավարարվեք, մենք՝ մերով: Ախալքալաքում թալան շատ կա, լսե՛լ եք, որ Ախալքալաքին «քուլուկ Ստամբուլ» են ասում: Յուրայիններին թալանելու փոխարեն գնացեք անտեր ապրանքը բերեք ...

- Բիծա՛, դու չլսեցի՞ր ես ինչ ասացի... Ապրանքը թողեք ու հայդե՛ ...

- Տղա, դու ջահել ես, դու պիտի ինձ լսես: Այս մարդկանցից ոչ մեկը ձեզ առանց արյան բան չի տա: Կռիվ կլինի ...

Հրամայողը ծեր թալանչուն գնդակահարեց տեղնուտեղը եւ վայրկյան չանցած ձիուց գլորվեց ներքեւ՝ գնդակը սրտում: Կրակոցները հնչեցին որպես կռվի ազդանշան ու հրաման: Խառնվեցին իրար: Հարձակվող խումբը քանի որ գործում էր ավելի միասնական եւ նպատակապաշար, սկսեց կանաց մարդկանց բազմությունը հրել դեպի Կորխ գյուղի ծորում գտնվող փայտե կամուրջը, որի տակից գետակը իր ջրերն էր տանում ու խառնում Թափարվան գետին: Հենց այս կամուրջի վերեւ բարձրացող ժայռի վրա դիրքավորված Սեւ Արսենի խումբը սպասում էր կողոպտիչներին, ոչ թե կողոպուտը խլելու, այլ վրեժխնդիր լինելու հրոսակներից կողոպուտի ու թալանի համար եւ հնարավորության չափով հայ ժողովրդից կողոպտած բարիքները փոխհատուցելու թալանիչների արյամբ:

- Ի՞նչ անենք, Արսե՛ն, - հարցրեց Թխպոտ Հովն:

- Քանի կամուրջին չեն հասել՝ պայթեցրու, հետո ուշ կլինի ...

Հովն առանց առարկության վառեց քուղը, եւ կրակը վազեց առաջ: Կռվող թուրքերն իրար ծվատելով մղվում էին դեպի կամուրջը: Մյուս կողմի, վառվող քուղը կրակե օձի մման արագորեն սողում էր դեպի կամուրջը: Կռվողներն ավելի շուտ հասան կամուրջին եւ ... Ահեղ դղրդոցով կամրջի հետ միասին համբարձվեցին երկինք: Ահավոր խուճապ սկսվեց: Շփոթահար հարձակվողներն ու պաշտպանվողները լցվում էին Թափարվան գետը: Կամուրջի տակից գետակն արյուն էր խառնում գետին: Ջոհերն անհնար էր հաշվել: Վիրավորների հառաչանքներն ու ճիչերը խեղդել էին նեղ ծորը եւ խլացրել գետի շառաչը: Սողոմ - գոմոր էր: Փախչողները խոսքերը մեկ արած նետվում էին դեպի հայ տղաների թաքստոցները եւ գնդակահար ընկնում: Ոչինչ չհասկացող խուժանը փախչում էր բոլոր ուղղություններով, բայց որովհետեւ չգիտեր, թե որտե՞ղ է իրեն սպասում, դարանում մահը, նետվում էր ուղիղ մահվան բերանը:

- Փախչում են նաեւ ձիավոր հարձակվողները, Արսե՛ն:

- Տեսնում եմ, նրանց մերոնք կդիմավորեն Դիլիսկա գյուղի մոտ, Քոթթ Պողոսի խումբը սպասում է նրանց ...

Կռիվը շարունակվեց կես ժամից ոչ ավելի: Ոչ մի վիճակագիր ի գորու չէր հաշվարկել, թե թալանիչներն ավելի շատ յուրայինների ձեռքով ընկան, թե՛ ֆիդայիների: Խուճապի ենթարկվածը կռվում ամենաթույլն է, պարտվողը, որովհետեւ ով փրկվում է գնդակից, սարսափահար նետվում է դաշույնի վրա: Ով փրկվում է դաշույնից՝ բաժին է դառնում գետի ալիքներին: Ժայռեր մագլցողները ընկնում ու ջարդվում են քարերին: Այսպես մաշվում ու նոսրանում են մարդկանց շարքերը, ովքեր քիչ առաջ թալանելով ծանրաբեռ, երջանիկ իրենց հաջողությամբ վերադառնում էին տները, հիմա կամ վիրավոր, կամ սպանված, աչքերը կապույտ երկնքին՝ այլեւս չէին տեսնում արեւը, կամ կորցնում էին արեգակնային լույսը: Չիավորների մի մասն անցավ գե-

տի մյուս ափը եւ ազատվեց ավարից էլ, թալանից էլ, մահից էլ: Իսկ շատերը մնացին ծորում անտեր ու անօգնական: Լինում է եւ այսպէս:

Միայն երեկոյան սոսկալի լուրը հասավ զորամասի հրամանատարութեանը: Օմար փաշան լսելով կատարվածի ողբերգութեան մասին, տարածեց ձեռքերը .

- Մարդ ազատվե՞լ է: Եթէ ականատեսներ կան՝ բերե՛ք:

Հետախուզութեան սպան ներս հրեց մի քանի հոգու՝ սարսափից իրենց կորցրած մարդկանց, կորուստներից ցաված սրտով եւ մահվան ահն աչքերում մտան ու շարվեցին բինբաշի Օմարի եւ Նազըմ բեյի առջեւ: Օմար փաշան նայեց նրանց խղճուկ տեսքին եւ գնազգեց.

- Ձեր թալանը ջո՛ւրը տարավ, տո՛, հայվաններ, բա՛ հայերն ի՞նչ անեն, որ իրենց աշխարհը, իրենց հարստությունն ամբողջությամբ դուք թալանում եք: Ձեզ հայերը ջարդեցի՞ն ...

- Ո՛չ, փաշա, մերոնցից՝ թուրքերից մի խումբ ձիավոր ու հրացանավոր ցանկացան խլել մեր ավարը եւ սկսեցին գնդակահարել ու սպանել մեզ, հետո պայթեցրին Կորիսի կամուրջը: Մենք մերոնց կողմից ջարդվեցինք, փաշա՛, էդպիսի խայտառակություն մերոնցից չէինք սպասում ...

Օմարը թռավ տեղից:

- Կամուրջը մերո՞նք պայթեցրին: Ինչո՞վ պայթեցրին: Ո՞վ պայթեցրեց: Այս սանջակում մեզանից բացի, մեր ասկյարներից բացի պայթուցիկ ոչ մի տեղ, ոչ մեկի մոտ չի կարող լինել: Ինչպե՞ս թե կամուրջը պայթեցրին: Հետախուզություն, ո՞վ է պայթեցրել կամուրջը ...

- Մեր ինժեներական դասակը հիմա ուսումնասիրում է կամուրջը պայթեցնելու հանգամանքները ...

- Ի՞նչ հանգամանքներ, տո թրի՛ք, կամուրջն ո՞վ է պայթեցրել, հայե՞րը, ասկյարներ՞ը, թե՞ թուրքի խուժանը:

- Դեռ չենք պարզել, փաշա, միայն մի թոփալ հայ ենք բռնել, այն էլ չի խոսում ...

- Հա՛յ եք բռնել, տո, դրանից պիտի սկսեիր, այ ոչ ու փուչ: Հլա ինձ ասա, որ խելք էին բաժանում, դուք՝ հետախույզներդ, ո՞ւր էիք, այ խելքի կարոտ... Հիմա ո՞ւր է քո թոփալ հայը, բեր տեսնեմ ...

Լոմանին քարշ տալով ներս բերին: Ծեծել էին, երեսին կապտուկներ կային, բերանից կախվել էր արյան շիթը, ջարդել էին ատամները: Բաց թողին ընկավ:

- Թեզ ծեծե՞լ են, տո մոզի՛: Հա՛, հա՛, կարգին ծեծել են ...

- Ծեծել են, քեզ ի՞նչ, -խոսեց Լոմանը: - Հրամայիր թող նորից ծեծեն, ձերոնք էդ գործի վարպետներ են ...

- Մի շտապիր, տո մարդու խուրդա, էնպես ես խոսում, կարծես քեզ շքանշանով պիտի պարգևատրեն ...

- Թքել են ձեր շքանշանի վրա: Մանավանդ հային շքանշան եթէ տաք, նա պիտի կախվի: Դուք գիտե՞ք, թե որ հային կարելի է թուրքական շքանշան տալ:

- Դու ասա, տո քուռակ:
- Դավաճան ...
- Ուրեմն, դու կարծում ես չե՞ս դավաճանելու, տո թոփալ շանորդի ...
- Դու, որ փաշա ես, ասա հայիոյելուց բացի ուրիշ բան գիտե՞ս, տո թլպատված սրիկա՛ ...

Օմար փաշան ծափ տվեց: Դռների մեջ արծանացավ հերթապահ սպան:

- Լսիր, յուզբաշի՛, դուք մինչեւ էսօր ինչո՞ւ չեք սովորել հայերին կարգին թակել: Ի՞նչ է, դրա համար էլ ուսումնարան բացեմ: Տար այս թոփալ շանորդուն մշակիր. կաշին ու ոսկորն ինձ, մնացածը՝ քեզ: Նա իսլամի սուրբ սուննաթի օրենքը հայիոյում է, եթե ներողություն չխնդրի, սուննաթեք, թրքացրեք, հետո սպանեցեք, որ ալլահի անունը Աստծո անվան հետ չջփոթի, եղա՞վ ...

- Փաշա՛, սուննաթը մեզ համար սրբություն է, քրիստոնյային թրքացնելը նվիրատվություն կլինի: Նա արժանանում է ալլահի ողորմածությանը եւ դառնում է նրա ծառան: Որքանո՞վ է նպատակահարմար սուննաթը որպէս պատժամիջոց կիրառելը ...

- Քրիստոնյայի համար սուննաթվելը մահից ավելի վատթարագույն է:
- Բայց նա դադարելով քրիստոնյա լինել, դառնում է մահմեդական:
- Այդպես է լինում քրիստոնյայի Աստծո մահը, Նազըմ, իսկ թլպատվելով նա մահմեդական կհամարի իրեն, թե ոչ դժվար է ասել:

* * *

Մի քանի օր անց Լոմանին արնաթաթախ ու ուշակորույս վիճակում գտավ Քամի Զարութը Կարմիր կամուրջի մոտ եւ աչք՝ հածելով, որ շրջակայքում կասկածելի ոչինչ չլինի, շալակեց նրան ու տարավ գերեզմանոցի մոտ գտնվող ավազահանքը, ուր հավաքվում էին խմբի տղերքը՝ թեթեւ, անարյուն գործողություններից հետո: Ավազահանքում ոչ ոք չկար: Խմբի տեղը հայտնի չէր նույնիսկ Զարութին, որը քաղաքի հայ բռշաներից էր, տասնյոթ - տասնութ տարեկան եւ իր Քամի մականունը պարտական էր արագավազության, անձայն քայլերով, նաեւ երկարություն թռչելու կարողությանը: Հիանալի հատկություններ, որ մի անգամ չէ, որ խմբին փրկել էին դժվար կացություններից եւ իրավիճակներից: Տղաները ծիծաղելով պատմում էին, որ նույնիսկ հեծյալ ասկյարը չէր հասել քամու արագությամբ սուրացող Զարութի հետեւից, որը տեսնելով, որ թուրքը միեւնույն է հասնելու եւ թրատելու է իրեն, թեքել էր ճանապարհը դեպի գետը, քարափից նետվել ջուրն ու փրկվել: Անկարող լինելով սանձել սուրացող մտույզը, թուրքը Զարութի հետեւից նետվել էր ձորն ու ձիու հետ ջախջախվել առափնյա քարերին: Զարութը Սեւ Արսենից առաջադրանք էր ստացել լինել թուրքական զորամասի շրջակայքում, ուշադրությամբ հետեւել զորական շարժումներին եւ եթե հնարավոր է լուրեր թռցնել Լոմանի մասին: Ախր Լոմանն առաջինն էր խմբի տղաներից, որ կառության պատճառով չէր կարողացել ազատվել թուրքերից եւ գերվել էր: Նրա

ճակատագիրը մտահոգում էր տղաներին: Թուրքերից ամեն տեսակի գազանություններ սպասելի էին: Կարող էին սպանել, կախել, կտտանքների ենթարկել: Քամի Չարութը հիանալի թուրքերեն գիտեր. իր հոր հետ նա շատ էր եղել թուրքական գյուղերում: Մաղ եւ այլ իրեր էին ծախել: Նա թուրքի նման էր եւ թուրքերից ավելի թխամաշկ, այնպես որ հաջողությամբ կարող էր թուրքի փոխարինել: Վտանգավորն այն էր, որ միայնակ թափառելը կարող էր կասկածի տեղիք տալ, եւ Քամի Չարութը հարմար դիտակետերից էր դիտում զորամասի շարժումները: Թուրք ասկյարների հետ խոսքի բռնվել սիրտ չէր անում: Ի՞նչ էր հարցնելու: Չայ գերու մասին խոսելուն պես ինքն էլ կհայտնվեր նրա կողքին:

Այսօր առավոտ նա Լոմանին տեսավ այդ վիճակում եւ թոցրեց գերեզմանոցի ավազահանքը: Ուշքի բերեց նրան, կարգի բերեց նաեւ: Ծոցից շորի մեջ փաթաթած մի յուղոտ մսակտոր հանեց եւ տվեց ընկերոջը, որն սկսեց ծուլորեն ծամել: Ծամում էր արտասովելով: Նրան նայելով թրջվում էին նաեւ Քամի Չարութի աչքերը:

- Շա՛տ չարչարեցին ...

- Քրիստոսի չափ եւ Քրիստոսի պես ...

- Ի՞նչ են ուզում ...

- Թուրքը հայից ի՞նչ պետք է ուզի. մատնություն, թրքանալ, չցանկանաս կատարել ուզածը կյանքդ ...

- Իսկ ինչպե՞ս եղավ, որ ազատվեցիր ...

Չարցը դիպավ Լոմանի վերքին եւ վերքը մղկտաց: Առանց խոսելու, առանց բերան բացելու նա սկսեց արտասովել:

- Քեզ ի՞նչ պատահեց, Լոման, ասա՛ ...

- Ինձ թրքացրին, Չարո՛ւթ, ինձ թլպատեցին: Գիտե՛ս իսկականից, մոլլայով, ծեսով ... Այնքան էին ծեծել, այնքան էի թուլացել, որ դիմադրել այլևս անկարող էի, դիմադրելն այլևս միտք չուներ: Եվ նրանք իրենց ուզածն արին ...

- Չիմա ի՞նչ ես անելու, Լոմա՛ն, մեր Աստծուն ուրանալու՞ ես ...

- Ինչո՞ւ պիտի ուրանամ, հիմա քրիստոնյայի հետ քրիստոնյա եմ, մահմեդականի հետ՝ մահմեդական, հայի հետ՝ հայ, թուրքի հետ՝ թուրք, ուրիշ ի՞նչ կարող եմ անել ...

- Եղպես մի խոսիր, Լոման, թլպատվելով քրիստոնյան մահմեդական չի դառնա: Մարմնապես թլպատվելով, հոգեպես չի թլպատվի: Չոգուն ձեռք տալ չի լինի: Դու զգույշ եղիր Մոհամմեդը սիրտդ չսողոսկի: Բոլորն էլ ասում են, որ Մոհամմեդը պնդերես է, կաչուն, Քրիստոսի նման արդա չէ, որ չուզած սիրտը չմտնի ...

- Իմ հոգին թուլացել է, Չարութ, թուրքից ես վախենում եմ ...

- Դու հիմար ես, Լոման, թուրքից բոլորս էլ վախենում ենք, որովհետեւ նա մեզ մահ է բերում: Կռվում ենք թուրքի դեմ, նշանակում է մեր վախի դեմ ենք կռվում, եթե կուզես՝ մեր մահվան դեմ ենք կռվում... Եթե դու սիրում ես այն ամենը, ինչը թուրքը խլում է քեզնից. քո հողը ու ջուրը, քո հորը ու մո-

րը, քո Աստծուն ու քո ազգը, ուրեմն պիտի կռվես, թե չէ թլպատելով բան դուրս չի գա: Հիմա Աստծուն փառք տուր, որ նորից տեսնում ես էն բոլորը, որոնց տեսնելու իրավունքից քեզ ուզում էր զրկել թուրքը ...

- Լավ ես ասում, Քամի Հարութ, բայց քամի ես անում: Հիմա թուրքերը իմ հոգին կտորել են. Քրիստոսին են շրջվում, վախենում են Սոհամմեդից, սրան են շրջվում, վախենում են Քրիստոսից ...

- Դու հիմար ես, Լոման, եթե դու պաշտես Քրիստոսին, դավաճան չես լինի. նա քո Աստվածն է: Եթե պաշտես Սոհամմեդին՝ դավաճանություն կլինի:

Նա թուրքի ալլահն է: Դու դավաճանության մասին մտածիր, որ հանկարծ Քրիստոսը չգայրանա, որովհետև եթե նա գայրանում է, ուրեմն գայրանում են նաև քրիստոնյա մարդիկ: Աստվածներն այդպես են, նրանք պատժել գիտեն ...

- Իսկ մոլլան ասում է, որ ուղիղ հավատի գալու դեպքում Սոհամմեդը ներում է մարդու հին մեղքերը, նույնիսկ անհավատությունը: Մենք նրանց աչքին անհավատ գյավուրներ ենք, Հարութ, նրանք մեզ բերում են իսկական հավատի ...

- Այ Լոման, մի քանի օր թուրքին գերվեցիր, հիմա նրա հավատի անունից քո հավատի հետ ես վիճում: Ես հայ բոշա եմ, Լոման, բայց հավատիս համար հուր ու կրակ կանցնեմ, չեմ նահանջի: Ես թքել եմ այդ մոլլաների վրա, որոնց մորուքները ոջիլի բուն են, իսկ հոգիները՝ սատանայի...Դու հայ քրիստոնյա ես ծնվել, այդպես ապրիր, այդպես էլ մեռիր, թեև հայ քրիստոնյա մնալը հիմա շա՛տ, շա՛տ դժվար է ...

- Երկու կրոններն իրար խանգարում են, Հարութ ...

- Մեր հարեւանը քաղաքի տերտերն է, էրզրումցի, շատ լավ մի մարդ, նա ինձ նույնիսկ աղոթել է սովորեցրել: Նա ինձ ծխական դպրոց տարավ, ուզում էր մարդ դարձնել, բայց թուրքերը չթողին: Նա էլ է գաղթել քաղաքից: Տեսնեիր ո՞նց էր լալիս ու եկեղեցու պատերը համբուրում: Նա ցանկանում էր մնալ քաղաքում եւ մահ ընդունել, բայց քաղաքացիները չթողին: Եվ նա մեկնեց քաղաքից: Կրոններն իհարկե իրար խանգարում են, իրար թշնամի են: Էդ թշնամությունը գալիս է մահմեդականությունից: Ես աշխարհում Քրիստոսն ավելի շուտ է ծնվել, քան Սոհամմեդը: Սա ծնվել է ու իր կրոնն առել, ընկել է մեր կրոնի ու հայերի հետեւից, թե իմ կրոնն ընդունեք, քանի որ իսկական հավատի կրոնն իմն է: Մեզ էլ կոչել է գյավուր, ասել է՝ անհավատ:

- Լսի՛ր, այ Քամի Հարութ, դու էդ ինչքա՞ն բան գիտես ... Բոշան օրենքով մաղ պիտի գործի: Իսկ դու խոսում ես Քրիստոսից: Քեզ նման բոշա տեսած չկամ ...

- Ասացի, որ տերտեր հարեւան ունեինք, նա է սովորեցրել: Ես կարդալ, գրել էլ գիտեմ, անգիր ոտանավորներ գիտեմ ...

- Երանի՛ քեզ, - ասաց Լոմանը, - քեզ թուրքացնել ոչ ոք չի կարող ...

- Իսկ դու իզուր ես քեզ թրքացած համարում, ասենք էս մասին շատ խոսեցինք, խոսենք քո մասին... Հիմա ի՞նչ ես անելու, հո՞ դուրս չես գալու մեր խմբից ...

- Չէ՛, ի՞նչ ես խոսում, ես պիտի մնամ մեր խմբի հետ, պետք է օգնեմ մերոնց, ի՞նչ գործ ունեմ նրանց հետ: Հարուսթ, իմ թլպատվելու մասին էլ խնդրում եմ, մերոնց չասես, ուրիշ աչքով կնայեն, ինձ չեն հավատա, չեն վստահի ...

- Մերոնց գուցե չասենք, բայց խմբապետին պետք է ասել: Նա ամեն բան պետք է իմանա, մեր օրենքն է՝ ոչինչ չթաքցնել յուրայիններից եւ ոչնչով չմատնել մեր խմբի գաղտնիքներն ուրիշներին, ամենից առաջ թուրքերին: Դու, Լոման, շատ ես հոգնած ու թույլ, գուցե այստեղ հանգստանաս ու քնես: Ես գնամ մերոնց գտնեմ, կարելու գործ կունենան ...

Եվ Քամի Հարուսթը դուրս եկավ ավազահանքից: Բավրայի կամրջին չհասած, ասես գետնի տակից նրա դեմ բուսեց Սեւ Արսենը: Մռայլ էր: Ասենք, նա միշտ էլ մռայլ է: Այս էլ երկուսուկես ամիս Հարուսթը նրա երեսին ոչ միայն ծիծաղ, այլեւ ժպիտ էլ չէր տեսել: Նա վախենում էր այդ մարդուց, բայց ավելի շատ պատկառում էր: Նա երդվել էր անողոքաբար կոտորել թուրքերին: «Նրանց հաղթել չենք կարող, բայց կոտորել հո կարող ենք ...»: Ասում էին, որ երդվել է կես տարում անծամբ ոչնչացնել հարյուր թուրք: Հարուսթը հավատում էր, որ եթե նման բան ասել է կամ երդվել Սեւ Արսենը, ուրեմն կանի: Եվ թող անի: Վրեժի զգացումն է խմբին պահում մարտական վիճակում, այլապես նույնիսկ առյուծին էլ այսքան հետապնդեն, չի դիմանա եւ ուժասպառ կլինի: Սեւ Արսենը փակեց նրա ճանապարհը.

- Բերիդ ավազահա՞մք: Եհիշտ ես մտածել: Բայց կարո՞ղ ես ասել, թե ինչու նրան մահապատժի չեն ենթարկել եւ ինչո՞ւ նա հայտնվեց մեծ ճանապարհին: Թող զցեին ուրիշ աչքից հեռու տեղում ...

- Արսեն քեռի, ախր նրան թրքացրել են, թլպատել: Ծեծել են ու ջարդել. առջեւի ատամնաշարը գոյություն չունի, ուշագնաց է եղել, չի էլ հիշում, քաշե՞լ են ատամները, թե ջարդել:

- Դա վատ է, Հարուսթ, շատ վատ է, ուրեմն ջարդել են նրա կամքը, հոգին, կամ համոզել ու թլպատել: Բացառված չէ, որ նրան դարձրած լինեն իրենց գործակալը, մի բան, որ համարյա անկասկած է: Երեւում է՝ նրանց հետախուզությունը դեռեւս չի սովորել կարգին աշխատել: Լսիր, Հարուսթ, նրա հետ զգույշ եղիր, նրա մոտ բացբերանություն չանես, հատկապես երկու հարցում: Նա չպետք է իմանա խմբի գտնվելու վայրերը, որոնք պետք է փոխվեն: Չպետք է իմանա մեր կատարելիք գործողությունների մասին: Ո՛րչափ եղիր, տե՛ս, եթե թուրքերը մեր գտնվելու հին վայրերի շուրջ հոտոտում են, ուրեմն նրան կարողացել են իրոք թրքացնել եւ դարձրել են իրենց մարդը: Ես Լոմանի հետ առանձին կխոսեմ, բայց խնդրում եմ մեր խոսակցության մասին ոչինչ չհայտնես նրան:

- Շատ լավ, - ասաց Հարուսթն ու անհայտացավ քարայրների ուղղությամբ: Հոգին ցավագնորեն կսկծում էր: Իրարամերժ զգացումները խեղդում էին նրա պարզ, չփչացած հոգին: Մինչեւ այսօր, այս պահը եղել էր Լոմանի ընկերը, թեւ հայրենիքի եւ հավատի հարցերը չէին եղել նրանց քննարկման հարցերը, բայց թուրքական զինվորականության եւ խուժանի դեմ պայքարի սրբազան նպատակը սոսնձել էր նրանց մտքերը, ընկերասիրութ-

յունը՝ այն ամուր բարոյական սոսնձով, որ կոչվում է հայրենասիրություն: Նա չէր կարողանում հաշտվել այն իրողությանը, որ նման պարագայում կարելի է դավաճանել, ուրանալ հավատը, դառնալ այն էլ այնպիսի գազանների գործակալը, որոնց յաթաղանից ջրի նման հոսել էր հայերի արյունը, այս էլ ո՞վ իմանա քանի հարյուր տարի:

* * *

Օ՛, այդ ահավոր օրը ... Այն երբեք չեն մոռանալու նրա մասնակիցները: Ահրիմանը այդ երեկո խլել էր հինգ թուրք սպաների բանականությունը, որոնք քաղաքի թալանված խանութներից մեկի վաճառասեղանի տակ հայտնաբերել էին մի քանի շիշ օղի: Ախր, թուրքերը գլուխ չունեն ոգելից խմիչքների հետ: «Դուրանն» արգելում է Մոհամմեդի զավակներին հարբեցողությունը, որի համար խստագույն պատիժ է սահմանված: Այդ է պատճառը, որ մուսուլմանները ոգելից խմիչքից փախչում են ինչպես օձից: Բայց օգոստոսյան այդ պարզ օրը օղին մթագնեց նրանց ուղեղները, ասես էլը քացի տվեց նրանց գլուխներին եւ յուրաքանչյուրը մեկ-մեկ երկու կուն անելով ու դեմքերը ծամածռելով, թե՛ այս՝ քաքը, ո՞նց են խմում հայերը, քիչ հետո վերստին խմելու անզուսպ ցանկություն ունեցան ու շիշը նորից սկսեց խլթխլթալ նրանց կոկորդներն իվար: Հետո նրանք գոռալու՛ ու երգելու ցանկություն ունեցան, հետո հայիոյելու, այնուհետեւ կարծիք հայտնվեց, որ կին է հարկավոր օրը գեղեցկացնելու համար: Հետո հայիոյեցին հայերին տունուտեղից փախչելու եւ թուրքերին՝ նրանց տեղահանելու համար եւ այն էշության համար, որ հրամանատարները հոգ չեն տանում, չեն մտածում սպաների անձնական կյանքը կազմակերպելու համար: Չեն բացում քաղաքում ո՛չ վայելքի, ո՛չ թղթախաղի տներ, ո՛չ ճաշարաններ, ո՛չ էլ մանավանդ անառականոցներ, ուր սպաները կկտրեին իրենց տաղտուկը, կհագեցնեին հոգու եւ մարմնի ծարավը: Եվ հանկարծ նրանցից մեկը կատարեց տիեզերական մի հայտնագործություն:

- Բայց Մոհամմեդի զավակներ, այս ավերակ քաղաքում է գտնվում աշխարհի գոզալների գոզալը, որ Օմար փաշան ու Նազըմ բեյը վայելում են իրարից թաքուն ու իրար խանդելով: Գնանք մենք էլ մեր փայաբաժինը վերցնենք նրանից: Մենք այդ իրավունքն ունենք, մանավանդ, որ գոզալը նրանց կնիկներից չէ, եւ մեր հրամանատարները նրա մարմնի վրա արգելք դնելու իրավունք չունեն ...

Հարբածի աչքերին ծովը ծնկներից է: Այս խոսքն այնպիսի խանդավառություն առաջ բերեց կին տենչացող սպաների հոգիներում, որ նրանց ոռնոցը գրավեց մոտիկում գտնվող Քամի Հարութի ուշադրությունը, որը հսկում էր եւ ամայի քաղաքի անցուղարձը, ե՛ւ Եղիսաբեթի անվտանգությունը, ե՛ւ Լոմանի գործողությունները: Հարութը սրեց լսողությունը:

- Հուրի փերի: Է, սուլթանական հարեմի խառչ կնիկ ...
- Դու ի՞նչ գիտես, երբ չես տեսել, տո մեծաբերան ...

- Ո՞նց թե չեմ տեսել, տեսել եմ փաշայի կառքում, անունն էլ գիտե՞ս ինչ է՝ Ձեյնաբ ... - ու երգեց.

- Ձեյնաբը պառկել է, ծանր կտքա, Սիրածն ուշացել է, արդյո՞ք տուն կգա, Տուն կգա, Ձեյնա՛բ, յարդ տուն կգա, գիրկդ բաց, նա՛այս իրիկուն կգա ...

Իսկ Քամի Դարուքն արդեն սուրում էր Սեւ Արսենի մոտ: Խուճը գտնվում էր քարանձավում: Քննարկվում էր շատ կարելուր կենսական հարց. սպառվել էր հացը, սովահար ֆիդային ուտելու հոգս չպետք է ունենա, որ ի զորու լինի հոգալ գործի մասին: Սպառվելու վրա էր ծխախոտը, որ հացից ոչ պակաս կարելորություն ուներ: Դարուքը լողում էր քրտինքի մեջ, երբ մտավ քարանձավ. - Դը՛ ... - մռռաց Սեւ Արսենը, - հետեւիցդ շո՞ւն է ընկել ...

- Շտապիր, խմբապե՛տ, հարբած թուրք սպաները որոնում են եղիսաբեթի տունը:

- Դարբա՞ծ, թուրքը հարբա՞ծ ... Քամի հոգի են ...

- Դինգ, երկուսը ատրճանակ ունեն, մյուսները անգեն են, հազիվ են քայլում ...

- Որ հարբած են, շատ լավ է, մտածելու ժամանակ էլ չկա: Քոթոթ Պողոս, Քոսա Պետրոս, Քամի Դարուք, Քոռ Արծիվ եւ ես: Դինգի դեմ՝ հինգը, շատ է ու քիչ չէ: Դրացան չվերցնել, միայն ատրճանակ, գործելու ենք առանց կրակոցի: Բարակ աղիքե պարան վերցրեք ... Գնացի՛նք ...

Խուճն ավելի շուտ տեղ հասավ, քան թուրքերը, որոնցից մեկը միայն գիտեր եղիսաբեթի բնակարանի տեղը, այն էլ մոտավորապես: Տանտերերին արագ բացատրվեց վիճակը, եւ խմբի անդամները թաքնվեցին: Սպասումը բավական երկար տևեց: Ձեյնաբին նվիրված երգով սպաները լցվեցին միջանցք: Եվ այստեղ էլ ավարտվեց նրանց սիրային արկածախնդրությունը: Նրանք նույնիսկ ժամանակ չունեցան գնահատելու իրադրությունը, խոսք փոխանակելու իրար հետ, երբ թափված էին հատակին, եւ վզներին պարան՝ խեղդվում էին խոխոռոցով, չկարողանալով մնաս բարով ասել անգութ աշխարհին: Ֆիդայիները նայեցին իրար: Ի՞նչ անել սրանց դիակները: Սերգեյն ասաց, որ նախկինում մեկին թաղել են պարզապես կտրին: Իսկ հիմա կեսօր է, անհնար է սրանց էլ այնտեղ թաղել, տեղափոխելը նույնպես բացառվում է: Սեւ Արսենը հուշեց անելիքը.

- Եղիսաբեթ քույրիկ, եկեք սրանց իջեցնենք թոնրատուն, մեր հավաքավայր նկուղը եւ այնտեղ էլ թաղենք: Կարծում եմ թաղման շքեղություն այս հարբեցողներին հարկավոր չէ, որ մի անգամ խմելով վերստին ապացուցեցին խմիչքն արգելելու «Ղուրանի» անհրաժեշտ ճշմարտությունը:

- Թեւեւ սնոտիապաշտ չեմ, բայց վախենում եմ սրանց հարեւանությունից, - խոստովանեց Եղիսաբեթը:

- Սրանք միանգամայն անվնաս են, ավելի հեգ, քան գառնուկը, սրանք քեզ երբեք չեն խանգարի: Որքան գիտեմ, դուք երկու նկուղ ունեք, մեկը՝ թոնրատան, մեկն էլ սենյակի տակ: Մեր հավաքատեղին մնում է նույն նկուղը, իսկ դու այնտեղ չես մտնի: Դույս ունենք, որ նրանք էլ այնտեղից չեն փորձի դուրս գալ ... Կաշխատենք խորը, շատ խորը թաղել սրանց ... Դե, սկ-

սենք, ժամանակը թանկ է ...

- Եթե մի փոքր ուշանար Քամի Հարուրը, ես չգիտեմ, թե ի՞նչ մեծ ողբերգությամբ կարող էր վերջանալ այս գործը, - ձեռքերը լվանալով խոսում էր Սեւ Արսենը: - Մենք երեւի ճիշտ չվարվեցինք ձեզ քաղաքում թողնելով: Մարդկայնության հետեւողականության մեջ թուրքը քննություն բռնել չի կարող: Նա հային միշտ նայել է անմարդկայնության դիրքերից: Նրան միշտ համարելով իր սեփականությունը, որի նկատմամբ անսահմանափակ են իր իրավունքները: Նրա ունեցվածքը եւս իրենն է սեպել: Ամենավիրավորականն այն է, որ նա իրեն վերապահել է հայի ընտանիքի նկատմամբ եւս իրավունք, որ հաճախ առիթ է դարձել կռվի եւ սպանության: Եվ թուրքական իշխանությունները այս հարցին եւս նայել են ինչպես բարեգութ ծնողները երեխայի խաղին, խաղալիք ջարդելը համարելով նրա անկապտելի իրավունքը: Մենք չպետք է թողնենք ձեզ այս, թեկուզ հայրենի, բայց ավերակ քաղաքում, մանավանդ, որ ձեր շուրջը գնալով սեղմվում է պահանջկոտ երկրպագուների օղակը: Մենք ուշի ուշով հետեւում ենք, թե ինչո՞վ է ավարտվելու մրցակցությունը բինբաշի Օմարի եւ Նազըմ բեյի միջեւ: Դա կարելոր է: Գուցե Աստված հաջողի, եւ թուրքական գորամասը բաժանվի երկու իրարամերժ մասի: Բանն այն է, սիրելի եղիսաբեթ, որ Ախալքալաքը գրավելուց հետո Վեհիբ փաշան պիտի շարժվեր Թիֆլիսի վրա, պիտի զարգացներ հարձակումը: Բայց առաջխաղացումը մի շարք պատճառներով մտել է փակուղի եւ կանգ առել: Լավ է, որ Թիֆլիսի մերձակայքում եւ բուն քաղաքում չեն կրակում հրազենները, եւ չեն պայթում արկերը: Եվ շատ վատ է, որ պատերազմը ձգձգվում է, իսկ Ջավախքի հայությունը մեզանից ոչ հեռու, մեր քթի տակ, սոված ու ծարավ, անգործ ու անտուն, սովի եւ հիվանդությունների ճիրաններում ամեն օր տասնյակ ու տասնյակ իր զավակներին հանձնում է հողին, որոնք մեռնում են հարազատ հողի կարոտն իրենց սրտերում: Մենք առավել պետքական կլինեինք, եթե կարողանայինք արշավող թուրքերի ոտքերի տակ սապոն դնել: Քարածայրերը շրջել նրանց գլխին, գոցել նրանց ճանապարհը: Մեր լավ աշխատանքը կվարձատրվեր նրանով, որ Ջավախքում իրոք կժամալեր պարտիզանական, ֆիդայական շարժում, որը ետ կկանչեր զենքի ընդունակ հայ փախստականներից շատերին: Բայց այդ բանը տեղի չունեցավ, եւ մենք՝ երեք - չորս տասնյակ վրիժառուներս, զբաղված ենք մանր-մունր գործերով: Քանի՞ անգամ որոշեցինք փախցնել ձեզ այս ամայի քաղաքից բայց մեկ կենտրոնը չհամաձայնեց, մեկ՝ մենք հապաղեցինք, որովհետեւ Ասպինձան եւ Ածղուրը փակ են: Թուրքերն այդ գյուղերում այնպիսի ամուր պաշտպանություն են կառուցել, որ Ախալցխայի պաշտպանները դրսից օգնություն չկարողանան ստանալ, չկարողանան կտրել նրանց կամքը: Իսկ Ալեքսպոլում հերիք չէ, որ թուրքական կանոնավոր բանակն է տեղակայված, դեռ ճանապարհին էլ դեպի Ալեքսպոլ փակել են Աղբաբայի թուրքերը: Մի խոսքով, Ախալցխան շրջապատման օղակի մեջ է, Ախալքալաքը գրավված է, ժողովուրդը՝ ցանուցիր ու անօգնական: Մի փոքրիկ հույսի ճանապարհ եթե բացվեց, մենք ձեզ կտեղափոխենք Թիֆլիս կամ Երեւան՝ ան-

կախ կենտրոնի ցանկությունից:

Եղիսաբեթը ժպտալով լսում էր նրան.

- Սիրելի խմբապետ, ինձ թվում է, որ ձեր խմբին ավելի հոգս են պատճառել, քան օգնել: Ծիշտ է, կենտրոնն ինձ այստեղ պահում է որպես խայծ թուրքական իշխանություններին, պետերին հրապուրելու համար, բայց օր- օրի վրա սրվող առեւտրությունը թուրքերի նկատմամբ, երբեմն ինձ հնարավորություն չի տալիս լեզու գտնել իմ թուրք երկրպագուների հետ: Եթե այսպես շարունակվի ես ամոթով կմնամ այն մարդկանց առջեւ, ովքեր հավատացել են իմ հայրենասիրությանն ու տակավին չստուգված քաջությանը: Միաժամանակ այն կարծիքին եմ, որ այստեղից չպետք է հեռանամ իմ պարտքը չկատարած: Երբ պատմության դատաստանին է հանձնված մի հինավուրց ժողովուրդ, նրա զավակներն իրավունք չունեն ձեռքերը ծալած նստել եւ սպասել, որ բարի Աստվածը փրկի մեռնող ժողովուրդին: Մեր կոնվլ՝ մենք ենք կռվելու, մենք ենք մեզ փրկելու: Ոչ թե մեր Աստվածն է փրկելու մեզ, այլ մենք՝ մեր Աստծուն, որ նրա փրկությամբ փրկվենք նաեւ ինքներս ... Մենք պետք է հասկանանք, որ Աստվածը զինվոր չէ, այլ բարձրագույն ոգի, որի փրկությունը նաեւ մեր ոգու պանծացումն է: Ա՛յ, այսօր դուք խոսում եք Սաթխայի հերոսուհու՝ Շողանի մասին, որը եղանը ձեռքն առած հաղթության է առաջնորդել մի քանի հարյուր տղամարդու: Ես ուզում եմ խոնարհվել նմաններին, ովքեր փրկում են մեր օրորոցներն ու սուրբ շիրիմները, մեր պատմությունն ու մեր Աստծուն: Ես իմ պարտքը դեռեւս չեմ կատարել, խմբապետ, ես իմ ժողովրդի պարտապանն եմ:

- Դու որոշիր քո անելիքը, Եղիսաբեթ: Ինձ այստեղ խոսք չի հասնում, բայց քեզ օգնելն իմ պարտքն է: Ինձ թվում է, որ թերությունն այն է, որ մենք գնում ենք դեպքերի հետեւից, դառնալով պատահականությունների գերին: Այսօր, երբ իմացա թուրք սպաների հանդգնության մասին, մերքս ինչ թաքցնեմ, ուրախացա, որ անելիք կա, տեսա՞ք նրանք ոնց տարան քո ցավը: Ա՛յ սա գործ էր: Դու գրագետ, բարձրագույն կրթություն ունեցող կին ես եւ գիտեմ, որ ինձանից լավ գիտես Մոպասանի հերոսուհիներին, որոնք իրենց պատվի կորստի գնով մահ էին պատճառում գերմանացիներին, այսպես կոչված բոշերին: Ես այդպես եմ պատկերացնում քո աշխատանքը:

Եղիսաբեթը ցնցվեց Արսենի վերջին խոսքերից: Հոգու խորքում նա զգում էր Արսենի իրավացիությունը, բայց նման դաժանության, այդքան ուղիղ խոսքի չէր սպասում: Կարմրատակել էր հուզմունքից.

- Ուրեմն, հայրենիքը պահանջում է, որ իր փրկության զոհասեղանին դրվի իմ պատի՞վը:

- Սիրելի Եղիսաբեթ, հայրենիքի պահանջը մեզ համար հրաման է: Մեկը դնում է իր կյանքը, մյուսը՝ իր կարողությունը, երրորդը՝ իր պատիվը: Աստված քեզ տվել է տիրամոր պատկերը, որ գլխահան անի մարդկանց: Օգտագործիր, իսկ մենք կաշխատենք, որ դու պատվագուրկ չլինես: Պետք է թուրքերին մեկիկ - մեկիկ քաշել այստեղ, այնպես, որ մտնողը չկարողանա դուրս գալ, այլ լրացնի քո ներքնահարկի ննջեցյալների քանակը: Չնեղանա

եւ ինձ դաժան չհամարես, սիրելի քույրիկ, քանզի հայրենիքը վեր է ամեն բանից: Մարդու փառքը, պատիվը, անունը, մեծությունը, հերոսությունը, բոլորը պայմանավորված են հայրենիքի հանդեպ նրա պարտքի կատարմամբ, հայրենիքին նվիրաբերած նրա ծառայությամբ, հայրենիքի փրկության համար զոհաբերությամբ ...

Եղիսաբեթն անձայն վեր կացավ, վերցրեց նրա ծանր աջն ու մոտեցրեց իր դողացող շրթունքներին:

- Հրամանդ ի կատար, խմբապետ:

* * *

Ինչպես ասում են, ուրբաթը շաբաթից շուտ եկավ: Դեպքերն սպասեցնել չտվին: Քաղաքամերձ Խոսպիա գյուղում ապրում են թրքախոս հույներ, որ պատրաստակամ են հայերին օգնելու հարցում: Միաժամանակ, քանի որ խոսում են թուրքերեն, վայելում են նրանց հովանավորությունը, հետևաբար չեն գաղթել եւ ապրում են եթե ոչ խաղաղ կյանքով, ապա տանելի առօրյայով, թեւ մի երկու, երեք անգամ ասկյարները հարձակվել են արտերում աշխատող հույների վրա, պահանջելով ուտելիք եւ ստիպել ոչխար մորթել: Վերջերս նրանք առեւանգել էին հասակավոր, ավելի ճիշտ պառաված մի կնոջ եւ գյուղի ծայրամասում, առեւանգվողի տանից ոչ հեռու, ցորենի կալում մի քանի հոգով բռնաբարել: Տանտերը հասել էր դեպքի վայր եւ եղանը խրել զինվորներից մեկի սիրտն ու սպանել: Թուրքերն սպանել էին հանդուգն հույնին: որ խանգարել եւ չէր թողել, որ անպատիժ անպատվեն իր մորը: Դեպքը հուզել էր հույներին, սակայն ինչպես ասում են խաղն ավարտվել էր հավասար արդյունքով՝ ոչ - ոքի: Ձինվորական դատական ատյանը տուժողի տանը տղամարդ չգտնելով, գնդակահարության վճիռ կայացնելով սպանված տանտիրոջ նկատմամբ եւ վճիռն ի կատար ածված համարելով՝ վերադարձավ գործնաս: Հույները թաքստոցից հանեցին զենքերը, նոր բռնությունների սպասումով եւ սատար կանգնեցին իրենց պատվին՝ հաստատ վճռականությամբ: Սակայն թուրքերը վերջին օրերին չէին երեւում Խոսպիա գյուղում, թեւ անախորժ դեպքը չէին մոռանում գյուղացիները:

Խոսպիա գյուղի հետ բավական սերտ հարաբերությունների մեջ էին հայ խմբի տղաները: Բախտակիցներ էին: Գյուղի համայնքը գիտեր, որ եթե ընդհարում լինի թուրք գործի հետ, ապա հայ ֆիդայիները կլինեն իրենց կողքին, եւ իրենք էլ իրենց հերթին սատարում էին հայերին, հաց էին թխում նրանց համար, հյուրասիրում այլ մթերքներով: Արդեն վերջանում էին հայերի պահեստավորված ալյուրն ու ծխախոտը, եւ նրանք վերստին եկան իրենց հույն բարեկամների մոտ, սակայն ոչ դատարկ ձեռքերով: Բերել էին մի քանի թուրքական հրազեն ու բավականաչափ փամփուշտ, արժանանալով հույների շնորհակալությանը: Ոտքի վրա լուծվեց հացի եւ ծխախոտի հարցը: Պայմանավորված օրը հայերը պետք է գիշերով գնային գյուղի ծայրամասը հացը տանելու համար: Խորհրդակցելիս քարանձավում ներկա էր ամբողջ

խումբը: Տղաները գնացին պայմանավորված վայրը հաց բերելու ու չվերադարձան: Այնտեղ նրանց սպասում էին ... թուրքերը:

Հանկարծակիի գալով, պատրաստ չլինելով նման հանդիպման, մինչև նրանց ուշքի գալը արդեն զինաթափված ու կապկպված էին իրենց բարերար հույնի հետ: Նրանց տարան զորամաս, ուր մինչև մահապատժի օրը նրանց բաժինն էին կտտանքները, ծաղրուծանակն ու տանջանքները: Երեքին՝ երկու հայ ֆիդայու եւ մի հույն հայրենասերի կախեցին փոքրիկ քաղաքի մեծ հրապարակում, որ ամեն կողմից տեսանելի լինեին պատժվածները: Հայտնի չէր, թե այդ գործողությամբ ում էին վախեցնում թուրքերը, երբ պատժվածներին նայում էին միայն քաղաքի կուրացած աչք-պատուհանները: Որոշել էին կախվածներին թողնել երկար ժամանակ՝ ի ցույց մի քանի տասնյակ հայերի, որ նրանք իմանային թուրքերի անողոքությունը, առանց կասկածելու, որ հայերը ծանոթ են թուրքին այս էլ քանի՜ հարյուր տարի: Պատժի արարողությունը կատարվեց ամբողջ կայազորի ներկայությամբ, հաղթական հանդիսավորությամբ, նույնիսկ շքահանդեսի տպավորություն էին ցանկանում հաղորդել այդ վայրագությանը:

Ելույթ ունեցավ զինվորական տրիբունալի նախագահը:

- Ալլահի որդիներ, այս էլ երեք ամիս է, ինչ մեր հաղթական բանակը գրավել է իր պապերի ոսկորներով ու արյունով հաստատված այս հողը, որ Ախալցխայի թուրքական փաշայության անկապտելի մասն է, հետեւաբար մեծ թուրքիայի մասը: Մեր ձեռքի հաղթական սմբակների տակ է այս հողը թուրքական դարձել, թեւեւ հայերն ու վրացիները մերժում են մեր իրավունքն ու այս հողի նկատմամբ եւ իրենց խղճուկ ուժերով կռվում են մեր հերոսական բանակի դեմ: Մենք այս երեքին, - նա մատնացույց արեց դատապարտվածներին, - կարողացանք դաժան կռվում զինաթափել: Եթե թուրք ասկյարների պապենական քաջությունը չլիներ, սրանք ձեզ, ո՛վ թուրք հերոսներ, հիմա պիտի որ մորթած լինեին:

- Սուտ խոսելով հերոս չես դառնա, ո՛վ թուրք: Քո արդարությունն ու արդարադատությունը քո մուռտառ մռութն ունի, - վերջին ուժերը հավաքելով գոռաց Տասնոց Սուրենը: Հետեւում կանգնած ասկյարը խզակոթով հարվածեց վզին: Նա ընկավ ու մնաց: Իսկ նախագահը խոսում էր ու խոսում: Նրան արդեն չէին լսում: Վերջապես նախագահը ձեռքով արեց եւ դատապարտվածներին բարձրացրեց աթոռներին: Տասնոց Սուրենին աթոռին կանգնեցնել չհաջողվեց: Նրան մի քանի հոգով մի կերպ կախեցին: Պարզապես օղակը հագրին վիզն ու բաց թողին: Սուրենը նույնիսկ չչարժվեց: Նա վաղուց մեռած էր: Կախելու արարողությունը ավարտվեց թուրքական հիմնով: Այստեղ էլ պարզվեց, որ նվազախումբը նվազել չգիտի եւ անորոշ հնչյուններով կեղտոտում է թուրքական հիմնի մաքրությունը:

- Հազար անգամ ասացի, որ գոնե նվազախմբի հայ տղաներին եւ զինագործ հայերին դատաստանել հարկավոր չէ, չլսեցին: Իսկ հիմա՝ խնդրեմ, մեր սրբազան հիմնը այս ապուշները դարձրել են սահարի պարեղանակ, - խոսում էր Նազըմ բեյը, - հրամայեք, դադարել հիմնը վարկաբեկելուց ...

Ձորքը շարժվեց դեպի գինվորական ավան, տեղակայման վայր: Երեք ասկյար հսկում էին կախվածների «անվտանգությունը»: որ նրանց պարանից չիջեցնեն, որ նրանք ահ ու սարսափ տարածեն Ալլահի եւ մեծ Թուրքիայի թշնամիների մեջ, որ թուրքական կիսալուսինը ճեղքի աշխարհի խաղաղությունն ու մահ սփռի գյավուրների մեջ, որոնք ցանկանում են խոչընդոտել թուրքական հաղթարշավը:

Արեւը նորից մի շրջան կատարեց բազմանշանակ ու հինավուրց երկրագնդի շուրջ: Հաջորդ լուսաբացին կատարվեց այն, ինչ պիտի կատարվեր, որը սարսափ առաջացրեց թուրք գինվորականության շրջանում եւ ամենակարեւորը՝ անվտանգությունն ու անկարողության զգացողությունն թուրքական ուժի նկատմամբ: Հետախուզության պետը սարսափից կապտած դեմքով ընկավ Օմար փաշայի սենյակը.

- Փաշա', փաշա', ը', ը', ը', ը' ...

- Ի՞նչ ես մկկում, տո' հեյվարա, ի՞նչ է պատահել, աշխարհի վե՞րջն է ...

- Հա', փաշա, հա', բերանս չի գորում, որ ասեմ պատահածը:

Օմար փաշան վեր կացավ գրասեղանի ետեւից եւ ընդհուպ մոտեցավ սպային: Ճուռ հայացքով չափում էր նրա երկտակված կերպարանը: Երեւում էր, որ ցանկանում է ծեծել, ջարդել հետախույզին, բայց զսպում է իրեն:

- Տո', լսիր, ի՞նչ ես բոզ կնկա նման քամակ խաղացնում: Ի՞նչ է եղել, ասա եւ չքվիր այստեղից: Թե չէ ես քեզ ոչ միայն կծեծիմ, այլ կզնդակահարեմ, հուրախություն հայ ֆիդայիների, որոնք միեւնույն է քեզ թխկացնելու եմ այն հինգ ապուշների նման, որոնք ոտքով - գլխով կորան, ցնդեցին, շոգիացան ...

- Սրանք էլ են կորել, փաշա, չկան, - հեծեծեց սպան:

- Ովքե՞ր, ովքե՞ր են կորել, ասա' ...

- Կախվածները չկան, կորել են, փաշա ... Իսկ փոխարեն կախվել են պահակող ասկյարները ...

- Ի՞նչ, ի՞նչ, - թնդաց բինբաշին եւ այնպես հրեց սպային, որ նա ընկավ աթոռին, - խոզեր, էշեր, դուք մա՞րդ եք, դուք ապրելու իրավունք ունե՞ք ... Ո՞վ է տեսել թուրք ասկյարը մեռելների հետ փոխանակվի եւ կախվի նրանց փոխարեն: Կառքը, կառքը պատրաստեք, Նազըմ բեյին իմաց տվեք, գնացինք ...

- Ո՞՞ր, փաշա, առանց հրաձիգների ուղեկցության չգնաք դեպքի վայրը, նրանք այնտեղ կլինեն ...

- Ովքե՞ր, այ խելոք, ովքե՞ր կլինեն, չլինի կարծում ես կախվածները ...

- Ֆիդայիները, գոռնափշտիկները, նրանք հեռու գնացած չեն լինի, փաշա, նրանք քաղաքում կլինեն, փաշա ...

«Երեւի էս ապուշը ճիշտ է ասում, շտապել հարկավոր չէ: Երեւում է հայերը հեշտ մարդիկ չեն: Իրենց մեռելները հանել են եւ մերոնց կախել: Սուսուփուս, առանց կրակոցի, առանց պետական հիմներ նվազելու, առանց հետախուզության սպաներ ունենալու ...»:

Բինբաշին ծլնգացրեց սեղանին դրված զանգը: Հերթապահ սպան մտավ:

- Կանչիր շտաբի պետին՝ Նազըմ Բեյին: Առաջին գումարտակի առա-

ջին վաշտի առաջին դասակը «իգենի» կարգով շարել եւ սպասել ինձ:

Քիչ հետո մտավ Նազըմ բեյը, հոգնատանջ էր դեմքը, երեւում էր կարգին չէր տրամադրությունը:

- Լսե՞լ ես, երեւի լսել ես, որ քեֆդ տեղը չէ ...

- Լսել եմ, եւ չասեմք, թե զարմացած եմ, ավելի շուտ զայրացած եմ ...

Ես արդեն եղել եմ այնտեղ, նայել եմ տեղանքը: Ախր, նման օպերացիա կարող են կատարել միայն Աիրիմանի զավակները, միայն չարքերը: Լայն, անմարդ տեղանք է, մեյդան, նույնիսկ հավքը չի կարող աննկատ մտնել այդ մեյդանը: Երեք զույգ աչք հսկում են, այն էլ ամառային լուսնկա գիշերով: Բաց, անշրջանակ պատուհաններից հրապարակին է նայում հերթապահ մի ամբողջ դասակ, դասակապետ սպայի գլխավորությամբ: Եվ բոլորը մինչեւ ատամները զինված, կռվի ու սպանության հազար կամուրջ անցած անկյարներ: Սրանց ներկայությամբ նախ խեղդել են պահակներին, հետո իջեցրել կախվածներին, հետո կախել պահակներին, փոխել մեղավորների տեղերը եւ գողանալով իրենց ընկերների դիակները՝ անհետացել: Այս ամբողջ աշխատանքը կատարվել է անձայն, առանց արյան, առանց կրակոցի: Ա՛յ թե ինչպիսին պետք է լիներ մեր անկյարը ...

Օմար փաշան նայեց նրան: Հայացքը բութ էր, մշուշված, ասես չէր հասկացել շտաբի պետին: Ասես չէր հավատում նրան: Մի քանի անգամ չափեց առանձնասենյակի լայնքն ու երկայնքը եւ եկավ ու կանգնեց Նազըմ բեյի առջեւ:

- Գիտե՞ս, բեյ, ես չեմ կարող հավատալ, որ մարդիկ ի վիճակի են այրքան մաքուր աշխատել: Ես անընդհատ մտածում եմ, որ չլինի այդ սրիկա հայերը իրենց մարդն ունեն մեր զորամասում: Հետո գլխի ընկա, որ դա բացառված է: Մեր ավանակները եթե գործին խառնվեին, հազիվ թե նման մաքուր գործողություն կարողանային իրականացնել հայերը: Նրանք որքան ես գլխի եմ ընկնում քվյոր են, մի երկու, երեք տասնյակ մարդ եւ որքան մաքուր են աշխատում: Ես շատ ուրախացա, երբ մեզ հաջողվեց մեր գործակալն ունենալ նրանց մեջ: Հավատացած էի, որ արդեն առանց դժվարության նրանց խումբը կվերացնենք: Սակայն արդեն չեմ հավատում մեր հաջողությանը: Դուրս է գալիս, որ մի քանի հոգով այդ շանորդիները կամաց մաշում են մեր զորամասը: Ասես դիրքային կռիվ են մղում մեր դեմ, այն տարբերությամբ, որ իրենք մեզ տեսնում են, մենք նրանց՝ ոչ: Մի քանի օր առաջ հինգ սպաներ ուղքով - գլխով կորան, այսօր երեք զինվոր, որոնցից մեկը ենթասպա կախվել են: Այս դեպքերից առաջ, թե որքան կորուստներ ենք ունեցել, միայն Ալլահը գիտի: Ո՞վ է տեսել, որ հաղթողները պարտվեն պարտվողներից: Ո՞վ է տեսել առանց զենք բանեցնելու փորձված զինվորներին սպանեն ու կախեն:

- Փաշա, ինչպես երեւում է թուլությունը, ավելի ճիշտ թույլը, պարտվողն ունի իր գոյատեւելու տրամաբանությունը: Երբ այլեւս նա հույս չունի բաց կռվում իր ուժերը չափելու իր թշնամու հետ, ընտրում է իր ստրատեգիան, որ ծանոթ չէ նույնիսկ այնպիսի փորձված զինվորականների, ինչպիսին ես, դու, մյուս փաշաները: Հայերը որոշել են եւ մեզ դեմ են անում կռվի

մի տեսակ, որը չնայած մեր առավելությանը՝ հաղթահարելը վեր է մեր ուժից: Դա այսպես կոչված ֆիդայական շարժման ջգովախքյան տարբերակն է, որը մարտավարության հնարամտությունը հասցնում է ոսկերչական նրբության, որ սակայն այս պարագայում ունի իր մեծ թերությունը, չի կարող գործածվել մեծամասշտաբ ռազմական գործողությունների ժամանակ:

- Դու միանգամայն ճիշտ ես, բեյ, բայց այս ոչ այնքան փոքր ու մանր կծոցները նախ՝ թունավոր են եւ ի զորու են բարոյալքելու բանակը, զորամասը, որ ցուլի ուժ ունի եւ, ցավոք սրտի, ցուլի խելք: Մենք մեր ուժին վստահ ցանկանում ենք պոզահարել մեր թշնամուն, բայց արի ու տես, որ նրա փոքրությունը, սակավությունը փրկում է նրան եւ ջլատում ու քայքայում մեր ուժերը: Հաճախ մեր եզան պոզերը հանդիպում են քարերի եւ ջարդում ու ջարդվում են, խրվում հողի մեջ, եւ բանտվում, առանց դիպչելու այն փոքրիկ գազանին, որ պարբերաբար կրծում է, արյունոտում մեր հսկայական մարմինը: Կռվի այս տեսակը տես ի՛նչ օրի է հասցրել մեր զորամասը: Նույնիսկ դատարկ քաղաքում զինված մարդիկ մուտք չունեն, կամ վախենում են , կամ եթե հանդգնում են՝ ահա նրանց հանդգնությունը պատժվում է: Քաղաքի տերը մենք չենք, այլ ուրվականները, զոյություն չունեցող ուժերը, մի խոսքով շեյթանի զավակները, որոնց ձեռքին մենք խամաճիկներ ենք դարձել ...

- Չե՞ս գտնում, փաշա, որ հայկական հարցը մեզ բարոյապես կարող է տանել գերեզման: Բռնագաղթերն ու ջարդերը արդեն դառնում են աշխարհի սեփականությունը, արդեն լսելի են աշխարհում: Այս հարցի ծանրագույն զարգացումը կարող է վարկաբեկել մեր կայսրությանը, խանգարել աշխարհի հետ ունեցած նրա առնչություններին: Հայերն աշխարհին հայտնի ժողովուրդ են եւ, իմ կարծիքով, թույլ չեն տա մեզ այս հարցը կլլելու եւ մարսելու առանց ստամոքսն ու առողջությունը վնասելու: Միաժամանակ, հայերը զենքը երբեք վայր չեն դնի. ե՛լ ռազմական, ե՛լ իրավական, ե՛լ դիվանագիտական եւ, իվերջո, նաեւ բարոյական առումներով: Գուցե առարկեք, թե հայերն աշխարհում տեսակարար կշիռ չունեն, որ նման հարցերում նրանց սատարել չի կարող նաեւ նրանց չորս - հինգ հազարամյա հնությունը, եւ միշտ չէ, որ հին գինին թնդանում է, այն նաեւ քացախում է: Բայց, փաշա, չպետք է մոռանալ, որ աշխարհը գնում է դեմոկրատացման, ժողովրդավարական ճանապարհով, այդ են ապացուցում նաեւ քաղաքական տեղաշարժերը, որոնց զարգացումն այսօր անգուշակելի է եւ անկառավարելի: Հիմա աշխարհը դեռ պատրաստ չէ քննարկելու ջարդերը եւ նմանատիպ հարցեր: Աշխարհը վերաբաժանման, հին հայացքների վերասերման, նոր գաղափարների ստեղծման ծանր հոգսերի մեջ է: Գուցե հետո մարդկությունն արթնանա եւ փորձի գնահատել կատարվածը, բայց «հետոն» մեզ հետ գործ չունի: Մեծ ժամանակ է հարկավոր մարդկությանը խելքի գալու, մանավանդ անցյալը վերանայելու համար: Իսկ այն ժամանակ ո՞վ գիտե ինչ կլինի. կամ էլը կսատկի, կամ իշատերը: Մենք պետք է վերջնականապես լուծենք հայկական հարցը: Չկան հայեր, չկա հայկական հարց: Մենք պարտավոր ենք ապրել այսօրով: Մենք այսօրվա պատասխանատուն ենք: Վաղը ուրիշինն է, վաղվա մասին

թող մտածի վաղվա սերունդը:

- Քո անհանգստությունը ես չեմ բաժանում, բայ: Ռուսական հեղափոխությունը, որի իմաստը ես չեմ հասկանում, որը վախեցրել է աշխարհի մանավանդ բուրժուազիային, մեր նկատմամբ բարյացակամ դիրքորոշում ունի: Մենք թույլ ենք, պարտված պետություն ենք: Մեր ուժը մենք չափում ենք հայերի նկատմամբ ունեցած մեր առավելությամբ կամ թուլությամբ: Մենք մեծերի, հզորների կազմից դուրս ենք ընկել: Խայտառակ պարտություններ՝ հայերից, նաեւ հույներից: Ռուսները ցանկանում են, որ մենք կարգի բերենք մեր հզորությունը, չդառնանք քար՝ ընկած եվրոպայի եւ Ասիայի սահմանագծին, այլ հավասար իրավունքով, պանթուրքիստական ծրագրով ընթանանք հզորության ճանապարհով:

- Ասում են՝ այդ կոմունիստների Լենին անունով ղեկավարը պատրաստ է մեր ամեն ցանկությունը կատարել, միայն թուրքիան բռնի այն ճանապարհը, որով ընթանում է Ռուսաստանը, - խոսեց Նազըմ բեյը, - վերջերս մի թերթ էր ընկել իմ ձեռքը: Նա ուրիշ բան է գրում ռուսների մասին: Ասում է՝ Ռուսաստանում սով է ու խառնակություն, անարխիա ու տեռոր, սկսվել է քաղաքացիական պատերազմ, ով ում հետ է՝ հայտնի չէ, շուներ տիրոջը չի ճանաչում: Կոմունիստները ցանկանում են, որ աշխարհում հարուստ ու աղքատ չլինի, տերեր ու ծառաներ չլինեն, շահագործող ու շահագործվողներ չլինեն, բոլորը լինեն հավասար: Հայտնի չէ, թե ինչպես է ուզում Լենինն այդ ծրագիրն իրականացնել: Խելքիս չի պառկում այդ ամենը: Ի՞նչ է ուզում անել Լենինը. գերմաներեն թերթում գրված է, թե դեմոկրատացման ճանապարհով: Հետո ավելացնում է, որ երկու ճանապարհն էլ հակացուցված են մման հասարակարգ կառուցելու համար: Ռիբեն, Լենինը պիտի ընտրի երրորդ ուղի, որն անժանոթ է պատմությանը: Դա մման հասարակարգի արագընթաց խորտակման պատճառ կդառնա: Զգիտեմ, փաշա, ոչինչ պարզ չէ, գոնե իմ համար: Քաղաքականությամբ զբաղվողներին Գերմանիայում որպես խռովարարների եւ պետության հզորությունը թուլացնողների բանտարկում էին, ենթարկում խստագույն պատիժների: Ինչո՞ւ է Լենինը ցանկանում իր կոմունիստական գաղափարներով սիրաշահել Քեմալ փաշային, չեմ հասկանում: Ինձ թվում է, որ նա պատրաստ է նույնիսկ կաշառք առաջարկել Քեմալին, զորացնել նրան, եթե վերջինս համաձայնվի իր պահանջներին ...

- Եթե Ռուսաստանը ցանկանում է լավություն անել թուրքիային, թող օգնի նրան, - ընդմիջեց Օմար փաշան, - կենսագործելու մեր պանթուրքիստական ծրագիրը, որի իրականացումը մենք սկսել ենք բավական հաջողությամբ՝ լուծելով հայկական հարցը մեր երկրում: Մնում է այդ ծրագրի երկրորդ մասը. Արեւելյան Հայաստանը ոչնչացնելը, որ մեծապես կախված է Լենինից: Հետո, եթե Լենինը օգնի մեծ թուրքիայի ստեղծմանը՝ Զինաստանի տարածքներից մինչեւ Եվրոպայի տարածքները, ես իսկապես կոմունիստ կդառնամ, թե չէ օգնե՛լ... Երեւի այդ կոմունիստական գաղափարները մեծ դիմադրության են հանդիպում հզոր պետությունների եւ հենց Ռուսաստանի բուրժուազիայի կողմից, որ Լենինը ձեռքը փրփուրներին է գցում՝ չխեղդվե-

լու համար: Թե չէ Ռուսաստանը պարտված թուրքիային ինչո՞ւ պիտի լավություն անի, մեր քեռի՞ն է, թե քավորը: Մեծ թուրքիան եթե այսօր կորցրել է իր վեհությունն ու հզորությունը, մեղավորը միշտ էլ եղել ու մնում է Ռուսաստանը: Այնպես, որ մտածել է պետք այդ լավության մասին, որ հանկարծ չլինի թե հզոր Ռուսաստանը կլլի խեղճացած թուրքիային եւ դարձնի իր ծայրամասային գաղութներից մեկը:

- Չգիտեմ, փաշա, - խոսեց Նազըմ բեյը, - ասում են խոսքը ժայր չունի, բազմածայր է: Հայ վրիժառուններից հասանք մինչեւ մեծ թուրքիայի վերականգնմանը: Կապրենք՝ կտեսնենք: Ինձ որ հարցնեն՝ Ռուսաստանի հետ պետք է համաձայնենք: Նա ցանկանում է, որ կոմունիստական հասարակարգ կառուցենք, ի՞նչ հժժվար բան է համաձայնվելը: Եթե նա պատրաստ է մեզ օգնելու, նրան խաբելն ու հզորանալը, կարծում եմ ոչ միայն մեր սրտով կլինի, այլեւ կարժանանանք Ալլահի օրհնությանը:

* * *

Կառքը եւ հեծյալների ջոկատը շտաբի դռանը սպասում էին նրանց: Անցան ոչ խոր ծորը, անցան հինավուրց բերդի առջեւով եւ մտան քաղաք: Կենտրոնական փողոցը (չարսուն) ավարտվում էր ռուսական եկեղեցով եւ նրա առջեւ բացվող հրապարակով, ուր տեղի էր ունեցել գիշերային ողբերգությունը: Կախված ասկյարների կապտած եւ այլձնդակված դեմքերը տեսնելով, Օմար փաշան, այդ հին գայլը, սրտի նվաղում ունեցավ: Նա զույգ ափերով ծածկեց դեմքը, որ չտեսնի այդ զարհուրելի պատկերը եւ թուլացած հենվեց կառքի փափուկ բարձերին: Հակառակի նման մի ուրախ, ոսկեգույն արեւ կախվել էր լեռնաշխարհի վրա եւ աշխատում էր ամայի քաղաքը կենդանացնել իր տաք ու խաղացկուն շողերով: Կառքը կանգ էր առել կախաղանից մի հինգ - վեց մետր հեռավորության վրա: Օմար փաշան անշարժ նստած էր նույն դիրքով՝ դեմքն ափերի մեջ:

Նազըմ բեյն անհանգստացավ.

- Դու վատ ես զգում, փաշա: Գուցե հե՞տ դառնանք ...

- Ոչինչ, Նազըմ բեյ, ջղերս արդեն չեն դիմանում, երեւի ծերանում եմ... «Ծեր աղվես, նման տեսարանները քեզ համար սովորական են, ինչպես առօրյա հացն ու ջուրը, սովորական, ինչպես քո բերանից թափվող հայիռյանքը: Չեմ հասկանում, ինչպես հանկարծ գթություն իջավ քո պաղ սրտին, երբ մարդկային, նույնիսկ յուրայինների տանջանքները քո մեջ վայրենի խրախճանքի զգացողություն են առաջ բերում: Դերասանություն, ո՛չ, ո՛չ, անօգնականության զգացողությունը՝ վիրավորանք է հասցնում ինքնասիրությանդ ...» :

- Ետ դառնանք, փաշա ...

- Չէ՛, չէ՛, Նազըմ բեյ, ես իրոք վատ եմ զգում, բայց ոչ այն պատճառով, որ չեմ կարողանում նայել մեռած մարդկանց: Մեռածներն իմ աչքին միշտ էլ ավելի մարդկային են երեւացել, ավելի տանելի, քան ողջերը, որոնց

մեջ մեղավորներ տեսնելով՝ նույնիսկ կասկածելով սպանել են, որպեսզի ավելորդ հոգսից ազատվեն: Ինձ համար մարդասիրությունն այն է, երբ դու քո եւ քո երկրի շահերին բախվող յուրաքանչյուր արդար ու անարդար մարդկանց ուղարկում ես շեթանին հավերժական դոճաղ դառնալու ...

- Դու հիվանդ ես, փաշա՛, ես իրոք զգում եմ, որ այս կախված անմեղ տղաները քո մեջ գութ ու խղճահարություն են արթնացրել: Դու պիտի հանգստանաս: Այս գործով ստիպված եմ զբաղվել ինքս, զանց առնելով հետախուզությանը, որովհետեւ արդեն մի բուռ մարդիկ չափն անցել են, չեն բռնվում ...

- Դու քեզ իզուր փորձության մի ենթարկիր, կվարկաբեկվես, Նազըմ բեյ, քո առաջընթացի առջեւ քար մի զցիր: Տուրն իր ճամփով է ընթանում, իսկ նոր հուևն փորելը մեր գործը չէ: Ես մեծ ճակատամարտերի մեջ անգամ չեմ ունեցել այն զգացողությունը, որ ունեն այս դատարկ սանջակում, այս ամայի քաղաքում: Թիկունքիս միշտ զգում եմ դաշույնների սուր սայրերի ծակծկոցները, սրտիս մեջ՝ զնդակների մխրճվելը: Ես նման զգացողության չեմ դիմանա: Եթե չսպանեն էլ, սիրտս կպայթի, որովհետեւ նա հիմա դարձել է զնդակներով լեցուն մի տոպրակ ...

- Ո՛րեմն, զնացինք, փաշա ...

Կառքը շրջվեց եւ հետ սուրաց: Ծանապարիզ փոշոտ էր: Փոշին մանանեխի գույն ուներ եւ մանանեխի նման կսկծացնում էր: Փաշան հանկարծ խոսեց.

- Կարգադրիր այդ դժբախտներին իջեցնեն կախաղանից ...

- Արդեն կարգադրել եմ, փաշա:

Մինչեւ զորամաս հասնելը Օմար փաշան այլևս չխոսեց: Նա չխոսեց նաեւ առանձնասենյակում, ընկղմվեց բազկաթոռի մեջ ու մնաց: Նազըմ բեյը կանչեց սպասյակին, պատվիրեց, որ վերջինս բժիշկ հրավիրի, փաշան չթողեց:

- Մարմինս առողջ է, բեյ, հոգիս է խեղճացել, իսկ հոգու վրա բժիշկն ազդել չի կարող, մանավանդ մեր դասաբները: Ես մի հրաշալի հայ բժիշկ ունեի, այնպիսին, որ կարող էր մեռածին կենդանացնել: Ես հայերին չէի սիրում, բայց նրան սիրում էի ... Մի անգամ նույնիսկ սրտիս թաղանթի միջից կարողացավ հանել զնդակը: Մի քանի օր մեռած էի, նա կյանք տվեց ինձ: Հրաման եղավ ազատվել հայերից: Ես չուզեցի նրանից հրաժարվել: Չգիտեմ ինչ ճանապարհով այս փաստն ընկել էր Վեհիբ փաշայի ականջը, ինձ խաղք ու խայտառակ արեց, սպառնաց դատով ու դատաստանով: Ի՞նչ կարող էի անել, Նազըմ, իմ ձեռքով զնդակահարեցի իմ բարերարին: Ահա եւ քեզ թուրքական երախտագիտության արտահայտություն ... Էհ, ի՞նչ ասեմ, ասելու բան էլ չկա, երբ քայքայվում են մարդկանց ջղերը, դա առավելապես ծերության նշան է եւ ոչ միայն հոգևության: Եվ հոգնելու բան էլ չկա: Ամբողջ օրը փափուկ բազմոցների մեջ ընկողմանած նարգիլե ենք ծխում, սուրճ ենք խմում, թե մեր բախտից գոզալներ ընկան ձեռքներս, նրանց ենք սիրում: Մեզ արթուն են պահում այս հայերը: Սրանք էլ այնպիսի օյիմներ են սարքում

մեր գլխին, որ գլուխ չենք հանում: Բայց սրանց արագությունները, որ չլինեն, մենք կդադարենք զինվորներ լինելուց: Գիրացել ենք, Նազըմ բեյ, ես էլ, դու էլ, նույնիսկ այն կախված ասկյարները ...

Նազըմ բեյը դուռը կամացուկ ծածկեց իր հետեւից եւ դուրս եկավ, որովհետեւ Օմար փաշան արդեն ափլիբելով էր արտասանում վերջին բառերը, նա քնում էր: Նազըմ բեյն այնպիսի զգացողություն ուներ, ասես տանուլ էր տվել մի մեծ խաղ: Նրա սրտում երկիշխանություն էր: Ատելությունը հայերի նկատմամբ այնքան էր ահագնացել, որ սպառնում էր աղոտել նույնիսկ գոզալ Ջեյնաբի շքեղ պատկերը: Նույնիսկ մտքով կռվում էր նրա հետ. նրա հայրենակիցներն անհնազանդներ են, որ ինքն էլ ամուսնական կապը համարում է հաղթական թուրքի սիրուց ավելի ամուր: Նեղանում էր, որ նա շարունակում էր դիմադրել ...

* * *

Սեւ Արսենն արդեն չէր կասկածում, որ խմբի տղաների եւ խոսպիեցի հույնի կորուստը դավադրության եւ մատնության հետեւանք է: Խումբն առաջին անգամ կորուստներ ունեցավ: Փոքրիկ խմբի համար երկու մարտիկի կորուստը բավական շոշափելի էր: Այդ օրերին խումբը ստացավ նաեւ համալրում, որ բավական մխիթարական, լավատեսական տրամադրություն հարդրեց տղաներին: Քաղաքամերձ Մուրջախեթ գյուղից երեք երիտասարդ

- Լսիր, Քամի, այդպես առանց ճանաչելու, առանց ստուգելու, դու ինչպե՞ս կարող ես երաշխավորել այս տղաների խմբին անդամագրվելու, - առանց չարության խոսեց խմբապետը:

- Իսկ դու ինձ հավատո՞ւմ ես, խմբապետ:

- Ասենք հավատում եմ, հետո՞ ...

- Ես էլ նրանց եմ հավատում: Ես նրանց վաղուց եմ ճանաչում: Նրանց գյուղում հորս հետ եղել եմ մի քանի անգամ: Մաղ եւ գյուղատնտեսական գործիքներ ու տնային իրեր ենք տարել Մուրջախեթ, գիշերել ենք այ սրանց տանը, - Դարուքը մատով ցույց տվեց նրանցից մեկին, որին Ավթանդիլ էին կոչում, - մեզ նման քրիստոնյա են, մեզ նման թուրքին գերի: Գյուղը գաղթել է, սրանք հինգ հոգով մնացել են պարտիզանություն անելու համար: Վերջերս երկու ընկեր սպանվել են, ընկնելով թուրք պարեկի դարանը: Ընկերներին գերեզմանելուց հետո որոշել են միանալ քաղաքում գործող ֆիդայական խմբին եւ երդվել՝ լուծել սպանված ընկերների վրեժը՝ յուրաքանչյուրն երկու ասկյար սպանելով:

Վրացի երիտասարդները գլխի շարժումով հաստատում էին Քամի Դարուքի բնութագիրն իրենց մասին: Սեւ Արսենը նայում էր նրանց տանջահար տեսքին եւ մտածում, որ նրանք երկար ժամանակ տառապել են քաղցից, անքնությունից, նաեւ թուրքերի հետապնդումից: Նիհարությունը ուղղակի ոսկրացրել էր նրանց, սակայն վրացական հպարտ ոգին կայուն նստվածք ուներ նրանց հայացքում.

- Որքան հասկացա, դուք հայերեն հասկանում եք, ճի՞շտ է ...

- Ամոթ չէ՞ հայերի հետ ապրել ու հայերեն չիմանալ: Օրվա կեսը վրացերեն ենք խոսում, կեսը՝ հայերեն, Չանդուրան էլ մեր հարեւան գյուղն է: Մեր մայրենի լեզուն հայերենն ու վրացերենն են միաժամանակ: Այդպիսին է վիճակը, ուզած - չուզած: - Եվ ծիծաղեց Ավթանդիլը: Ծիծաղեց նաեւ խմբապետը:

- Այ տղա, էս վրացիներդ ինչ հետաքրքիր ժողովուրդ եք: Օրինակ դու, մաքուր խոսում ես հայերեն, բայց ստացվում է վրացերեն: Արդյունքում մի նոր լեզու՝ վիրահայերեն, ճի՞շտ է ...

- Եիշտ է, ճիշտ է, - համաձայնվեցին վրացիները եւ հետո վրացերեն,

- դիպիս բատոնո (ճիշտ է պարոն):

- Մի հարց եւս. ի՞նչ գինվածություն, զենքեր ունեք ...

- Մի հրացան, որ թուրքից ենք խլել: Խանչալով սպանել ենք ու խլել:

Բոլորս ունենք մեկական խանչալ:

- Լսիր, Հարութ, տղերքին կտաք հրացաններ, հիմա տարեք կերակրեք, էսօր թող հանգստանան, վաղվանից կմտածենք նրանց մյուս հարցերի մասին:

Վրացիներից մեկն առաջ եկավ.

- Խմբապետ, խնդիրք ունեմ, եթե կարելի է երեքիս մի բաժանեք, ուզում ենք միասին լինել ...

- Միասին եղեք, եթե այդպես եք կամենում: Հա, Հարութ, տղաներին տեղավորելուց հետո չուշանաս, գտիր եւ ավազահանք բեր Լոմանին, ես այնտեղ եմ լինելու ...

Տղաները գնացին, Սեւ Արսենը մտախոգ էր: Նա մտածում էր մատուցան, մարդկային նենգության մասին: Եթե երեքը զոհ գնային թշնամական զնդակներին եւ ընկնեին սովորական մարտում, գուցե կորուստն այսքան ծանր չլիներ եւ չճմլեր նրա սիրտը: Մի քանի տասնյակ մարտիկների մեջ դավաճանի, մատնիչի գոյությունը ոչ միայն անհանդուրժելի, այլ խիստ մտահոգիչ էր: Դժվար էր, բայց պետք էր, պարտադիր էր չարագործին պատժելը, թե չէ ցավը, որ ընկնում է մարմնի մեջ, եթե չկանխվի՝ կկործանի մարդուն: Հարկավոր է կտրել թարախածին պալարը, դա հարկավոր է նաեւ հոգու մաքրության համար: Վարակը չպետք է տարածվի: Բայց ասելն է հեշտ, արի եւ իրագործիր պատիժը մի մարդու նկատմամբ որին գիտես, հետև աղուհաց ես կտրել, դաժան օրեր անցկացրել, տառապանք ու ուրախություն կիսել, դժվար է: Բայց նա ինչու կարողացավ թքել այդ բոլորի վրա. գործի սրբության, ընկերների կյանքի, ի վերջո այս ամայացած կողոպտված, բռնաբարված եւ սիրելի հողակտորի վրա: Ստիպե՛լ էին: Այո՛: Ստիպվա՞ծ էր: Ո՛չ: Կարո՞ղ էր չմատնել: Իհարկե: Մատնելով, նա իրեն հռչակեց դավաճան, եւ դատապարտվեց պատժի առավելագույն չափին՝ մահվան: Նա պիտի մեռնի: Չմատներ՝ ընկերները, խումբը իրենց կյանքի գնով կպահեին, կպաշտպանեին: Դավաճանի խարանի փոխարեն նրա ճակատը կգարդարեր հայրենասերի պսակը: Իսկ հիմա նա պիտի կրի այն պատիժը, որին արժանի է:

Արսենը խոսպիա գյուղից, որտեղ եկել էր մխիթարելու սպանված

հույնի ընտանիքին, պետք է մեկներ ավագահանք, հանդիպելու Լոմանին եւ ի կատար ածելու ծանր դատավճիռը, որ որոշել էր ֆիդայական խումբը: Նա խնդրեց, որ թամբեն Խոսպիա գյուղում պահվող իր նժույգը: Եվ երբ արեւը մոտեցել էր զենիթին, վարձեց դեպի ավագահանք:

... Հարութը եւ Լոմանը նստել էին կանաչին: Սպասում էին իրեն: «Եթե դատարան ունենայինք պիտի որ հարցաքննվեր մեղադրյալը, վկաների, փաստերի ճնշման տակ ընդունելու կամ ժխտելու իր հանցանքը: Պետք է, որ դատարանը լսեր երկու կողմերին, նրանց, ովքեր դրդել էին մեղադրյալին հանցագործ դառնալ: Բայց դատական արարողությունը այս պարագայում իրագործելու հնարավորություն չկար: Միակ վկան, եւ միակ մեղադրողը Լոմանի ընկերն էր, Քամի Հարութը, որ արցունքն աչքերին հետամուտ էր եղել իր երեկվա ընկերոջ դավաճանական գործողություններին: Տեսել էր նրան հետախուզության սպայի հետ: Լսել նրանց զաղտնի խոսակցությունը, ուր Լոմանը առաջադրանք էր ստացել սպանելու Սեւ Արսենին, իբր պատահաբար ատրճանակը մաքրելու պահին: Այդ խոսակցությունը Քամի Հարութը լսել էր երկու - երեք քայլ հեռավորությունից, մթության մեջ, Պզտի ձորում: Սրբել էր ցասումից կրակված աչքերի արտասուքը, ցավից ծեծել գլուխը, որ զինված չի եղել, որ երկուսին էլ շան նման սատկացներ եւ քամու նման սուրացել է Սեւ Արսենին հայտնելու այդ զաղտնի առաջադրանքի մասին լուրը՝ բոլոր մանրամասնություններով: Եվ ահա նրանք հանդիպում են խմբապետին: Սեւ Արսենը չիջավ ձիուց: Բարեւեց: Նրա մոայլ դեմքին արեւը թափում էր իր ոսկին, ավելի ընդգծելով այն դաժան մռայլությունը, որ այս էլ ով իմանա քանի ամիս նստել ու չի իջնում այդ թիկնեղ, հաղթահասակ մարդու դեմքից: Սեւ մորուքը, որ հասնում է համարյա գոտկատեղը, այնքան է սեւ, որ նայելիս մուգ-կապույտ երանգ է ստանում մարդու աչքին, եւ ահեղ ու դաժան է հայացքը: Ծանոթ այդ հայացքը չգիտես ինչու սարսափեցրեց Լոմանին: «Իսկ եթե Աստված չանի, այս մարդը գիտե իմ մատնության մասին: Չէ՛, չէ՛, որտեղի՞ց պիտի իմանա: Պարզվում է, որ սրա գլուխը շատ թանկ գին ունի՝ հինգ հազար ոսկի: Եթե ինքն ստանա եւ գումարի արդեն ստացած հազար ոսկուն, կարող է թիֆլիսում կամ մի այլ տեղ խանութ բացել եւ աղայավարի ապրել մնացած ողջ կյանքը: Ինքը դեռ ջախել է, է՛ն Մանիկին մի անգամ սիրտ է բացել եւ աղջիկը ծիծաղել է վրան. «Քեզ էլ նայիր, ինձ էլ, ես արժանի՞ եմ քեզ Լոման»: Կտեսնենք, թե՛ ե՞ս արժանի չեմ քեզ, թե դու՛ ինձ ... Սպասիր, տես Լոմանը ինչե՛ր է անելու ...»: Հետո հայացքը առավ Արսենի հայացքին եւ սոսկաց. «Սա անպայման գիտի: Այս ինչ հայացք է՝ առանց զնդակի է սպանելու ինձ, սպանելու՛ է ...»: Ո՛ր հանկարծ փլվեց, փռվեց Սեւ Արսենի նժույգի առջեւ.

- Սեղավոր եմ, խմբապետ, մեղավոր եմ, դու գիտե՞ս ...

- Գիտեմ, Լոման, - մռլտաց, - մեղքիդ համար էլ դու պիտի մեռնես ... Պատաստվիր ...

- Բայց ես ապրել եմ ուզում, - հեծեծաց, - ապրել ...

- Իսկ այն երեքը, որոնց մատնեցիր, չէի՞ն ուզում ապրել: Ամբողջ խմ-

քին անհաց թողեցիր, նրանք չէի՞ն ուզում ապրել: Իսկ ինձ, որ արդեն ծախել ես հինգ հազար ոսկով, չե՞մ ուզում ապրել: Այն ութսուն հազար հայությունը, որ կոտորվում է այս օրհնված աշխարհից հեռու, օտարության մեջ, չի՞ ուզում ապրել, հը՞ ... -

- Սխալվել եմ, խմբապետ, սխալվել եմ ...

- Դա ավելի է քան սխալը, դավաճանություն է:

Այդ թույլերն ավազահանքից դուրս եկավ խմբի որդեգիր Գեուրզը, յոթ տարեկան մի մանչուկ, որը տարիներ անց համաքաղաքացիներին կպատմի իր աչքերի առջև կատարված դրամայի վերջին մանրամասները: Երեխայի երեւալը խուճապի է մատնում Սեւ Արսենին, որը շատ էր սիրում ու հոգում նրա համար: Իսկ երբ Քամի Յարութը հանկարծ նետվում է Լոմանի վրա եւ թափով հարվածում ծոցից ատրճանակը դուրս քաշող նրա ձեռքին, նորից ասես քնից արթնանում է Սեւ Արսենը: Ձինաթափված Լոմանին նա հրամայում է ոտքի կանգնել: «Լոմանի ոտքի կանգնելուն պես, - պատմում է Գեուրզը, - հանկարծ լսվեց օձի ֆշշո՞ց, թե՞ սուլոց, ասես փայլատակեց կայծակը: Նայեցի: Խմբապետի ձեռքում փայլատակեց ու մարեց սուրն ու ապա պահվեց պատյանի մեջ: Այնքան ահեղ էր հարվածը, որ Լոմանին բաժանեց երկու հավասար մասերի, եւ հորդեց արյունը: Այսպես է ավարտվել Լոմանի կյանքը, որ հայրենակիցների արյան վաճառքի գնով ցանկանում էր խանութ բացել Թիֆլիսում, ոսկով շլացնելով ամուսնանալ սիրուն Մանիկի հետ՝ անհաղորդ ու խլացած այն զոհերի տառապանքին, որոնցից երեքին նրա մատնությամբ կախեցին, եւ միայն Քամի Յարութի զգոնության շնորհիվ կանխվեցին հետագա ողբերգութունները: Սեւ Արսենը նույնիսկ չնայեց մատնիչի դիակին: Չզվանքով շրջեց դեմքն ու մոտեցավ Գեուրզին.

- Յո չվախեցա՞ր, բալիկ ջան ...

- Չգիտեմ ... - լացակունած ուսերը թոթվեց երեխան:

- Դու ստիպված կլինես հաշտվելու նման տեսարաններին, որդիս ...

Եվ մտրակեց ձիուն:

* * *

Ընդհարման ժամանակ Սեւ Արսենը վիրավորվեց: Տաք մարտ էր: Խումբը նախապատրաստված չէր այդ հանդիպմանը: Թուրքական ստորաբաժանումը եւ խմբի տղաները պարզապես ձորի ոլորանն անցնելիս դուրս եկան դեմ-դիմաց: Մարտը չընդունելն անկարելի էր: Խմբի տղաներն արագորեն ճանապարհի կողքի փոսերում դիրքավորվեցին: Թուրքերը նահանջեցին դեպի ոլորանը եւ հիմնական զոհերը տվեցին այն ժամանակ, երբ բաց տեղանքով դեսուդեն էին վազում, հարմար թաքստոցներում դիրքավորվելու համար: Չնայած ծանր կորուստներին թուրքերը կատաղի դիմադրություն էին ցույց տալիս: Գործը բարդանում էր նրանով, որ ստորաբաժանումը գնդացի ուներ եւ երեւի անսահմանափակ քանակով փամփուշտ, որովհետեւ ճանապարհամերձ փոսերում դիրքավորված հայ մարտիկների գլխավերե-

լում կրակահերթերի այնպիսի քամի էր խաղում, որ գլուխ բարձրացնելն անհնար էր: Գնդացիի գոյությունը մարտի նախաձեռնության հիմնական գործոնն էր, եւ թուրքերն այդ լավ էին հասկանում եւ անընդհատ գնդացիի ազահ երախը փամփուռ էին լցնում, որ նա թափում էր հայորդիների վրա:

- Շարքից հանել գնդացիրը, - Սեւ Արսենի հրամանը թեւածում էր շարքերի վրա:

- Շանորդին կրակը վարում է չերեւացող դիրքից եւ գլուխ բարձրացնելու հնարավորություն չի տալիս, որ կարողանանք հայտնաբերել եւ վնասագերծել ...

Խմբապետը շտապում էր: Մարտն ընթանում էր զորամասի տարածքից ոչ հեռու: Բացառված չէր, որ օգնական անսահմանափակ ուժեր կարող են ներքաշվել այս տուրուղմբոցի մեջ, եւ մի բուռ ֆիդայիները կրակի ուժգնությունից հալվեին ու ոչնչանային: Թուրքերն հայերին ոչնչացնելու այս հարմար առիթը բաց չեն թողնի եւ կաշխատեն վերջ տալ հայերի հանդուգն, անհանգստացնող գոյությանը եւ ազատվել այդ կաչուն գլխացավից, որի ախտորոշումը նույնն է հայկական հարց, որը կարծես թուրքական բանակի համար դառնում է անհաղթահարելի եւ հետեւաբար նրա ինքնասիրությունը շոշափող երեւույթ: Գնդացիրն անընդհատ ճշտում ու ճշգրտում էր կրակի ուղղությունը: Այս անգամ նա սկսեց հարվածել դիրքավորված խմբի վերելում խոյացած ժայռերին, որ գոնե բեկորների անձրեւով կարողանա վիրավորել, խեղճացնել, խեղել, շարքից հանել հայերին: Քարե անձրեւը, որ սկսվել էր մաղել տղաների վրա, ճիշտ հաշվարկի արդյունք չէր եւ համարյա ոչնչով չէր վնասում տղաներին: Ընդհակառակը, հեշտացնում էր նրանց գործը, հնարավորություն տալով մի պահ բարձրացնել գլուխները եւ զննել շրջապատը: Այս անգամ գնդացրային բուռը հայտնաբերվեց եւ դիպուկ հրացանային կրակը իրոք շարքից հանեց գնդացիրը: Ինչպես երեւում էր, շարքից դուրս էին եկել եւ գնդացրորդը, եւ գնդացիրը, հակառակ պարագայում գնդացրային կրակը կշարունակեր գնդացրային հաշվարկի երկրորդ համարը կամ մեկ այլ զինվոր: Գնդացիրը լռեց եւ, ըստ էության, նոր միայն արթնացան խմբի տղաները, որ դիպուկ նշանառությամբ սկսեցին շարքից հանել ասկյարներին եւ շատ չանցած ականատես եղան նրանց խուճապահար փախուստին: Սեւ Արսենն իր ձեռքով գնդակահարեց ստորաբաժանման հրամանատարին, որն ամենայն հավանականությամբ քաջ տղա էր երեւում, սակայն այնպիսի սուր եւ ճղճղան ձայն ուներ, որ ընդհանուր աղմուկի մեջ անգամ, լսելի էին հրամաններն ու մանավանդ հայիոյանքները, որ հիանալի հասկանում էին հայերը: Թուրք հրամանատարի սպանվելուց հետո, զգուշությունը մի պահ կորցրած բարձրացրեց աջը, որպեսզի դադարեցնի կրակը: Հարկադրական հրաման: Պետք էր խնայել զինամթերքը, որովհետեւ փամփուռն այս պարագային խմբի համար ավելի արժեքավոր էր, քան ատել թշնամուն, նրա պատճառած վնասը: Խմբի գոյությունը մեկ օրվա համար չէր. մանավանդ, որ թուրքական ստորաբաժանման կեսը անշարժացել էր ոլորանի ժայռատակին: Ձեռքը բարձրացնելուն պես, մի մոլորված, կույր

գնդակ եկավ ու խոցեց նրան: «Աջս շարքից հանեց, -ցավով մտածեց Արսենը, - ի՞նչ եմ անելու ...»: Մոտ սուրաց Քամի Հարուսթը.

- Վիրավորվել ես, խմբապետ ... Հարկավոր է արագ վիրակապել ... - դողդողաց տղայի ձայնը:

- Վիրակապիր, միայն շուտ եւ առանց ավելորդ հուզմունքի ու քնքշուքյան:

- Դե, գնացի՞նք ... - վեր կացավ տեղից Սեւ Արսենը, - եւ արագ հեռանալու քայտեղից, որովհետեւ ուր որ է, զորամասը կհասնի դեպքի վայրը ...

Նոր էին խմբի տղաները թողել իրենց դիրքերը, երբ որոտացին թնդանոթները եւ սկսեցին գնդակոծել այն տարածքը, ուր ընկած էին ֆիդայիները:

- Մեզ են կոտորում, - ցավով ծիծաղեց Սեւ Արսենը: Վերքը ցավում էր, թափանցիկ վերք էր, գնդակը ծակել էր դաստակի վերեւն ու դուրս եկել: «Միայն ոսկորի վնասվածք չլինի, մնացածը ոչինչ»: Նրան քարայր տարան, ինքն իվիճակի չէր բարձրանալու, ոչ էլ ցցվածքներով հարուստ այդ ժայռը ընկերներով կարող էին հաղթահարել ու բարձրացնել: Թուփալ Արսենն ասաց, որ հիմա ամենաապահով տեղը Եղիսաբեթի բնակարանն է: Եվ նրա ամուսինն էլ բժիշկ է, դրանից ավելի հարմար տեղ այս պարագայում անհնար էր պատկերացնել: Թող տեղավորվի նկուղում: Արսենը կտրականապես հրաժարվեց: Այդ տան վրա կասկածի մշույլ չպետք է ընկնի: Ինձ տարեք բերդի ձախակողմյան աշտարակը, մի քիչ հարթեցրեք, մի գիրկ խոտ փռեք, հետո կբերեք բժիշկ Սերգեյին, որ վերքս զննի: Եվ ամեն ինչ կգնա ջրի նման»: Տարան : Սարքեցին մի փափուկ տեղ, նույնիսկ գլխավերելը ծածկեցին, որ անձրեւից չթրջվի: Պահակություն սահմանեցին: Նրա խնամքը հանձնեցին Քամի Հարուսթին ու առողջություն ցանկանալով՝ գնացին իրենց բանին:

Խմբապետի ջերմությունը երեկոյան բարձրացավ: Չնայած առողջությանն ու հզոր կամքին, սկսվելու էր տենդը: Այդ մասին ինքն ասաց Քամի Հարուսթին, որ նստել էր նրա ոտքերի մոտ, մտահոգ ու սկսված: Երեկոյան եկավ Սերգեյը եւ իր հետ բերեց ոչ միայն դեղորայք, այլ թեյնիկով լիքը թեյ, ուտելիք եւ այլն: Տենդը սկսվել էր: Հիվանդը զառանցում էր: Նա հրամաններ էր արձակում եւ նեղանում էր, որ դրանք չեն կատարվում, Սերգեյին չճանաչեց, մոմի լույսն էլ հնարավորություն չէր տալիս, որ մարդիկ կարողանային տեսնել ու ճանաչել միմյանց: Սերգեյը վերքի զննումից հետո առանձնապես չմտահոգվեց: Ոսկրային ջարդվածքներ կամ վնասվածքներ նրա կարծիքով բացառվում էին: Թեյով լվաց վերքը: Դեղ տվեց եւ վիրակապեց: Մորու թեյը բոլորովին փոխեց վիրավորի վիճակն ու տրամադրությունը: Նա ասես արթնացավ, ժպտաց: Բժիշկը խնդրեց սեղմել իր ձեռքը, բայց ոչ այնքան ամուր, որ ցավի վերքը կամ արյունահոսություն սկսվի: Արդյունքից գոհ մնաց: Հիլը վնասված չէր, մատներն աշխատում էին: Երբ բժիշկը գնաց, վիրավորը խաղաղ քնած էր: Քնեց մինչեւ լուսաբաց: Արթնացավ ոչ վատ տրամադրությամբ, բայց ուտել չկարողացավ, ախորժակ չկար: Չնայած աչքերի զվարթուն կենդանությանը, դեմքը գունատ էր ու սմբած: Նրա համար շուտով թեյ բերին:

Խմեց ու աչքերը փակեց: Երկար ժամանակ փակ աչքերով կիսանհիդի մեջ, թերթում էր իր կյանքի էջերը: Նրանք արեւոտ էին, հեռու եւ այդ պատճառով էլ հեքիաթային, անիրական : Կարծես իր կյանքին չէր նայում, իր կյանքը չէր թերթում, այլ մեկ ուրիշինը, որ հարազատ էր իրեն, բայց այդ կյանքն իրենը չէր: Մի՞թե եղել է այդ երջանկությունը, որից ուռչում է սիրտը, որը նրան տանում է ինչ-որ արեւոտ ափեր, ուր չկա ապրելու եւ մեռնելու այս իրար ազուցված գիրկընդխառն ժամանակը, երբ մահը հաղթարշավում է, իսկ կյանքը դառնում է նրա հոշոտման առարկան: Մահն այսօր ունի թուրքի կերպարանք, որը բռնի մահը հռչակել է իր համար որպես կեցություն, որպես գոյության միջոց հային կյանքից հեռացնելու համար: Մահը սիրահարվել ու հետապնդում է հային: Մահը եկել եւ բռնել է իր աջը: Բայց ինքն անպաշտպան չէ: Կռվի մահվան դեմ: Իր երկիրն է անպաշտպան եւ իր ժողովուրդը: Ինքը ելել է պաշտպանելու նրանց, բայց իր զորությունը փոքր է: Իսկ մահը հնձում է իր հայրենակիցներին ու համաքաղաքացիներին, որոնք հեռուներում, ծննդավայրի պատկերները կոպերի տակ գնում են ու գնում դեպի անհայտի հեռուն: Ո՛չ, ո՛չ, ինքն իրավունք չունի նույնիսկ իր մտքում նման հուսահատություն ապրելու: Հայի ապրելու կամքը թրծվել է հազարամյակներում: Թուրքերը զուր են մահերգ երգում հային: Ջուր են գերեզման փորում նրա համար: Մի ժողովուրդ, որը հայրենիք ունի, ունի իր Աստվածն ու հավատը, իր լեզուն ու երգը, երբ նրա օրորոցները դատարկ չեն եւ բանուկ են գերեզմանները տանող հիշատակի ճանապարհները, այդ ժողովուրդը մեռնել չի կարող: Կբարձրանա Հայաստանը, կբարձրանա ոչ թե դատարկ տեղից, այլ հազար պորտալարով կապված իր մայր հողին, իր պատմությանը, իր սրբություններին, որի արգանդում մեծացող գալիք հազարամյակները նույն պորտալարերով սնվել են անցյալ հազարամյակներից, եւ անմահությունը նրա ժամանակներին ենթակա չէ եւ ժամանակներից չի վախենում: Տաքացավ Սեւ Արսենի սիրտը եւ ծանր պատկերներին փոխարինելու եկան սիրո, ջահելության գարնանային պատկերները: Գետը քրքջալով նետվում է քարից եւ արծաթ են ջրերը, Արեւիկը բոբիկ ոտներով մտել է ջուրը եւ խաղում է ալիքների հետ: Եվ ծիծաղում է:

- Ինչո՞ւ ես ծիծաղում, Արեւիկ ... -
 - Աշխարհն է ծիծաղում, Արսեն, դու էլ ծիծաղիր ...
 - Երբ դու ես ծիծաղում, Արեւիկ, ես ինչպե՞ս կարող եմ չծիծաղել ...
- Եվ ծիծաղում են հենց այնպես, անառիթ, ծիծաղում են, որովհետեւ չծիծաղել չեն կարող: Եվ սառը ջրով ցողում են իրար: Հետո վազում են սրբի մատուռը եւ մոմ վառում, երկու մոմ, իսկ երբ մոմերը թեքվում են եւ կրակե լեզուները մոտենում են իրար, ուրախանում են այնքան, որ համբուրվում են հենց մատուռում մոմերի հանգին, գլուխ գլխի եւ հանկարծ սթափվում: Սուրբ վայրում գուցե հարկավոր չէ համբուրվել, նեղացնել օրինապահ սրբերին:
- Արսեն, սուրբը չի՞ նեղանա ... Ախր, այստեղ համբուրվելու տեղ չէ ...
 - Ինչո՞ւ, Արեւիկ, ինչո՞ւ պիտի նեղանա: Ախր, մենք էլ ջահել, մեղք չգործած սրբեր ենք ...

- Այդպես մի խոսիր, Արսեն, մենք մեղավոր ենք, մենք օրը տաս անգամ համբուրվում ենք ...

- Հազար անգամ էլ համբուրվենք, միեւնույն է, մաքուր ենք սրբի նման: Սերն Աստված է ստեղծել, Արեւիկ, մի մոռանա ...

- Իսկապե՞ս, ինչ լավ է, որ նա է ստեղծել, էլ ինչո՞ւ են մեզ արգելում իրար հետ լինել, Արսեն ...

- Տե՛ս, մոմերն իրենց կրակով իրար ուտում են, սերն էլ կրակ է, վախում են սիրո կրակով վառենք մեր նամուսը ...

- Բան չհասկացա, Արսեն ... - Կմեծանաս, կիմանաս, - ծիծաղեց ինքը եւ ձեռք ձեռքի երջանիկ նորից վազեցին ձորի կանաչ ու թաց ճանապարհներով:

Այդ օրվանից մեկ ամիս անցած զնգաց նրանց հարսանիքը: Ի՞նչ հարսանիք էր: Թմրում էր դիւրը, երգում էին աղջիկ ու տղա: Ծաղկեփնջի նման բացվում էր աղջիկների պարը: Արսենն ինչպես մոռանա այդ օրը: Երջանկությունից այնպես էր թփրտում սիրտը, որ իրեն թվում էր, թե ուր որ է դուրս կթռչի եւ թռչնի նման կերգի այն երգը, որ ինքը չի կարողանում երգել, որովհետեւ ոչ բանաստեղծ է, ոչ էլ աշուղ: Մայրը նայում էր երջանիկ զույգին, օրհնանքի բառերը շուրթերին: Հետո մոտեցավ, համբուրեց հարսին ու որդուն եւ թեքվեց որդու ականջին

- Մեռնեմ ընտրությանդ, Արսեն, էս ինչ հուրի մալաք բերիր իմ տունը: Նայիր, որդիս, նայի՛ր ... Ասում են՝ նորահարսը ամենից սիրուն լինում է հարսանիքի գիշերը, նայի՛ր ...

Հիշողություններն ասես ազատեցին նրա հոգին կոշտությունից, եւ խենթացնող կարտոն ու քնքշությունն արտասուք ծլեցրին նրա այրվող աչքերից: Ահա աղջիկների ու տղաների պարերգող շղթաները ելան իրար հետ երգակրիվ տալու: Խումբը երգում է, ձայնակցում են նաեւ նորապսակները՝ Արեւիկն ու ինքը՝ երջանիկ նորափեսան:

Խումբը՝ *Ջավախեցի պզտի հարս,*

Կարմիր փուփուք, դեղին մաս,

Տղաները՝ *Յար, ախ ըլլիմ արեւ,*

Ամեն օրվա բարեւ ...

Աղջիկները՝ *Կուգես վատվող բոցդ ըլլիմ,*

Գիշեր-ցերեկ ծոցդ ըլլիմ, - հետեւում է զվարթ քրքիջը.

- Աղջի, գետի՛նը մտածներ, ամո՞թ է, վա՛յ ...

Կուգես օսկե ցեպդ ըլլիմ,

Կուգես քեբիդ ցեցն ըլլիմ ... - նորից տղաներին սպառնում

են աղջիկները: Եվ այնուհետեւ երբեք չեն թողնում, որ տղաները պարերգի նախածեռնությունը վերցնեն իրենց ձեռքը.

Արի ժայռերի տակով,

Ցոլա ծառերի տակով ...

Աղջի՛, բախտի տիրացիր,

Օսկե թախտի տիրացիր, - երգում են տղաները:

Պանդխտության չգնաս,

Անբախտության չգնաս,

Ո՛ր թե գնաս, այն գնաս,

Միշտ վերադարձ ունենաս ... - եզրափակում են աղջիկնե-

րը արտասովախառն աչքերով:

Արսենը հուզվեց: Աստված իմ, այս ինչ ժողովուրդ ենք, երջանկության մեջ անգամ արտասուք: Հարսանեկան ուրախության մեջ անգամ պանդխտության հեռանկար: Եվ այս ամենի հետ մի մեծ լավատեսություն, հումորի, սրամտության դողանջուն արտահայտություն: Մի երգի մեջ ժողովրդի կենսագրությունը, ժամանակի հրամայող ճշմարտությունը: Ո՛ր հարսանիքից մի քանի շաբաթ անց մի ահավոր եղելություն՝ պատերազմ: Առաջին համաշխարհային պատերազմ: Եվ իր զորակոչվելը: Արեւիկի արդեն ամպամած, բաժանման ցնվից գունատված դեմքը: Իրենց բաժանումը: Եվ պատերազմի ահեղ առօրյան: Իսկ ինչո՞ւ պիտի հիշի իր կյանքը, իր երջանկությունը, իր ժողովրդին կործանող այդ շանորդությունը: Ինչո՞ւ: Հարկադրական իր կռիվը, ստիպողականությունից ծնված հերոսություն, անիմաստ մարդասպանություն: Գեորգեւյան շքանշաններ: Մյուս կողմում՝ հայրենիքում Արեւիկի եւ իր ծնվող որդու մահը՝ ծննդաբերության ժամանակ, հետո՝ Արեւմտյան Հայաստանի կործանումը: Հոգեկան ճգնաժամի եւ ահազնացող վրեժի տարիներ: Փախուստ ցարական բանակից՝ դեպի Արեւմտյան Հայաստան: Ֆիդայական շարժումների հորձանուտը: Իր խոշտանգվող հայրենիքի, իր տարաբախտ ժողովրդի ցեղասպանությունը: Ինչպե՞ս չհիշել: Ո՞ր իրավունքով չհիշել: Իր երդումը՝ վրեժխնդիր լինել իր արմատահան ժողովրդի դահիճներից: Սուրը չդնել պատյան մինչեւ վերջին շունչը: Նույնիսկ մտքում իր Աստծո առջեւ երդվել է, թե քանի թուրք սրիկա է ցանկանում ուղարկել գրողի ծոցը: Այդ թվաքանակը իր գաղտնիքն է, իր երդումը: Եթե չկարողանա իրագործել իր վրեժը՝ իր գաղտնիքը կտանի՝ իր հետ գերեզման, իսկ եթե իրագործեց, կհայտնի ի լուր ընկերների, նաեւ հազարավոր զոհերի, որոնք վրեժ են բարբառում իրենց անթաղ ու թաղված կացարաններից, որ մի քիչ հանգստանան ողջերի հոգիները եւ նահատակների ոսկորները, որ փոքր ինչ դադարի այրելուց ու լափելուց իր հոգին: Վրեժը, որով ծնվում է հայ մանչուկը՝ հայ ֆիդային այդ վրեժով նետվում է թշնամու վրա եւ հայ ծերունին՝ գերեզման գնալուց առաջ ավանդում է հաջորդ սերնդին: Այն վրեժը, որը ծնվող հայի ապրելու ճիչն է, որը նույնիսկ անմեռ է հարյուրամյա նահատակների գերեզմաններում:

Իրեն թշնամիները, նույնիսկ ընկերները դաժան են համարում: Նրա աչքի առաջ թուրք օմբաշին փշրեց հայ մանչուկի գանգը: Իսկ ինքը խեղդեց օմբաշուն: Ի՞նչ աներ, համբուրե՞ր օմբաշու ձեռքերը, շնորհակալություն հայտներ նրան: Նազըմ բեյը եղիսաբեթին ասել է, որ Օմար փաշան քիչ է մնացել դառնար Սեւ Արսենի գերին, նրա ատելավառ հայացքից ասես գնդակահար է եղել. խանգարվել է քունը, խախտվել է հոգեկան անդորրը: Խելագարության նշաններն ակնառու են: Է՛, շանորդի, ո՞վ իմանա, որքա՞ն հայ մանուկներ, պապիկներ ու մամիկներ է թրատել այդ թուրք մարդակերը, եւ ոչ

մի անգամ երեւի չի արթնացել նրա գուրջը, չեն վնասվել նրա քար ջղերը, իսկ բավական էր իր կյանքի, իր մահվան դատավճիռը կարողար հայ հայրուկի հայացքում եւ նրա մեջ տեղի է ունեցել ժամանակավոր վերադարձ դեպի մարդ արարածը: Պարզվում է, որ նա ջղեր է ունեցել, որոնց առավել լարումից, ավելի ճիշտ վախից կորցրել է քունը: Պարզվում է այդ մարդակերպը նույնիսկ բանականութուն է ունեցել, որը հիմա կորցնում է: Իզուր աշխատանք, թող խելագարվի, որ գոնե մարդիկ իմանան, որ նա վայրի գազան չի եղել, թող չքնի, որ իմանա, որ մի ամբողջ ազնիվ ու հազարամյա ժողովուրդ այս էլ վեց հարյուր տարի է, ինչ թուրքերը թույլ չեն տալիս քուն ու դադարի, թեւեւ նա չի հասկանա իրենց ստորութիւնը, որովհետեւ նրա գլուխը լցված է պանթուրքիստական գեր իրավունքի հարցերով, որն ամփոփվում է՝ թուրքը պիտի ապրի եւ զորանա, իսկ հային տեղ չկա այս արեւի տակ: Թող խելագարվի: Ինչ իմանաս, թուրք խելագարը գուցե ավելի խելոք է թուրք իմաստունից:

* * *

Այդ օրը Արսենը համեմատաբար լավ էր զգում իրեն: Վերքի ցավին ընտելացել էր, թե ցավը չքվել էր, չգիտեր: Մութլուսին Չարութին համոզեց, որ իրեն զգում է ավելի առողջ, քան մինչեւ վիրավորվելը: Չարութի կասկածը փարատելու համար ձեռքն առավ հրացանը, հետ ու առաջ տվեց փակադակը: Թուրք վիրավոր ձեռքով դուրս քաշեց պատյանից եւ կոճղը, որ աթոռի տեղ էր ծառայում, նրա սրի հարվածից երկու կես եղավ: Սեւ Արսենը հազիվ զսպեց իրեն, սուր ցավից չճչալու համար, բայց Չարութի աչքից չվրիպեց նրա գունատվելն ու քրտնելը, որ արդյունք էին ահավոր ցավի: Նա անձայն սուրը վերցրեց Արսենի ձեռքից, որը հնազանդ իր ճակատագրին, առանց դիմադրելու տվեց Քամի Չարութին եւ նստեց իր խոտե անկողնու վրա: Չարութը չթաքցրեց իր դիտարկումները.

- Դուք սխալ բան կատարեցիք, խմբապետ: Դուք ցավեցրիք ձեր վերքն ու գուցե արյունոտեցիք այն: Դրանով դուք ուշացնում եք ձեր ապաքինումը: Ախր, ո՞ւմ էր հարկավոր այս ներկայացումը: Ձեր ինչի՞ն էր այն հարկավոր: Միեւնույն է, ես ձեր բժիշկը չեմ: Ձեր բժիշկը պայմանավորվածության համաձայն այստեղ կլինի երկու-երեք ժամ հետո, երբ թուրք զորքը բերդի առջեւով արդեն անցած ու գնացած կլինի հրաձգարան: Իսկ հիմա խնդրում եմ պառկել հանգստանալու ...

Նրա խոսքի ընթացքում Արսենը ծպտուն չհանեց: Չգուց էր տղայի խոսքերի ճշմարտությունը եւ քթի տակ ծպտում: Բայց վերքն, այնուամենայնիվ, ցավում էր այնքան, որ տղան ծպիտի տակ կարողանում էր տեսնել խմբապետի ցավը զսպելու ճիգերը:

- Լավ, Չարութ, արի հաշտվենք, էլ չեմ անի, - եւ բարձրացրեց ձեռքերը, - ես մեղա՛... Միայն մեկ խնդիրք ունեմ, քանի բժիշկը չի եկել, իջիր ձոր եւ Սառնաղբյուրի ջուր բեր, սառ ջուր խմել եմ ուզում ... Դու գիտես, որ այս էլ

երկրորդ, թե երրորդ օրն տաքություն չունեն ...

Քամի Չարութը ոտքը կախ գցեց: Ինչպե՞ս վարվել, գնա՞լ, թե չգնալ: Մերժել չէր կարող, գնալ՝ նույնպես ... «Ոնց որ երեխա լինի, «Սառ ջուր եմ ուզում ...»: Չի լինի, որ առողջանաս, հետո ուզես, ի՞նչ է հոգուդ է հասել: Գոնե բժիշկն այստեղ լիներ, նա կասեր, կձշտեր իմ անելիքը: Չէ՛, ես կգնամ, բայց այնքան կուշանամ, որ բժիշկն այստեղ կլինի ...»: Եվ դույլը վերցնելով դուրս եկավ ամրոցի աշտարակից:

Սեւ Արսենը լսում էր վերքի ցավի ծայրը: Արյունը սպիտակ փաթաթանի վրա կարմիր կակաչ էր նկարել: Մեջտեղը սեւ, որ գնդակի բացած անցքն էր եւ շուրջը՝ կարմիր: «Հիմարություն արի, էդ խեղճ երեխային էլ վախեցրի, մտահոգություն պատճառեցի ...»: Յետո պառկեց խոտին՝ ականջը ծայնի եւ միտքը՝ հուշերին: Քիչ անց նա քայլերի ծայն լսեց, բայց զգուշավոր էին այդ քայլերը: Աշտարակի հետեւի մուտքի առջեւ արդեն չորացած խոտերը խշրտացին: «Մերոնցից չէ: Օտար է: Դե՛, Արսեն ...» - թռավ ոտքի եւ սուրը քաշեց պատյանից: Մուտքը վարագուրված էր: Վարագույրը արագ ետ գնաց եւ երեւաց ասկյարի չսափրված ու կեղտոտ դեմքը: Հայացքը դիպավ Արսենի հայացքին եւ շանթահար կանգ առավ: Նույնիսկ հրացանն անկարող եղավ հանել ուսից ու բերել մարտական վիճակի: Արսենը ձեռքով արեց.

- Գյա՛լ, գյա՛լ, բուրյա (արի՛, արի՛ այստեղ), - ասաց:

Չինվորը հնազանդ առաջ եկավ: Յետո գտավ իրեն ու թուրքացավ, առաջին պահ զենք չտեսնելով Արսենի ձեռքին, իր հրացանի փոկից բռնած ցանկացավ դատաստանել նրան.

- Նա իստիերսըն, առվատնա ... - ասելով, այն է ցանկանում էր հրացանը գործի դնել, երբ սուլեց ու ֆշշաց Սեւ Արսենի սուրը, եւ անգլուխ զինվորը արյունով ոտքից-գլուխ ներկելով Արսենին, տապալվեց ներքեւ: «Լավ, այս տղան մենակ ի՞նչ էր անում այստեղ: Ո՞ր էն սրա ընկերները: Նրանք գուցե մոտիկում են, գուցե մի քիչ անց սկսեն որոնել իրենց ընկերոջը: Դուրս գանք գերեզմանի նմանվող այս աշտարակից ...» Եվ վերցնելով սուրն ու հրացանը դուրս եկավ իր բնից եւ գնաց դեպի ամրոցի Մեծ դուռը: Շրջակայքում ոչ ոք չկար: Առաջ գնաց եւ ոլորանին հասնելով նայեց Պզտի ձորի ճանապարհին, ուր մի քանի ասկյար սպիտակ ոչխարը գրկած իջնում էին ջրաղացի կողմը, ամենայն հավանականությամբ ծառերի տակ վայելելու խորովածը: «Ուրեմն, այս մեղավոր հոգին փնտրում էր թեթեւանալու տեղ եւ ընկավ իմ որջը»: Պետք է սուսուփուս լքել բերդն ու հեռանալ: Իսկ մեծ ձորի կողմից կամաց բարձրանում էր Չարութը՝ դույլը ձեռքին: Հարութի դեմքին նկարվեց վախին խառնված զարմանքը:

- Այսօր ձեզ հետ ի՞նչ է կատարվում, խմբապետ ...

- Դու ջուր տուր ինձ, Հարութ, իսկ մնացածը գնա աչքովդ տես, տես, որ չվախենաս ...

Հարութը գնաց: Քիչ հետո վերադարձավ, իրոք վախեցած: Անընդհատ երեսին խաչ էր հանում, նայում չորսբուրորը:

- Ո՞րն էի մի կտոր հաց տվել, որ իմ լավությունը իմ դեմ ելավ: Եվ ինչ

լավ է, որ ձեռքդ ցավեցրիր եւ ցավը քեզ չթողեց քնել, թե չէ ի՞նչ էի անելու, ի՞նչ պատասխան էի տալու իմ խղճին ու խմբին: Աստված, ուրեմն կաս ինձ համար, իմ խմբապետի համար ...

- Դե՛, լավ, հերիք է, թուրքերը քիչ անց երեւի կսկսեն իրենց ընկերոջ որոնումները: Գնա թուրքի հրացանն ու փամփուշտները վերցրու: Նրանք մեզ շատ են պետք գալու ... Հետո այնտեղ դեղեր էլ կան, վերցրու եւ արի ...

Հարութը քիչ հետո վերադարձավ.

- Ի՞նչ անենք, խմբապետ, բժիշկը կարող է գալ եւ ընկնել թակարդը: Ինչպե՞ս զգուշացնենք նրան:

- Դու գիտե՞ս նրա ճանապարհը: ՈՒրեմն, նրա ճանապարհին եղիր եւ զգուշացրու, որ բերդին չմոտենա, իսկ ես Մեծ ձորով կգնամ դեպի ճգնավորի մատուռը: Ինձ կհանդիպեք երեկոյան, այն ժամանակ էլ կորոշենք անելիքներս:

- Քեզ, ախր, բժիշկը նոր նշանակումներ է արել ... Դիտի նայել, սուուգել ...

- Ես ասացի, չէ՞, Հարութ, երեկոյան: Իմացիր, հարցերը ոտքի վրա անկարելի է լուծել ...

* * *

Աշնանամուտին ամայի քաղաքը կենդանացավ: Թուրքական կայագրի ներկայությունը առաջադրում էր իր պահանջները: Ջորամասի վերնախավը եւ առաջին հերթին շտաբի եւ տնտեսական բնագավառի սպայությունը, որոնք ավելի նստակյաց էին, քան մարտական հրամանատարական եւ մանավանդ շարքային անձնակազմը, պահանջում էին տունուտեղի ներկայություն, ընտանեկան կյանքի անհրաժեշտություն: Քաղաքի տներից առավել բարվոք վիճակում գտնվողները վերանորոգումից, դռներն ու պատուհանները տեղադրելուց, հատակը վերականգնելուց (թուրք խուժանը տարել էր նաեւ հատակի եւ առաստաղների տախտակները) հետո, թուրքիայից բերին իրենց ընտանիքներն ու բնավորվեցին քաղաքում, նրա ամայությունը լցնելով աղմուկով եւ մարդկային առօրյայով: Տարերայնորեն սկսեց գործել քաղաքի շուկան, ուր առեստուր էին անում շրջակա թուրքական գյուղերի բնակիչները, երեսացին աղքատիկ մի երկու խանութ, մի մսավաճառ եւ այլն: Կյանքն ինքն էր թելադրում մարդկանց անելիքները, առօրյա կարիքները բավարարելու, կյանքն ու ապրուստը կազմակերպելու եւ կարգավորելու իր ուղիները: Թուրքիայից սկսեցին ժամանել նաեւ զորամասերի անբաժան մասը կազմող պոռնիկ կանայք, առանց նրանց որբանում են զորամասի սպաները եւ որոնք լցնում են զինվորականների տաղտուկ ու անհետաքրքիր առօրյան: Նրանք էլ ժամանելով Ախալքալաք, տեղավորվեցին մի երկու կիսաքանդ, բայց ընդարձակ տներում, որոնք կարճ ժամանակամիջոցում վերածվեցին չգրանցված անառականոցների եւ աշխատում էին առավոտից

մինչև իրիկուն եւ իրիկունից մինչև առավոտ, սարսափի մատնելով զորամասի հրամանատարին եւ շտաբի սպաներին եւ երջանկացնելով շարքային սպայութեանը: Առաջինները վախենում էին վեներական գեշ հիվանդությունների համաճարակից, իսկ վերջինները՝ մաշված ու լլկված կանանց անկողնային հաճույքից: Գիշերներ էին լուսացնում նաեւ թղթախաղով: Մի խոսքով, քաղաքը սկսեց ապրել մի թթու կյանքով, որ շունն ուտեր, կսատկեր: Այս պարագայում ե՛լ հեշտացավ, ե՛լ դժվարացավ խմբի տղաների վիճակը: Այլեւս մարդ արարածը սատանայի եւ ուրվականի տպավորություն չէր կարող գործել շրջապատի վրա, միաժամանակ, այնքան էլ հեշտ չէր լքված տներ գտնելն ու թաքնվելը: Բայց քաղաքի բազմամյա առօրյան բերում էր սպաներ որսալու ավելի մեծ հնարավորություններ, որոնք թափառում էին քաղաքում զվարճություններ որոնելու ցանկությամբ:

Քաղաքում երեւալն անհնար էր մասնավորապես Սեւ Արսենի համար, որի բարձր հասակն ու սեւ մորուքը անմիջապես աչքի կընկնեին եւ կդառնային հանցանշաններ, մանավանդ որ սպաներից մի քանիսը ճանաչում էին նրան: Խումբը խնդրեց, որ նա սափրի մորուքը, բայց Արսենն անդրդվելի մնաց: Նա ասաց, որ մորուքը կսափրի միայն այն ժամանակ, երբ կկատարի երդումը, այսինքն, կոչնչացնի այնքան թուրք, որքան որոշել է: Նրան հանգիստ թողին: Միեւնույն է, խմբի տղաներից ոչ ոք չէր կարող քաղաքում ազատ թրելել, բացի Քամի Հարութից, որի թխությունը եթե նրան նմանացնում էր թուրքի, սակայն թուրքերեն վատ իմանալը կարող էր կործանարար լինել: Ահա այս օրերին կատարվեց այն դեպքը, որ ալեկոծեց զորամասը, որի լուրը հասավ եւ հուզեց նույնիսկ բանակի հրամանատարին:

Երեկոյան Ձեյնաբ խանումին այցելեց Նազըմ բեյը: Նա սովորականից ավելի լավ էր հագնվել, շքահանդեսային համազգեստով էր: Օծանելիքի հոտով լցնելով միջանցքը, մտավ ճաշասենյակ, ուր բազմոցին նստած եղիսաբեթը զբաղված էր ասեղնագործությամբ, մի զբաղմունք, որին սիրահարվել էր վերջերս եւ Սերգեյի գնահատմամբ բավական ձեռքբերումներ ուներ այդ ասպարեզում:

- Ողջուն՞, խանում Ձեյնաբին, իմ գեղեցկուհուն, - դռան մեջ կանգնեց Նազըմ բեյը՝ օծանելիքի սուր ու անտանելի հոտը ցրելով սենյակով մեկ:

- Դուք այսօր նորափեսայի տեսք ունեք, - քիթ - մռուքը ծռռռեց տանտիրուհին:

- Ֆի՛, այդ ինչ գարշելի հոտ ունի ձեր օծանելիքը ... Մի՞թե ավելի նուրբ ու դուրեկան հոտով օծանելիք չգտաք ...

- Է՛, խանում, մի՞թե օծանելիքի անդուր հոտի համար Նազըմ բեյը մեղավոր է ... - ասաց եւ խլեց նրա ձեռքը, մոտեցրեց շրթունքներին, շարժելով երիտասարդ կնոջ զզվանքը, - ես այսօր սյուրպրիզ ունեմ ձեզ համար, տեսե՛ք ... - Եվ ծոցագրպանից հանեց ադամանդե մատանին, որ պատուհանի լուսի տակ, արծակեց տաք եւ գեղեցիկ ցուլքեր, - ես ցանկանում եմ, որ մենք պսակվենք ..

- Իսկ ի՞նչ եք կարծում, բեյ, օրինավոր մարդկանց պսակն այսպե՛ս է

լինում: Դուք իմ համաձայնությունը դեռեւս չունեք: Եվ ասացեք, ումի՞ց եք խնդրում իմ ձեռքը՝ իմ ամուսնուց: Իմ գլխատերն այստեղ է. առողջ, ուժեղ եւ երիտասարդ մի մարդ: Ես ի՞նչ ասեմ նրան, ի՞նչ պատասխան տամ իմ խղճին ու պատվին: Դուք ունեք ձեր Ալլահը, բայց չէ՞ որ մենք էլ ունենք մեր Աստվածը, որը հորդորում է մեզ բարձր բարոյականություն, հավատարմություն ամուսնուն, ի՞նչ անենք ...

- Քո ամուսնու հարցը դու թող ինձ, - միանգամայն լուրջ խոսեց սիրահարը, - նա մեզ չի խանգարի: Չկա ամուսին, չկա ամուսնու պրոբլեմը: Ես նրան կուղարկեմ այնտեղ, որտեղից վերադարձ չկա, - եւ ձեռքը խփեց ատրճանակի պատյանին:

- Վերջապե՞ս, Նազըմ բեյ, դուք ցույց տվեցիք ձեր քաղաքակրթության աստիճանը: Դուք, թուրքերո՞ սպանելուց, բռնությունից, պատվագողությունից բացի ուրիշ մարդասիրական, մարդկային հատկություններ չունեք: Ի՞նչ կմտածեք դուք ձեր կնոջ մասին, եթե նա ձեր ներկայությամբ եւ ձեր օրհնությամբ ամուսնանա մի հայի հետ: Ի՞նչ կանեք այն մարդուն, որը ձեր կնոջը տիրանալու համար ձեզ փորձեր գնդակահարեր ...

- Քո հարցերը թշնամական են, Ձեյնաբ խանում, եւ միանգամայն տեղին, բայց ցավոք սրտի դու մոռանում ես մի տարրական ճշմարտություն, այն, որ դու իմ գերին ես, ես քո տերը: Իմ իրավունքն է գերու հետ վարվել այնպես, ինչպես ես եմ կամենում: Եկեք միանգամից լուծենք այն հարցերը, որոնք մինչեւ հիմա հապաղել ենք լուծել, գերի դառնալով անհիժված քաղաքակրթությունը, դեհ ես սպասում եմ ... - Նազըմ բեյի մութ հայացքում վճռականություն հայտնվեց: Նա արագ ճանկեց եղիսաբեթի ձեռքը եւ կոպտորեն իրեն քաշելով՝ ջանում էր մատանին հագցնել մատին: Կինը նեղացավ, վագրացավ, հանկարծ այնպիսի ուժով իրեց իրեն կորցրած փեսացուին, որ սա ընկավ օթոցի վրա եւ դաժանաբար հռհռաց:

- Գեղեցկուհիս իր ուժն է փորձում բանակի ամենաուժեղ սպային գետնելու վրա: Այս անգամ ես քեզ չեմ ների, Ձեյնաբ խանում: Ես թուրք եմ, իմացիր: Ինչ ինձ սիրով չի տրվում, վերցնում եմ բռնությամբ: Աշխարհում պատերազմ է: Մենք արյուն ենք հեղում, որ մեր տեղը լայնացնենք, մեր կյանքը կազմակերպենք մեր ցանկությամբ եւ ոչ պարտվածների: Դու իմ պատերազմող սպայի, պատերազմական ավարն ես: Ես պատերազմական օրենքի գործածումը հապաղում էի գործադրել, իսկ դու, հարգելիս, ցանկանում ես քթիցս բռնած ման ածել: Յուրաքանչյուր սեփականատեր իրավունք ունի իր ունեցվածքի հետ վարվել այնպես, ինչպես ցանկանում է: Այնպես որ՝ պատրաստվիր ինձ հետ առագաստ մտնելու ...

- Երբե՞ք: Ես երբեք չեմ վերածվի ապրանքի, երբեք իմ թշնամու հետ անկողին չեմ մտնի: Ես զգվում եմ ձեզանից: Ձեր լաքած եղունգներից, ձեր էնվերական բեղերից: Մանավանդ ձեր քաղաքակրթությունից: Եվ պահանջում եմ, որ անհապաղ հեռանաք իմ տանից ...

Նազըմ բեյը հեւում էր չարությունից: Նա որոշել էր իր անելիքը: Նա պիտի բռնաբարեր հայուհուն, պիտի ստորացնե՞ր նրան, դարձներ իր սուր-

կուհին եւ հետո աղտոտված թաշկինակի մման դեմ շարտեր: Նա նստած տեղից կամաց բարձրացավ, Եղիսաբեթն ուշադիր հետեւում էր նրա շարժումներին: Նա ձեռքը երկարեց դեպի կնոջ կուրծքը, հանկարծ ուժեղ ձգեց խալաթը, կոճակները չդիմացան, քանդվեցին եւ կիսամերկ կինը հարձակվեց նրա վրա: Սակայն ստանալով ահեղ մի հարված ուսին, տապալվեց ներքեւ, սակայն թռավ ոտքի, որպեսզի նորից տապալվեր երկրորդ հարվածից: Շրթունքները հաճույքից լիզելով, ինչ- որ գոմռալով Նազըմ բեյը փորձեց գրկել, զցել բազմոցին եւ հոշոտել նրան: Կինը ուժասպառ էր: Երկրորդ հարվածը նրան գրկել էր մարտնչելու կարողությունից, բայց որոշել էր վճռական պահին կրծել նրա կոկորդը: Սակայն այդ բանը տեղի չունեցավ: Անշտապ բեյի վզով փաթաթվեց պարանն ու սեղմեց՝ ստիպելով թուրք սպային խոխոացնել: Նրա կառչուն ձեռքերը կամաց բացվեցին եւ բաց թողեցին զոհի մեջքը: Դետո մեկը խեղդում էր, մյուսը՝ խեղդվում: Խեղդվողն այդպես էլ չիմացավ, չտեսավ իր խեղդողին: Տան մեջ ոչ աղմուկ, ոչ մարդկային ձայն: Մեկի ծանր շնչառությունը մարում էր, մյուսին՝ ահագնանում: Դետո բեյն արեւը բաշխեց այս աշխարհին, որին այսքան տգեղացնելու մասնակիցներից էր ինքը:

- Ի՞նչ անենք սրա լեշը, - լսվեց Սերգեյի հանգիստ ձայնը:

Եղիսաբեթի աչքի առջեւ կատարվող դրաման մի պահ նրան գրկել էր մտածելու եւ խոսելու ունակությունից: Սարսափով լի էին նրա աչքերը: Սերգեյը մոտեցավ գրաֆինին, մի բաժակ ջուր լցրեց ու մոտեցրեց Եղիսաբեթի շուրթերին: Վերջինն ասես արթնացավ եւ նորից փակեց աչքերը.

- Սերգե՛յ, խնդրում եմ փակիր դրա աչքերը ...

Իրոք սարսափելի էր հանգուցյալի չռված աչքերին նայելը: Սերգեյը փակեց նրա կոպերը եւ անխոս նայեց կնոջը.

- Տանենք նկուղ, հինգի մոտ ...

Իջեցրին նկուղ: Մի քանի ժամ չարչարվելու արդյունքն այն եղավ, որ փորձված աչքն անգամ չէր կարող նկուղի հատակին որեւէ բան նկատել: Նազըմ բեյն իր թուրքական քաղաքականությամբ գնաց այն աշխարհը, որտեղից վերադարձ չկա: Եվ նստեցին ձեռքերը խաչած եւ անխոս: Նրանցից յուրաքանչյուրը մտածում էր, որ, այնուամենայնիվ, դժվար, շատ դժվար է մարդուն կյանքից գրկելը, նույնիսկ եթե նա ահավոր չարիք է պատճառել մարդկանց, հրեշ է եւ թուրք, միեւնույնն է՝ կյանքից գրկելը դժվար է, անտանելի դժվար:

- Սիրահարներդ պակասում են, -վերջապես խոսեց Սերգեյը: Կինը լուռ էր. «Տես, է՛, կատակել է ցանկանում: Մի՞թե կատակելու սիրտ ունի»:

- Ես մարդ չեմ սպանել, - ի պատասխան Եղիսաբեթի մտածումների խոսեց Սերգեյը: - Ես սպանել եմ մարդասպանին եւ բռնաբարողին, այն էլ հանցագործության պահին: Ես փրկել եմ իմ կնոջ պատիվը ...

- «Ճիշտ է, բայց միեւնույն է, դժվար բան է մարդ սպանելը: Բայց այդ իմ Սերգեյը չի կարողանում նույնիսկ հավ մորթել եւ հավ մորթելը միշտ հանձնարարում է ինձ: Ո՛րեմն, մարդու հոգեկան աշխարհի կարգավորիչները սնվում են ուրիշ ձնեղգիաներով՝ ատելության, անհրաժեշտության, փր-

կության եւ այլն: Սերգեյը, որ այնքան հեշտ, այնպիսի էպիկական սառնասրտությամբ սպանեց սրիկային, իմիջիայլոց, վատ է տանում արլան գույնը եւ այդ իսկ պատճառով հրաժարվեց վիրաբույժ դառնալու գաղափարից, ընտրեց թերապեւտի մասնագիտությունը: Օ՛, բարդ է մարդը եւ իր հոգին ...»:

Օրն անցավ խաղաղ: Իսկ հաջորդ օրը վաղ առավոտյան դուռը թակեցին: Ասկյարներ էին, սպայի ղեկավարությամբ: - Նազըմ բեյն այստե՞ղ է ... հարցրին:

- Ո՛չ, նա այս ժամերին երբեք չի լինում մեր տանը:

- Երեկ նա այստեղ չի՞ եղել ...

- Եղել է համարյա ամբողջ օրը, մինչեւ իրիկուն մեզ մոտ էր: Մթնշաղին գնաց: - - Ջարմանալի՛ է, - մրթմրթաց սպան, - ո՞ւր կարող է գնացած լինել: Ջարմանալի՛ է... Լավ, ներողություն, խանում: Հնարավոր է, որ մենք նուրից այցելենք ...

- Խնդրեմ, - ասաց Եղիսաբեթը, - եթե մենք ձեզ հարկավոր ենք, մեր դուռը միշտ բաց է ..

Ասկյարները գնացին: Սերգեյը փաթաթվեց կնոջը.

- Կեցցես, Եղիսաբեթ, ես վախենում էի, որ հանկարծ ասես, որ նա այստեղ ընդհանրապես չի եղել եւ փչացնես ամեն ինչ ... Ախր ավագ սպաները զորանոցից դուրս գալիս պարտավոր են զորամասին տեղյակ պահել իրենց գտնվելու վայրի մասին:

Եղիսաբեթն ու Սերգեյը անհանգիստ գիշեր անցկացրին: Տակնուվրա էր եղել Եղիսաբեթի հոգեկան աշխարհը: Ողջ գիշեր ոչ քնած էր, ոչ արթուն: Տանջալից էր աչքերը փակելը, որովհետեւ կոպերի տակ անմիջապես մի ներքին ճառագայթումով արթնանում էին ցերեկվա պատկերները: Նազըմ բեյի աչքերը հետապնդում էին նրան, հսկում նրա անհաղթահարելի արթնությունը: Այդ աչքերը մեկ գայլային չարությամբ հարձակվում էին նրա վրա անվանարկելու, բռնաբարելու վճռականությամբ, մերթ ապակիանում, մեռնում՝ չարությամբ հառվելով աշխարհին եւ նրա հոգուն:

- Նա հետապնդում է ինձ, ես վախենում եմ նրանից, - մտտում էր անկողնում:

Սերգեյը քնքշությամբ փարվում էր նրան, հանգստացնում, փորձում իր անհոգությամբ վանել նրա վախը, որ այնքան վախ չէր, որքան հոգու նահանջ, վախին խառնված մի այլ զգացողություն, որ անուն չունի, որ ժամում, ուտում է մարդու հոգին՝ չթողնելով փակել աչքերը:

- Լսիր ինձ, սիրելի՛ս, եթե դու քնել չես կարողանում, ինձ մոտ դեռ մնացել են մի քանի քնաբեր հաբեր, կամ դրանցից ընդունիր, կամ մի հարյուր գրամ կոնյակ խմիր... Ես ենթադրում եմ, որ Նազըմ բեյին գտնելու որոնումները դեռ կշարունակվեն: Երեւի մեկ անգամ չէ, որ անհրաժեշտ կլինի դուռ բանալ թուրք հոգեքննիչների առջեւ: Դու պետք է նրանց դիմավորես սառն հանգստությամբ, առանց շփոթվելու, առանց մատնելու քո հոգեվիճակը: Քեզ հարկավոր է հանգստություն, խոր քուն ...

- Լավ, գուցե քնաբերից հրաժարվենք, դիմենք կոնյակի օգնությանը, - թույլ ժպտաց կինը:

Կոնյակը ունեցավ հիանալի ազդեցություն եղիսաբեթի վրա: Խմիչքը սկսեց օրորել նրա անկողինը, ասես քուն էր դնում նրան: Նրա մարմինը թեթևացավ, հոգու ծանրությունն ընկավ: Եղիսաբեթն ուզում էր խոսել, բայց հարբած չէր եւ կարողացավ զսպել խոսելու ցանկությունը: Նա փաթաթվեց փափուկ վերմակով եւ փակեց աչքերը: Քունն աննկատ գրկեց նրան եւ նա քնեց: Երազն ավելի քան լավատեսական էր: Որտեղից որտեղ նա հայտնվեց մանկության հովիտներում: Հայրը մեղու էր պահում ճուրբարեթի անտառափեշերին: Մայիսի վերջին, երբ տաքանում էին օրերը, մոր հետ գնում էին մեղվանոց: Ի՞նչ օրեր էին... Մի այլ աշխարհ էր: Եվ ուրիշ էր արելը, նա ավելի փաղաքուշ էր, ավելի ջերմ, քան այն արեւները, որոնք հետագայում մանկության արեւի մայրական փաղաքշանքը չունեցան: ճուրբարեթի ժողիկները նրա համար ընկերուհիներ էին, նա խոսում էր նրանց հետ, բանավիճում էր նրանց բույրի եւ գույնի շուրջ: Գիշերներն ամբողջ շուշաններ էր փնջում, ամառային երկնքից, լեռնային աղբյուրների հետ երգում էր ժամանակի տառածված երգը.

Ամպի տակից ջուր է գալիս,

Դոշ է տալիս, փրփրում ...

Այսօր նորից այցելության է գնացել մանկությանը: Ծաղիկներ է փնջում: Հայրը դիմակավորված մեղրի շրջանակներն է նայում: Մեղրն առատ է: Հայրը ծուխ է փչում փեթակի մեջ, որ մեղուները չկծեն: Ախր, այդ փոքրիկ սրիկաների խայթը շատ ցավոտ է: Խայթում են ու լացացնում խեղճ եղիսաբեթին, եթե դեմքն են խայթում, այլանդակում են աղջնակին: Մայրը խայթի դեմ, որպես բուժող միջոց մածուն է օգտագործում: Հայրն ասում է, որ մեղվի քույրն օգտակար է, թող եղիսաբեթը չվախենա, բայց զգուշանա, որ չլինի միանգամից երկու կամ ավելի մեղու կծեն, որովհետեւ կիվանդանա, ջերմությունը կբարձրանա: Հայրը ձեռքով է անում իրեն.

- Արի ինձ մոտ, աղջիկս ... - Եղիսաբեթը վազում է հոր մոտ: Իսկ նա լալիս է.

- Տեսնում ես, ինձ միանգամ մի քանի մեղու կծեցին: - Հայրիկ, բա հայրիկները մեղվի խայթելուց արտասվում են, բա ամոթ չէ՞ ... - Աղջիկս դու կարծում ես ինձ միայն մեղուներն են կծել: Սրան նայիր ... - Ո՛ր ցույց է տալիս երկարավուն ու դեղնավուն օձը, որը սողում է փեթակների միջով: - Հայրիկ,

արի սպանենք օձին, ինձ էլ կխայթի: - Սպանենք, - ասում է հայրը եւ նրա ձեռքին հայտնվում է բահը: Նրանք երկուսով՝ հայր ու աղջիկ ընկնում են սողունի հետեւից: Հայրը բահով ջախջախում է օձի գլուխը: Հետո նա մեղր է քսում օձի խայթած տեղին, եւ նրանք ծիծաղելով գնում են փայտե տնակը, ուր անուշ բուրում է մոր եփած հարիսան: Մայրը սեղանին է դնում ճաշի սպասքը, բերում է պղնձե կաթսան, որ հարիսան լցնի ափսեները, բացում է կափարիչը եւ սարսափով ետ նետվում. - ամա՛ն, օձ է մտել կաթսան: - Հայրը ցանկանում է կաթսան տանել ու թափել, բայց վախենում է օձի աչքերից: Եղիսաբեթն էլ է նայում եւ վախից ճչում է.

- Նազըմ բեյի աչքերն են, ամա՛ն ...

Հետո նրանք միասնական ջանքերով հրդեհում են սեղանը, որ նրա

հետ այրվի նաև կաթսայի պարունակությունը: Բայց կրակն անողոքաբար այրում է փոքրիկ Եղիսաբեթին.

- Վառում է, վառում է ...

- Խմիր, սիրելիս, խմիր: Հիմա քո փրկությունը քնելն է, - լսվում է Սերգեյի ձայնը, որը գավաթով կոնյակ է խմեցնում: Այրող կենարար կոնյակ:

Կամաց հեռանում է երազը: Քնին, անությանն են հանձնվում մանկության պատկերները: Ճուրթարեթը նահանջում է խոր քնի առջև: Հետո, արդեն ուշացումով բաց է անում աչքերը: Արեւն ընկել է բարձին եւ խտտացնում է աչքերը: Ճառագայթները նիզակում են կոպերի տակ, ջանում են արթնացնել Եղիսաբեթին: Բացում է աչքերը: Սենյակում լույս է արեգական: Գլուխը սեղանին ննջում է Սերգեյը: Երեւի ողջ գիշերն անցկացրել է նստած: Կնոջ արթնանալը, մահճակալի թեթև ճռինչը ոտքի են հանում նրան.

- Բարի լույս, սիրելիս ...

- Բարի լույս Սերգեյ, համա թե քնել եմ ...

- Հիմա հանգի՛ստ ես Եղիսաբեթ ...

- Հիմա հանգիստ եմ Սերգեյ ...

Նոր էին նրանք նստել թեյելու, երբ նորից բախեցին դուռն ու առանց հարցումի լցվեցին ներս: Նույն հետախուզության սպան էր ասկյարների հրամանատարը: Բարեւեց: Եվ առանց որեւէ հարցումի ասկյարները սկսեցին քարուքանդ անել ամեն ինչ, մտնել քունջ ու պուճախ:

- Դուք մեզ ասելու ոչինչ չունե՞ք, - հարցրեց Եղիսաբեթը: - Չէ՞ որ մեր տունն էք խուզարկում ...

- Ներիր, մադամ, եթե ասեմ, որ դուք տուն չունեք այս գրավված հողում: Մենք կասկած ունենք, որ Նազըմ բեյը եկել է ձեր տունն ու դուրս չի եկել այստեղից: Ոչ հեռվում պարեկային խումբն է եղել: Նրանք տեսել են նրա մտնելը ձեր տուն, իսկ ելնելը՝ ոչ: Հիմա մենք խուզարկելու ենք ձեր տունը, ձեր տան ամբողջ տարածքը: Եթե կասկածելի բան չգտանք, էլի ջանըմ, էլի գյոզըմ: Իսկ եթե գտանք, - սպան ձեռքով օղակ գծեց վզի շուրջը:

- Որ նման կասկած ունեք, ուրեմն, ես պահանջում եմ, խուզարկությունը կատարեք այնպիսի մակարդակով, որ անմեղ մարդկանց այլևս չմեղադրեք մահացու մեղքերի մեջ եւ ամեն օր չներկայանաք ապօրինի պահանջներով ...

- Մենք այդպես էլ կանենք, բայց ինչ կասեք, որ հաստատվեն մեր կասկածները...

Այդ ժամանակ դուք կվարվեք օրենքի համաձայն՝ սուր ձեր, վիզ՝ մեր: Եղա՞վ ...

Սպան նայեց հայուհուն: Նրա հայացքը շփոթված էր:

- Մադամ, խնդրում եմ, ինձ հետ խոսելիս, ինձ չնայել: - Խնդրեց: - դիմանալու բան չէ ...

- Գիտեք ինչ, պարոն սպա, Նազըմ բեյի օյինները խնդրում են չխաղալ: Նա էլ

եկավ ու գնաց: Եկավ ու գնաց: Հիմա էլ պարզվում է, որ կորել է, եւ ես ստիպված եմ Աստծուն աղաչել, որպեսզի նա գտնվի եւ ես ազատվեմ կասկածներից:

- Մաղամ, ես խնդրում եմ, շատ եմ խնդրում, ինձ չնայել, միայն այդքան...

Կհնճ առանց նայելու սպային հեռացավ: Մտավ ննջարան: Այդ ժամանակ ասկյարները տունը տառաջհորեն վերածել էին աղբանոցի: Ամեն ինչ հետաքրքրում էր նրանց: Ասես ոչ թե մարդ էին որոնում, այլ ասեղ: Քիչ հետո տանտիրուհին աչքի անցկացրեց նրանց աշխատանքը: Եվ հասկացավ թուրքերին: Եթե նրանց հանձնարարված է մարդ որոնել, ասկյարները ոսկի ու արծաթ էին որոնում: Հետո մեկը մտավ ննջարան եւ մոտեցավ զարդասեղանին: Այն փակ էր: Ասկյարը շրջվեց տանտիրուհուն.

- Բացել այս գանձարկղը ...

- Ի՞նչ եք որոնելու դուք այնտեղ: Ինչպես տեսնում եք, այդ փոքրիկ դարակներում անհնար է մարդ թաքցնել ...

- Դա քո գործը չէ, խանում, բացեք ...

Կհնճ անձայն գնաց հարեւան սենյակն ու բերեց սպային: Նա մատնացույց արեց ասկյարին.

- Պարոն սպա, ինձ ասելո՞ւ եք վերջապես, թե ինչ եք որոնում այս դարակներում...

- Դարակներո՞ւմ՝ ոչինչ ...

- Իսկ ինչո՞ւ եք քանդում ամեն ինչ, ամեն բան: Իմացեք, ես ստիպված կլինեմ բողոքել Օմար փաշային: Ձեր ասկյարն այստեղ ուրիշ հետաքրքրություններ ունի, նա իմ կարծիքով, ընկել է ոսկեղենի խանութ եւ պահանջում է բացել զարդեղենի դարակները: Որքան գիտեմ, նա այստեղ ուրիշ գործով է:

Սպան մի երկու խոսքով երեւի փակեց ասկյարի ախորժակը: Ապա դարձավ եղիսաբեթին.

- Դու, մաղամ, իրավունք չունես ոչ ոքի բողոքելու: Ես քեզ հենց սկզբից ասացի, որ դուք, հայերդ, այստեղ տունուտեղ եւ այլ հարստություն չունեք, դրանք գրավված են եւ համարվում են հաղթող թուրքերի սեփականությունը: Իսկ դու աղմկում ես, որ ասկյարը ցանկանում է նայել քո զարդատուփը: Հիմա քեզ եմ հարցնում. քո ի՞նչ գործն է, թե իրեն պատկանող ապրանքը նա կնայի, թե ոչ, կվերցնի, թե ոչ, կջարդի, թե ոչ ...

քը նա կնայի, թե ոչ, կվերցնի, թե ոչ, կջարդի, թե ոչ ...

- Լա՛վ, պարոն սպա, արեք այնպես, ինչպես ցանկանում եք: Վերցրեք այն, ինչ ցանկանում եք: Ջարդեք այն, ինչ ցանկանում եք: Բայց չնեղանաք, եթե ես էլ ձեր նկատմամբ վարվեմ այնպես, ինչպես ցանկանում եմ: Բողոքեմ նրան, ով իրեն համարում է իմ բարեկամը ... Եղա՛վ ...

- Մաղամ, ես խնդրում եմ, շատ եմ խնդրում, ոչ ինձ նայել, ոչ էլ ինձ հետ խոսել...

- Ձեզ ի՞նչ պատահեց, պարոն սպա, ինչո՞ւ եք կորցրել ձեր գլուխը: Ապա ասեք ինչպե՞ս չնայեմ ձեզ, երբ աչքեր ունեմ: Ինչպե՞ս չխոսեմ ձեզ հետ, երբ լեզու ունեմ... Ես նման սահմանափակումների սովոր չեմ: Կապեցեք աչքերս, բերանս լաթ խցկեցեք: Յետո էլ մեկ ուրիշ բան կարգելեք ... Ո՞նց անել ...

- Մաղամ, քո խնդիրքը կկատարեմ՝ ինչ էլ ցանկանաս, դու էլ կատարիր իմ խնդիրքը՝ մի նայիր ինձ, այլևս մի խոսիր ինձ հետ ...

Երեկոյան խուզարկությունն ավարտվեց: Ասկյարներն ամեն ինչ տակնուվրա թողած նստեցին ճաշելու: Պահանջեցին ինչ աչքերը տեսել էին: Խմիչք չուզեցին: Կերան նրանց ամբողջ միսը, որ այնպես խնամքով պահվում էր նկուղում: Կերան, համարյա ուտելիք չթողնելով տանը: Սակայն տանտերերը ներքուստ ուրախ էին, որ առայժմ, զոնե առայժմ չոր դուրս եկան ջրից: Թուրք զինվորներն այդպես էլ չտեսան թոնրատան նկուղը, իսկ ճաշասենյակի սալահատակ նկուղը ոչ մի կասկած չառաջացրեց նրանց մեջ: Մի խոսքով, չթողին ոչ մի իր, առարկա, մտան ամեն ծակուծուկ, բայց որևէ հետք չազնվեցին: Եղիսաբեթը վախենում էր միայն մի բանից: Ի՞նչ եղավ, ո՞ւր մնաց աղամանոյա մատանին, որ չազնվեց նաև ցանկանում էր հագցնել իր մատին: Չլինի՞ ընդհանուր իրարանցման մեջ ընկած լինի որևէ տեղ եւ հանկարծ ընկնի ասկյարների ձեռքը: Յետո Սերգեյն պսաց, որ նրա հարսանեկան նվերը՝ տիրոջ հետ գերեզմանվել է, որպեսզի չընկնի զորամասի քրեական հետախուզության ձեռքը եւ պատճառ դառնա կործանման: Երբ ասկյարները դուրս եկան տանից, ամուսինները նայեցին միմյանց, տխուր եւ հոգնած ժպտացին եւ փաթաթվեցին իրար.

- Դժվար է գեղեցկուհու ամուսին լինելը ...

* * *

Սկսվեց հոգեբանական մի սրտամաշ ջրապտույտ: Ամեն օր տարբեր ժամերի կամ օրվա մեջ հանկարծ հայտնվում էին ասկյարները, ամեն անգամ տարբեր սպաների հրամանատարությամբ եւ սկսվում էր փնտրողությունը: Ավելի ճիշտ, ոչ ոք ոչինչ չէր որոնում, խառնչտում էին ամբողջ տունը, քանդում նույնիսկ մահճակալները եւ ամեն ինչ թողնելով քարուքանդ, խառնիխուռն վիճակում, հեռանում էին: Ասկյարները որպես կանոն չէին խոսում: Ոչինչ չէին որոնում: Պարզապես քանդում էին ու հեռանում: Սկզբում Եղիսաբեթն ու

Սերգեյը նրանց գնալուց հետո խնամքով հավաքում էին, հետո տեսան, որ հինգ-վեց ասկյարների քանդածը երկու հոգով կարգավորելը անմիտ աշխատանք է: Չեռք քաշեցին տունը կարգի բերելուց եւ զինվորներն այնուհետեւ քանդում էին քանդվածը, փչացնում էին կոտրվածը: Նրանց հեռանալուց հետո ամեն անգամ անհետանում էին տան առավել արժեքավոր ու թանկարժեք իրերից մի քանիսը: Ի վերջո, Եղիսաբեթը որոշեց այցելել բինբաշի Օմար փաշային, խնդրել, որ վերջ տրվեն այդ հոգեմաշ ստուգումները եւ կանգ առնի տան արդեն օրինականացված կողոպուտը: Նա այդ մասին տեղեկացրեց հետախուզության սպային: Վերջինս նախ շփոթվեց, հետո հատ-հատ արտասանեց.

- Մենք հետախուզության աշխատողներս, զեկուցել ենք փաշային, որ նախատեսել ենք հոգեկան գերազդեցությամբ ի հայտ բերել Նազըմ բեյի սպանության մասնակիցներին ու մանրամասները ...

- Բայց գտեք սպանողներին, եւ նոր միայն հոգեբանական մշակման ենթարկեցեք նրանց: Իսկ մեր տանը ձեզ պահում էք կողոպտիչների նման: Ամեն ձեր մուտքը մեր տուն, դուք նշանավորում էք նոր գողությանը եւ նոր կողոպուտով: Դուք մեզ պատճառել էք ահազին նյութական վնաս: Ես պիտի խնդրեմ փաշային, որ դուք, հենց դուք փոխհատուցեք վնասը: Էլ չեմ ասում այն վիթխարի վնասի մասին, որ դուք պատճառել էք մեզ, անխիղճ հոգեքննիչներ: Իմացեք նաեւ, որ թեւ հայտնի չէ, թե ինչ է պատահել իմ բարեկամ Նազըմ բեյին, սպանել են նրան, թե խեղդել, փախել է նա զինվորական ծանր, անմարդկային ծառայությունից, այսինքն դասալիք է, թե նրան գողացել են վրիժառուները, եթե վաղը պարզվի իսկությունը, ես խոստանում եմ ձեզ, պարոն սպա, ճշմարտության որոնումներին հասնել Բարձր Դռան ողորմածությանը եւ պատժել տալ ձեզ ապօրինի եւ անմարդկային, նաեւ թալանչիական գործունեության համար:

Նայելով նրա գեղեցիկ դեմքին, խաժ աչքերին, որոնց հմայքին սպան դիմանալու ուժ չունեի եւ լիովին հավատալով այս կնոջ մոգական ազդեցությանը մարդկանց վրա, սպան նահանջեց, նա գլխակախ առանց նայելու նրան, հավաստիացրեց.

- Եթե հայտնաբերվի Նազըմ բեյը որջ կամ մեռած, ես պատրաստ եմ ներողություն խնդրելու քեզանից, մադամ, եւ դադարեցնել այս հոգեբանական ճնշումը ... Պատիվ ունեմ ...

- Ոչ, դուք պարտավոր եք հատուցել այն նյութական եւ բարոյական վնասը, որ պատճառել էք ինձ եւ իմ ընտանիքին: Միայն մեկ փրկարար պատճառ կարող է ձեզ ազատել պատասխանատվությունից, եթե ապացուցվի մեր մեղսակցությունը, մեր մասնակցությունը Նազըմ բեյի, չգիտեմ, սպանությանը, թե անհետացմանը: Մենք չենք մոռանա ձեր սիրալիկ պատասխանները, որ դուք, հաղթողներդ, մեր ունեցվածքի, մեր մարմնի, մեր ամեն ինչի տերն եք: Դուք այդ հայտարարությունը ոչ միայն արել եք, այլ նաեւ կենսագործել ... Բանակը, սիրելի հետախույզ, կռվելու ֆունկցիա է իրականացնում, այլ ոչ թե՛ թալանելու, սպանելու եւ բարոյական փտտանքների ենթար-

- Մաղամ, արա ինչ որ կուզես, բայց ես կարծում եմ, որ թուրքիան այն երկիրը չէ, որ պաշտպանի հային թուրքերից, թեկուզե այն պատճառով, որ հայը գեղեցկուհի է: Եթե դու ունես իրականությունը ճանաչելու կարողություն, դու ինձ հետ պետք է խոսես ոչ թե ուժի, այլ խնդրողի դիրքերից: Եթե ես չիմանայի, որ քեզանով հետաքրքրվում է մեր զորամասի հրամանատար Օմար փաշան, ես քեզ հետ այսքան ձեւականորեն չէի վարվի: Ես քեզ վաղուց պատվագրկած կլինեի եւ արժանացրած քո հայրենակցուհիների բախտին: Եվ խոնարհաբար խնդրում եմ այսուհետեւ չփորձես վախեցնել ինձ, այլապես... Եվ նայեց Եղիսաբեթին: Սա նրա հայացքի մեջ տեսավ Նազըմ բեյի կենդանացած հայացքը: «Աստված իմ, սրանք բոլորը գործված են նույն կտավից: Նույն հայացքը, նույն խոսքերը, հայերի նկատմամբ նույն վերաբերմունքը: Ո՛րեմն, այս շան ցանկությունն էլ հայ կնոջը պատվագրկելն է, նրանից հաճույքի, վայելքի առարկա սարքել է, որ կատարվում է նախօրոք մարդ արարածը նրա միջից հանելով, կամքը կոտրելով, նրան վերածելով հնազանդ կամակատարի: Նա ցանկանում է ինձ պատվագրկել, առանց իմանալու, որ իրենից առաջ կես դյուժին թուրքերը նման հանդգնության համար գնացել են Աիրիմանի տիրույթը»: Եվ հետո բարձրաձայն.

- Պարոն սպա, ես չգիտեմ, թե թուրքիայի Բարձր Դուռը մեր վեճում ինչ դիրք կբռնի իմ նկատմամբ, բայց մի բանում վստահ եմ եւ չեմ կասկածում, որ ինչ էլ լինի կհասնեմ այն բանին, որ ձեզ աստիճանագրկեն եւ դատաստանեն, որ ձեր մտքով այլեւս չանցնի անվանարկելու ցանկացած գեղեցկուհուն, եթե նա հայուհի է: Իսկ այժմ ոչ թե խնդրում, այլ պահանջում եմ հեռանալ իմ տանից ...

Ասկյարները հեռացան: Եղիսաբեթը հասկանում էր, որ հետախուզության սպայի եւ իր միջեւ լարվածությունն արդեն հասել էր վերջնագծին, եւ որոշեց անցնել հակահարձակման: Հարկավոր էր անպայման քաղաքավարական այցելության պատրվակով գնալ Օմար փաշային տեսնելու, մանավանդ, որ նրա ընտանիքը թուրքիայի մայրաքաղաքից տեղափոխվել էր Ախալքալաք եւ ապրում էր Ալեքսանյանների քանդորտված եւ վերականգնված շենքում: Սերգեյին նա այլ բան պատվիրեց. գտնել Սեւ Արսենին եւ բացատրելով ստեղծված անտանելի պայմանները, խնդրել նրան, ինչ գնով էլ լինի սպանել մի սպայի, հասակով եւ տարիքով Նազըմ բեյի նման: Այլանդակել նրան եւ հանձնել թափարվանի ալիքներին: Այդ դիակը գտնելուն պես, հետախուզության եւ քրեական հետախուզության պետերը կանվանարկվեցնությունը սխալ ճանապարհով վարելու եւ զիջվորական իշխանություններին ապակողմնորոշելու համար:

- Ի՞նչ ասեմ, Սերգեյ, ասելիքս բոլորովին կնոջ ենթակայության խնդիրը չէ, բայց ուրիշ ելք չկա : Փաստորեն դարձել ենք հետախուզության սպայի գերիները: Եթե նրան չվախեցնենք, նա ավելի լկտի եւ հանդուգն կդառնա եւ կփորձի Նազըմ բեյի նման խաղալ իմ պատվի հետ: Եվ հետո թուրքերը գտնվում են մեր Հայրենիքում որպես նվաճողներ: Մենք ստանձնել ենք Հայրենիքի զինվորի պարտականությունը: Հետեւաբար սպանելու մա-

սին պետք է խոսել որպես հարկադրական անհրաժեշտություն:

Սերգեյը մոտեցավ եւ գրկեց կնոջ ուսերը.

- Դու ինչու՞ ես արդարանում իմ առջեւ: Այստեղ դու ես իմ դատավորը, ոչ թե ես քո ... դու ես այս աշխարհի տերը, քո աշխարհը, քո ծննդավայրն են գրավել ու կողոպտել թուրքերը: Եվ նրանք պետք է դատապարտվեն: Եվ վճիռը մեկն է՝ ոչնչացնել ... Այո, ես կհայտնեմ նաեւ մեր որոշումը խմբի տղաներին, իսկ դու աշխատիր Օմար փաշային տրամադրել հետախուզության սպայի դեմ, առանց այն էլ Նազըմ բեյն ասում էր, որ քինբաշին ատում է հետախուզության սպային: Պարզապես հարկավոր է կրակին յուղ լցնել, եւ հետախուզության սպան կընկնի իր չունեցած բարձունքից: Հետո Օմար փաշան, ինչպես ասում են, մի քիչ ցնդել է: Նա, որ երբեք չի կասկածել թուրքական զենքի հաղթանակին, կես ժամ գերվելով հայերից այնպես է վախեցել, որ քուն թե արթմնի նրան հետապնդում են մղձավանջները Սեւ Արսենի կերպարանքով ... Նա կարծում եմ նման հոգեվիճակով կկատարի քո խնդիրը կամ բացառված չէ քեզ որպես պատանդ պահելը՝ ֆիդայական ուժերը զսպելու համար ...

* * *

Եղիսաբեթը մի երկու թանկարժեք նվերով այցելեց Օմար փաշային: Վերջինս հայ գեղեցկուհուն տեսնելով այնպես ուրախացավ ու իրար անցավ, որ շարժեց ավագ կնոջ խանդը. « Այս որքա՞ն են շնացել թուրքերը, սովորել կերակրվել օտար բոգերով, որ սիրուն կնիկ տեսնելիս, աչքերով ասես մերկացնում են նրանց եւ նոր միայն նայում: Իմ քավթառի բերանի ջուրը, տես, ո՞նց է զնում, ո՞նց է ամեն խոսքից հետո այդ հայ լրբի ձեռքը համբուրում: Մի ասող լինի, դու իրավունք ունե՞ս գյավուր կնկա ձեռքը համբուրելու, դու, որ քո շուրթերով սուրբ «Ղուրանն» ես համբուրում, էլ ո՞ր ես համբուրում հայի քամակը»: Թոնթորում էր Օմարի կինը, սակայն առանց առարկելու կատարելով փաշայի ամենափոքր ցանկությունն անգամ: Իսկ փաշան յոթերորդ երկնքում էր. «Անմիջապես երեւում էր, որ Նազըմ բեյը ոչ եւս է: Նա չկա, այս գյոզալն արդեն որոնում է իմ տան ճանապարհը: Թե չէ կպել էր սրան: Չէ ու չէ, պիտի կնության վերցնեմ Ձեյնաբ խանումին: Տո, տնաքանդ, գոնե ինձ, քո հրամանատարին մի անգամ հարցնեիր, թե՞ փաշա, դու արդյո՞ք չես ցանկանում այդ գյոզալին: Ես էլ մարդ էի, տեսնեի, որ ինքը սիրահարված է, գուցե կիրաժարվեի, իսկ եթե մեկ - երկու օրով վայելեի այդ կնոջը, ի՞նչ էր լինելու, կնոջ լույսը պիտի խավարե՞ր, թե Ձեյնաբ խանումը իր սեռը պիտի փոխեր, դառնար տղամարդ ... Չէ, չէ, մարդ չէր այդ Նազըմ բեյը, մարդ չէր, կնոջ խելառ էր, կին տեսնելուն պես թուլանում էին շալվարի կոճակները: Վերջն էլ ընկավ-մեռավ, թե փախավ, կորավ, հայտնի չէ: Նազըմի նման էլ դուրս եկավ հետախուզության սպան: Երեւի էդ սարսաղը սիրահարվել է եւ կնոջը, ամեն օր նրա տանն է, հոգեկան մշակման է ենթարկում խեղճ կնոջը: Ապու՞շ ... Եթե էդ կնոջ տանը սպանեին թուրք աստիճանավորին, ուր էլ որ տանեին, տես-

նողներ կլինեին: Մի տեղ արյուն կթափվեր, կրակոցի կամ կռվի ճայն կլսվեր, հո էլ մարդը խամաճիկ չէր, որ սուսուփուս ձեռքի օժառի նման պղպջակներ տալով ցնդեր, վերջանար: Օմար աղան տեսավ սենյակից դուրս եկող ավագ կնոջն ու սիրալիր ժպտալով խոսեց.

- Ձեյնաբ խանումը գնալով սիրունանում է, ի հաճույս եւ ի դժբախտություն մեզ՝ տղամարդկանցս ...

- Շնորհակալ եմ, փաշա, նույնը ես պիտի ձեզ ասեմ, ջահելացել եք, նույնիսկ ձեր բեղերը սեւացել են ...

«Ղանջըղ, շան ղանջըղ, - առանց չարության մտքի մեջ խոսեց փաշան, - ձեռ է առնում ինձ: Բայց ո՞վ իմանա, գուցե ձեռ չի առնում: Գուցե թարմացել եմ: Ախր, ընտանիքս եկել է: Սրանք բոլորն էլ ինձանով են զբաղված: Ամբողջ օրը մաժում ու շոշափում են ջանս, ուզում են քշել ծերությունս ու հետ բերել ջահելությունս: Բայց իրենք շատ են ջահել: Ես ծեր ու մեկ հոգի: Ասում եմ. «Այ ղանջըղներ, ես քանի՞ կտոր լինեմ, որ ձեզ կարողանամ սիրել, երբ մանավանդ իմ հայհայը գնացել եւ վայվայն է մնացել: Մի քիչ թողեք հանգիստ շունչ առնեմ, հանգստանամ, դուք մարդ կսպանեք ...»: Հետո խոսեց փաշան.

- Էվալլա՛հ, գյոզալ, քեզ տեսնելը ջահելության վերադարձ է: Շնորհակալ եմ, որ եկել ես ...

- Փաշա, ես եկել եմ երկու հարցով. առաջինը՝ տեղեկանալու ձեր թանկագին առողջության մասին: Ես լսել էի, որ դուք հիվանդացել եք: Կուզեի լսել մխիթարական ճշմարտություն ձեր առողջության մասին: Երկրորդը. դուք գիտեք, որ Նազըմ բեյն անհետացել է: Ես այդ փաստի մասին լսեցի ձեր հետախուզության սպայից, որը Նազըմ բեյին որոնելու պատրվակով ամեն օր խուզարկություն է անցկացնում մեր բնակարանում, իր ասելով հոգեւոր մշակման է ենթարկում ինձ, անընդհատ ականջիս բզզալով, թե արդյոք ես չեմ Նազըմ բեյի անհետանալու պատճառը, որ քիչ հետո սկսի սեր բացատրել ինձ՝ դերասանի կարգի. մի՛ նայեք ինձ, ես ձեր հայացքին, ձեր հմայքին չեմ դիմանա: Իսկ արդյունքը լինում է այն, որ իմ տան կահույքը եւ կահկարասին ոչնչանում են, թանկարժեք իրերը՝ գրպանում, որպեսզի հաջորդ օրը նորից լցվեն մեր տունը եւ նույնը կրկնեն առավել վայրագ ձեւով: Ես եկել եմ խնդրելու ձեր օգնությունը, ձեր պաշտպանությունը մի կնոջ, որին այդ սպան ցանկանում է ահաբեկել, կողոպտել, ուժի միջոցով սողոսկել նրա անկողինը: Օգնեցեք ինձ, փաշա, օգնեցե՛ք ... եւ փոխարեն թող Ալտված վարձահիւտույց լինի ձեզ, փրկի ամեն փորձանքից ...

Օմար փաշան, որ հմայված լսում եւ նայում էր Եղիսաբեթին, վագրի նման ցատկեց նստած տեղից, կատաղությունից շուռ տվեց նարգիլեի սարքը, անեծքն ու հայիոյանքը ճխլտելով ատամների տակ: Նրա մշուշված աչքերի մեջ ամուր նստվածք էր տվել կիրքը, որին խառնվել էր նաեւ կատաղությունը: Եղիսաբեթը, որ ներքուստ հրճվում էր իր թողած ազդեցությամբ Օմար փաշայի վրա, այժմ վախենում եւ զգուշանում էր նրա բռնկումից: Հանկարծ ամբողջ կատաղությամբ չարթնանա թուրքը նրա մեջ. հանկարծ գրգ-

ռելով նրա արյունը, ինքը չդառնա առաջին՝ զոհը: Օճար փաշան արդեն գոմ-
ռալով չափում էր սենյակի լայնքն ու երկայնքը այնպիսի խելացնոր կատա-
ղությամբ, որ ավագ կինը տեսնելով նրա հոգեվիճակը, ձեռքով չանչելով
նրան, այնուամենայնիվ չհամբերեց.

- Այդ ինչպե՞ս կախարդեցիք նրան, որ ուր որ է նա մոռանալու է իր
Ալլահին:

- Չգիտեմ, - ուսերը թոթվեց Եղիսաբեթը:

- Ես կկախեմ նրան, այդ ստամբուլցի ավարա սրիկային, ես առանց
այն էլ հետախուզության սպաներին անտանելիորեն ատում եմ: Ես նրան
ցույց կտամ, թե ինչ է նշանակում հոգեկան մշակումը: Նա, Ձեյնաբ խանում,
ձեր տուն այլևս ոտք չի դնի, այլապես նրան անմիջապես աստիճանազրկել
կտամ, հետո արդեն կհետետեն այլ պատիժներ: Իթողլիթներ, ես հրամայել եմ
ինչ գնով լինի գտնել ինձ հետապնդող մորուքավորին, այո՛, այո՛, սեւ մորու-
քով, ողջ կամ մեռած: Այդ էշերը գնում, վախեցնում եւ թալանում են մի խեղճ
կնոջ, սպառնում օձի նման սողալ նրա անկողինը, իբր հոգեկան մշակման են
ենթարկում: Սրա՛նց նայիր ... Գոգեկան մշակում, չէ մի պոզե՛ր ... Ձեյնաբ խա-
նում, նա այլևս ձեր տուն չի մտնի, իսկ եթե մտնի, ուրեմն, քեզ պատճառած
վնասը հատուցելու համար ...

- Շնորհակալ եմ, փաշա, երկնքից - գետին շնորհակալ եմ, դուք մխի-
թարեցիք ինձ ... - Եվ գայթակղիչ ժպտաց:

Օճար փաշան խլեց նրա ձեռքն ու մոտեցրեց շուրթերին.

- Ապրես, գոգալ, քո այցելությունը ջախելության այցելություն է, վալլահ ...

Գնալով տաքացավ փաշան: Գնալով քաղցրացավ նրա վերաբեր-
մունքը հայուհու հանդեպ: Այժմ Եղիսաբեթը լրջորեն խորհում էր իր արարքի
հետեւանքների շուրջ. «Արդյո՞ք սա չի նշանակում մրից ելնել մրջուկն ընկ-
նել: Ախր, այս գազանն ավելի կատաղի է, քան Նազըմ բեյը: Աս խռիկ կտա
հետախուզության սպային, սա իմ կարծիքով նույնիսկ ուրախ է շտաբի պե-
տի չքանալով: Բայց սրանից ազատվելը շատ ավելի դժվար է, քան մյուս եր-
կուսից: Սրան ոչնչացնելը եւ անհնար է, այնպիսի անուծելի պրոբլեմ, որի
տակից դուրս գալն անհնար կլինի: Ինչ անել, արդեն եղածը եղել է: Թող սա
զսպի՛ իր հետախուզության սպային, հետո կմտածենք սրան զսպաշապիկ
հագցնելու մասին: Ամեն ինչից երեւում է, որ Օճար փաշան շատ է քաշվում
իր ավագ կնոջից, որի համոզմանություններն ու փնփնթոցները տանում է
համարյա լռությամբ եւ համաձայնությամբ: Օարյահեղ դեպքում կդիմեմ կնո-
ջը, միայն թե այս հետախույզից ազատվեմ:

Օճար փաշան շատ տխրեց Ձեյնաբ խանումի վերջին խնդրանքի
պատճառով: Միայն կնոջ բնագրի ճշգրտությամբ պետք է բացատրել այդ
խնդիրքի չնախատեսված ծնունդը:

- Գարգելի փաշա, վերջում ունեն մի խնդիրք, որը կարող է լուծվել քո
միջամտությամբ եւ քո օգնությամբ: Ես ամուսնուս հետ եկա հայրենիք եւ,
ինչպես տեսնում ես, ընկա կրակը: Պատերազմն այնպես շրջափակեց ճանա-
պարհները, որ ոչ Թիֆլիս, ոչ Երեւան անհնար է ճանապարհը, իսկ Ալեք-

սանդրապոլի ճանապարհին ավազակություն են անում Աղբաբայի խուժանները: Գուցե դուք, փաշա, առաջիկայում օգնեք մեզ դուրս գալու այս կրկնակի շրջապատումից: Չէ՞ որ Ախալքալաքի բնակչությունը գաղթել է, ինչպես ասում են մենք մնացել ենք անապատում, ոչ ծանոթի, ոչ բարեկամի երես չենք տեսնում: Եթե դուք չլինեիք, փաշա, մենակությունը եւ անտերությունը կուտեին մեզ ...

- Խանում, ես պատրաստ եմ ամեն ինչում օգնել ձեզ: Մեղքս ինչ թաքցնեմ, աշխարհս փչացել է: Ես ինչպե՞ս քեզ հանձնեմ մեր դամազ սպաների ձեռքը, դա արդյոք չի՞ մշանակի գառի պաշտպանությունը գայլերին հանձնել: Քո գեղեցկությունը, խանում, քո թշնամին է: Ես այդպես եմ հասկանում, խանում: Շտապել հարկավոր չէ: Օրը կգա, ես ինքս կանցկացնեմ ձեզ կրակի գծից: Իսկ հիմա վաղ է: Այնպես որ Օմար փաշան միշտ պատրաստ է քեզ օգնելու: Գուցե միշտ դիր ինձ վրա ... Ձեյնաբ խանում, դու արդեն գիտես իմ անունը, իմ տան ճանապարհը: Խնդիրքս է: Այցելիր մեզ, ցրիր իմ կյանքի տաղտուկը: Կարծում եմ, որ դու հասկանում ես, որ զինվորականներին, եթե չի պակասում քաջությունը, ապա պակասում է խելքը, սրամտությունը: Նրանց շրջապատում չի ցրվում, այլ ավելանում է տաղտուկը: Քո նույնիսկ անխոս ներկայությունն ավելին արժե, քան այդ աքլորների թղթախաղի աղմուկը, սնապարծությունը, որ ուղեկցվում է ստախոսությամբ, - եղիսաբեթի ձեռքը թոթվելով խնդրում էր Օմար փաշան, հրաժեշտի պահին: Նրան ջերմ հրաժեշտ տվեց նաեւ ավազ կինը, որի սիրտը տաքացել էր եղիսաբեթի խնդիրքը Օմարին-իրեն օր առաջ օգնելու այստեղից հեռանալու:

Սեւ Արսենը բարձր գնահատեց նրա այցելությունը բինբաշուն: Նրա խնդիրքը, նրա դիվանագիտությունը.

- Դու շարունակիր նրան հմայել, առանց վախենալու: Ընդունիր սպաներին եւ միայն այն ժամանակ, երբ նրանք միայնակ կմտնեն քո հարկի տակ: Դակառակ դեպքում կվնասվի եւ առաջադրանքը, եւ քո պատիվը: Իսկ ես խոստանում եմ քեզ նվիրել մի սպա, Նազըմ բեյի բոյ բուսաթով, որպեսզի մաքրվի նրան սատկացնելու մեջ քո մեղքը ...

Ինչպես ասում են՝ ուրբաթը շաբաթից շուտ եկավ: Մինչեւ հետախուզության սպան շարունակում էր հոգեկան մշակումները, մինչեւ որոնվում էր Նազըմ բեյը ողջ կամ մեռած, Խըրթըզի մերձակայքում տեղացի թուրքերը գտել էին մի զինվորականի դիակ, որին գետի կատաղած ալիքները քարեքար տալով բերել, քշել էին ամրոցի մերձակայքը: Դիակը դեմ էր առել առափնյա ծառի բնին: Մի բան անկասկած էր, որ թուրք սպայի դիակ էր, որ ջրերը նրան քշել էին Ախալքալաքից, որովհետեւ թուրքական զորքը տեղակայված էր Ախալքալաքում, իհարկե նաեւ Ախալցխայում, բայց ջուրը քանի որ վերից վար է հոսում, հետեւաբար, դիակը կարող էր լողալ ներքեւ՝ միայն Ախալքալաքից, Ջավախքի բարձրավանդակից դեպի Մեսխեթիայի ձորերը: Անմիջապես դիակը տեղափոխվեց Ախալքալաք, հանձնվեց զորամասին: Դիակի զննումից պարզվեց, որ նա գնդակահարվել է դիմափար կրակոցով եւ անմիջապես ընկել է գետը: Դիակը չճանաչվեց: Այն հաստատ համոզմուն-

քը կար, որ դա Նազըմ բեյի դիակն էր: Հետո պարզվեց, որ անհետացել է նաեւ հրաձգային դասակներից մեկի հրամանատարը, սակայն նա նոր էր կորել, իսկ այս դիակն արդեն քրքրվել էր ջրերի մեջ, քարերին բախվելուց: Օր չանցած հետախուզության սպան կանչվեց Օմար փաշայի մոտ: Նա շփոթված էր, գլխիկոր: Իսկ Օմար փաշան նրան նայում էր, իրոք, սուս հայացքով, որ թուրքը նայում է խոզի մսին:

- Հը՞, տո՛, մոզի, զեկուցիդ ինձ քո հոգեկան մշակումների մասին: Ինչի՞ հասաք, հայտնաբերեցի՞ք Նազըմ բեյի սպանողին, թե ջարդեցիք խաղաղ մարդկանց կահույքը, կահկարասին, թե՞ թալանեցիք թանկարժեք իրերը: Մի՞թե այդ էին ձեր որոնումների արդյունքները: Իսկ այդ ժամանակ Նազըմ բեյի գնդակահարված դիակը ճանապարհորդություն էր կատարում Ախալքալաքից Մեսխեթի: Տո՛, մոզի, ուրեմն, քաղաքում ուրիշ սպանողներ չես գտել, գնացել մտել ես էդ խեղճ կնոջ տունը եւ նրա ծոցը մտնելու համար հոգեկան մշակման ես ենթարկում: Իսկ ինձ, քո հրամանատարին էլի տեղ ես դրել: Ինչո՞ւ չես զեկուցել, որ նորից սպա է անհայտացել: Հիմա ու՞մ ես հոգեկան մշակման ենթարկելու, տո, տո ...

- Ո՛ր հետեւեց հայիոյանքի կրակահերթը: - Հիմա ի՞նչ անենք, ինչպե՞ս վարվենք քեզ հետ: Տրիբունալի ձեռքը տամ քեզ, թե՞ քաջություն կունենաս էդ քո դատարկ գանգը ցրիվ տալու ... Որոշի՛ր ...

Սպան գնաց, Օմար փաշան կանչեց նոր նշանակված շտաբի պետին: Այդ պաշտոնում առաջ էր քաշվել առաջին գումարտակի հրամանատարը: Մտավ եւ զեկուցեց, որ ներկայանում է բինբաշու հրամանով:

- Կարող ես այսուհետ չզեկուցել ներկայանալուդ մասին, - ասաց փաշան: - Մենք պաշտոնակից ընկերներ ենք ...

Այդ եւ հաջորդ օրերը հետախուզության սպան չերեւաց: Օմար փաշան զարմացավ. «Եթե առավոտ վաղ նա ինձ մոտ չմտներ, օրը օր չէր: Չլինի՞ր դա իրոք գանգը ցրիվ է տվել: Չեմ հավատում, դա եսասեր էլի մեկն է: Նրան որտեղի՞ց այդքան ինքնասիրություն, այդքան քաջություն, որ կարողանա գանգը ցրիվ տալ»: Շտաբի պետն էլ տեղյակ չէր հետախույզ սպայից: Ջորանոցում եւս ոչ մի տեղ չգտան: Փնտրտուք հայտարարվեց: Չգտան: Հետո զորամասի կապի սպան, որ վերադարձել էր գործուղումից, Արդահանից գրավոր զեկուցագիր ներկայացրեց բինբաշուն, որի մեջ խոսվում էր իր հանդիպման մասին՝ հետախուզության սպայի հետ՝ Արդահանի հյուրանոցում: Այն մասին, որ հետախույզն ասել է, թե փախել է Օմար փաշայի զորամասից, որովհետեւ այնտեղ իշխում է զինվորականության միջնադարյան ոգին, որ Օմար փաշան հիմարի մեկն է եւ հովանավորում է ռուս լրտեսներին: Խոսել է, որ Ջեյնաբ անունով խանումը, որ ավարտել է Խարկովի գաղտնի ոստիկանական դպրոցը, այժմ փափուկ կյանք է վարում Ախալքալաքում, զորամասի հարեւանությամբ, որ լինելով գեղեցկուհի, հմայում է թուրք սպաներին, քաշում իր անկողինը եւ հետո նրանք անհայտանում են ու գոլորշիանում: Այդ անգութ գեղեցկուհին չխնայեց նույնիսկ շտաբի պետին, Բեռլինի զինվորական ակադեմիայի շրջանավարտին՝ Նազըմ բեյին: Ամբողջ օրը քե՛ք քաշելով

նրա հետ, այնուամենայնիվ, կերավ գլուխը: Սպայի դիակը հայտնաբերվեց Խըրթըզի մոտ, Թափարվան գետի ջրերում: Ուրեմն, նրա ձեռքի տակ գործում է մի ամբողջ ֆիզայական ստորաբաժանում, Սեւ Դելի գլխավորությամբ: Ինքը՝ լինելով հետախուզական ծառայությունների մասնագետ սպա եւ գիտակցելով, որ պայքարը հայ գեղեցկուհու եւ նրա զինակիցների դեմ նշանակում է նաեւ պայքար Օմար փաշայի դեմ, որն անհույս բան է, որովհետեւ այդ ցնդած ծերուկը եւս սիրահարված է Ձեյնաբ խանումին, դասալքել է զորամասը եւ գնում է Ստամբուլ, ոչ թե զինվորական իշխանություններին բողոքելու բինբաշուց, այլ գտնելու հանգուցյալ Նազըմ բեյի հարազատներին, որոնք ազնվական հին, տոհմիկ գերդաստանից են, Բարձր Դռան տերերի շրջանում ունեն բավականին մեծ ազդեցություն եւ նրանց օգնությամբ պայքարելու այդ դարն ապրած ապուշի դեմ, որ փչացնում է թուրքական բանակի ձեռքբերումները՝ նրան քշելով միջնադարյան փակուղի:

Նամակը, որ ստացավ կապի սպայից, զեկուցագրի տեսք ուներ եւ երեւի կապի սպան նրա օրինակները անպայման կուղարկեր նաեւ բանակի հրամանատարներին եւ այլ պաշտոնյաների: Հետախուզության սպան դասալքել է զորամասը պատերազմական դրության ժամանակ, դա ամենամեծ հանցագործությունն է ներկա պայմաններում եւ պատժաչափը զնդակահարությունն է: Այս մեկ: Հետո պետք է պարզել, թե կապի սպան արդյո՞ք այդ նամակը չի ուղարկել վերադասին: Եթե ոչ, ամեն միջոցով կանխել: Եթե այո, այստեղ Օմար փաշան կատաղությունից կրծում է շրթունքները: Ի՞նչ պատասխան է տալու վերադասին: Արդյո՞ք պիտի նահանջի դասալիքի սպանուհիների առջեւ, թե՞ նրան վերացնելու ուղիներ որոնի եւ գործի անցնի: Իսկ ինչպե՞ս վարվել Ձեյնաբ խանումի հետ: Նրան շարքից հանելը Օմար փաշայի ծրագրերում չկար: Ձեյնաբ խանումին չվայելած Օմար փաշան չէր կարող ո՛չ դատել, ո՛չ հանձնել իշխանությունների ներկայացուցիչներին, ո՛չ էլ նույնիսկ ալլահին: Նրան նույնիսկ թվում էր եւ նա հավատացած էր, որ սիրում է այդ կնոջը: Կիրքը կուրացրել էր նրան: Այդ կնոջ ժպիտը արդեն ծերացող զինվորականին խելքամաղ էր անում: «Այս ինչ օրն եմ ընկել, ալլահ, ամենասարսափելի դեմքն ու աչքերը, որ ինձ հասցրին խելագարության, այդ Սեւ Դելինն էին: Ամենահամբուրելի, ամենաշքեղ կինն էլ Ձեյնաբ խանումն է: Երկուսն էլ այս աշխարհից: Իրարամերժ: Մեկի հայացքն ինձ քշում էր այս երկրից ու կյանքից, մյուսինը՝ քաշում է ինձ այս երկիրն ու մղում դեպի կյանքի վայելքները: Իսկ եղ՝ հայվան հետախույզն էլ այս կնոջը նվիրաբերում է ռուսական լրտեսությանը: Նրան՝ այդ հետախույզին հարկավոր է վերացնել: Եվ հանկարծ հիշեց իր փրկարարին՝ Քոռ Ջամալին: Ասում են՝ այդ շան տղան մինչեւ սպա դառնալը եղել է Ստամբուլի ահն ու սարսափը: Ոչինչ նրան խորթ չէ. ոչ սպանությունը, ոչ կողոպուտը, ոչ մի բան: Օմարը ծափ տվեց: Ներս մտավ ասկյարը.

- Օղլում, արագ ինձ մոտ կանչիր յուզբաշի Ջամալին: Հասկացա՞ր ...
- Քոռ Ջամալին, փաշա ...
- Այո՛, արագ, արագ, շատ է հարկավոր ...

Ժամ չէր անցել, Քոռ Ջամալը ներկայացավ: Օմար փաշան նարգիլե էր ծխում եւ որոճում իր անելիքն ու ասելիքը: Նա զննում էր բարձրահասակ, թիկնեղ, սպիերով ակոսված դեմքով այդ մարդուն եւ հավատացած էր, որ նա ի վիճակի է կատարելու ամենահանդուգն արարքներ:

- Ջամալ, քեզ ռաբարկելու եմ գործուղման՝ Ստամբուլ ... Կգնա՞ս ...

Պատասխանի փոխարեն այդ հսկան փլվեց բինբաշու առջեւ եւ խլե-
լով նրա աջը, քսեց իր ճակատին, հետո սկսեց ողողել համբույրներով՝ այն-
քան, մինչեւ որ բինբաշին զգվանքով ետ քաշեց ձեռքը:

- Յերիք է, տո արջ, ձեռքս լողոցես, հերիք է: Բայց, իմացի՛ր, այնտեղ
ման գալու, զբոսանքի չես գնալու: Քո գնալը ոչ ոք չպիտի իմանա: Գնալու
ես մեծ գործ կատարելու: Դու ճանաչո՞ւմ ես մեր զորամասի հետախուզութե-
յան սպային ...

- Ճանաչում եմ ...

- Գիտե՞ս, որ նա դասալքել է զորամասը, այն էլ պատերազմի ժամա-
նակ: Մեր ունեցած տեղեկությունների համաձայն, հիմա նա գտնվում է
Ստամբուլում: Ահա նրանց Ստամբուլի հասցեն: Կարծում եմ, լավ գիտես,
պատերազմի ժամանակ նման հանցագործության պատժաչափը:

- Նրա պատժաչափը գնդակահարությունն է ...

- Ուրեմն դու պիտի իրագործես այդ պատիժը ...

- Կանեմ, փաշա, այդ աքլորին կուղարկեմ Աիրիմանի ծոցը:

- Ապրես, բայց տես, որ չբռնվես: Վերցրու այս քսակը: Պետք կգա:

- Օ՛, փաշա, ես դրանից շատ ունեմ, թալանից արդեն աչքս կշտացել է ...

- Վերցրու, ոսկի ինչքան շատ ունենաս, այնքան ուժեղ կլինես, Ջա-
մալ: Ոսկին շատ լինել չի կարող: Նրա կարիքը միշտ զգացվում է: Մեծագույն
խնդիրքս նորից եմ կրկնում՝ զգուշություն, եղա՞վ ... Հանիր սպայական հա-
մազգեստը, փոխվիր ...

- Աչքիս վրա, փաշա, ամեն ինչ կանեմ ու կվերադառնամ ... Քոռ Ջա-
մալի գնալու հաջորդ օրը Օմար փաշան իր թիկնապահին պատվիրեց գնդա-
կահարել կապի սպային, բայց ոչ զորամասի, այլ քաղաքի տարածքում, որ-
պեսզի սպանությունը վերագրվի հայ վրիժառուներին: Կարգադրեց նաեւ
վերցնել սպանվածի դաշտային պայուսակն ու թաքուն բերել շտաբ: Սակայն
ամեն բան չէ, որ ընթանում է բինբաշու կարգադրության համաձայն: Երկու
օր անց թիկնապահը գնդակահարեց կապի-սպային, սակայն թիկնապահն իր
հերթին դարձավ վրիժառուների զոհը եւ պայուսակն էլ խլվեց նրա ձեռքից:
Այս փաստը մտահոգություն պատճառեց բինբաշուն, բայց հավատացած էր,
որ վրիժառուները երբեք նման փաստաթուղթը չեն հանձնի թուրքական իշ-
խանություններին: Տասն օր չանցած Ախալքալաքի սանջակի սահմաննե-
րում երեւաց Քոռ Ջամալը, որը Խոզափին լճի ափին զնդակահարվեց դարա-
նից: Հասկանալի է, որ այս վերջին սպանությունը եւս կատարվեց Օմար փա-
շայի հրամանով: Իսկ Ջամալը գալիս էր հաղթակամորեն, զեկուցելու բինբա-
շուն, որ նրա հրամանը կատարված է՝ դասալիքը պատժված: Օմար փաշան
հետախուզության սպայի մահվան լուրն ստացավ Թուրքիայի զինված ուժե-

րի մինիստրությունից, ուր հետախուզության մեջ գտնվող սպայի դիակը գտնվել էր Բոսփորի նեղուցում: Սպանությունը կատարվել է անհայտ անձանց կողմից՝ դանակի հարվածով: Ջամալի սպանությամբ վերջ էր դրվում նրա հոգեմաշ կասկածներին ու մտատանջումներին: Մնում էր իրագործել ամենակարեւորը, ամենագլխավորը. վայելել Ձեյնաբ խանումի սերը, նրա մարմնի խելահեղության հասցնող հմայքները: Սակայն Օմար փաշան այս հարցում հապաղում էր: Մեղմ ասած, նա վախենում էր իր ավագ կնոջից, որը ազդեցիկ ընտանիքից էր, եւ Օմար փաշայի սիրային բռնկումներին վերաբերվում էր ոչ միայն խանդով, այլեւ զզվանքով, քանզի վերջին տարիներին իր ամուսնու սիրո առարկաները քահել ու գեղեցիկ հայուհիներն էին, որ վայելում էր Օմար փաշան, հաշվի չառնելով նրանց քրիստոնյա, այսինքն գյավուր լինելու հանգամանքը:

* * *

Վերստին կրկնենք, որ, իրոք, ուրբաթը շաբաթից շուտ է գալիս: Ախալքալաքի գորամասը պահվում էր թիկունքում, դեպի հյուսիս էլ արեւելք՝ ռազմական գործողությունների ծավալման համար: Սակայն տակավին չէր գալիս նոր ավանտյուրայի պահը: Ռազմաճակատը խցանվել էր նաեւ Ախալցխայի եւ Ախալքալաքի գավառներում: Թուրքական բանակի հրամանատարությանը խոր անհանգստություն էր պատճառում գրաված քաղաքի կայազորի սպայական կազմի մեծ կորուստները, որ նման էր անամպ երկնքից կարկուտ տեղալուն: Ջորամասն Ախալքալաքում ոչ մի ռազմական գործողություն չէր իրականացնում եւ ոչինչ չէր խանգարում, ոչ ոք թվում է չէր սպառնում նրա առօրեական հանգստին: Սակայն հրամանատարական կազմը անընդհատ մաշվում էր, տալիս չարդարացված կորուստներ: Ձեկուցագրերում զորամասի հրամանատարությունը գանգատվում էր անորսալի վրիժառուների գործողություններից, որ դուրս էր զորամասի վերահսկողությունից եւ անհաղթահարելի էր սեպվում: Վերջիվերջո, երբ զոհերի թիվը հասավ պատերազմական չափերի, բանակի հրամանատարությունը որոշեց հեռացնել զորամասի հրամանատարին, նախօրոք շնորհակալություն հայտնելով նրան հայրենիքին մատուցած ծառայությունների համար եւ ներկայացրեց պետական պարգևի, որը չուշացավ եւ Օմար փաշան պարգևատրվեց շքանշանով: Փաշան զգում էր, որ այդ պարգևը նշանակում է վերջ իր զինվորական կարիերային եւ պարգևի հանդիսավոր հանձնումը համարեց սեւ օր-իր համար: Շաբաթը դեռ չանցած, բանակի հրամանատարի կապավորը բերեց նրան զորացրելու եւ թոշակավորելու հրամանը: Նա արագությամբ տուն ճանապարհեց իր ընտանիքը եւ ոչ թե հրաժեշտի, այլ՝ ամուսնական առաջարկությամբ այցելեց Եղիսաբեթին եւ նրա ամուսնուն: Զրույցը երկար չտևեց: Դյուրընկալները նրան շնորհալորեցին մեծ պարգև ստանալու եւ

զինվորական ծանր ծառայությունից ազատվելու համար: Հետո փաշան Ջեյ-նաբ խանումին հայտնեց իր այցելության բուն նպատակի մասին, նախօրոք խնդրելով Սերգեյին, որ մենակ թողնի իրենց.

- Խանում, ես ինձ համար եւ, կարծում եմ, նաեւ քեզ համար հանգեցի մի որոշման, որն արձատապես կարող է փոխել մեր ճակատագիրը՝ դրական իմաստով: Մենք կամուսնանանք, ես իմ ավագ կնոջը կփոխարինեմ քեզանով՝ զարդարելով քո կյանքը փաշայական խանումի տիտղոսով, իսկ դու կզարդարես իմ կյանքը, հնարավորություն տալով, որ քո սիրով ես վերստին երիտասարդանամ: Կարծում եմ մենք լեզու կգտնենք նաեւ քո ամուսնու հետ եւ մեր միությունը նա չի համարի իր անձնական կյանքին բռնությամբ միջամտելու փաստ:

- Շնորհակալ եմ, փաշա, ձեր սիրալիկ առաջարկի համար եւ ցանկանում եմ ձեզ հարցնել, ինչո՞ւ ինձ չեք հարցնում, թե ես ձեզ սիրո՞ւմ եմ արդյոք եւ ձեր փեսայությունը համարո՞ւմ եմ ավելի սրտամոտ, որպեսզի լքեմ իմ ամուսնուն եւ զարդարեմ ձեր ծերությունը՝ մերժելով իմ ամուսնու երիտասարդությունը: Ասացե՛ք, ինչո՞ւ եք արհամարհում իմ կարծիքը ...

Օմար փաշան նեղացավ, բայց չշփոթվեց.

- Գիտեք, խանում, ես չեմ ցանկանում խոսել իմ առավելություններից եւ իրավունքներից, չեմ խոսում նաեւ իմ հարստությունից ...

- Դուք ամեն ինչից առաջ պիտի խոսեիք ձեր տարիքից: Դուք արդեն թոշակառու եք, իսկ իմ ամուսինը ավելի ջահել է ինձանից: Մենք այն կարծիքին ենք, որ սազում ենք իրար, որ սիրում ենք իրար, որ հարմար ենք իրար, հետեւաբար, միտք չունենք նոր ամուսիններ որոնելու: Մեղմ ասած՝ դուք իմ ամուսինը լինել չեք կարող, որովհետեւ ես որպես կին գտնվում եմ իմ ծաղկուն հասակում, իսկ դուք որպես մարդ՝ արդեն թոշնում եք: Ձեզ ձեռնտո՞ւ է անկողնում ունենալ մի կին, որը չի սիրում ձեզ, զգվում է ձեր հպվելուց եւ ձեր գրկում երազում իր երիտասարդ ամուսնուն ...

- Բայց, խանում, մոռանում ես իմ իրավունքների մասին ...

- Այո՛, դուք հաղթող եք, մենք պարտված ենք, մենք ձեր գերին ենք: Բայց հասկացեք, կին դառնալու համար սիրել է հարկավոր, իսկ հարձ դառնալ ես չեմ ցանկանում: Դուք վարվեք ձեր իրավունքի համաձայն, բայց այնքան ցինիկորեն ինձնից փոխադարձ սեր մի պահանջեք... Ախր, ես ինչպե՞ս կարող եմ ձեզ սիրել, երբ ատում եմ: Ինչպե՞ս կարող եմ ամուսնանալ, երբ ամուսին ունեմ: Մտածեք այդ մասին ...

- Եթե շարունակեք ինձ վիրավորել, խանում, ես ստիպված կլինեմ հանձնելու քեզ՝ ինձ ուղեկցող ասկյարների հոշոտմանը: Ես անպատիվ կանեմ քեզ հրապարակորեն եւ մերկացրած կհանձնեմ զորամասին բռնաբարելու: Ես քո աչքերի առջեւ խայտառակամաի կենթարկեմ քո ամուսնուն ...

- Արեք, ինչ կամենում եք, կարող եք, ես կմեռնեմ ավելի ատելով ձեզ, անիծելով ձեզ, թքելով ձեր լկտիությունից փայլող մուսթին, ներեցե՛ք ...

Օմար փաշան վեր կացավ, ծափ տվեց եւ դասակի հրամանատարը երեւաց դռան մեջ.

- Աղախիմներին բերեք, թող հարսանեկան շքեղ շորեր հագցնեն խանումին: Եթե խանումը չցանկանա ենթարկվել, օգնեցեք աղախիմներին իմ հրամանը հստակ կատարելուն: Հետո նրան նստեցրեք իմ կառքը, սակայն կապած ոտքերով: Չեռքերը չկապել, նրա ամուսնուն հագցրեք ձեռնաշղթաներ եւ ոտքերին՝ կանդալներ: Դիմադրություն ցույց տալու դեպքում, թակեք, ջարդեք մինչեւ գիտակցությունը կորցնելը: Կատարեցեք հրամանը: Հա՛, չմոռանաք, որ ամուսնուն ես վերցնելու ենք մեզ հետ, նա շատ պետք կգա ինձ ...

Եվ անցավ իր զոհի կողքով փնջացնելով եւ արհամարհական հայացք նետելով նրա վրա: -

- Կփոշմանեք, գազան ... - Նետեց նրան եղիսաբեթը: Նրա ուսերը ցնցվում էին, սակայն աչքերը կրակ էին ցայտում եւ ոչ արտասուք: Աղախիմները առանց ասկյարների միջամտության կատարեցին Օմար փաշայի հրամանը: Եղիսաբեթին դարձրին Ձեյնաբ խանում: Նրան հագցնելով ժամանակակից եւ թուրքական զգեստների մի խառնաշոր: Ջարդարեցին ոսկեղենով եւ ակնեղենով եւ զրկած տարան եւ զցեցին կառքի փափուկ բարձերի վրա: Սերգեյին կապկպեցին եւ նստեցրին խոտով լցված ֆուրգոնի մեջ: Հարսանեկան թափորը՝ ասկյարների շքախմբի ուղեկցությամբ բռնեց Արդահանի ճանապարհը: Հարսանեկան քարավանն արդեն անցնում էր Սուվդա գյուղի մոտակա Գետեշեն կոչվող ուլորանը, երբ պայթեցին զենքերը, եւ ուղեկցող դասակի առաջապահ հեծյալներից երկուսը գլորվեցին ձիերից, սկսվեց շիլաշփոթը: Հարսանեկան երկարավուն եւ տպավորիչ քարավանը սեղմվեց ուլորանում եւ մինչ մարդիկ կորոշեին իրենց անելիքը, որոտաց երկրորդ համազարկը, թամբերից պոկելով եւս երկուսին: Հետո հետեւեց անտեսանելի մեկի բամբ ու որոտալից ձայնը.

- Սւի՛ր, Օմար փաշա, դուք շրջապատված եք, այստեղից դուք դուրս կգաք միայն մի պայմանով, եթե հենց հիմա ազատ արձակեք Ձեյնաբ խանումին եւ իր ամուսնուն: Ձգուշացնում ենք, եթե նրանց փորձեք վնասել, ապա ձեզանից ոչ մեկը դուրս չի գա շրջապատումից: Կոչնչացվի ձեր հարսանեկան ողջ շքախումբը: Տալիս ենք տաս րոպե ժամանակ ...

Տիրեց ծանր ու սպառնալից լռությունը, երբ մարդ լսում է նույնիսկ իր սրտի ձայնը: Հետո լռությունը ոչնչացավ թուրք կանանց՝ աղախիմների, սպասուհիների սուր ծղրտոցով, որոնք աղմկում էին ոչ այն է վախից, ոչ այն է անտեսանելի թշնամիներին ցույց տալու, որ շրջապատվածների մեջ կան նաեւ կանայք եւ զգուշանան, որ նրանք զոհ չդառնան տղամարդկանց մահու եւ կենաց գոտեմարտին:

- Լռություն, - հրամայեց նույն բամբ ձայնը, - մենք կանանց ձեռք չենք տա...

Հրամանը դանակի նման կտրեց կանանց ծղրտոցը: Սկսվեցին: Հետո հարսանեկան կառքի ոտնատակին երեւաց Օմար փաշայի կերպարանքը.

- Ես, Օմար փաշաս, չեմ կարող կատարել ամեն ավագակի պահանջ: Ես իմ հարսնացուին կամավոր ոչ ոքի չեմ զիջի, նրան դուք կարող եք հասնել միայն իմ դիակի վրայով: Չմոռանաք սակայն, որ մենք գտնվում ենք թուրքական հավիթի եւ հոկամ գյուղերի մերձակայքում, որ մարտի աղմուկը

նոքի կհանի նրանց եւ ձեր ավարառութիւնն իվերջո կպատժի ...

Փաշան երիտասարդի թեթեւությամբ թռավ կառքից եւ նետովեց դեպի ճանապարհամերձ առուն եւ դիրքավորվեց: Լսվեց ձիու դոփյուն: Ձին սուրաց ճանապարհով ներքեւ: Կապավոր էր, գնում էր օգնական ուժեր բերելու: Կրակոցը հեծյալին նետեց թամբից ներքեւ եւ խրտնած ձին բռնեց հետադարձ ճանապարհը դեպի Ախալքալաք:

-Գնդակահարեք ձիուն, նա վարգում է զորամասի տարածքը: Նա հիմա կատարում է կապավորի դեր ...

Համերաշխ համազարկը եղավ պատասխանը: Ձին նրբագեղորեն, խրխնջալով, կարծես կրակողների ջանքերը ծաղրելով թռչում էր առաջ: Բաշը աշնանային քամուն, պոչը իրանին հավասար պարզած, սլանում էր: Համազարկերը հաճախացան: Ձին գնդակ ստացավ գլխից: Նրա իրանը ներքին ուժով արգելակվեց, ասես սեղմվեց զսպանակով, սակայն ինտրոֆան մի քանի ոստյուն նրան նետեց առաջ, եւ նա գլուխկոնձի տալով, դուրս ընկավ ճանապարհից դեպի դեղնած, չինձված դաշտն ու անշարժացավ: Թուրքերի կողմից շարժումներ նկատվեցին եւ հատուկենտ, անհասցե կրակոցներով նրանք որոնում էին անտեսանելի թշնամիներին: Ձիավոր դասակը հանկարծ պոկվեց տեղից եւ թռավ առաջ: Դասակն ինչ իմանար, որ գնում է դեպի ստույգ մահ: Ձիմանալով ու չտեսնելով վրիժառուներին, որոնք սառնասրտորեն գնդակահարում էին իրենց: Ձիերը շրջվեցին, նորից սպանվածներ թողնելով ճանապարհին: Ձիավորները նորից հետ եկան եւ նորից սեղմվեցին շփոթահար հարսանիքավորներին:

- Թասլի՛մ, - հրամայվեց նրանց: Կրակը նորից դադարեց: Եվ հեծյալները չունենալով փրկության որեւէ ելք, հնազանդորեն բարձրացրին ձեռքերը: Սակայն հրամանատարը դարանից գնդակահարվեց: Նրան սպանեց Օմար փաշան՝ թշնամուն հանձնվելու համար: Օմար փաշայի թաքստոցի շուրջը կրակե քամի բարձրացավ:

- Փաշա, եթե չհանձնվէ կգնդակահարվեք: Շտապիր, ո՛վ նորափեսա ... Օմար փաշան բարձրացավ: Տուցադրաբար թափով գետնին զարկեց ատրճանակը եւ բարձրացրեց ձեռքերը: Գերիներն ազատված էին: Տղաներն արագորեն շղթայազերծեցին նորահարսին եւ Սերգեյին: Ծիծաղում էին եւ աշխատում:

- Է՛, փաշա՛, փաշա, շղթայված ոտքերով հարս տանելն, իրոք, որ թուրքական երեւույթ է:

- Ախ, դեւ Սեւ Արսեն, ես գիտեի, որ իմ մահը, իմ անպատվությունը քո ձեռքով է լինելու: Իմ ճակատագիրն է, ի՞նչ արած: Բայց մի բան իմացիր, հնարավոր է, որ քո մահը, քո անպատվությունն էլ իմ ձեռքով լինի ...- Եվ նրա ձեռքին փայլեց ատրճանակը:

Քամի Հարուժը քամու արագությամբ նետվեց նրա վրա եւ գնդակ ստացավ ձախ ուսին: Երկրորդ գնդակն օդ թռավ: Ծանր հարվածը գետնին տապալեց փաշային: Տուրգոմից արագ ներքեւ թռավ Սերգեյը: Նա հարսի՛ Ձեյնաբ խանումի փեշից կտրեց մի կտոր եւ սկսեց մաքրել եւ վիրակապել

Հարութի վերջը: Իսկ Սել Արսենն ու Օմար փաշան սիրալիրություններ էին փոխանակում միմյանց հետ: Օմար փաշայի լեզուն բացվել էր: Նա կարծում էր, որ այս հայերն իրեն սպանելու մտադրություն չունեն եւ չնայած իր թանկագին ավարի անփարատելի կորստին՝ ներքուստ շնորհակալ էր, որ շանսատակ չեն անում իրեն:

- Փաշա՛, գուցե քո արարքի մեջ դու ճշմարիտ ես: Գուցե քո արարքի մեջ քաջության մասնիկ էլ կա, որովհետեւ ինձ սպանելուց հետո, հազիվ թե հերիքեր մերոնց ասպետությունը եւ քեզ տեղնուտեղը շանսատակ չանեին: Եվ չեմ ցանկանում քո գլխին քարոզ կարդալ, որովհետեւ հայերն առած ունեն՝ գայլի գլխին ավետարան կարդացին, ասաց՝ շուտ արեք, ոչխարը սարն անցկացավ: Կարծես քիչ էր, որ դու ողջ գավառի հայությանը տեղահանեցիր, պատճառ դառնալով մեծ արյունահեղության եւ կորուստների, դեռ ցանկանում էիր քո քավթառ հալով բռնությամբ ամուսնանալ այս կնոջ հետ: Նա, ախր, քեզ կխեղդեր իր գրկում եւ սատկած ոջիլի նման դեն կնետեր: Թուրքերդ գոնե մի քիչ, մի քիչ ասպետություն ունեցեք եւ խնամախոսության մի գնացեք այնտեղ, ուր հարսն ամուսին ունի: Այդքան ցինիկությունը, այդքան դաժանությունը, այդքան արհամարհանքը այլ ազգերի նկատմամբ գերեզման կտանի ձեր բարոյականությունը: Թերեւս այսօր աշխարհում թուրքերից ավելի արյունռուշտ, ավելի անբարոյական ազգություն գոյություն չունի, որովհետեւ ոչ միայն պետական մեքենան, այլեւ ողջ թուրք ժողովուրդն է մասնակից հայերի ջարդերին: Ես քո գլխին քարոզ չպետք է կարդայի, բայց ինձ գնալէ չկարողացա ...

- Սեւ դեւ, դու շնորհակալ եղիր, որ ես քո դեմ չեմ նետել իմ զորամասը: Շնորհակալ եղիր, որ չեմ թողել գնդակահարվեն Ձեյնաբ խանումն ու նրա ամուսինը: Դուք այս խաղաղ օրերին ավելի շատ սպաների եք ոչնչացրել իմ զորամասից, եւ մենք ավելի շատ սպաներ ենք կորցրել, քան ռազմական գործողությունների ժամանակ: Ես փաստորեն ոչ թե չկարողացա, այլ չցանկացա ընդլայնել ռազմական գործողությունների էսկալացիան, որը ճակատագրական կլիներ քո ընդամենը երեսուն - քառասուն տղաների համար: Այնպես, որ մենք խաղն ավարտել ենք հավասար արդյունքով: Քվիթ ...

- Վաղ է քվիթ ասելու ժամանակը, փաշա: Բայց հայերս հավատացած ենք, որ շուտ, թե ուշ կգա նաեւ դրա ժամանակը: Իմ ասելիքն այլ է: Դու ասում ես, որ չես թողել որ գնդակահարվեն Ձեյնաբ խանումն ու իր ամուսինը: Ամուսնու գրկից կնոջը խլելը, նրան ստորացնելը պակաս՞ սրիկայություն է, քան գնդակահարելը: Դու շներին հոշոտելու կտայիր Ձեյնաբ խանումին, եթե սիրահարված չլինեիր նրան: Դու ռազմական գործողությունների էսկալացիայից վախենում էիր, որովհետեւ հաջողության հույս չունեիր երեք - չորս հարյուր ասկյար պիտի կորցնեիր, երեք - չորս տասնյակ վրիժառու ողբալու համար, որը ոչ ոք չէր ների քեզ, որի համար քո աստվածը՝ Քեմալ փաշան քեզ կկախեր: Սպանելով, ջարդելով հայերին, դու վախենում էիր նրանցից: Դու ճանաչում էիր քո մեղքը, փաշա ...

Եվ երեսը շրջո՞ց ու գնաց վերջին պատրաստություններին մասնակ-

ցելու, որպեսզի առանց ուշանալու հեռանան: Անուշադրության մատնված փաշան, այնուամենայնիվ, կատարեց իր վերջին «սխրամքը»: Հանկարծ լսվեց ձիու դոփյուն եւ հենց Սեւ Արսենի մոտով, քամու նման սրընթաց, հեծյալը նետվեց առաջ: Օմար փաշան փախավ:

- Սպանել նրան, - եղավ հրամանը:

Սկսվեց անկանոն հրաձգությունը: Իսկ հեծյալը գնդակների պարսեռից չէր բռնկվում: Ձին սլանում էր մեծ արագությամբ եւ զիզագաձեւ: Նա արդեն գնդակաչափ տարածությունը հաղթահարել էր: Սեւ Արսենը ձեռքը թափ տվեց.

- Ձեզ փաշան մեզ պա:տանդ թողեց: Ստիպված նրան սահմանված պատիժը դուք պիտի կրեք, - դիմեց ասկյարներին: Սկսվեց մեկ այլ ներկայացում: Ասկյարները լալիս էին: Փորձում համոզել, որ մայրեր ունեն, երեխաներ ունեն, որ ջահել են ու կյանքն իրենց առջեւում է: Գետնին թավալված, նրանք համբուրում էին Սեւ Արսենի տաբատի փեշերը, խլում էին ծանր ձեռքն ու մոտեցնում շրթուքներին:

- Ների՛ր, ների՛ր մեզ, Սեւ Դեւ փաշա, ների՛ր ...

- Իսկ դուք, շանորդիներ, երբեւէ որեւէ հայ մանուկի ներե՞լ եք, հայ կնոջ ներե՞լ եք, եղե՞լ է, որ անպատիվ չեք արել ձեր ձեռքն ընկած որեւէ հայ աղջկա, հայ հարսի ... Եղե՞լ է, շնածին սրիկաներ ... Տղանե՛ր, վերջացրեք սրանց, առանց խնայելու ...

Միջամտեց Եղիսաբեթը.

- Խմբապետ, մի գուցե ներե՞ք նրանց, գերիներ են ... Նրանք հիմա զինաթափ են, վնասագերծված ... Հիշիր, որ մենք հայեր ենք ...

- Ես գնդակահարում եմ սրանց հենց նրա համար, որ մենք հայեր ենք: Այսօր ազատ արձակենք այս գազաններին, նրանք վաղը պետք է շարունակեն իրենց չարագործությունները: Սպանե՛նք, թող պակասեն մեզ սպանողները ...

Մնացածը կատարվեց ակնթարթում: Ուղղակի դիմահար գնդակահարեցին բոլորին եւ աշխարհը խաղաղվեց: Ուր մեռնում է թուրքը, այնտեղ ազատագրվում է խաղաղությունը: Հետո արագ հողեցին նրանց: Հողը մերն է, հանկարծ դրանց լեշերը վարակ չտարածեն, չմուռտառեն հողի մաքրությունն ու գեղեցկությունը: Թուրքերի մթերքներն ու զենքերը բարձեցին երկու ձիերի վրա: Աղախիներին, որոնք երկուսն էին, ճակատագիրը որոշել չկարողացան: Նրանց վերցրեց Եղիսաբեթը որպես աղախիներ.

- Կամուսնացնեն ինձ սիրահարված սպաների հետ, - ծիծաղեց նա: Արդեն օրը թեքվում էր դեպի արեւմուտքը, երբ բռնեցին տան ճանապարհը: Քաղաք մտան ոչ սովորական ճանապարհով, այլ Դաղեշ, Մուրջախեթ, Խոսպիա գծով, որպեսզի չբախվեն ոչ թուրք խուժանի, ոչ էլ բանակի հետ: Ճանապարհին նույնիսկ փորձում էին կատակել, անգամ երգել:

- Տիկին Եղիսաբեթ, մենք բազմակնության փաստին ծանոթ էինք, բայց մեկից ավելի ամուսին ունեցող նորահարս տեսած չկայինք: Ինչպե՞ս հանդուրժեցիք երկու ամուսին ունենալու իրողությունը ...

- Ա՛խ, դուք, մեծախոսներ, չգիտե՞ք, որ ամուսիններիս համար ստեղծել էի մի կարգավիճակ, երբ մեկն ամբողջապես կապանքների մեջ էր, մյուսն ամբողջապես ազատ էր կապանքներից: Իմ հաշիվը պարզ էր ու հասկանալի: Երիտասարդ, ուժերի ծաղկուն շրջանում գտնվող ամուսինս վնասագերծված էր, շղթայված, իսկ ծերացած ու անկարող ամուսինս, քանի որ կանանց համար որոշակի վտանգ չէր ներկայացնում, ազատված բոլոր կապանքներից, կառքում բազմեւէր իմ կողքին, - ծիծաղում է Եղիսաբեթը: Ծիծաղում են տղաները եւ երգում.

- Համա թե նուրբ կատակչի ես, Եղիսաբեթ ...

Ջավախեցի սիրուն հարս,

Կարմիր փափուջ, դեղին մաս ...

Իրիկնադեմին խուճբը հասավ քաղաք: Ապահովության համար ապաստանեցին տաշվանթափա լեռան քարուտներում՝ սպասելով մութն իջնելուն: Հետախույզներ ուղարկեցին Եղիսաբեթի տան վիճակը պարզելու համար, չի՞ թալանվել բնակարանը, հսկողություն չի՞ սահմանվել տան վրա եւ արդյո՞ք հնարավոր է վերստին տեղավորվել բնակարանում: Տղաները բնակարանի շրջակայքում կաթկածելի ոչինչ չէին նկատել, թեւ դուռը գտել էին բաց: Սակայն ոչ մի բան, ոչ մի իր կամ առարկա տեղաշարժված չէր նրանց կարծիքով: Այս փաստն ավելի զգաստացրեց նրանց:

Հանկարծ դարանի մեջ չընկեցելու համար, մանավանդ որ ճանապարհային արկածը, դասակի ոչնչանալը, Օմար փաշայի փախուստը եւ այլ հանգամանքներ չէին կարող աննկատ մնալ զորամասից, որոշվեց սպասել մի քանի օր, եթե ամեն բան հարթ ընթանար: Միայն այն ժամանակ մտածել վերստին տուն վերադառնալու մասին: Եղիսաբեթին եւ նրա երկու թուրք աղախիններին տեղավորեցին խոսպիա գյուղում: Այնտեղ տեղավորվեցին նաեւ Սերգեյն ու Քամի Հարութը, վերջինիս ուսը բուժելու եւ ինքնապաշտպանության համար: Թուրք աղախինների գոյության փաստն աննկատ չմնաց գյուղի կողմից: Չվարթ, երես առած ու չարածճի թրքուհիները շուտով դարձան հույն տղամարդկանց բուռն հետաքրքրության եւ հույն կանանց խանդի եւ ատելության առարկաները: Նրանցից մեկն ընդամենը մեկ շաբաթում գլխահան արեց մի երիտասարդի եւ չնայած տղայի մոր սպառնալիքներին, թե ինքնասպան կլինի, ամուսնացավ նրա հետ: Մյուս թրքուհուն գտան գետափին խեղդամահ արված: Գյուղն առանձնապես չմտահոգվեց այս փաստով: Հույն տղաներն իրավունք չունեն թրքուհիների հետ ամուսնանալու: Սա անխախտ օրենք է հույների մեջ: Գյուղն ավելի շատ մտահոգված էր թուրք հարս ունենալու փաստով: Բայց մի օր, երբ հարսը սկսեց խոսել հունարեն, եւ թրքախոս հույները արյան ձայնով միայն գլխի ընկան, որ իրենց հարսը հույն է, գյուղովի հարսանիք արին, հազար ու մի նվերներով հարստացրին նորապսակներին եւ սկեսուրը, որ հարսի երեսը տեսնել չէր ուզում, արտասվեց եւ ուրախության ու շաթափություն ունեցավ նրա գրկում: Առանց ստուգելու, թե մյուս աղախինը հույն է, թե թուրք (նրան հողել էին հանդում), գնացին եւ դիակը բերին ու սուտափուս թաղեցին հունական գերեզմանա-

տանը, սակայն ընկերուհուց իմանալով, որ նա թրջուհի էր, տեղահան արեցին նրան գերեզմանատնից ու վերադարձրին նախկին տեղը: Այնպես որ մի շաբաթ շարունակ գյուղն զբաղված էր հույն հարսով եւ թուրք հանգուցյալի հարցերը կանոնավորելու հոգսով:

Քամի Չարուօն արագորեն ապաքինվում էր: Սերգեյն աչալուրջ էր նրա նկատմամբ: Դեղորայք չկար: Եվ նա ողջ օրը հանդում ու արտերում որոնում էր դեղաբույսեր ու նրանցով կատարում բժշկի իր պարտականությունը: Շտապում էին: Ո՞վ գիտե, հանկարծ կարող են երեւալ ասկյարները: Իվերջո, Խոսպիան քաղաքից հեռու էր ընդամենը չորս վերստով: Չարկավոր էր, որ Չարուօն կարողանար ուսին սեղմել հրացանը կրակելու համար, այդ իսկ պատճառով պետք է, որ ուսն առողջ լիներ եւ Սերգեյն ամբողջովին նվիրվել էր այդ գործին: Եվ արդյունքն իրեն սպասեցնել չտվեց: Մի օր Չարուօն հրացանը սեղմեց ուսին եւ թեւ արցունքներ հայտնվեցին նրա սեւ թանաքագույն աչքերում, որ նա վերագրեց աչքի մեջ փոշի ընկնելուն: Երկրորդ օրը կրկնվեց նույնը: Չետո ամեն ինչ ընթացավ հեշտ ու սովորական ձեւով: Իսկ մի օր դեմ-հանդիման հանդիպեց հեծյալ թուրք սուրհանդակի՞, թե կապավորի: Տեսնելով հրացանավոր Չարուօին, թուրքն անմիջապես ձրռչեց անելիքն այն հաշվով, որ մինչեւ Չարուօի հրացանն ուսից հանելը, ինքը հասցներ թրատել նրան: Եվ թուրքի հաշվարկը ճիշտ էր: Չնայած արագաշարժությանը Չարուօն հազիվ հասցրեց հանել հրացանն ուսից եւ ուղղակի բնագոյով հրացանը բռնեց սրամերկ թուրքի առջեւ: Չին նետվեց Չարուօի վրա եւ վերջինիս հրացանի փողին զնգաց թուրքի յաթաղանն ու երկու կես եղավ: Չարուօն փռվեց մեջքին ու ակնթարթային ուրագությամբ սեղմեց ձգանը: Թուրքը կախվեց ձիուց եւ ասպանդակին հագած նրա մարմինը քարշ տալով ձին դուրս նետվեց ճանապարհից եւ վազեց կալերի միջով, ուր ցորենի վերջին շեղջերն էին կախում հույն գյուղացիները: Սենամարտը կատարվեց նրանց աչքերի առջեւ: Այս անգամ Չարուօն նշան բռնեց ձիուն եւ կրակեց: Չին ընկավ հեծյալին ճխլելով իր տակ: Վազեցին: Չեծյալի դաշտային պայուսակից հանեցին կնքված երկու ծրար, բացին եւ սկսեցին որոնել թուրքերեն կարդալ իմացողի: Իվերջո՞ գտան: Առաջին ծրարում հայտնվում էր Խոջաբեկի փոքրիկ կայազորին՝ զորամասի նոր հրամանատարի նշանակման եւ մոտ օրերս նրա ժամանման մասին: Երկրորդում՝ բանակի հրամանատարը հուր ու կրակ էր ժայթքում զորամասի հրամանատարությանը, որ չի կարողանում վերահսկել փաստորեն անմարդաբնակ գավառի վրա, որտեղ ճանապարհներին ու շեներում տնօրինություն են անում թուրք ելուզակներն ու հայ ֆիդայիները: Բերվում էր փաստ, որ Արդահանի ճանապարհին անհայտ հանցագործները ջախջախել են Օմար փաշայի շքախումբը. որպես իրեղեն ապացույց բերվում է անտեր կառքն ու անտեր ձիեր գտնելու փաստը, իսկ Խոզափին լճի տարածքում մազապուրծ Օմար փաշային սպանել են թուրքերը կողոպտելու նպատակով եւ, որոնք կալանվել են ճանապարհային հսկիչ ոստիկանության կողմից: Հրամայում են խիստ լինել, կարգ ու կանոն հաստատել, մեղավորներին պատժել եւ այլն եւ այլն: Այս նամակը լուրջ ուրախություն պատճառեց

Սերգեյին ու Չարուֆին, իսկ Եղիսաբեթն իր երախտագիտությունը հայտնեց՝ համբուրելով նրա թուխ եւ արեւահար մուրթը: Չարուֆը գաղտնի նամակներն անմիջապես թոցրեց ճգնավորի վանքի տարածքը, ուր տեղակայված էր խումբը:

Չաջորդ օրը Եղիսաբեթն ու Սերգեյը վերադարձան տուն: Այս անգամ առանց վախի, որովհետեւ Պետեշենի մարտի վերջին, ամենավտանգավոր վկան, Օմար փաշան ոչ եւս էր եղել, այն էլ թուրքերի ձեռքով, որոնք ի կատար էին ածել Սեւ Արսենի որոշումը: Այժմ խմբի տղաները զգում էին, որ ուրիշ կյանք է սկսվելու իրենց համար: Ինչպե՞ս էր վերաբերվելու նոր հրամանատարը վրիժառուների, մանավանդ Եղիսաբեթի քաղաքում բնակվելու հարցին, բավական սուր վեճի առարկա դարձավ: Տղաներից մի քանիսն այն կարծիքը հայտնեցին, որ գուցե ճիշտ չէր Եղիսաբեթին ու Սերգեյին տուն ուղարկելը: Կարող է նման խստությունների գնացող բանակի հրամանատարությունը հրամայել՝ վերացնել բոլոր կասկածելի մարդկանց, մաքրել գավառը ֆիդայիներից, ինչ գնով էլ լինի:

Մեկ-երկու օր անց, զինվորական ավանն ասես արթնացավ: Առավոտից նվազախումբը քայլերգեր էր թնդացնում: Քաղաքի կենտրոնական փողոցում գտնվող երկհարկանի տան թիթեոյա տանիքի դիտակետից տղաները հեռադիտակով ուշադիր նայում էին զինվորական ավանում կատարվող արարողությունը: Ջորամասում երեւաց նաեւ ավտոմեքենա, իր տղաներից բոլորը չէ, որ տեսել էին: Ուրեմն, եկել էր բանակի հրամանատար Վեհիբ փաշան, նոր հրամանատարին ներկայացնելու համար: Ամեն ինչից երեւում էր, որ այնտեղ ճառեր են ճարճատում: Չետո գորահանդես տեղի ունեցավ, հետո լռեցին բոլոր ձայները: Դատարկվեց ավանի եկեղեցամերձ հրապարակը:

- Գնացին ճաշելու, քեֆի...- ասաց դիտակետում նստած Չերոս Սկոն,- մենք էլ գնանք մի կտոր հաց ուտելու,- եւ ընկերոջ՝ Ասպետ Սկոյի հետ իջան դիտակետից: Նրանք, երկու Սկոները, համաշխարհային պատերազմի մասնակիցներ էին, երկուսն էլ Գեորգեյան շքանշանների ասպետ եւ քաղաքի պատվախնդիր բնակչությունը նրանց մեծարեց Չերոս եւ Ասպետ մակառուներով՝ մոռանալով նրանց ազգանունները: Իրենք էլ այնպես ընտելացան իրենց նոր անուններին, ասես մանկուք օրվանից այդպես էլ եղել էին իրենց անունները:

Քարանձավում երկար խորհրդակցում էին նոր պայմաններում գործելու շուրջ:

- Չարկավոր է բթացնել նրանց զգոնությունը եւ միաժամանակ ռազմական գործողություններից ձեռ քաշել: Թող իմանան, որ մենք այլեւս գոյություն չունենք...

- Չետո՞, դրանից ո՞րն է մեր օգուտը,- խոսեց Թովիալ Արսենը,- հաց պիտի՞ ուտենք: Այո: Նրանց պատժիչ գործողություններին պիտի՞ դիմագրավենք: Այո: Աստված չանի, կարող է վաղը կամ մյուս օրը նրանք ցանկանան վերացնել Եղիսաբեթին ու Սերգեյին, մենք պիտի՞ փորձենք արգելակել, բռնել բանաւարկողների ձեռքը կամ փախցնել նրանց թուրքերի ձեռքից: Այո:

Ուրեմն, մենք կշարունակենք մեր գործը, իսկ նրանց դիրքորոշումը մեր նկատմամբ մեզ կթելադրի ճշգրտելու մեր դիրքորոշումը նրանց նկատմամբ...

- Կարելոյրը, եթե կուզեք իմանալ, ամենակարելորդն այն է, որ խմբի տղաները դարանի մեջ չընկնեն եւ մշակման չենթարկվեն թուրքերի կողմից եւ թույլ չտան նրանց մեր հետքին ընկնելու: Եթե նրանք կարողանան իրականացնել նման գործողություններ, մեր մի բուռ խմբից ի՞նչ կարող է մնալ, ոչինչ, իսկ այսպես՝ մանր, աննախատեսելի, անորսալի գործողություններով մենք մինչեւ այսօր, ավելի քան երեք հարյուրից ավելի թուրք ենք շարքից հանել, որոնցից հիսունից ավելի են սպաները: Մենք մանր, բայց նուրբ գործողություններով պիտի մաշենք մեր թշնամուն: Ջրկելով նրան այս երկրի տերն զգալու հաճույքից, թույլ չտալով օգտվելու հաղթողի իրավունքներից, ազատ շնչելու հնարավորությունից: Մենք ռազմական գործողություններին պետք է նախապատրաստվենք այնպես, որ լիովին վստահ լինենք մեր հաջողությանը եւ հավատացած, որ մարդկային զոհեր չենք տալու: Մենք պետք է այնքան զգոն եւ սթափ լինենք, որ կարողանանք անմիջապես օգտվել եւ օգտագործել մեր հակառակորդի ոչ սթափ, ոչ զգոն իրավիճակները: - Այսպես երկար խոսում էր Սեւ Արսենը նորից ու նորից մարդկանց կոչելով եւ՝ հերոսության, եւ՝ զգոնության: Հետո նշանակվեցին տեղակայման վայրերը եւ լրացուցիչ վայրերը: Նշանակվեցին դիտակետերն ու լրացուցիչ դիտակետերը, որոշվեց, թե վտանգի պահին ուր պետք է տեղափոխել Եղիսաբեթին ու Սերգեյին: Հետո խոսափա ուղարկվեցին երեք հոգի՝ փաշայից բռնագրաված թուրքական ոսկի փողով: Հաց, մթերք եւ որել տաք ճաշի ակնկալությամբ.

- Թող այսօր խրախճանքով ու խնջույքով զբաղվեն թուրքերը, իսկ վաղը՝ մեր օրն է: - Տղաները քուն մտան վաղը կուշտ ուտելու երազանքով: Զարանձավում մարմրող կրակի ցուլքերի տակ մեղմիկ հնչում էր հայրենի կարոտի եւ սիրո երգը: Տղաներից Սարգիս Դվինյանը Տերյան էր արտասանում.

Կարծես թե դարձել եմ ես տուն, Բոլորն առաջվանն է կրկին, Նորից դու հին տեղդ նստում Շարժում ես իլիկը մեր հին... Մանում ու հեքիաթ ես ասում, Մանում ես անվերջ ու արագ, Սիրում եմ պարզկա քո լեզուն Ձեռքերդ մաշված ու բարակ...

- Ե՞րբ եմ քեզ տեսնելու, մա՛յր իմ, - թառանչեց, - որ սիրեմ քո մաշված ու բարակ ձեռքերը, իմ գաղթական, իմ սիրելի մայրիկ...

Նոր հրամանատարը, բինբաշի խալիս բեյը գավառ ժամանելուն պես սկսեց բռնությունները թուրք զինվորականության նկատմամբ: Եկեք սխալ չհասկանանք. գավառում հայեր չկային, այլապես խալիս բեյը հուր ու կրակ կժայթքեր նրանց գլխին: Բարձրահասակ, ներքինու դեմք, առանց բուսականության, ծույլ, քնկոտ, մանավանդ անշարժ հայացք եւ փոքրիկ գլուխ՝ դրված լայն ուսերի վրա: Այս ամենը նրան նմանեցնում էին, ավելի ճիշտ դարձնում իսկական օձ, այնպես որ տեսնողը սկսում էր նրա մեջ որոնել օձի գալարուն մարմինն ու պոչը: Բայց այդ օձեղեն հայացքը գիտեք նաեւ արթնանալ, երբ արթնանալու անհրաժեշտություն կար, երբ ցասումը, կատաղութ-

յունը հետ էր քաշում, բացում ականակապիճները: Աչքերն այդ պահին կանաչ բոց էին արծակում, շրթունքները սեղմված էլ բառերը տափակելով դառնում էին ֆշշոց, եւ ուռչում էին վզի երակները եւ գլուխը մարտականորեն նետվում էր առաջ, եւ թափվում էր թույնը.- գնդակահարել, կախել, ցցի հանել...

Խնդրում եմ իմ խստաճաշակ քննադատին ինձ չմեղադրել միտում-նավորության մեջ, թուրք գնդի հրամանատարին օձի կերպարով ներկայացնելու համար: Ի՞նչ միտումնավորություն, երբ Խալիս բեյը օձի, այն էլ կորբա օձի պատկերն ուներ, եւ նաեւ նրան ներքնապես էր նմանվում, այսինքն բնավորությամբ: Եվ վերջապես ինչ ազգի էլ պատկանելիս լիներ Խալիս բեյը, օձի էր նման: Այստեղ ի՞նչ կարող է անել, ի՞նչ մեղք ունի հեղինակը: Ահա նրա առջեւ կանգնել են կարգազանց երկու շարքային եւ մեկ կրտսեր սպա: Նրանք հիվանդացել են սիֆիլիսով եւ զորամասի բժշկի կարգադրությամբ պիտի առանձնացվեն եւ տեղափոխվեն երկրի խորքերը՝ երկարատեւ բուժման համար: Խալիս բեյը բազկաթռոճի բռնակները բռնած, մարմինն առաջ նետած նայում էր նրանց.

- Շշան որդի, շշշներ, ձեզզ սաստկացցցնել է հարկավոր, սսսանն անան... Եվ կծում է: Իսկ խոսքը թունավոր է: Իր հրամանները մի որոշում ունեն՝ գնդակահարել: Նա դատարանի ներկայացուցիչներին բանի տեղ չի դնում: Նրանք նույնիսկ ձեւականորեն չեն կարող դատել: Խալիս բեյը դատական իրավունքը խլել է նրանց ձեռքից, որովհետեւ պատերազմական ժամանակներ են եւ դատարանը, զինվորական տրիբունալն այստեղ անելիք չունի: Հիմա նա նայում է հանցագործ ասկյարներին եւ որոճում դատավճռի չափը.

- Ուրեմն, դուք էնքան էշ եք (լեզուն պարզեցնենք, հանենք ֆշշոցը), որ կարգին բոզություն անել չգիտեք: Եղ ո՞նց ընկաք էդ կնիկների ճանկը: Ամեն մի ասկյար պարտավոր է իմանալ մաքուր բոզություն անելու կարգը եւ հարգը: Ուրեմն, մտել եք նախիրի մեջ եւ պաչել սեւ գոմեշի ճակատը... Դե՛, հիմա ձեզ մի ժամ ժամանակ, գնացեք էդ բոզերին սպանեցեք եւ էլի եկեք այստեղ...

Ասկյարները գնացին եւ հաղթականորեն հետ վերադարձան: Երեք կնոջ փոխարեն սրի էին քաշել ամբողջ անառակացողը: Նրանք այդ մասին զեկուցեցին բինբաշուն: Սա ուրախացավ եւ խրախուսեց նրանց մարդասիրական նախաձեռնությունը.

- Ճիշտ եք վարվել, որովհետեւ այդ քածերը իմ համոզմամբ թշնամական առաջադրանք են կատարում, շարքից հանելով մեր զինվորներին եւ սպաներին, քայքայելով մեր բանակը, աղտոտելով մեր բանակի մաքրությունը: Հիմա հասկացա՞ք, շան ցկնածներ, որ անառակոցները հիվանդության բներ են: Ամենահարմարը բռնաբարելն է, որովհետեւ բռնաբարվողները մաքուր են նրանցից, դեռ այսօր ոչ ոք չի վարակվել, իմացա՞ք... Դու ասա՛, դու, օմբաշի...

- Բռնաբարվող կին որտեղի՞ց գտնեինք, բինբաշի, չկար: Հայերը փախել են, հույներին եւ թրքախոս կաթոլիկներին հրամայված է ձեռք չտալ...

- Ի՞նչ է նշանակում ձեռք չտալ: Իսկ դուք ձեռք մի տվեք, սպանել հարկավոր չէ, բռնաբարեցե՛ք... Կարծում եմ, որ նման արարքից գոհ պիտի մնան եւ բռնաբարողները, եւ բռնաբարվողները... Չէ՛, չէ՛, սպանել հարկավոր չէ... Իսկ հիմա,- Խալիս բեյը դարձավ շտաբի պետին,- սրանց հենց քաղաքում, կայազորի առջեւ գնդակահարեցեք... Թող դաս լինի, որ իմանան, թե որքան մեծ նշանակություն ունի մեր հերոսական բանակի համար առողջությունն ու մաքրությունը...

- Ինչպե՞ս արդարացնենք նման խստությունը, բեյ... Եվ ի՞նչ գրենք հրանց ընտանիքներին...

- Գրեցեք, սանջակի թրքախոս բնակիչներին բռնաբարելու, գեշ հիվանդություն տարածելու համար. սրանք ցնցող արդարացնող պատճառներ են: Իսկ ընտանիքներին ուղարկեք մահվան թղթեր, թուրքական հայրենիքի համար հերոսաբար մարտնչած եւ հերոսաբար զոհված զավակների համար շնորհակալություն հայտնեցեք սրանց հարազատներին մեր զորամասի հրամանատարության անունից... Եղա՞վ...

Բեյն այս մի երկու նախադասությունը հագիվ կարողացավ կես ժամում ֆշշացնելով, դանդաղորեն, ասես տաք կարտոֆիլ լվմացնելով, թելադրել: Երբ վերջացրեց, հաղթականորեն նայեց շտաբի պետին: Մի պահ պաղ փայլեցին աչքերն ու վերստին անշարժացան:

- Կմարսե՞նք, բինբաշի, ախր, մեղադրանքը...

- Լսի՛ր, տո՛՛ վախկոտ, բանակը քայքայելն այնպիսի հանցանք է, որ դրա համար ամբողջ գունդը, այդ թվում ինձ ու քեզ էլ հետը, կարող են գնդակահարել եւ ոչ ոք չէ չի ասի: Կարդարացվի...

Դետո բեյի ոտքերն ընկած հեծեծող ասկյարներին քաշ տալով տարան մեկուսարան: Խալիս բեյը ծիծաղեց.

- Քթներից եկավ բողությունը: Կյանքի գին ունեցավ: Ես այս միջոցառումներով ուզում եմ կարգ ու կանոն հաստատել զորամասում: Եթե զանց առնենք այս փաստերը մեր գաղթական բանակը կվերածվի մի մեծ անառականոցի եւ մի օր էլ ես ու դու, սիրելի Իսմայիլ, կհայտնվենք նրանց վիճակում... Եվ ո՞վ իմանա քանի անգամ...- Եւ կծեց լեզուն:

«Դասկանում եմ քեզ, կատաղած անասուն... Մարդկանց կործանելը երեւի մսագործի (դասաբի) սիրելի զբաղմունքն է»:

- Խալիս բեյ,- ասաց բարձրաձայն,- այնուամենայնիվ, այդ երկու փաստաթուղթն էլ դու պիտի ստորագրես, որովհետեւ ես նման իրավունք չունեմ: Գուցե սրանց գնդակահարելու մեղքը գցենք հայ ֆիդայիների վրա, ձեւակերպենք, որ նրանք են սպանել: Այդպես ավելի գեղեցիկ կինչի նրանց մահվան պատճառը, եւ մենք էլ չոր դուրս կգանք...

- Իսմայիլ բեյ, քո վախը ինձ ավելի է վախեցնում, քան այդ սրիկաների արարքը: Ո՞վ է մեզ հարցնելու, թե ինչ եղան այս հիվանդացած ցուլերը կամ ե՞րբ են հարցնում շարքայիների մահապատիժների կամ սպանությունների մասին, ժամանակները պատերազմական են եւ այս զոհերի համար մեղավորը պատերազմն է... Դասկացա՞ր...

- Իսկ մեր խի՞ղճը, բեյ... Ի՞նչ կասի մեր խիղճը մեզ...

Խալիս բեյը բարձրացավ տեղից, երկու քայլ արեց դեպի շտաբի պետը եւ ձեռքը դրեց նրա ճակատին:

- Չէ՛, տաքություն չունես, առողջ ես: Իսկ ինչու՞ ես նման տխմարություններ դուրս տալիս: Դու գիտե՞ս, որ մենք զինվորականներ ենք, որ մեր պարտականությունն է մարդ սպանելը...

- Հայրենիքի թշնամիներին,- անմիջապես լրացրեց Իսմայիլ բեյը:

- Հիմարություն,- թնդաց բինբաշին,- լավ լսիր ինձ. հայերը, որոնց կոտորում ենք, կարծում ես, մեր հայրենիքի թշնամիներն են, ո՛չ, նրանք պարզապես վերջերս շատ են հյուսիս նայում եւ կարելուրը՝ նեղացնում են մեզ հասանելիք տարածքը, մենք էլ նրանց կոտորում ենք, որովհետեւ կարող է, հնարավոր է, որ նրանք իրենց հայրենիքը (որն ըստ էության մերն է) տան ռուսներին... Բայց իմ խոսքն այլ բանի մասին է: Իմ ներկայությամբ, Իսմայիլ, էլ չխոսես խղճից: Թուրք սպան խղճով իր երկիրը պաշտպանել չի կարող, երկիրը պահպանվում է սրով, ջարդ ու արյունով, իսկ խղճով հայրենիքն ու տերությունը միայն կկորցնես, իմացիր... Ինձ, որ հարցնես, ամբողջ աշխարհը մի մեծ սպանդանոց է, իսկ զինվորականությունը՝ դասաբներ (մսագործներ), մերը ջարդելն է, իսկ խիղճ ունեցողները, բոլորն անխտիր մեռելի վրա սզացողներ են...

- Ի՞նչ ասեմ, Խալիս բեյ, ես այդպես չեմ գնահատում մեր կոչումը: Ես ընդունում եմ, որ միանգամայն ճիշտ է մեր կառավարության քաղաքականությունը հայերին բռնի ուժով տեղահանելու մասին, որովհետեւ այդպես են պահանջում թուրքիայի պետական շահերը: Իսկ որ մենք քեզ հետ միասին դասաբներ ենք, դու ինձ ներիր, ես համաձայն չեմ: Հայա, բեյ, պատկերացրու թուրքիան առանց ռազմական գործիչների, զորավարների, առանց նրանց, ովքեր ազնվականության սերուցք են եղել եւ են... Այ՛, առանց նրանց թուրքիան իսկապես կդառնա մի սպանդանոց, հերոսության եւ ասպետության բարոմետրը կիջնի մինչեւ Օ աստիճան, եւ թուրքիայում ապրող ժողովուրդը կվերածվի նախիրի, ու իրոք կշատանան դասաբները...

- Քեզնից կարգին զինվորական չի ստացվի, Իսմայիլ, եթե այդ խելքին մնաս: Խղճիդ տակը դիր դաժանության դիմամիտը եւ պայթեցրու, այդ ժամանակ միայն կազատվես այդ ջարդու պառավից, որի անունը խիղճ է: Հիմա գանք այդ տղաներին, որ գնացին քածերի ետեւից եւ գեշ հիվանդություն փախցրին: Եթե դրանց չգնդակահարենք, կարո՞ղ ենք այդ հիվանդության առաջն առնել: Չկա չարիք, առանց բարիքի: Էլի եմ կրկնում, ձեռք քաշիր խղճից, դա այնպիսի կերակուր է, որ շունն անգամ չի ուտի: Հիմա մի հարցի պատասխանիր, չէ՞ որ դու գնդի հնաբնակներից ես: Ո՞վ է Ձեյնաբ խանում կոչված գոզալը: Ո՞վ է նրա ամուսին Սերգեյը: Ի՞նչ գործ ունեն նրանք այս դատարկված քաղաքում: Այդ ինչպե՞ս եղավ, որ Ձեյնաբով հետաքրքրվող բոլոր սպաները գնացին գորդի ծոցը: Ես լսել եմ մի քանի սպայի բերանից այս մասին եւ որքան խորհում եմ, զարմանքից բացի ոչ մի վերջնական եզրակացության գալ չեմ կարողանում: Շտաբի պետ Նազըմ բեյը հայտնվում է թա-

փարվան գետում: Օմար փաշան սպանվում է Խոզափին լճի մերձակայքում: Չետախուզության պետ սպայի դին հայտնաբերվում է Բոսֆորում, նրան սպանող Քոռ Ջամալը սպանվում է դարանից՝ զորամաս վերադառնալիս: Ասում են նաեւ, որ այստեղ քաղաքից ոչ այնքան հեռու ոչնչանում է Օմար փաշայի ուղեկցող դասակը գլխովին: Այս փաստերը թվում է, թե ոչ մի կապ չունեն իրար հետ, բայց տրամաբանությունը կա, զոյություն ունի: Մի բան էլ կա. եւ Եազըմ բեյը, եւ Օմար փաշան, եւ հետախուզության սպան սիրահարված են եղել այդ Ձեյնաբին: Չիմա նրանք բոլորն էլ Ահրիմանի ծոցում են, չկան: Այս հարցերին, գիտեն, պատրաստի պատասխաններ չունեն: Բայց ինձ հետ մեկտեղ պետք է որոնես այդ պատասխանները, հակառակ դեպքում դուրս կգա, որ մենք մեր ծոցում օձ ենք տաքացրել, որի խորամանկության ու ճարպկության շնորհիվ շուտով մենք էլ կհայտնվենք դժոխքում: Քանի որ դու լավ գիտես այդ դեպքերը, ուրեմն, ինքդ էլ դարձիր (եւ ի պաշտոնե պարտավոր ես) իմ օգնականն ու խորհրդատուն: Մեր զորամասը իմ խնդիրքի համաձայն բացի մեզնից՝ հրամանատարներից, շուտով կգնա եւ կտեղակայվի այլ վայրերում, եւ մենք կընդունենք եւ նորակոչիկների, եւ ճակատային փորձ ունեցող մարտիկների: Եվ այս տեղաշարժը կատարվում է համաձայն՝ ջուրը մի տեղում, որ շատ կանգնի՝ կհոտի, առածի: Չետո մենք պարտավոր ենք վերջ տալ զորամասի տարածքում գործող ավազակների, այսպես կոչված ֆիդայիների ասպատակություններին: Ասում են՝ մի քանի հոգի են եւ իրենց թվից մի քանի անգամ ավելի թուրքեր են կերել: Պետք է որսալ նրանց, դարանել, բռնել եւ կախել, եւ տանջամահ անել՝ ցցի հանելով: Եվ վերջ տալ կամայականություններին: Մենք ենք այս սանջակի տերը եւ մենք պետք է այստեղ զգանք, ինչպես մեր տանը: Եվ նրանք, այս հողի տերեր հորջորջվող ֆիդայիներն այդ պիտի զգան, այսինքն զգալը քիչ է, պետք է ոչնչանան ու վերանան: Իսկ դրա համար մենք պետք է գործենք վճռականորեն եւ ամենակարելուրդ՝ մոռանանք խիղճ ու խղճմտանք...

Խալիս բեյի աչքերը կիսախուփ էին ու անշարժ: Խոսելիս զարմանալի ձեւով թռչկոտելով վերուվարում էր ադամախնձորը: Եղիսաբեթը նայում էր նրան բնավ չհասկանալով, թե ի՞նչ է ցանկանում թուրք բարձրաստիճան սպան, որովհետեւ լեզուն ֆշշացնում էր բառեր ու մտքեր, որոնց ոչ թե անհաղորդ էին դեմքն ու աչքերը, այլ հակադարձ վիճակում: Այնպես որ Եղիսաբեթին չէր հաջողվում որսալ նրա տրամադրությունը, ոչ խոսքերի ներքին իմաստը եւ ոչ էլ կենտրոնանալ սովորական մարդկային զրույց վարելու համար: Ընդհանրապես, նրա մուտքն իր տուն եւս արտասովոր էր: Առավոտյան բնակարանը հանկարծ շրջապատվեց ասկյարների խիտ օղակով, այնպես որ օձն իր պորտով, հավքն իր թելով անկարող էր ներս ու դուրս անել: Շրջապատեցին ու քարացան: Ոչ մի շարժում: Թվում էր ոչ թե կենդանի ասկյարներ են, այլ խրտվիլակներ՝ մեռած ու անկենդան: Չետո ժամանեց Խալիս բեյը: Եվ Եղիսաբեթը տեսնելով նրա աչքերի ու դեմքի անշարժությունը, շարժումների ծուլությունը, սկսեց որոնել նրա եւ ասկյարների այնքան մտերիմ նմանությունը: Նման զննանս սիրե, ասում է հայկական առածը: Կամ ասկյարները

պատճենում էին իրենց բինբաշուն, կամ՝ բինբաշին նրանցից սարքում էր իր կրկնօրինակները: Ինչ որ է: Բինբաշին տուն մտավ, երբ ասկյարներն արդեն լրիվ նայել էին, ստուգել տան ամեն ինչը, ծակուծուկը, երբ նույնիսկ ծանոթ էին կատվին, գիտեին, որ փոքրիկ բակում քուջուջ են անում երեք սպիտակ հավ եւ այլն: Բինբաշին մտավ դանդաղ ու հարցական նշան դարձած: Բարձրահասակ էր այնքան, որ երեւի վախենում էր հանկարծ գլուխը չդիպչի առաստաղին կամ անհայտ թաքստոցից չկրակեն իր վրա եւ կռացել էր չափից ավելի: Նրան եղիսաբեթն ընդառաջ գնաց: Եվ կանգ առավ: Բինբաշին ասես չէր էլ նկատել նրան: Նա առաջանում էր՝ հայացքը լուսամուտին: Ակամայից լուսամուտին նայեց նաեւ եղիսաբեթը եւ վարագույրի նետելում տեսավ ասկյարի հետաքրքրասիրությունից վառվող հայացքը: Խալիս բեյը շրջվեց դեպի թիկնապահը.

- Նրան հեռացնել լուսամուտից եւ շղթայել...
- Լսում եմ, բինբաշի'...

Բինբաշին ձեռքն անձայն երկարեց եղիսաբեթին: Սա չնկատելու տվեց: Ձեռքը մնաց օդում կախված: Կինը սեւեռուն նայեց նրան: Դիմացինի հայացքն անթափանց էր ու, ինչպես միշտ, անշարժ:

- Խանում, ինչո՞ւ է չես ընդունում բարեւս,- մի տեսակ անդրշիրիմյան ձայնով խոսեցին ու փակվեցին բինբաշու շրթունքները:

- Դուք ինձ չեք բարեւել, բինբաշի', ես ինչպե՞ս կարող էի ընդունել չեղած բարեւը...

- Դու մի՞թե չտեսար իմ ձեռքը, խանում...

- Մարդիկ միմյանց բարեւում են լեզվով, եւ նոր միայն ձեռքով: Ի դեպ, բեյ, ձեռքով բարեւելը կնոջ մենաշնորհն է: Դուք չպետք է պարզեք ձեր ձեռքը, այլ՝ ես: Խնդրում եմ չնեղանալ, միայն ես...

Եվ նայեց Խալիս բեյին: Ոչ մի շարժում, տրամադրության ոչ մի փոփոխություն, ներքինու չոր դեմք: «Սա մարդկային տեսակ է, որի սեռը որոշելն անհնար է: Տրամաբանությունը հրոշելը նույնպես: Ո՞վ է սա...»:

- Իսկ գերողի եւ գերուհու միջեւ հարաբերությունները մի՞թե նույնն են, դու այդ մասին մտածիր, խանում... Դու պարտավոր ես ինձ դիմավորել ծնկաչոք եւ օգտվելով իմ բարյացակամությունից՝ համբուրել իմ ձեռքը: Մեր միջեւ եղած տարբերությունը դա պիտի թելադրի՞րքե՞զ...

- Չնեղանաք, բեյ, ինձ թվում է, որ դուք իմ հայրենիքում հայտնվել եք այլ մոլորակից եւ տեղյակ չեք մարդկային տարրական քաղաքավարական օրենքներից: Նախ, ես ձեր գերուհին չեմ, եթե լինեի ձեր գերին, դուք վերստին պարտավոր էիք իմ տունը մտնելուց հետո ինձ հետ վարվել այնպես, ինչպես տղամարդը կարող է եւ պետք է վարվի կնոջ հետ...

- Դու մոռանում ես, խանում, որ այդ վարվեցողության մեջ կա նաեւ բռնաբարությունը... Եվ հանկարծ բինբաշու կոկորդը սկսեց խզզալ ու խթխթալ,- հի', հի', հի'...- Ուրեմն, ծիծաղում էր: - Ծիշտ է, Խալիս բեյ, բայց դա թուրքական վարվեցողություն է, ոչ թե մարդկային քաղաքակիրթ...- ասաց եղիսաբեթը եւ լեզուն կծեց. «Հանդգնությունս հանկարծ մափվան դա-

տավճիռ չդառնա, Աստված իմ...»,- հետո բարձրաձայն,- նախ նստեցեք, բեյ, հետո կվիճենք: Վեճը չի փախչի: Մի բաժակ թեյը կամ սուրճը չի խանգարի...

- Հա՛, սուրճը չի խանգարի,- կրկնեց բինբաշին եւ փլվեց փափուկ օթոցին: «Այս կինն ինձ, իմ ազգը վիրավորվեց եւ ճիշտ ժամանակին արգելակեց իր լեզուն: Սա պինդ պոպոք է, սրա հպարտությունն իր գեղեցկությունն է: Եթե չնկատվի գեղեցկությունը երեւի դուրս կգա ինքն իրենից եւ կասի բաներ, որ չպետք է ասեր: Իսկ եթե ազգությունն է իր սրբությունը, ոչինչ չի օգնի: Ես ծանոթ եմ հայուհիների, որոնք գերադասում էին մահը թուրք փաշաների փափուկ անկողիներից: Ես գիտեմ հայ կանանց, որոնք՝ բարուրած երեխաները նետում էին կատաղած գետերի բերանը, ժայռերից ցած, միայն թե չթրջացնեին, չթլպատեին նրանց...»:

- Չեյնաբ խանում,- սուրճի բաժակը շրթունքներին մոտեցնելով շարունակեց խալիս բեյը,- դու քաջ կին ես: Սա հաճոյախոսություն չէ, այլ բացարձակ ճշմարտություն: Այն թուրքումուրը, որ թափեցիր իմ եւ իմ ազգի գլխին, յոթ փութ մեղրով չէր ունովի: Բայց ես այս անգամ չեմ ցանկանում գործը բարդացնել եւ նեղացած ձեւանալ: Իմ հարգանքը գեղեցիկ կնոջ նկատմամբ (թեեւ չնեղանաք, գեղեցկությունն ինձ վրա ոչ մի ազդեցություն չի գործում) ես արտահայտեցի քո տունն այցելելով եւ ոչ թե պատերազմական դրությամբ հատուկ բռնի ակցիաներով, այսինքն բռնությամբ զորամասի շտաբ քաջ տալով եւ այլն: Բայց, խանում, ես այն մարդկանցից չեմ, որոնք մարտի են գնում փուչ փամփուշտներով: Եթե ես այստեղ եմ, ուրեմն ինձ հետաքրքրող հարցեր կան, որոնց պատասխանը կցանկանայի ստանալ քեզանից եւ պարոն Սերգեյից: Ամմիջապես ավելացնեմ, որ խոսքս չի վերաբերում սիրային հրապուրանքին, որի նկատմամբ ես կամային իմունիտետ ունեմ: Ասա ինձ, հարգելիս, ինչո՞ւ երբ գաղթում էր ողջ Ջավախքը, դու եւ քո ամուսինը գերադասեցիք մնալ այստեղ, ինչպես ասում են՝ հրի ու սրի մեջ: Այնուհետեւ, ինչո՞ւ այս տանն առնչվող զորամասի բարձրաստիճան սպաները, տարբեր պայմաններում ոչնչացան եւ ինչո՞ւ գոնե մեկ անգամ չդիմեցիք զինվորական իշխանություններին, որ ձեզ անցկացնեին Թիֆլիսի կամ Ալեքսանդրապոլի փակ գծերը եւ գնայիք խաղաղ ապրելու: Եվ վերջապես, այստեղ ո՞ւմ առաջադրանքն եք կատարում, հայերի՞, վրացիների՞, ռուսների, թե՞ մեկ այլ պետության, բայց խնդրում եմ, խանում, զարմանք չխաղալ եւ դերասանական հնարքների չդիմել եւ չփչացնել մեր առանց այն էլ խախուտ հարաբերությունները...

- Դուք, բեյ, միանգամից իմ գլխին թափեցիք այնքան հարցեր, որոնց պատասխանելը ոչ միայն դժվար է, այլ ակնկալվող պատասխաններ ես չունեմ: Հետո, հարգելիս, մեծագույն անարդարություն է, վերջին հարցը սկզբից տալը: Ես ձեզ նման մեկի հետ ոչ զարմանք խաղալու, ոչ էլ դերասանական հնարքների դիմելու մտադրություն չունեմ, մանավանդ որ ձեր վրա գեղեցկությունն անգամ անգոր է ներգործել: Ի դեպ, ես գեղեցկուհի չեմ, ոչ էլ գեղեցկուհու դերն ստանձնելու սովոր կին, բայց դուք առաջին տղամարդն եք, որ ոչ տղամարդկային խոստովանություն եք անում, թե գեղեցկությունը ձեզ

վրա չի ազդում: Դուք կարող եք հպարտանալ, որ տղամարդկային ամուր կամքը ձեզ հնարավորություն է տալիս չենթարկվելու գեղեցկության ազդեցությանը, բայց գեղեցկությունը չտեսնելը, չհարգելը, մի խոսքով... այնուհետեւ, եթե ձեզ այսօր մի բան պատահի, ի՞նչ պատասխան պիտի տա Ձեյնաբ խանումը: Այդ ո՞վ է տեսել, որ կռիվը վարեն տղամարդիկ եւ, ինչպես ասում են՝ ջառմեն քաշի մի փխրուն կին: Իմ կարծիքով, դուք սխալ հասցեով եք եկել: Այս տանը մարդասպաններ չեն ապրում, այլ ամենամարդասիրական մասնագիտության տեր մարդիկ, բժիշկներ, որոնց հայրենիք է բերել դժբախտությունը: Իմ մոր մահը: Մինչ մենք թաղում եւ հարդարում էինք մորս գերեզմանը, ձեր զորամասը ճնշելով գյուղերի դիմադրությունը մտավ քաղաք: Իսկ մինչ այդ փակվել էին Ախալցխա եւ Ալեքսանդրապոլ տանող ճանապարհները: Ու՞ր գնայինք, ի՞նչ անեինք: Մնացինք մեր քաղաքում, մեր... Հասկանո՞ւմ եք... Եթե իմ այս բացատրությունները դուք համարում եք դերասանություն, ուրեմն, վարվեցեք ինձ հետ ինչպես ցանկանում եք...

Խալիս բեյը նրան լսում էր փակ աչքերով, թվում էր քնած է, մանավանդ որ մշմշում էր: Բայց նա եւ լսում, եւ տեսնում էր մույմիսկ եղիսաբեթի դեմքի ջղային կծկումները: Նրա աչքերի ածելու բերանի նման նեղ եւ սուր բացվածքը նկատում էր նաեւ տանտիրուհին. «Մենք երկուսս էլ դերասանություն ենք անում: Ես՝ անմեղության, նա՝ անտարբերության: Տեսնենք վերջն ի՞նչ է լինելու...»:

- Իմ հարցերի հարցը, որ դու չցանկացար պատասխանել, խանում, այն էր, թե ո՞ւմ եք ծառայում...

- Իմ խղճին, բեյ, իմ խղճին, իմ հայի խղճին...

- Ուրեմն, հայերի՞ն...

- Ափսո՛ւ, ում որ ցանկանում են ծառայել, բեյ, յոթ սարով ու յոթ ձորով հեռու են ինձանից, այստեղից... Հնարավորություն չունեն մրանց ծառայելու...

- Եթե դերերս փոխվեին, հայ կին, դու ինչպե՞ս կվարվեիր...

- Մեր դերերը երբեք փոխվել չեն կարող: Մենք սպանելու, տեղահանելու, տանջամահ անելու ո՛չ ավանդույթներ ունենք, ո՛չ էլ կարող ենք այդքան իջնել: Իսկ եթե մենք հաղթող եւ դուք պարտվող լինեիք, ես կազատագրեի մեր պատմական, մեր արյունով ներծծված հողերը, առանց ձեռք տալու թուրք մարդկանց, եթե նրանք չէին մասնակցել ոչ հայերի զանգվածային սպանությանը, ոչ էլ ալան-թալանին...

- Այդ միեւնույն է, թե սպանել թուրքերի մեծամասնությանը...

- Մաշալլա՛հ, բեյ, շնորհակալություն ինքնամերկացման համար, այնուամենայնիվ ես կխնայեի մանուկներին, կանանց ու ծերերին: Նրանք անպայման անխառն կլինեին հայերի ջարդերին ու կողոպուտին...

- Դո՛ւ ես այդպես մտածում, թե՞ կրկնում ես Անդրանիկ փաշային...

- Անդրանիկ փաշայի բերանով խոսում է հայ ժողովուրդը: Մենք չորս եւ կես հազարամյակ ապրում ենք այս լեռնաշխարհում եւ ոչ մի ժողովրդի քիթը չենք արյունել, բեյ, մենք արյուն թափել չենք սիրում, մեր գործն այլ է...

- Այոյուն թափել չե՞ք սիրում. ձեր թուլությանը քաղաքակրթության

տարագ մի հագցրեք, եթե կարողանայիք՝ կթափեիք: Ձեր ժողովուրդը երես-պաշտությունն ավելի է սիրում, քան ապրելը...

- Սխալվում եք, բեյ, բայց եկեք թողնենք այս անօգուտ վեճը: Ոչ դուք եք կարող ինձ թրջացնել, ոչ ես ձեզ հայացնել: Եկեք իրար մեջ որոնենք ոչ թե բարեկամին, զոնե հարեւանին: Ես ձեզ լավ եմ հասկանում, բեյ, թուրքերդ հայերին նայում եք ոչ թե մարդուն հարգելու տեսակետից, այլ որպես մորթ-վողի, որը դատապարտված է: Այդ պատճառով էլ մեզ նայում եք, որպես հա-ճույքի, զվարճության առարկայի, լավագույն դեպքում, որպես աշխատուժի, որ օգտագործելուց, կեղտոտելուց հետո թաշկինակի նման մի կողմ են շար-տում: Սհա մենք նստած ենք դեմառդեմ: Եթե կարող եք ապահովեք մեր ան-ցումը Ալեքսանդրապոլ կամ Թիֆլիս, եթե ձեր բարյացակամությունը կհերի-քի: Եթե ոչ, վարվեցեք ինչպես կթելադրի ձեր խիղճը: Մենք, ես եւ ամուսինս անզոր ենք ձեր գորամասի առջեւ:

Եվ հետո դառնորեն մտածեց. «Ես գուցե այսքան խեղճանալու իրա-վունք չունեի այս անզգա շան առջեւ: Նա այստեղ եկել է որոնելու Թուրքիո երդվյալ թշնամուն: Եվ ես զգում եմ, որ որքան շատ եմ ուզում ապացուցել մեր անմեղությունն ու չեզոքությունը, այնքան ավելի քիչ է հավատում ինձ: Նա երբեք չպետք է նկատի վախի նշույլ իմ խոսքի մեջ եւ դեմքին: Նա պիտի իմանա, որ եթե մենք գործում ենք թուրքերի դեմ, ապա դա հավատամքի ուժ ունի եւ ենթակա չէ վախի իշխանությանը, այլապես վախը կկաչի մեզ ու չի պոկվի»: Լռում էր նաեւ նրա դեմ անշարժացած Խալիս բեյը. «Այս կնոջ մեջ վագրի սիրտ կա, գուցե եւ վախենում է, բայց ոչ միայն կարողանում է թաքց-նել վախը, այլեւ վախը փոխարինել քաջությամբ: Բայց եթե ինձ մորթեն ան-զամ, չեմ հավատա այս երես առած գոգալի անմեղությանը: Սա հայ ֆիդա-յիների աստվածուհին է: Սա անգործ նստող կին չէ: Չեմ հավատում նաեւ, թե մեր քյալլագոզ սպաները սրանից սեր կլանչած չլինեն: Չեմ հավատում նաե-ւ, որ սրա սիրտը գրաված լինեն: Չեմ հավատում, թե մերոնք սրանց վրա բռ-նություն գործադրած չլինեն եւ հետեւանքը՝ պատժված չլինեն սրանց կող-մից: Այս գոգալը վայելել է գորամասի հրամանատարության հովանավորու-թյունը եւ մանավանդ սերը: Թուրք ազնվական Նազրմ բեյը ցանկացել է, որ Ձեյնաբն իր կինը դառնա: Եվ պատրաստվել է ամուսնանալու: Հետո նրան գտել են մեռած գետի ստորին հոսանքներում՝ մահվան բռնի նշաններով: Պետք է խոսք օգել...»: Եվ հետեւեց հարցը.

- Խանում, ասում են Նազրմ բեյը ցանկանում էր ամուսնանալ քեզ հետ: Եի՞շտ են ասում...

- Իհարկե, Խալիս բեյ, նա սիրահարված էր ինձ,- ժպտաց Եղիսաբե-թը,- համարյա ամեն օր կամ օրումեջ մեր տանն էր: Ուղղակի հոգիս հանեց սիրահետումներով,- կոկետություն խաղաց նա,- սիրո երդումներ, ամուս-նության առաջարկներ: Նա երիտասարդ, եվրոպական կրթությամբ սպա էր, ազնվականի շարժումներով ու պահվածքով...

- Իսկ դուք չեի՞ք խրախուսում նրա սերը... Արդյո՞ք չէիք խաղում նրա հոգու հետ...

- Ես ամուսին ունեմ, բեյ, խրախուսել նրա սերն իրավունք չունեի: Ինչ վերաբերում է նրա հոգու հետ խաղալուն, ձեր հարցն անպատշաճ է, բեյ, ես կին եմ եւ գեղեցիկ կին, իմ յուրաքանչյուր ժպիտ կարող է նկատվել որպես հոգու հետ խաղալու փորձ: Ես ժպտում եմ նաեւ ձեզ հետ խոսելիս, բայց վստահ եմ, որ ձեր հոգու հետ չեմ խաղում: Այնպես որ, իմ քաղաքավարությունը, եթե համարվի նրա հոգու հետ խաղալու փորձ, ես դա չեմ փորձի հերքել...

- Դու չգիտե՞ս, թե ով կլինի նրան սպանողը...

- Չգիտեմ, սակայն կասկածներ ունեմ...- ճակատային խաղի գնաց եղիսաբեթը. «Ինչ լինելու է, թող լինի...»:

Խալիս բեյն անմիջապես աչք ու ականջ դարձավ: Կիսախուփ աչքերը բացվելու ճիգեր արեցին:

- Կասկածներ՞ր, հետաքրքիր է: Դու, խանում, առանց հիմքի կասկածներ ունենալ չես կարող: Խոսի՛ր...

- Ասե՛մ, ասե՛մ, ինձ սիրահարված էր նաեւ Օմար փաշան: Գործը հասավ այնտեղ, որ իմ ներկայությամբ ծանր խոսակցություն ունեցավ ավագ կնոջ հետ,- ստեց եղիսաբեթը,- նա խոստանում էր ինձ ավագ կնոջ դերը պարզելու, լողացնել ոսկու եւ շքեղության մեջ: Նույնիսկ մեր տանը բախվեց Նազըմ բեյի հետ, այնպես որ ես հակված եմ կարծելու, որ Նազըմ բեյի մահը Օմար փաշայի հետ է առնչվում: Գուցե ես սխալվում եմ:

- Այստեղ ձեր տանը նրան տեսնողներ կայի՞ն...

- Նա մենակ չէր գալիս, գալիս էր պահակախմբով: Նրանք կարող են վկայել: Բացի դրանից ես հրավիրվել եմ Օմար փաշայի բնակարանը, որտեղ նույնպես կային պահակներ եւ սպաներ: Նրանք էլ կարող են վկայել: Դուք հեշտությամբ կարող եք գտնել նրանց եւ իմանալ ճշմարտությունը...

Խալիս բեյը երկար ժամանակ լուռ էր, ինքն իր հետ. «Այս կինը, երեւում է, ճիշտ է ասում: Է՛ս, թուրքեր, թուրքեր, կին տեսնելուն պես անմիջապես ընկնում եք նրանց ոտքերը եւ գազանանալով՝ բռնաբարում: Ապուշներ, էշեր: Խայտառակում եք եւ թուրքական բանակը, եւ թուրք ժողովրդին ամբողջ աշխարհում»:

- Խանում, մի վերջին, սակայն դժվար հարց: Ասա, նրանցից ոչ մեկը չի՞ փորձել քեզ բռնաբարել...

- Ո՛չ, չեն փորձել, նրանք իմ ձեռքն համբուրելուց ավելին չեն հանդգնել... «Շուն, կիսահոտած շուն, ուզում է, այնուամենայնիվ, նրանց մահվան մեղավորությունը որոնել մեր տանը: Սակայն դա ապացուցելն այնքան էլ հեշտ չէ: Չես բռնի հանցագործին: Վկաներ չկան, մասնակիցներ չկան: Սրիկա՛»:

- Գիտե՞ք, բեյ, ես կարծում եմ, որ խոսակցության մեջ խախտվել են պատշաճության բոլոր սահմանները: Գուցե վերջ տայիք այս ստորացուցիչ հարցաքննությանը: Ես կին եմ, խնայեք ինձ...

- Լա՛վ, թող քո սրտով լինի, խանում: Բայց երբեք չմոռանաս, որ ես զինվորական եմ այս սանջակի պատասխանատուն: Ես զրուցում եմ քեզ հետ ինձ հետաքրքրող հարցերից...

- Այո՛, բայց այդ հետաքրքրության սահմանները պետք է ընդհատվեն

հենց նեղ անձնական հարցերին բախվելիս: Թե չէ ի՞նչ է դուրս գալիս, մի՞թե կնոջը կհարցնեն, թե՛ իրեն բռնաբարե՞լ են... Ախր, ամոթ է, իրեն հարգող կինն ինչպե՞ս կարող է չստորանալ հենց իր աչքին...

- Բայց այդ հարցի մեջ կար քեզ սատարելու միտում, խանում...

- Ո՛չ, բեյ, ո՛չ, արդեն դուք շատ եք ուշացել ինձ մեռածներից պաշտպանելու համար: Այդ հարցը դուք տվեցիք ճշտելու ձեր կարծիքով մի կարելու բան, հանգուցյալները, եթե փորձել են կամ նրանց հաջողվել է անպատվել ինձ բռնի ուժով, ուրեմն, կարելի է ենթադրել, որ նրանց կարող էին սպանել նաեւ այստեղ, ձեր հարցը ես ընկալեցի անմիջապես...

- Օ՛, շեյթան, շեյթան, ոչ կին,- Խախտվեց Խալիս բեյի թվացող անտարբերությունը եւ բացվեցին աչքերը,- դու մարդկանց մտքերը կարդալու ընդունակությո՞ւն ունես: Եվ որքան դժվար է քեզ հետ զրուցելը: Ասա ինձ կին, վերջապես, եթե քեզ դատեր թուրքական դատարանը, պատժելու հիմքեր կունենա՞ր...

- Միամիտ հարց եք տալիս, բեյ, դուք ցանկանո՞ւմ եք ինձ դատաստանել իմ օգնությամբ: Թուրքիայում հայերին չեն դատում, նրանք պետության կողմից արդեն դատապարտված են: Եթե դուք ի կատար ածեք այդ որոշումը, շնորհակալություն եւ գովեստի կարժանանաք...

- Ես այդ գիտեմ, խանո՞ւմ: Որպես մարդու քեզ դատելու հիմքեր կա՞ն...

- Մենք միմյանց դատելու հիմքեր շատ ունենք, բեյ, օրինակ, դուք կոտորե՞լ, ջարդե՞լ եք իմ հայրենակիցներին...

- Իմ հարցին դու չպատասխանեցիր, խանում...

- Ես կարող եմ երդվել, որ ոչ մի թուրքի չեմ վնասել, էլ ի՞նչ դատ ու դատաստան... Իսկ դո՞ւք...

- Այո, ես պատուհասել եմ ձերոնցից շատերին, կին, ես հրամաններ կատարող եմ...

- Դուք հայերի համար դահիճ եք, թուրքերի համար՝ հերոս: Ձեզ հայերը եւս իրավունք ունեն ւ՝ անց դատական հայցի ու քննության կախելու, ճի՞շտ է: Իսկ ձերոնք, եթե իմ մտքերը կարդալ կարողանային, պետք է, որ կախեին նաեւ ինձ...

- Դուք ատո՞ւմ եք թուրքերին...

- Չէ՛, սիրում եմ նրանց այնքան, որ պատրաստ եմ համբուրել հայերի արյունով թաթախված նրանց ձեռքերը: Մի՞թե ատելությունն այն բանն է, որ կարող է թեթևացնել իմ հոգու մաղձը: Մի՞թե ձեզ սպանելը, ոչնչացնելը կարող է լուծել այն վրեժը, որ ունի հայը ձեր նկատմամբ: Ես գիտեմ, որ դահիճներն այնքան անպատկառ են, որ նույնիսկ իրենց զոհի սերն ու սիրալիությունն են տենչում: Գոնե դուք, բեյ, այնքան ցինիկ մի՛ եղեք, մի՛ հարցրեք ձեր նկատմամբ ձեր սիրուց ու հարգանքից: Խնդրում եմ... Իսկ ինձ հետ վարվեք ինչպես ցանկանում եք...

- Դու, խանո՞ւմ, դերասանություն ես անում, որից ես քեզ զգուշացնում էի: Մի ներքին ծայն ինձ անընդհատ հուշում է, որ դու նա չես, ում ցուցադրում ես: Չես ասում այն, ինչ պարտավոր նս ասել: Ինչքան անկեղծա-

նում ես, այնքան փակվում է քո ճշմարտությունը եւ միշտ չէ, որ անսխալ է քո խաղը: Ես, այո՛, եկել եմ քո դուռը, քեզ մոտ, քեզ ճանաչելու եւ իմանալու քո դերը եւ այս սանջակի եւ մեր զորամասի կյանքում: Նորից կրկնեմ. բոլոր այն սպաները (գուցե նաեւ ասկյարները), ովքեր առնչվել են քեզ, անհետացել են, սպանվել անհասկանալի հանգամանքներում: Երեւի ոչ ոք չի կարողացել ճանաչել քեզ, ավելի ճիշտ, գնահատել քո վիթխարի տաղանդը, որը համեարաշխ քո գեղեցկությանը՝ ավերածություններ է կատարում թուրք հիմարների շրջանում: Ես, իհարկե, կարող էի հենց հիմա քեզ գցել ասկյարների առջեւ. նրանք կհռչոտեին քեզ, եւ հետո առոք-փառոք կկախեին: Բայց ես դա չեմ անում, որովհետեւ դու քեզ հետ գերեզման կտանես գաղտնիքներ, որոնց իմանալը կարող է մեզ փրկել շատ անակնկալներից ու նոր զոհերից: Չէ՛, գոզալ խանում, ես քեզ մահապատժի չեմ ենթարկում: Եթե նման որոշման հանգեմ, դա կլինի ոչ թե սովորական պատիժ, այլ խայտառակամահության եւ չարչարանքի երկարատեւ մի շղթա, երբ մարդն անիծում է իր ծնունդն ու իր ծնողներին, երբ մահը գեղեցկանում է, դառնում դատապարտվածի վարդագույն երազանքը:

- Գիտե՞ք, բե՛յ, ես ուրիշ որեւէ ակնկալիք չեմ սպասում ձեզանից: Ես հիմա նստել ու մտածում եմ. թե ավելի մեծ տանջանք ու կտտանք կարո՞ղ է լինել որեւէ մեկի համար, քան ձեր մեռած դեմքը տեսնելը, ձեր օձի շվկոցների հետ թափվող սպառնալիքների թույնը կլլելը, ձեր ներքինու կերպարանքը, որը շատ ավելի եղկելի է, քան դժոխքի ծծումբին ու կրակներին ողջակեզ դառնալը: Այն սիրալիրությունները, որ մենք այսօր փոխանակեցինք, ինձ հուշում են, որ մարդկային կամուրջները մեր մեջ այրված են, եւ ես պարզապես ձեր գերին եմ... Եվ այնուամենայնիվ, ես շնորհակալ եմ ձեզանից, որ ձեր նախորդների նման սեր չեք հայցում ինձնից, եւ կնոջ բնագղը հուշում է նայել, որ երբեք տիրելու փորձ չեք անելու ինձ, այլապես...

- Այլապես ի՞նչ...
- Կթքեի ձեր մեռած դեմքին...

- Մաշալլա՞հ, խանում: Դու, իրոք, որ հերոս ես, ի՞նչ օրի կընկնեին թուրքերը, եթե հայ տղամարդիկ քո քաջությունն ու խելքը ունենային: Հիմա մեծ Թուրքիայից ոչինչ չէր մնա: Բայց ես, խանում, պիտի պահեմ, պահպանեմ քո կյանքը, քեզ, որպես պատանդ, որպեսզի վրեժխնդիր լինեմ քեզանից, ստորացնեմ ու խաղամ քո հպարտության հեն, որպեսզի երբ ուզեմ տեսնեմ քեզ իմ ոտքերի տակ...

Խալիս բեյն անաղմուկ դուրս եկավ: Պահապան ասկյարների շղթան քանդվեց ու հետեւեց նրան: Մնացին ասկյարները՝ դռան առջեւ եւ բակի կողմում: Դիտորդներ դրվեցին փողոցի ծայրում: «Ուրեմն, մենք բանտարկյալ ենք մեր տան մեջ», Եղիսաբեթը փլվեց տեղաշրորի վրա եւ երկար հեկեկում էր: Սերգեյի մխիթարելու փորձերն անցան ապարդյուն: Կինը չէր հանգստանում: Ջղերն այնքան էին լարվել, որ սանձակոծ լացն արդեն հիստերիայի էր վերածվում: Սերգեյը մի կերպ դեղորայքի միջոցով կարողացավ կանխել ջղերի վերահաս տագնապը: Հետո՝ Եղիսաբեթը անձայն, ընդարմացած ըն-

կած էր տեղաշորին, եւ գլխում մեկը մուրճիկով անընդհատ, հավասար ընդ-
միջումներով հարվածում էր քներակին: Հետո այդ հարվածներին ընկերա-
ցավ սիրտը, որը խենթորեն թակում էր կուրծքը: Հանձին Խալիս բեյի նա շո-
շափելիորեն զգում էր իր դահճի եղկելի ներկայությունը քաղաքում, որը կա-
րող էր ամեն րոպե ճակատագրական անակնկալներ մատուցել իրեն եւ Սեր-
գեյին: Նա արդեն համոզված էր, որ հանձին բինբաշու ունի արժանի, դաժան
եւ դժվար հաղթահարելի մի հակառակորդ, որը ենթակա չէ սիրո թուլացնող
ազդեցությանը, գեղեցկության գայթակղությանը, որը չի տառապում ջղա-
գարությամբ եւ մանավանդ շտապ որոշումներ չի կայացնում: Նա որսի վրա
հոշոտելու նետվող վագր չէ, այլ դանդաղ, բայց անվրեպ գործող վիշապ, որը
նախօրոք փաթաթվում է զոհի մարմնին, խեղդում նրան եւ նոր միայն կլա-
նում: Նա Խալիս բեյի կառչուն ու չոր մատների սեղմումը զգում էր իր վզին
եւ խեղդվում էր, խեղդվում: Նրա աչքերի առջեւ նրա անշարժ ու կիսախուփ
աչքերն էին: Փակում էր կուպերը, իսկ բեյը փոխում էր իր տեղը, մտնում էր կո-
պերի տակ: Փրկություն չունեւ, փրկություն չկար: Ինքը երեւի շատ կտրուկ
եւ վճռական եղավ նրա հետ: Ինքն իրեն վնասեց: Իսկ մի՞թե ինքը ճիշտ չէր:
Մի՞թե պիտի թույլ տար, որ այդ հոտած անասունը ստորացներ իրեն, իր ժո-
ղովրդին: Մի՞թե ինքը թույլ պիտի տար, որ իրեն ծաղրի ենթարկի մի ստամ-
բուլցի գող ու ավազակ, որը իրավունքներ է բանեցնում իր հայրենի շրջա-
նում: Չէ, ինքը լավ է արել, ստորանալ հարկավոր չէ: Ստորանալը թուրքա-
կան սովորույթ է, թուրքերի կեցության մենաշնորհը: Նույնիսկ առած էլ ունեն.
եթ չես կարող առյուծի թաթը կտրել, ապա այն համբուրիր ու դիր ճակա-
տիդ: Ջգվելի է: Սիրտ խառնելու չափ զգվելի: Բայց ես վերջին հաշվով, ինչ
լավ բան կարող էի ակնկալել այդ հրեշից, որ հիմա քիչ է մնում հիստերիա
սարքեմ: Ինչո՞վ է սա ավելի վատ Օմարից ու Նազըմից, որոնք շան նման հո-
տոտում էին իմ փեշերը, խնամքով թաքցնելով իրենց պատվագողության
մտադրությունը: Նրանք պատվագրկել ու կամ սիրելու միտք էին գուրգու-
րում, որն ինձ համար ավելի վատ էր մահից, իսկ սա կյանքս է ցանկանում:
Երկուսն էլ մահացու, երկուսն էլ սարսափելի: Թուրքի կողմից սիրված լինելն
ավելի անպատիվ երեւույթ է, քան թուրքի ձեռքով սպանվելը: Ինչո՞ւ այսքան
վիշտ, տվայտանք ու ցավ է մտել հոգուս մեջ: Ամբողջը վերաբերմունքի հարց
է: Նրանք մինչեւ բռնության դիմելը սիրաշահում էին: Սա մինչեւ դատաստա-
նիս օրը պիտի սպառնա ու վիրավորի: Ես այլեւս չեմ դիմանում: Դերասա-
նություն մի անի: Իսկ ի՞նչ անեմ, ասեմ, որ մենք մեր տանը թուրք սպաների գե-
րեզմանոց ունենք, որ օրեցօր հարստացնում ենք: Ասեի, որ իր համար եւս տեղ
ուրեւնք, եթե փորձի իր ուժերը, իրեն էլ կուղարկենք հայրենակիցների մոտ:
Բայց շան հոտառություն ունի, չհավատաց խոսքիս: Հետաքրքիր է, տղանե-
րը գոնե կռահեին մեր վիճակը: Կամ ինչպե՞ս իմաց տալ տղաներիս: Ամեն
տեղ կանգնած էին Խալիսի ականջներն ու աչքերը: Հետո իրոք ցավեց սիր-
տը, իսկ սրտի ցավը վախեցնող է: Հոգու ցավին ավելացավ սրտի ցավը:

- Սերգեյ, փրկիր ինձ, ցավը կատվի նման ճանկոտում է սիրտս... Օգնիր...

Հնազանդ կնոջ ցանկությանը եւ վախեցած սրտի ցավից, Սերգեյը

երկար քննում էր նրան, հետո ժպտաց ու համբուրեց կնոջ գունատ շրթունքները.

- Իմ վախեցած հերոսուհի, քո սիրտն առողջ է, ներվային թույլ երեւոյթ է, որ կհանգստանա, երբ դու հանգստանաս: Հիմա թույլ տուր սրսկել եւ դու-կքնես, ինչպես քնում էիր հինգ տարեկան հասակում...

Դեղի ներգործությունը հաճելիորեն թուլացրեց եղիսաբեթին: Նրա լարված ջղերը բավական ժամանակ տեղի չէին տալիս դեղի գորույթանը: Մինչդեռ ուղեղն արդեն ենթարկվել էր նրա ազդեցությանը: Ինքն արդեն հինգ տարեկան աղջիկ էր, եւ իրենց բակում թոկ էր խաղում: Հետո Հայկը մտավ իրենց բակը եւ փախցրեց թոկը: Լացեց եւ ընկավ նրա հետեւից: Տունը մոտ էր քաղաքի բերդին: Հայկը փախավ դեպի բերդը, ինքն էլ նրա հետեւից: Բայց Հայկը թոկը ոչ մի կերպ չէր ցանկանում տալ իրեն: Հասան բերդին եւ կանգնեցին աշտարակներից մեկի առջեւ: Ինքը լավ էր լինում: Լացն իվերջո ազդեց Հայկի վրա: Վերադարձրեց թոկը եւ աշխատում էր մխիթարել իրեն, որ լաց չլինի. - Տես, ինչքան ագռավներ են պտտվում աշտարակի գլխին... Գիտես, նրանք բներ ունեն այնտեղ...

- Իսկ ագռավներն իրենց դա՛, դա՛ կռիւնչներով լցրել էին շրջակայքն ու բերդն օդակող ձորերի խորությունը:

- Եղիսաբեթ, ուզո՞ւմ ես ագռավի ձվեր հանեն բներից, պուտպուտիկ են, սիրուն... - Որ հանես, ագռավները չե՞ն նեղանա...

- Ագռավին որտեղի՞ց խելք, որ նեղանա...

Եվ մագլցեց կատվի նման ճարպկորեն; արագ: Հայկը երեք տարով մեծ էր եղիսաբեթից եւ հեղինակություն էր նրա համար: Իսկ հիմա նաեւ հերոս էր: Նա հասավ երեւի ագռավի բնին եւ ձեռքը մտցրեց քարերի արանքը: Նրա ձեռքում նշմարվեցին հազիվ տեսանելի ձվերը.

- Կարո՞ղ ես բռնել...- Եղիսաբեթը ձեռքերի ափերը մոտեցրեց իրար, բուռ սարքեց: Հայկի ձեռքից ձվերը կաթեցին ներքեւ: Սակայն ափին չհասած, ընկան մի կողմ, գետնին ու փշովեցին: Ագռավների տագնապահար ձայները խլացնում էին: Հայկը մի քիչ էլ բարձրացավ: Նորից նրա ձեռքին երեւացին ձվերը: Հետո կատարվեց սարսափելին: Մի ձեռքով բարձրությամբ վրա կախված Հայկը թռավ, չէ՛, չէ՛, ընկավ ներքեւ.

- Վա՛յ... Ո՞վ էր ճչաց:

Իսկ Հայկը կոտրել էր ոտքը... Սերգեյը նետվեց սենյակ.

- Ի՞նչ է, քա՛նս...

Ձայն չլսվեց: Եղիսաբեթը քնած էր խոր քնով:

Ծանր, տագնապալից կյանք էր: Ոչ դուրս, ոչ ներս, մի խոսքով տնային բանտարկություն: Նրանց բախտից սպաների տների ապրուստի համար մոտակա թուրք գյուղերի բնակիչները, թրքախոս կաթուղիկները եւ, մասամբ, հույները մթերք ու միրգ էին վաճառում փոքրիկ շուկայում: Ապրել էր հարկավոր, եւ Եղիսաբեթը կամաց-կամաց վաճառքի էր հանում տան իրերն ու կարասիները: Պարզ ապրանքափոխանակություն էր: Մի կերպ ապրում էին: Լավ էր, որ սոււրճի ու բուրավետ թեյի պաշարը շատ էլ եւ նրանց կարողանում

էին ընդունել թուրք բարձրաստիճան սպաներին: Իսկ հիմա շուկա հաճախելիս Սերգեյին ուղեկցում էր ասկյարը: Այսինքն, քաղաքում նրանք անելիք չունեին, հետաքրքիր բան էլ չկար: Նրանց չարչարում էր յուրայինների խմբի տղաների հետ հանդիպելու անհրաժեշտությունը: Կապ չկար, եւ խուլի ու կուլյի նման էին: Մի օրինակ, տաղտկալի առօրյա չէր խանգարվում նաեւ թուրքերի կողմից: Մեկ-երկու անգամ ինչ-որ սպաներ փորձեցին տուն մտնել, սակայն պահակող ասկյարը կանգնեցնում էր եւ զենքով ահաբեկելով արգելում էր անհասկանալի է, թե ինչ նկատառումներով: Իրենց հերթին խիստ անհանգստացած էին նաեւ խմբի տղաները: Իսկ խալիս բեյը նրանց տունն անառիկ ամրոց դարձնելուց հետո, ասես մոռացել էր տերերի գոյությունը: Չայն ու ծայտուն չկար: Վերջը ֆիդայիները գտան տուն թափանցելու հեշտին ձեւը: Թուրք սպայի հագուստով Ասպետ Մկոն ասկյարին պարզեց անցաթուղթ: Խեղճ ասկյար, ինչպես կարդար, երբ տառերը չգիտեր: Եվ Ասպետ Մկոն ներս մտավ: Եկավ ասես այլ մոլորակից: Խոսեցին դեսից-դենից: Պարզվեց, որ խալիս բեյը, ինչպես ասում են՝ ցանկանում է ձուկը գլխից բռնել: Նրա հետախույզներն ընկել են տղաների հետքին: Արդեն հոտոտում են ճգնավորի ձորի քարանձավները: Մի երկու թուրքի բռնել ու խեղդաձախ էին արել, արարք, որից հետո հետախույզ ասկյարներն այլեւս չէին մտնում ձորերը: Ասպետ Մկոն ասաց, որ իրենք արդեն տեղափոխվել են տեղակայման վայրից, քարանձավից, որովհետեւ կարծում են, որ քարանձավները շուտով կենթարկվեն զնդակոծման թուրքական հրետանու կողմից: Եվ տեղափոխվում են քաղաքի ավերակ տների նկուղները: Համարձակ վճիռ է, բայց ուրիշ հնար չկա: Եվ այնուհետեւ, քանի դեռ չկա տեղակայման վայր, քանի քիչ է որոշակիությունը, գործունեության հետագա ծրագիրը, Սեւ Արսենը խնդրում է որեւէ անզգուշություն կամ ինքնագործունեություն թույլ չտալ, մինչեւ գործերի կարգավորվելը: - Իսկ եթե պահակող ասկյարը զեկուցի քո գալստյան մասին, ի՞նչ պատասխան ենք տալու...

- Կասեք, որ թուրք սպա է մտել ձեր տուն: Գեղեցիկ կնոջ թուրքն ի՞նչ պատճառով կարող է այցելել: Սեր մուրալու կամ պահանջելու: Գործարքը չի կայացել՝ հեռացել է: Խնդրում են չհուսահատվել, խալիս-բեյը մինչեւ չլուծի մեր հարցը, իսկ մեր հարցը հավատացած ենք հեշտ լուծվողներից չէ, ձեզ չի մոտենա: Կապի մասին կիռգանք ինքներս: Իսկ սա,- Մկոն թուրքական փողերի մի փոքրիկ կապուկ դրեց սեղանին, շուկայական ծախսերի համար:

Եվ գնաց: Ամուսինները թեթեւացած շունչ քաշեցին: Յուրայինի այցելությունը ջերմացրեց նրանց: Նորից աշխարհը՝ երկիրն ու երկինքը հարազատացան: Հայրենի հո՛ղ... Այսքան հարազատ, այսքան թանկ եւ այսքան օտար. թշնամու ոտքի տակ, հողի տերերը՝ գաղթականներ, օտարության մեջ: Եվ ինչպե՞ս է տանում հողը թշնամիների ծանրությունը: Ինչո՞ւ ծառս չի լինում ազատատենչ նժույզի նման, ինչո՞ւ դեն չի նետում օտար, անկոչ հեծվորին եւ ինչո՞ւ է տնքում, ինչո՞ւ չի վրձնում, չի փոթորկվում... Հայրենի հող, ինչպե՞ս ես հանդուրժում մորեխին քո արտերի մեջ, ինչպե՞ս ես տանում խոլերայի մահացու գոյությունը քո մարմնի վրա, ինչպե՞ս ես կրում շղթաները

քո վերքոտ մարմնին: Ո՞ր եմ քո ուստրերն ու դուստրերը: Ու՞ր է քո ազգային հպարտությունը, երբ քո հողում դու արդեն չկաս: Ինչպե՞ս ներել կենդանի մարդուն, երբ նա ապրում է մեռածի նման: Արթնացի՛ր, սովորի՛ր մեռնելով ապրելու քո պապերի խորաշունչ գիտությունը եւ ոչ թե ապրելու մեռածի կյանքով, երբ դու կաս եւ չես ապրում:

Եղիսաբեթն արթնացավ մտորումներից: Լուսամուտից արելը հարձակվում էր սենյակի վրա, թրատում եւ բաժան-բաժան էր անում կիսախավարը: Մահճակալի վերել հայրենական հին գորգի վրա պառկել էր արելով ողողված եղջերուն, բերանին խոտի մի փոքրիկ փունջ: Արելը չէր հասել անտառին եւ գոգի վերին մասը՝ անտառը մթան մեջ էր: Եղիսաբեթն ուզում էր, որ արելը ողողի, խեղդի անտառի մթությունը: Եվ օգնության հասավ արելին: Ծանր վարագույրը քաշեց մի կողմ եւ արելը հեղեղի նման հորդեց սենյակ: Գորգը հրդեհվեց բազում գույներով: Անտառն ու մարգագետինը կանաչեցին, ալիքվեց գետակի արծաթը: Բնությունը կենդանացավ: Սերգեյը լուռումունջ նայում էր կնոջ աշխատանքին: Հասկանում էր կնոջը, որն արելի փնտրտուքի եւ նրա ճանապարհը բացելու հոգսերի մեջ էր: Արելը եւս հալածական էր: Նրան եւս օգնել էր հարկավոր, մանավանդ որ աշնանային աներես ու անձրեւաբեր ամպերն անվերջ խանգարում էին նրա երեւալուն եւ խանդոտ արագությանը թաքցնում էին նրա լուսե գեղեցկությունը:

- Արելը հաղթելու է, Եղիսաբեթ... Արելը պարտություն չունի...

- Հաղթում է, սակայն դժվարությամբ, Սերգեյ...

Երկու օր չանցած թուրքական հրետանային մարտկոցը, որ տեղադրվել էր ձորի աջակողմյան բարձունքին, հանկարծ կրակ բացեց դիմացի ժայռերին, քարանձավներին: Համազարկերը հաջորդում էին իրար: Արկերը պայթում էին քարայրների բաց բերանների մեջ, խեղդելով այրերը ծխով ու փոշով, քանդելով ժայռերի դարավոր խաղաղությունն ու նրանց կուսական վեհությունը: Բայց թմրանոթներն ուշացել էին: Այնտեղ ոչ մարդ կար, ոչ զենք, ոչ էլ ուտելիք: Հրետանավորները հրաման ունեին քանդելու այրերը եւ անխոնջ եռանդով քար էին աղում, որոնց բեկորներից կատաղում եւ ուռչում էր առանց այն էլ կատաղած եւ վիրավորանքից սանձակոծ Թափարվանը: Հրետանավորների քթի տակ աջակողմյան ժայռերում թաքնված հայ վրիժառուները ցավով նայում էին իրենց կացարանի կործանմանը: Նրանք նման էին ժայռեղեն բաց բերանների, որոնց մեջ պայթում էին արկերը, ջարդելով ատամները, մեծացնելով ու այլանդակելով բերանի խոռոչները:

- Քանդվում է օձերի բույնը,- հոգնած քարին նստեց հրետանային մարտկոցի հրամանատարը,- կրակը դադարեցնել...

- Քանդեցեք նաեւ այդ ճգնավորի վանք կոչված շինությունը, որը նույնպես օձաբուն է:

- Յուզբաշի, խնդրում եմ հրամանդ հետ վերցնես, հայի Աստվածն ասում են շատ վրիժառու է, յուզբաշի,- աղերսեց ասկյարներից մեկը:

- Չե՛նդ, ախմախ, հայերի Աստվածը վաղուց ճղել է այստեղից: Հիմա երկնքում մեր ալլահն է: Հետո մերոնք վանքը գնդակոծել չեն կարող, որով-

հետեւ մեր ոտքերի տակն է, գետի այս ափին, մենք նրա վրա կփլցնենք ահա այս վիթխարի ժայռը, որը գետնին կհավասարեցնի այդ փոքրիկ թզաչափ մատուռը եւ վերջ...

- Յուզբաշի, խնդրում եմ այդ բանը չանել, աչքովս եմ տեսել, թե ինչէր կարող է անել հայի Աստվածը: Չի՛ խնայի: Օնբաշի Ջումշուղը եղպիսի մի փոքրիկ մատուռում մուրտառեց եւ դուրս գալիս քարը գլխին ընկավ ու... Փոխիր հրամանդ, յուզբաշի, ման օլո՛ւմ...

Յուզբաշին կատաղութամբ դուրս քաշեց ատրճանակը.

- Քեզ կսատկացնեն, գյավուրի նման կսատկացնեն, քաշվիր ճամփիցս...

- Խնդրում եմ, յուզբաշի՛, խնդրում եմ, ախր, խնդրո՛ւմ եմ,- եւ ճանկեց ձեռքը, լավեց կրակոց եւ զինվորն անկենդանի տապալվեց գետնին: Յուզբաշին սփրթնեց վախից: Կանգնել էր ոչ կենդանի, ոչ մեռած: Տիրեց մեռելային լռություն: Միայն ցնցվում էին մեռածի շրթունքները, ձեռքերն ու ոտքերը:

Գոցեք դրա աչքերը, նրանք ինձ են մայում: Ասկյարներ, դուք վկա եք, ախր, ես չկրակեցի, ինքն ընկավ ատրճանակի վրա:

Հասակավոր հրետանավորը մոտեցավ սպանվածին եւ փակեց աչքերը, հետո դարձավ յուզբաշուն.

- Նա ինքնասպանություն չի կատարել, յուզբաշի՛, նա սպանվել է, եւ դու ես նրան սպանողը: Նա ցանկանում էր փակել քո ճանապարհը եւ դու սեղմեցիր ձգանը... Այդպես չի կարելի, յուզբաշի: Ինչո՞ւ էիր ուզում քանդել մատուռը, քեզ ի՞նչ վնաս այդ մատուռից: Անձրեւ եւ շոգ օրերին քեզ էլ կարող է պատսպարել:

- Այն դառնում է ֆիդայիների բնակատեղի ու պիտի քանդվի...

- Գնա ինքդ քանդիր, մենք լվանում ենք մեր ձեռքերը, յուզբաշի: Տեսա՞ր ինչ ասել է հայի Աստված, խոսքդ կատարած-չկատարած օրհասը եկավ:

- Մենք պիտի քանդենք այդ մատուռը, ես այդ ասում եմ ալլաիի անունից,- նորից ձեռքը տարավ ատրճանակին:

- Հայերը մի լավ առած ունեն,- մրթմրթաց հասակավոր ասկյարը,- երբ շունը սատկել է ուզում, գնում մուռտառում է եկեղեցու դռանը, գնացինք, յուզբաշի՛, մեղքը քո վիզը...

Եվ ասկյարները հավաքվեցին հրամանի կատարմանը: Նոր էին սկսել թուլացնել ժայռի տակն ու կողերը, երբ հրացանների համազարկից արթնացավ ձորը: Համազարկը երկա՛ր- երկա՛ր թափառեց ձորում, դիպավ ժայռից ժայռ, ապա վերադարձավ ու մարեց: Սպանվել էին թուրք հրետանավորներից երկուսը: Մեկը վիրավորված տնքում էր, մյուսները գլխապատառ, կիսախելազարված փախչում էին քաղաք.

- Փախե՛ք, հայոց Աստվածը նեղացել է...

- Ափսո՛ս, որ մեզ հետ չենք կարող տանել թնդանոթները, շատ ափսոս,- լավեց հայերեն խոսող տղաների ձայնը,- բայց ձորը նետել կարող ենք: Սպասե՛ք, այստեղ մեկը ողջ է: Ա՛, բարեւ, բարեւ, յուզբաշի, ուրեմն, մուրազդ փորդ մնաց, չհասցրիր հայոց մատուռը քանդել: ..

Խոսողը՝ Պողոսը, մոտեցավ վիրավորին: Այդ պահին լսվեց կրակոց եւ Պողոսն ընկավ.

- Թյու՛, շանորդի, տես ինչ արեց...

Գնդակը ծակել էր ազդրը: Միջանցուկ վերք էր: Տղաներն անմիջապես հասան եւ վերջ տվին յուզբաշուն, որը կիսապառկած, դրությունից ցանկանում էր երկրորդ կրակոցով լուծել Պողոսի լինել-չլինելու հարցը: Հետո կապեցին Պողոսի վերքն ու ձեռնամուխ եղան թնդանոթները ձորը գլորելուն: Մարտկոցի երեք թնդանոթները բարձր քարափից նետվեցին ձորը՝ փշուրփշուր եղան: Եվ խաղաղություն իջավ ձորին: Երբ զորամասից օգնության եկան, ձորում այնպիսի խաղաղություն էր նստել, որ չէր լսվում գետի հառաչանքն ու նույնիսկ շառաչուն ընդվզումը: Չորս սպանված եւ երեք ջարդված թնդանոթ, թուրքերի կորուստները: Այլանդակված քարանձավներ եւ մեկ վիրավոր: Հայոց կորուստները: Միս այդպես վերջացավ այդ օրվա ողբերգությունը: Եվ Թափարվանը վերստին ընթանում էր իր հազարամյա հունով եւ անխոտոր էր ընթացքը, եւ արեւի աշնանային թույլ շողերը վերստին գուրգուրում էին մատուռի հազարամյա պատերը, որի հարթ քարերի վրայով երթեւեկ էին անում մողեսներն, ու ծլվլում էին արդեն չվող թռչունները: Իսկ երկնքից երկրի իրարանցմանն էին նայում Աստծո հոգնած ու ծերացած դեմքը:

* * *

Այդ օրը կատարվեց մի աննախադեպ իրադարձություն: Կայազորի պարետը երեկոյան քաղաքի պահակակետերի այցելությունից վերադառնալիս մի տան պատուհանում թույլ լույս նկատեց: Ամայի, անմարդաբնակ փողոց ու լույս: Շրջապատում ոչ մի շունչ: Հոգին ի բուռ՝ պարետը զգուշ ու անձայն պատերին քսվելով՝ մոտեցավ պատուհանին: Հանկարծակի հարձակումից կամ կրակոցից խուսափելու նպատակով ատրճանակը պատրաստ պահած, ծիկրակեց: Սենյակի կիսախավարում նա վառվող մոմ տեսավ պատվանդանի վրա: Հետո աչքերը, երբ փոքր ինչ ընտելացան կիսախավարում իրերն ու առարկաներն ընկալելուն, նա սարսափով նկատեց, որ մոմը վառվում է դագաղում պառկած կմախքի չորացած ձեռքերի մեջ: Պարետը վայրկենապես սրտի նվաղում ունեցավ, պտտվեց գլուխը եւ չգիտես ինչու սիրտն այնպես խառնեց, որ սկսեց որձկալ եւ հենց այդտեղ, մութ քարերին հետ տվեց: Երբ վախի եւ սարսափի առաջին նոպաներն անցան, սպան ցանկացավ մտածել իր անելիքը, բայց որովհետեւ զրկվել էր մտածելու ընդունակությունից. նրան ոչինչ չէր մնում կրակելուց բացի: Պարզապես նա կրակեց մոմի վրա, որովհետեւ վախենում էր նայել կմախքացած հանգուցյալին: Կրակը որոտաց: Ձրնգոցով թափվեցին ջարդվող ապակու կտորտանքները, եւ երբ ծուխը ցրվեց, նա տեսավ մի բան, որ նրան զրկեց գոռալու, նույնիսկ մտածելու հնարավորությունից: Մոմը վերստին ձեռքերի մեջ, վարտիք-շապիկով հանգուցյալը կանգնել էր սենյակի մեջտեղում, եւ նրա հասակը երկա-

րում ու երկարում էր դեպի վեր: Գլուխն արդեն հասնում էր առաստաղին: Պարետը խռխռաց, ինչ-որ անմարդկային հնչյուններ դուրս-եկան կոկորդից եւ տապալվեց ներքեւ: Ամբողջ գիշեր պարետատան ասկյարները փնտրեցին եւ միայն առավոտյան նրան գտան մի տան պատուհանի տակ՝ ուշակորույս: Շուրջը եւ սենյակում ոչինչ չգտան բացի սեղանին դրված դատարկ դագաղից եւ կիսայրված մոմից: Պարետի ատրճանակը չկար: Իմանային ո՞վ էր տանողը, պիտի որ վախից ու սարսափից խենթանային: Մեռելը փախել էր, լքել էր դագաղը, չմոռանալով զինաթափել պարետին:

Իրականում ի՞նչ էր պատահել: Մոտեցող ծմեռը խիստ դժվարացրել էր Սեւ Արսենի խմբի վիճակը: Նրանք օրական մի քանի անգամ փոխում էին տեղակայման վայրը. ցուրտն ավելի դաժանորեն, քան թուրքը հետապնդում էր նրանց: Տներն անլուսամուտ, տաքանալու հնար չկար, խարույկ կամ վառարան վառել անկարող էին, կյանքով էին պատասխան տալու: Եվ Ջավախքի խստաշունչ ցրտին (սարերն արդեն ձնել էին) միացած Խալխա բեյի համառ ու անկոտրում հետապնդումը, որը շտապում էր օր առաջ ազատվել սանջակի հայկական հարցից, ոչնչացնել խումբը, ստեղծել էր խմբի համար մի անտանելի, անելանելի վիճակ: Քաղաքում հերթապահում էին ոչ միայն ասկյարներն իրենց գերմանական հրացաններով, այլեւ գնդացրորդների երկու հաշվարկ, որոնք ավերակներում ֆիդայիների որսի էին ելել եւ, եթե հետապնդվողները փրկության նոր ելքեր չորոնեին, նույնիսկ պատահական հանդիպման ժամանակ, կարող էին գլխովին ոչնչանալ: Եվ ահա դեպքի նախորդ օրը որոշվել էր, ինչ գնով էլ լինի գողանալ թուրքերի գնդացիրները կամ գոնե նրանցից մեկը: Դրա համար հարկավոր էր, որ պարետն այդ գիշեր չլիներ պարետատանը, որին կից էր ասկյարների փոքրիկ ննջասենյակն, ուր գտնվում էին նաեւ նրանց զենքն ու հանդերձանքը: Եթե պարետը գիշերը չգնար պարետատուն կամ ուշանար, ապա հերթապահությունից ազատ ասկյարները կլցվեին պարետատանից ոչ հեռու գտնվող պոռնկատունը, հսկողությունը կթուլանար կամ կվերանար, եւ հնարավոր կլիներ գնդացիրներն ու փամփուշտները թռցնել: Պարետին սպանելը կամ գերելը բացառված էր, որովհետեւ նախ անհայտ էր, թե քանի ուղեկցող ասկյարներ կլինեին նրա հետ եւ հետո բորբոքվող կռիվը կամ հրաձգությունը ինչ ընթացք ու վախճան կարող էր ունենալ: Կռիվը կարող էր արթնացնել ողջ կայազորը, իսկ նրա հետ կռվելու համար տղաները բավարար քանակով զենք ու զինամթերք չունեին: Մարտիկներ կորցնելու իրավունք չունեին: Մարտիկն աշխարհ արժեք: Ահա այստեղ իր արկածային, ֆանտաստիկ գործողության տարբերակն առաջ քաշեց ամենածեր ֆիդային՝ Քոսան, որը քննարկելուց հետո դրվեց գործողության մեջ: Քոսա Ջավախքում կոչում են երեսին բուսականություն չունեցող տղամարդկանց, իսկ Խնկո Գեշյանն այդպիսին էր: Ոչ միայն դեմքը գուրկ էր մազերից, այլեւ նիհարությունն այնպիսին էր, որ կարծես գանգին ու դեմքին լոկ մաշկ են կպցրել: Աչքերը խոր, շատ խոր նստած իրենց բներում, քիթը մի տեսակ կիսատ, կրծած, Խնկոյին ցույց տալով մայրերը վախեցնում էին իրենց չար երեխաներին. «Ա՛յ, Քոսային կասեմ, կգա...»:- այս բառերը բա-

վական էին զսպելու ամենաչար ու նույնիսկ հանդուգն երեխաներին, մանավանդ որ Քոսան առանց ընտանիքի, միայնակ մարդ էր, իր համար պատվիրել էր դագաղ, որի մեջ քնում էր: Մարդիկ հարցնում էին այս դագաղասիրության պատճառը եւ Քոսան մեկ պատասխան ուներ՝ «վարժվեմ կը...»: Ոչ ոք, ոչ երեխաները, ոչ կանայք երեկոյան կամ գիշերով սիրտ չէին անում անցնելու նրա պատուհանի տակով, որովհետեւ լամպի լույսի տակ երեւում էր դագաղում պառկած կմախքը՝ խնկո Գեշյանը, նույն ինքը Քոսան: Բայց քչերն էին ծանոթ նրա սրտի փափկությանն ու բարությանը: Քչերը գիտեին, թե այդ ընտանիք չունեցող, արդեն ծերացող մարդն ինչպիսի սեր ու խանդաղատանք էր տածում մանուկների նկատմամբ, որոնք նրանից վախենում ու փախչում էին, ինչպես ժանտախտից, ինչպես թուրքից, որի անունով խաղաղվում էին եւ դառնում Աստծո գառներ: Քոսան մեկ այլ թուլություն էլ ուներ. թառ էր նվագում եւ լավ էր նվագում: Նրա նվագը լսում էին հեռվից: Չէին մոտենում, որ տպավորությունը չփչացնեն: Ինքը գիտեր եւ գարնան ու ամռան տաք օրերին բացում էր լուսամուտը, հանգցնում լույսը, որ չտեսնեն իրեն, այլ լսեն իր նվագը՝ մեղմ ու սրտազին, մտերիմ ու մարդկային... Եվ ահա Քոսան ինքն առաջարկեց մեռել խաղալու իր տրագիկոմեդիան, փաստորեն խաղաթղթի վրա դնելով իր կյանքը, որովհետեւ մոմի լույսի տակ տեսանելի Քոսային կարող էին հենց առաջին կրակոցով ուղարկել այն աշխարհը, որին վարժվելու վարժությունները նա կատարում էր բավական երկար ժամանակ: Բայց ժողովուրդը, որ իմաստուն է, ասում է՝ խելառի աղունն Աստված է աղում: Քոսան ոչ միայն մեռած, այլ հին մեռելի դեր կատարեց այնպիսի սառնասրտությամբ, որ օրեր անց պարետը հավիտյանս անդամագրվեց հոգեբուժարանին: Իհարկե, պարետի աչքին մեռածի առաստաղին հասնելու իրողությունը տեսողական պարզ խաբեկանք էր, վախի տրամաբանական ապոթեոզ: Աչքին էր երեւացել, դագաղում կանգնած Քոսան կարող էր նման թյուրատեսության բավարար հիմքեր տալ: Ասկյարներն առավոտյան արդեն փետում էին իրենց մագերը եւ անիծում իրենց բախտը, որովհետեւ մաքուր թալանված էր նրանց զենքը, տարված ոչ միայն գնդացիրները, այլեւ ամբողջ հրազենը՝ հրացանները, նռնակները եւ ատրճանակները: Կատարվածի մասին անմիջապես տեղեկացվեց հրամանատարությանը: Արտակարգ վիճակ հայտարարվեց, եւ հեծելազորային ամբողջ վաշտը վարձով մտավ քաղաք: Խալիս բեյը չհամարձակվեց ինքը գլխավորել ֆիդայիներին որոնելու պատժիչ գործողությունը եւ հրամանատար կարգեց շտաբի պետին՝ Իսմայիլին: Յրամայված էր, եթե հեծելազորային վաշտն ընկնի գնդացիրների բերանը, կրակային կետերը պարզելուց հետո, թող առանց մարտի բռնվելու նահանջի, իսկ զինվորական ավանից կսկսվի հրետակոծությունը, եւ պետը խոստանում էր լռեցնել գնդացրային համազարկերը: Բայց այդպես չեղավ: Պաշտպանվողները հարձակվողներից ավելի խելոք եւ հեռատես դուրս եկան: Գնդացիրները դրվեցին կենտրոնական փողոցի հանդիպակաց տներում, իսկ ճանապարհը փակեցին հրացանակիրները: Յեծյալները պարզապես ընկան տոպրակի մեջ, որի բերանը փակեցին հրանձիգների հնգյակը: Եվ սկսվեց:

Սկսվեց մի անողոք ջարդ, ուր ոչ մի փամփուռ գետին չէր ընկնում: Չորս կողմից արճճի անձրեւը տառացիորեն հաշված բույսերի ընթացքում մտի գնդերի վերածեց հեծելավաշտի ահեղ հզորությունը. ասկյարները ո՛չ ֆիդայիների տեսան, ո՛չ հասցրին նույնիսկ կրակել կամ յաթաղանել նրանց, չհասկացան նույնիսկ, թե ինչ սատանայի հողմի եւ փոթորկի մեջ ոնկան եւ ծի ու ծիավոր պատեպատ դիպչելով՝ լքեցին պաղ ու անհյուրընկալ աշխարհը, որը կարծում էին, թե իրենց ոտքերի տակ է: Անողոք, անվրեպ կրակ էր տեղում: Ֆիդայիների հաշիվը պարզ էր, կոտորել ու նահանջելու հնարավորություն չտալ: Եթե նահանջեր թուրքական հեծելավաշտը, քաղաքը եւ պաշտպանվողները կընկնեին հրետանային կրակի տակ, որին կմասնակցեր զորամասի հրետանու ողջ հզորությունը:

- Զթողնել ոչ մի հեծյալի դուրս գալու կրակի գոտուց: Զխնայել՝ նույնիսկ վիրավորներին:

Գնդացրային հաշվարկները գլխավորող Ասպետ Մկրն ու Յերոս Մկրն հերոսության հրաշքեր գործեցին: Նրանց աշխատանքը դիտակետից հսկող խմբապետը պարզապես զարմանք էր ապրում: Ոչնչացնող, հալեցնող կրակ էր: Հեծելավաշտի հրամանատարը ընդհանուր աղմուկի մեջ, մի քանի անգամ «թասլիմ» (հանձնվում ենք) գոռաց, բայց չսկսվեց եւ, իվերջո, սուրն ընկավ ձեռքից, եւ ինքը կախվեց խրտմած ձիու ասպանդակից՝ գլուխը սալահատակին՝ ջարդուփշուր: Մարտը կարճ տեւեց եւ ավարտվեց նույնքան անակնկալ, որքան սկսվել էր: Ավարտվեց, երբ ծի ու հեծյալ այլեւս չկային: Բայց զոհեր ուներ նաեւ պաշտպանվող կողմը՝ երկու սպանված եւ մեկ վիրավոր, որոնց արագ փախցրին դեպի ավազահանքերը՝ սպանվածներին թաղելու եւ վիրավորին՝ բուժելու համար:

- Դեհ, դեպի նոր թաքստոցներ, քիչ հետո կսկսվի հրետակոծումը: Քաղաքում մնալը միտք չունի... Տղերք, ափսո՛ւս, որ մենք պարգեւատրելու, շնորհակալագրեր հանձնելու հնարավորություն եւ իրավունք չունենք, այլապես բոլորին կլողացնեինք պարգեւների մեջ: Գնացի՛նք...

Թուրքական հրետանին այդպես էլ կրակ չբացեց, որովհետեւ միտք չունեի կրակ բանալ խայտառակ պարտությունից հետո եւ վնասել քաղաքում գտնվող փոքրաքանակ ընտանիքներին, մանավանդ իմանալով, որ ֆիդայիների խումբը դուրս եկած կլինի այնտեղից: Խալիս բեյը կատաղորեն չափում էր իր առանձնասենյակի լայնքն ու երկայնքը, պատեպատ էր դիպչում անզորությունից՝ ջարդելով իր ձեռքերն ու չիմանալով անելիքը: Նա զգում էր, որ սխալ էր վարվել շտաբի պետին ուղարկելով ստույգ մահվան: Նա հրամկազմի խորհրդակցություն հրավիրեց եւ երկար ժամանակ ֆշացնելով ու շվշվացնելով փորձում էր իր մտքինն ու կասկածները հաղորդել նրանց, բայց ոչինչ չէր ստացվում: Ոչինչ չէին հասկանում նաեւ սպաները, որոնք ցնցվել էին օրվա անցուդարձից:

- Ա՛յ թե մեզ քոթակեցին: Քոթակեցին ինչպես շանն են թակում: Կռիվ չկա, բայց հեծելավաշտը կորցրեցինք: Ի՞նչ ենք անելու այսուհետեւ, ի՞նչ պատասխան ենք տալու վերելիմ: Կաշիներս կքերթեն, մերերս կլացացան:

Ստածում եմ, մտածում եւ ելքը չեմ գտնում: Ախր, մարտադաշտ դուրս չեն գալիս այդ էրմանիները, որ բաց դաշտում լուծենք հարցերը: Սատանա դարձած չեն բռնվում: Ալաբալըղ (կարմրախայտ) դարձած պլստում են ձեռքերիցս... Ի՞նչ անել...

- Բե՛յ, աշխարհի բոլոր կողմերում ավազակների, մարդասպանների եւ ահաբեկիչների դեմ կռվում է ոչ թե կանոնավոր բանակը, այլ ոստիկանությունը: Մենք փորձ չունենք նման կռվի: Խնդրում ենք ոստիկանություն հրավիրել...

- Ուրեմն ոստիկանություն հրավիրենք, որ նրանք պաշտպանեն ու փրկե՞ն բանակը: Դուք խելագարվել եք եւ ցանկանում եք, որ ինձ կապելու խելառի տեղ դնե՞ն, այ էջի գլուխներ...

Օղակը գնալով սեղմվում էր: Վերջին մեծ պարտությունից հետո Խալիս բեյն անցավ վճռական գործողությունների, սկսեց թաղամաս առ թաղամաս շրջափակել եւ ոչ թե հետապնդել հայ տղերքին, այլ հրամայված էր կրակ բանալ շարժվող կենդանիների՝ շների ու կատուների, կասկածելի թվացող իրերի ու առարկաների վրա: Բայց այս միջոցառումը ոչինչ տալ չէր կարող եւ չտվեց թուրքերին: Միայն երբ շրջապատեցին եւ ներխուժեցին ավազահանքը, այստեղ տեղի ունեցավ կարճատեւ բախում, առաջին թուրք ասկյարը, որ թափանցեց հանքի խորքը գնդակահար ընկավ: Համազարկեցին մի քանի անգամ, եւ երբ հանդգնեցին մտնել, այս անգամ ձայն-ծայտուն չլսվեց: Եվ չնայած սպանվածը ամբողջապես գնդակահար ու ծակծկված, նորից ու նորից գնդակահարեցին, որ հագեցնեն իրենց սպանելու եւ ջարդելու ծարավը: Իսկ նպանվածը մեծ կռվում ծանր վիրավոր մուրջախեթցի Վասոն էր, այնուամենայնիվ այն աշխարհն ուղարկեց ավազահանք մտած թուրքին: Այս գործողությունը, որպես անհեռանկար միջոցառում, դադարեցվեց: Վերացվեց նաեւ Եղիսաբեթի տան վրա դրված հսկողությունը, որը նույնիսկ ոչինչ չտվեց, սակայն բինբաշին շարունակում էր ատամ կրճտացնել նրա վրա եւ որոճում էր նոր միջոցառումներ՝ պատժելու եւ ստորացնելու Եղիսաբեթին: Դա մի տգեղ խաղի հեռանկար դառնալու նենգություն էր: Բեյը ցանկանում էր անուշադրության մատնելով իր զոհերի գոյությունը, բթացնել նրանց զգոնությունը, բռնել հանցագործության պահին եւ ամբողջ զորամասի եւ նույնիսկ հրամանատարության վառելի հրապարակայնորեն մահապատժի ենթարկել որպես հայերի եւ ռուսների համբավավոր գործակալների եւ իր քաղաքական ու ռազմական կարիերան ամրապնդել պետերի աչքում, արժանանալով զինվորական նոր կոչումների եւ պարգևների, շահել պաշտոնական նոր աթոռներ: Սակայն առիթն ուշանում էր: Չունենալով գործակալներ հակառակորդի բանակում, սադրանքներ ու պրովոկացիաներ կազմակերպելու հնարավորություն, Խալիս բեյն այնուամենայնիվ, Եղիսաբեթին եւ Սերգեյին նայում էր որպես պատանդների, որոնց կարող է մահապատժի ենթարկել ցանկացած պահի: Սակայն հապաղում էր սպասելով այն աստեղնային ժամին, երբ կիրազործվի իր ցանկությունը եւ կըմբռնվի ուժեղ հակառակորդի հրապարակային ստորացման ու մահվան ցնծությունը: Խալիս

բեյին մեկ-մեկ համակում էր նաեւ նրանց առանց դատ ու դատաստանի ոչնչացնելու միտքը, մանավանդ երբ վատ էր լինում տրամադրությունը եւ դատական խաղը համարում էր ոչ թե իր հաղթանակի եւ պարտության ցուցադրումը: Հոգու խորքում նա վախենում էր, նույնիսկ պատկառում էր իր հակառակորդից, որին ո՛չ խելքով, ո՛չ լեզվով, ո՛չ տղամարդկային կարողությամբ ի գորու չէր վնասելու կամ վարկաբեկելու: Կարճ ասած՝ նրա վարդագույն ցանկություններն այդ պահին անէանում էին, չքվում՝ տեղի տալով ծանր մտածումների: Սակայն հաջորդ պահին մտածելով, որ իր գինվորական կարիերան արդեն ավարտված է, որ գնդի հրամանատարի պաշտոնն իր առաջընթացի վերջնագիծն է, նա կրկին վերստանում է նահանջի մեջ գտնվող իր լավատեսությունն ու վստահությունը, պաշտոնական նոր բարձունքներ գրոհելու կամքը, մանավանդ կիրքը: Նա, այդ դասական թուրքը, իր մեջ վերամարմնավորել էր Եղիսաբեթի մի կերպար, որը նրա կարծիքով (եւ նա հավատացած էր) ռուսական հետախուզության խոշորագույն դեմքերից էր, որ քիչ դառնություններ չէր պատճառել թուրքական բանակին՝ շարքից հանելով բարձրաստիճան եւ միջին հրամկազմից բազմաթիվ սպաների: Բայց այստեղ էլ նրա միտքը մղվում էր փակուղի: Ո՞ւմ կարող էր հավատացնել, մանավանդ ապացուցել, հաստատել Ձեյնաբ խանումի մեծ հետախույզ լինելու իրողությունը: Երբ Ջավախքն այժմ հայ-թուրքական կամ ռուս-թուրքական հարաբերությունների թե՛ տեղամասերից չէր, թուրքերից նվաճված մի գավառ, ուր պարտվածները պարզապես ապրելու եւ գոյատևելու թեւ կորովի, բայց ոչ վճռորոշ գործողություններ են կատարում՝ հաստատելով իրենց գոյությունը: Այնպես որ Ջավախքն իր այժմյան նշանակությամբ այդպիսի խոշոր հետախույզի գործունեության ասպարեզ չի կարող լինել: Հակառակորդն իրեն նման շռայլություն թույլ չի տա: Ահա այս մտքերը կեղեքում էին Խալիս բեյին, որը՝ վերջին հաշվով չէր կարողանում վերջնական որոշման հասնել իր պատանդների հարցում:

Սակայն ժողովուրդը մի ասացվածք ունի՝ մատաղի գառն իր ոտքով է գնում մատաղացու դառնալու: Մի օր իրիկնապահին զորամասի շտաբի պահակապետը մի գեղեցիկ հայ տղայի հրմշտելով գցեց բինբաշու առանձնասենյակը: Տղայի խուճուճ մազերի տակից նայող աչքերն այնքան փափուկ ու թեթեւ խումարությամբ, միաժամանակ վստահությամբ էին նայում Խալիս բեյին, որ նրա մեջ խլրտաց, եռաց հին արվամուլի արյունը: «Այս ինչ հրաշք էր, ալլա'հ...»:

- Բինբաշի՛, այս լակոտն ուզում է, որ դու ընդունես ու լսես իրեն: Նա հայ ֆիդայիների խմբից է:- Բեյն ուղղվեց:

- Դու առաջ արի, օղլում, իսկ դու գնա, օմբաշի: Մեզ մենակ թող... Հիմա ասա ինչո՞ւ ես եկել: Սուտ չխոսես, միշտ հիշիր, որ թուրքերը հիանալի են աշխատում եւ կախաղանի օղակի վրա, եւ մանավանդ թակելիս, եւ մանավանդ հայերին...

- Գիտեմ, բինբաշի՛, բայց եկա, չգալ չէի կարող: Ես եկել եմ իմ օգնությունը՝ ձեզ առաջարկելու եւ խնդրելու ձեր օգնությունը: Խնդրում եմ,

շատ եմ խնդրում օգնել ինձ...

- Նախ, դու ասա, ինչո՞վ կարող ես օգնել մեզ, նոր միայն խնդրիր մեր օգնությունը,- Խալիս բեյը նայեց տղային եւ ցանկությունից դողաց. «Ա՛յ թե տղա է, ոնց որ սուլթանի լակոտ, սուլթանացու: Յետաքրքիր է՝ չի՞ ցանկանա մնալ ինձ մոտ: Ես այս շան որդուն նախ, կթրքացնեմ, հետո կպահեն որպէս հանձնակատար օմբաշի, առանց կասկածի ինձ մոտ կլինի եւ ցերեկ, եւ գիշեր...»:

Իսկ տղան հապաղում էր պատասխանել: Վերջապէս խոսեց.

- Ինձ այստեղ է բերել սերը, բինբաշի, սերը... Ես կդառնամ քո ղուլը, բեյ, կանեմ ինչ կամենում ես, միայն օգնիր ինձ տիրանալու Ձեյնաբ խանումին...

- Ձեյնաբ խանումի՞ն,- զգաստացավ Խալիսը,- Ձեյնաբ խանումի՞ն, ասացիր... Օ՛, դա դժվար գործ է, տղա...

- Դժվար չլիներ, բեյ, ձեզ չէի խնդրի, ինքս կանեի, կբախտավորվեի...

- Նախ, ասա ինձ, նրան որպէս կին ես ցանկանում ունենալ, որպէս սիրելեան, հաճույքի առարկա...

- Ինձ համար միեւնույն է, միայն նա իմը լինի: Ես նրա ամուսինը կլինեմ, թե սիրելեանը՝ միեւնույն է:

- Այ գյադա, նա ամուսին ունի, նրա տերը ես չեմ: Նրա ամուսնուն ասա, միասին վայելեցեք այդ խանումի սերը: Երկուսիդ էլ հերիք կանի: Ուրեմն, դու՛ հայ ֆիդայիդ, որ ով գիտե քանի թուրք է ուղարկել էն աշխարհը, եկել է ինձ մոտ խնամախոսության եւ խնդրում ես ուրիշի՝ նույնպէս թշնամու՝ թշնամի կնկա ձեռքը: Խելառի աշխարհ է, տո՛, քուռակ... Ես ի՞նչ կապ ունեմ Ձեյնաբ խանումի հետ...

- Միայն դուք, բեյ, միայն դուք կարող եք հասցնել ինձ իմ մուրազին: Գիտեմ, որ միեւնույն է, մի օր նրան պիտի մահապատժի ենթարկեք, չէ՞ որ նա հայ է: Եվ իմ կարծիքով, նա պետք է, որ թուրքերի հետ լավ հարաբերություններ ունենա, որովհետեւ նրանց տուն այցելում էին եւ Օմար փաշան, եւ Նազըմ բեյը...

- Այ քուռակ, հիմա դու ինձ ճշմարիտ ասա, քո կամքով ես եկել ինձ մոտ, թե Սեւ Դելի հրամանով: Յանկարծ մտքիցդ չանցնի օյիմբազություն անես, ցույց տաս, որ իմ կամքն ես կատարում եւ ծառայես քո հայրենակիցներին...

- Աստված է վկա, բեյ, որ ես իմ կամքով եմ եկել քո օգնությանը դիմելու: Մերոնց այդ բանը չեմ կարող ասել, նախ՝ որ նրանք չեն համաձայնվի, հետո նրանք, իմ կարծիքով, այդ կնոջ վրա ազդեցություն ունենալ չեն կարող... Իսկ դուք, եթե ցանկանաք, նա իմը կլինի, եւ ես նրան կփախցնեմ Թիֆլիս կամ Երեւան...

- Իսկ եթե ես չթողնեմ փախցնելու, քեզ պահեն ինձ մոտ որպէս հանձնակատար-օմբաշի... Ի՞նչ կասես...

- Բայց ես թուրք չեմ, թուրքական բանակում ի՞նչ գործ ունեմ...

- Քեզ կթրքացնեն, աչքից էլ կազատվես, աչքացավից էլ... Յը՞, համաձա՞յն ես... Բայց դու չասիր, թե անունդ ի՞նչ է...

- Անունս Խումար Յրաչ է: Ամեն բանի համաձայն եմ, բեյ, բացի թր՝

քանալուց...

- Իթողի, համ թուրքին ծառայել կուզես, համ թուրքի օգնությունը կուզես, թուրքանալ չե՞ս ուզե...

- Չէ՛, բեյ, մեր Աստծուց վախենում եմ, ես թրքանալ չեմ կարող, իմ արյունը հայի է... Չէ՛, չէ՛...

- Ինձ լսիր, դու կարծո՞ւմ ես թուրքի արյունը քո արյան նման կարմիր չէ, տո՛, քուռակ... Էնքան թրքացած հայեր կան, երբ ձեր անհող ու անջուր, հինա նաեւ անժողովուրդ մնացած Աստվածը ո՞ր մեկին պատժեց կամ ո՞ր մեկին փրկեց... Լավ, թողնենք թրքացնելու հարցը, անցնենք առաջ, դու ինչպե՞ս ես ուզում օգնել մեզ... Ապա ինձ ասա, կարո՞ղ ես Սեւ Դելին մեր ձեռքը հանձնել կամ պարզապես սպանել... Կամ օգնես, որ մենք իմանանք ձեր տեղակայման վայրն ու ոչնչացնենք...

- Դժվար է, բեյ, Սեւ Դելն այնպիսի պաշտպաններ ունի, որ նրան վնասելը կամ ձեզ հանձնելը բացառվում է: Այ, տեղակայման վայրի տեղը, եթե հաստատուն դառնա, ես կասեմ, կհայտնեմ...

- Եղ էլ քիչ օգնություն չի լինի: Բայց կուզեի մերոնց արյունը խնայել... Խու՛մբը միասի՞ն է լինում, թե՞ խմբերի բաժանված:

- Խու՛մբը, բեյ, ամբողջական երբեք մի տեղ չի լինում: Դա բացառված է: Անձնակազմի տեղը ոչ ոք չգիտի: Խմբապետի գտնվելու վայրը մի քանի հոգի գիտեն: Մերոնք թուրքերի մեջ անգամ իրենց լրտեսներն ունեն, որոնց ճանաչում են մի քանի հոգի, իսկ կապը պահպանողներին գիտի միայն խմբապետը... Բոլոր նախազգուշական միջոցները ձեռնարկված են, որ խու՛մբը երբեք, ոչ մի պարագայում չոչնչանա: Երկաթյա կարգապահություն է, եթե կասկածեն դավաճանության մեջ, անմիջապես կոչնչացնեն այնպես, ինչպես վարվեցին Լոմանի հետ...

- Լոմանն ի՞նչ էր արել...

- Պատճառ էր դարձել, որ հույն գյուղացիներն ու մեր տղաներն ընկնեն թուրքերի դարանը... Անմիջապես գտնվեց դավաճանը, եւ Սեւ Արսենը սրահարեց նրան, երկու կես արեց... - Օ՛, դաժան է ձեր Սեւ Դելը...

- Նաեւ քաջ է, նաեւ իսկական հայր խմբի տղերքի համար...

- Բա, այ քուռակ, ո՞նց ես դավաճանում նրան մի էգի համար, հը՞... Դիմա որ գլուխդ կտրել տամ...

- Գլուխս թանկ արժի, բեյ, կտրել չես տա: Ես քեզ հասկանում եմ, դու ինձ՝ ոչ: Տեսնում եմ, դու ինձ բացի կամավոր լրտես ունենալուց, նաեւ հավանում ես, որպես ջահել ցուլ եւ ցանկանում ես փեշս փեշիդ կտրել: Բայց իմ սերս Զեյնաբ խանումի նկատմամբ այնքան մեծ է, որ այսօր զանց եմ առնում դավաճանի խարանը, զանց եմ առնում ամոթալի սակարկությունը ձեզ հետ եւ ինքս թքելով ինձ վրա, մերժելով միայն թրքանալու առաջարկը, ուզում եմ հասնել իմ մուրազին: Դոգ չէ, թե այս ճանապարհին զոհվեմ...

- Դու չես զոհվի, տղա ջան, դու շանսատակ կլինես, եթե այդքան բացբերան ես եւ եթե քեզ հասկացա, քո գործը դժվար, շա՛տ դժվար կլինի: Դիմա լսիր ինձ, ես քեզ ի զորու չեմ քո մուրազին հասցնելու: Նս այդ կնոջը

հանդիպել եմ միայն մեկ անգամ, եւ մենք իրար հետ հաղորդակցվելու համար պատշաճ լեզու չենք գտել: Քանի որ եկել ես մեր դուռը, դու արդեն պորտոլ մեզանից կտրել չես կարող: Ուզես, թե չուզես պիտի ծառայես մեզ, այլապես մեր այս հանդիպումը գրավոր ձեւով կընկնի Սեւ Դելի ձեռքը, իսկ մնացածը կտնօրհնվի նրա ձեռքով: Մի բան եմ խոստանում, որ եթե շահես Ձեյնաբ խանումի սերը, քավորդ կլինեմ, հա՛, հա՛, հա՛... Իսկ հանդիպման համար կարող ես գալ միայն ինձ մոտ շաբաթը մեկ անգամ, այստեղ,- Խալիս բեյը վեր կացավ, բացեց կողքի դուռը եւ ցույց տվեց բարձերով ու մութաքաներով, փափկացրած օթոցներով ու ցածրիկ թախտով լեցուն սենյակը:- Կմտնես այ այն հանդիպակաց դռնով: Եղա՞վ...

- Եղավ, բեյ...

- Տես, հա՛, քուռակ, հոգուս հետ չխաղաս... Դու, եթե հավատարիմ մնաս ինձ կարծում եմ վերջում ամեն բան լավ կլինի:- Եվ մտքում «Վերջում կգնաս ի վերին Երուսաղեմ, հայերը սիրում են այդ մեռելավայրը»:

«Իշու գլուխ, արվամուլ սրիկա, տեսնենք՝ ով՛ ում...», - եվ ուղեկցող զինվորը նրան գաղտնի ճանապարհով դուրս տարավ:

* * *

Գնդացիների առկայությունը խմբում որոշակիորեն բարելավեց տղաների վիճակը: Սակայն հայտնի է, որ գնդացիքը փամփուշտը լափում է գայլի նման: Գնդացրին փամփուշտ մատակարարելը դարձել էր ամենօրյա մտահոգության խնդիր: Գնդացիքը գործի դնելուց առաջ հարկավոր էր լուծել փամփուշտի հարցը, իսկ դա ոչ միայն աշխատատար, այլեւ վտանգավոր գործ էր: Գնդացիքները խժռում էին նաեւ հրացանների փամփուշտները: Կազմվեց փամփուշտ մատակարարողների մի խումբ, որի հիմնական առաջադրանքը փամփուշտ հայթայթելն էր: Իսկ դա արվում էր հանկարծակի հարձակմամբ գնդացրային դասակների վրա, դարանելով հրաձգարանները եւ թերացողների քթի տակից թոցնելով փամփուշտաժապավեններով լեցուն փամփուշտատուփերը: Նույնիսկ թուրքերեն լավ իմացող տղաներին ուղարկում էին Արդահանի, Կարսի կողմերը մաքսային գնդերի փամփուշտ գնելու: Գնդացիք գնելու փող չունեին, սակայն փամփուշտի համար օտար շուկաներում աճուրդի էին հանում ոսկու հոգեպահուստը, որը ձեռք էր բերվել դեռ գաղթից առաջ: Այս գործում խմբին շոշափելի օգնություն ցույց տվեց նաեւ Եղիսաբեթը՝ նվիրաբերելով իր ոսկեղենը: Մի խոսքով, գնդացիքների առկայությունը ուժեղացրեց խմբի կրակային հզորությունը եւ ավելացեց առանց այն էլ դժվարությամբ իր հացն ու զենքը հայթայթող խմբի դրությունը: Ասենք նաեւ, որ գնդացիքների գոյությունը խմբին ներշնչեց վստահություն սեփական ուժերի նկատմամբ: Արդեն անհնար չէր ճակատելը նույնիսկ դասակների, վաշտերի դեմ: Թուրքական զորամասը զգալի կորուստներ էր տալիս: Բանակի հրամանատարությունը դժգոհում էր զորամասի ղեկավարության

անճարակությունից եւ անշնորհքությունից: Հրամաններն ու հրահանգները լեցուն էին սպառնալիքներով եւ հայհոյանքներով: Բայց ոչինչ չէր ստացվում: Բանն այն էր, որ զգալիորեն ավելացել էին նաեւ խմբի կորուստները: Եվ դա հասկանալի էր: Կրակային հզորությունը հրամայում էր նաեւ առճակատում զորական միավորումների հետ, որը երկուստեք խլում էր մարդկային կյանքեր: Խումբը լավ գիտեր իր հնարավորությունների սահմանները: Գիտեր, որ ինքը չունի այն ուժը, որ կարողանար լուծել թեկուզ գավառի ազատագրման հարցը: Սակայն գիտեր նաեւ, որ հոսող ջուրը, որքան էլ քիչ՝ իվերջո կարող է քանդել իր ճամփան փակող արգելքները: Ամիսներով ծանր, հերոսական գործը, որ կատարում էր խումբը, թշնամուց խլել էր մարդկային այնքան կյանք, որ թուրքական հրամանատարությունը վախենում էր, նաեւ ամաչում ստույգ ձեւով զեկուցել իր վերադասին: Մինչեւ այսօր թուրքերը մի կարգին չէին էլ տեսել իրենց հոգեառներին: Միշտ չնչին բացառությամբ, սպանվել էին դարանից:

...- Հավատա՞ց, - հարցրեց Սեւ Արսենը Խումար Հրաչին, երբ վերջինս վերադարձավ մարտական առաջադրանքից:

- Կարծում եմ, որ հավատաց: Սակայն նա այն մարդկանցից չէ, որ կուրորեն ընկնի դարանը: Վստահությունն իմ նկատմամբ կամրապնդվի այն ժամանակ, երբ ինձ թլպատեն, թրջացնեն եւ մեկ էլ, երբ ես դառնամ Խալիս բեյի... սիրեկանը...

- Ուրեմն, այդ շունն արվամո՞ղ է...

- Այո՛, անպայման ներքինի: - Հրաչը դառը ծիծաղեց, - այս խաղից հազիվ թե ես կարողանամ դուրս գալ կուսական վիճակում: Նա բռնությամբ կթլպատի ինձ եւ կախադանի ուրվականով կստիպի կենակցել իր հետ: Նման բաների հետ ես նույնիսկ կյանքի գնով չեմ համաձայնվի: Ի՞նչ ասել, խմբապետ, օգնիր անելիքս իմանալուն...

- Ինքս էլ չգիտեմ, որդիս: Մի բան գիտեմ, որ եթե պարի շրջան ես մտել, պիտի շորորաս: Բայց չե՛ս տեմ նման վիճակների համա՞ր են ասել, չգիտեմ... Հաստատ գիտեմ մի բան, որ մեզ այսօր հարկավոր է իմանալ մեր թշնամու վաղվա անելիքը, ոչ թե կռահելով, այլ՝ ստույգ... Մեզ հարկավոր է իմանալ նաեւ նրա մտադրությունը Եղիսաբեթի նկատմամբ... Ուրեմն, քեզ աչք ու ականջ դառնալու համար պետք է աստվածադավության եւ ախտավոր մտերմության գնալ այդ կռածի հետ: Այ՛ թե թանկ սակագին է պահանջում այդ բռվառականը: Լավ, տղա՛ս, հանգստացիր, կնտածենք, կխորհենք:

- Ախր, ես ինչպե՞ս հանգստանամ, խմբապետ: Հանգստանալ կլինի՞... Սա մի դրություն է, որի մասին եմ ասել, ոչ առ ու փախիր, ոչ էլ թող ու փախիր: Վերել եմ թքում առաստաղն է, ներքել եմ թքում մորուքս: Ի՞նչ անել...

- Այ տղա՛, արիացիր: Հոգու ցավից բանաստեղծ էլ դարձար, արդեն առածներով ես խոսում, միայն առածներով: Արի նստենք եւ ես ու դու քննարկենք: Ի՞նչ ենք ցանկանում իմանալ մենք: Իմացիր մեր հայրենակիցները պանդխտության մեջ սովից ու ցրտից, համաճարակներից ու պատահականություններից ամեն օր կորցնում են հարյուրավոր մարդկանց: Նրանք եթե

այս ձմռանն էլ մնան օտար ասիերուն՝ կցամաքեն անապատի աղբյուրի մոտ: Իսկ քանի թուրքերն այստեղ են, նրանք տուն դառնալ չեն կարող: Մեզ մոտ տեղակայված զորամասը պետք է ճեղքեր Ջավախքը եւ Ծալկայով դուրս գար Թիֆլիս, իսկ Ախալցխայի զորամասը՝ Բորժոմ եւ, այնուհետեւ, Թիֆլիս: Աքցանի մեջ առնելով ու գրավելով Թիֆլիսը, այնուհետեւ այս բանակը պետք է միանար Ալեքսանդրապոլի թուրքական բանակին եւ զավթեր Անդրկովկասն ամբողջությամբ ու Բաքվի նավթով խեղդեր հայերին ու վրացիներին, բայց այդպես չեղավ: Որպեսզի ես դասախոսություն չկարդամ, ասեմ, որ Թիֆլիսի գրավումն արգելվեց գերմանացիների եւ անգլիացիների կողմից: Իսկ Բաքու թուրքերն, այնուամենայնիվ, մտան: Իմացիր, Բաքվի կոմունան մի քանի շաբաթ առաջ ընկել է: Շահումյանն այլեւս չկա: Հայաստանը մի քանի ճակատով կոպում է հարեւան մուսուլմանների դեմ, Ադրբեջանի թուրքերի եւ Թուրքիայի դեմ: Ջարգանում է հայ-վրացական ամոթալի մի վեճ, որը կարող է պատերազմի վերածվել հայերի եւ վրացիների հազարամյա պատմության մեջ առաջին անգամ: Տա Աստված չկայանա: Այս փշուր-փշուր տեղեկությունները Ծալկայով եւ Գանձայով ուղարկված թերթերից են քաղել: Ահա թե ինչու կարեւորվում է թուրքերի տեղաշարժը իմանալը մեզ համար: Ախալցխան թուրքերի համար անհաղթահարելի մնաց: Թուրքական ուժերը զամվել են նրան՝ ոչ առաջ, ոչ հետ: Եթե շարժում լինի, իմացիր, որ դեպի հետ է լինելու: Թուրքիան այլեւս չի կարող արշավել Թիֆլիսի վրա: Իսկ թուրքական բանակի նահանջելը կյանքի վերադարձ է մեր զավառի հայության համար: Միաժամանակ, մեր մի քանի տասնյակ անձնուրաց մարդկանց փրկությունը, որ իրենց թվաքանակից հնգապատիկ անգամ ավելի թուրք են ոչնչացրել:

Իսկ Խումար Հրաչն իրոք սիրահարված էր Եղիսաբեթին: Նրան տեսել էր երկու անգամ: Մի անգամ նրանց տունը գիշերապահին սննդամթերք էր տարել: Եվ հոգնած էր: Եղիսաբեթին նա ուշադիր նայեց միայն այն ժամանակ, երբ նա իրեն խնդրեց փոքր-ինչ հանգստանալ եւ թեյ դրեց իր առջեւ: Կնոջ ձայնը կրծքային ու փափուկ էր: Հետո զգաց նրա հայացքն ու նայեց նրան: Շանթահարվեց: Կնոջ խաժ ու խոշոր աչքերը նայում էին իրեն, աստղերով կայծկլտուն: Կինը նայում էր եղնիկի ~~ման~~ գլուխը թեքած: Հայացքում գորով ու զարմանք կար:

- Անունդ ի՞նչ է, կասե՞ս...

- Հրաչ է անունս, խմբում ինձ Խումար՝ Հրաչ են ասում...- Հետո զգաց, որ կարմրում է եւ շփոթվում:

- Անունդ ճիշտ գնահատականն է աչքերիդ, Հրաչյա...- Եղիսաբեթը ժպտում էր:

Իսկ Հրաչն ավելի էր շփոթվում: Ուզեց վեր կենալ ու փախչել, չկարողացավ: Տեղում հանգիստ նստել եւս չէր կարողանում: Գոմե ամուսինը ներս գար եւ գուցե ընկներ կախարդանքը: Իսկ նա չէր երեւում: Բակում լսվում էր մուրճի, թե կացնի թխկթխկոցը:

- Ամուսնացա՞՞ծ ես, Հրաչյա,- նորից խոսեց Եղիսաբեթը:

- Չէ՛, որտեղի՞ց... Հայրս ցանկանում էր, բայց այս պատերազմը, գաղթը...- եւ լռեց:

- Իսկ ընտրե՞լ էիր քո հարսնացուն,- հարցաքննում էր կինը:- Քեզ աղջիկները հանգիստ չէին թողնի, չէ՞, Հրաչյա...

- Մեկին հավանել էր մայրս, մեկ ուրիշին՝ հայրս: Ես հավանած աղջիկ չունեի... Մեկ-մեկ հավանում էի բուլղորին: Մեկ էլ ոչ մեկին չէի հավանում: Իսկ մերոնց հավանածներին չէի կարողանում նույնիսկ նայել, լավերը չէին...- անկեղծացավ Հրաչը:

Հետո նկատեցին, որ շատախոսում են եւ երկուսն էլ չեն կարողանում, չեն ցանկանում միմյանցից բաժանվել: Հրաչին ասես մեխել էին աթոռին: Նա առայժմ նույնիսկ մտքում չէր հանդգնում մտածել, որ սիրահարվել է այդ կնոջը, որն ամուսին ունի, որը տարիքով մեծ է իրենից: Այդ հարցերը նրա մեջ նույնիսկ խմորվելու որեւէ հիմք չունեին: Նա բռնված էր կնոջից, ինչպես երկաթը՝ մագնիսից... Նրանք չգիտեին, որ ճակատագրական է լինելու այս հանդիպումը, որ չնայած իրենց հետագա ճիգերին ու ջանքերին, անկարող են լինելու պոկվել միմյանցից եւ մի կարճատեւ ժամանակ պետք է միասին քաշեն իրենց սիրո խաչը՝ գերի սիրույն, եւ միաժամանակ, երջանիկ ու դժբախտ այդ սիրով: Նրանք դեռ ոչինչ չգիտեին:

- Բա որ ոչ ոքի չես հավանում, ի՞նչ է, չե՞ս ամուսնանալու, չե՞ս ընտանիքավորվելու, Հրաչյա՛,- շարունակում էր հարցաքննել կինը, որն անպայման ցանկանում էր արտասանել տղայի անունը քնքշորեն, ասես շրթունքներով գուրգուրելով ու համբուրելով անունը: Իսկ տղան նրան էր հանել իր խոշոր ու թանաքից էլ սեւ, փաղաքուշ ու խումար հայացքը, որն արդեն զինաթափել էր այնպիսի փորձված ու երես առած մի կնոջ, որպիսին էր Եղիսաբեթը: «Ես այս տղայի գիրկը կնետվեմ, եթե նա շարունակի նայել ինձ: Նա նայում է ուղիղ սրտիս խորքը, նա նայում է այնտեղ, ուր փակ է նույնիսկ ինձ համար: Նա նայում է իմ մեջ արթնացնելով ե՛ւ սիրո բռնկում, ե՛ւ ցանկասիրություն, որին անծանոթ է աղջիկը եւ որը միշտ արթուն է կնոջ մեջ եւ կարող է կործանարար լինել նրա ընտանիքի համար: Ես գուցե խնդրեմ, որ նա գնա: Երեւում է, նա էլ չի ուզում գնալ այստեղից, ասես նրան կարել են փափուկ աթոռին: Թող գնա, այս Հրաչյան թող գնա, թե չէ զգում եմ, որ մենք կարող ենք անել նույնիսկ անպատշաճ բաներ եւ հավիտյան կորցնել իրար, մի բան, որ ողջ էությանը ե՛ւ ուզում եմ, ե՛ւ չեմ ուզում...»:

- Ինչո՞ւ ուշացավ Սերգեյը,- դժկամորեն խոսեց Եղիսաբեթը,- նա մեր աթոռի ուղքն է ամրացնում:

Կնոջ այդ դժկամ տոնը չհասավ Հրաչի լսելիքին ամբողջ նրբությամբ, այլապես նա կզգար, կհասկանար, որ Եղիսաբեթը եւ ուզում, եւ չի ուզում իր ամուսնու ներս գալը:

- Բայց դու չասացիր, Հրաչյա, չսիրած կնոջ հետ կարո՞ղ ես ամուսնանալ, կարո՞ղ ես ապրել...

- Հայրիկս ասում է՝ կամուսնանա՛ կսիրես: Իսկ մայրիկս՝ ընդհակառակը, ասում է՝ սիրիր եւ նոր միայն ամուսնացի՛ր, որ դժբախտ չլինես...

- Այս հարցում քո մայրիկն ավելի է ճիշտ, Չրաչյա: Ինձ էլ, որ լսես, անպայման կամուսնանաս նրա հետ, ում սիրում ես:

Չրաչը գլուխը կախեց: Նրա մտքում մեղսալի մտքեր արթնացան. «Իսկ եթե իմ սիրածը հանկարծ ամուսնացած լինի, ինչպե՞ս լուծեմ իմ ամուսնության հարցը: Իսկ եթե նա քեզ նման, քեզ նման Աստվածամոր պատկերն ունենա, նրան տեսնելուց, նրան սիրահարվելուց հետո, էլ ինչպե՞ս նայեմ ուրիշին, երբ բիբերիս տակ, սրտիս մեջ միշտ նրա պատկերն է լինելու... Այ, եթե այս եղիսաբեթն ամուսնացած չլիներ... Բայց միեւնույն է, նա ինձ բանի տեղ չէր դնի...»:

Այդ պահին սենյակ մտավ Սերգեյը եւ նրանց արթնացրեց: Եկավ ու տեղավորվեց ազատ աթոռին:

- Ես հո՞ չխանգարեցի ձեզ,- հարցրեց առանց հետին մտքի:- Այս լավ տղային գոնե կարգին հյուրասիրե՞լ ես,- դիմեց կնոջը:

«Ինչ հյուրասիրել,- մտքում խոսեց եղիսաբեթը,- այ՛ն ես նրան կհյուրասիրեի իմ համբույրներով ու զգվանքներով, բայց այդ իրավունքը չունեմ եւ մտածելն անգամ անպատշաճ է...»: Եվ հետո բարձրաձայն.

- Նրան ես թելով եմ հյուրասիրել, Սերգեյ... Թունդ խմիչք դիտավորյալ չեմ տվել, ախր, նա գայլերի եւ գազանների միջով պիտի անցնի...

- Գոնե սուրճով հյուրասիրեիր...

- Մտածեցի, որ երեկո է, կարող է խանգարի քնելուն... Ծի՞շտ չէ...- դիմեց Չրաչին:

- Ծիշտ է, բայց մի բաժակ սուրճը չէր խանգարի,- համաձայնվեց Չրաչը եւ ինքն էլ զարմացավ իր հանդգնության վրա: Նաեւ նրա համար, որ սարսափելի ձեւով չէր ցանկանում գնալ ու հեռանալ այս տնից, այս կնոջ, նույնիսկ նրա ամուսնու մոտից:

Իսկ եղիսաբեթը, որ կնոջ յոթերորդ զգայարանով զգում էր Չրաչի վիճակը, ներքուստ ե՛ւ ուրախ էր, ե՛ւ զգուշանում էր: Լավ էր, որ այս չքնաղ պատանին կարող է մի քիչ շատ մնալ իր տանը, եւ վատ է, որ նրա հրապուրանքը կարող է փոխվել պիրո, գուցե մեծ սիրո եւ արեւերես հանել նաեւ իր հրապուրանքը: Եվ մտմտալով գնաց խոհանոց սուրճ եփելու:

«Եղիսաբեթն ասում է, որ կարող է գիշերը քնել չկարողանամ, բայց ես առանց սուրճ խմելու էլ այս գիշերը չպիտի կարողանամ քնել,- խորհում էր Չրաչը,- այս կինը, որին սիրելու իրավունք չունեմ, հազիվ թե թողնի աչքերիս քուն գալու: Ես մի տեսակ հարբած վիճակում եմ եւ այլեւս չեմ փորձի մտնել այս տունը: Իմ մտքերն անսուրբ են, իմ ցանկություններն՝ անիրագործելի, իսկ ինքս՝ փսլնքոտի մեկը: Ես փչացած տղա չեմ, որ իմ բարեկամների տան սրբությունը փորձեմ սատանատեղի դարձնել...»:

Սենյակով մեկ սուրճի բուրմունք սփռելով, մատուցարանը ձեռքին ներս մտավ տանտիրուհին: Երեքով բոլորվեցին սուրճի սեղանի շուրջ: Սուրճը մարդկային քնած էներգիան արթնացնելու հատկություն ունի: Եղիսաբեթը քնացած երկարաձգել այս, այնուամենայնիվ, երջանիկ վայրկյանները, ցանկացավ, որ Չրաչը դեռեւս մնա, մնա՝ իրենց տանը եւ իր խուճար աչքերի

կախարդանքով տանջի եւ տանջելով երկարածօրի իր երջանկությունը: Եվ բացականչեց.

- Պարոնայք, խնդրում եմ շրջեք սուրճի ձեր բաժակները: Հարկավոր է գուշակություն սուրճի մրուրի մեջ: Առաջինը, եկեք գուշակենք Հրաչյայի բախտը,- ասաց եղիսաբեթը,- ինչպես ասում եմ, մենք՝ ես եւ Սերգեյը, հասել ենք մեր մուրազին, իսկ Հրաչը դեռեւս հարսնացուի որոնումների մեջ է: Նրանից էլ սկսենք...

Եղիսաբեթն ուշադիր նայում էր Հրաչի բաժակի մեջ: Կենտրոնացած էր դեմքը, հուզմունքից կտրվում էր շունչը.

- Բաժակդ վատ չէ, ա՛յ, նայիր լատիներեն Վ տառին, որ հաղթանակ է նշանակում: Սա նշան է, որ խումբը պիտի հաղթի իր բոլոր կռիվներում: Դիմացը սիրտ է ուրվագծված, նշանակում է՝ դու սիրահարված ես: Մինչդեռ դու խաբում էիր, որ սիրած չունես, բայց ունես, ունես եւ Տեր Աստված, ինչպե՞ս ես սիրում նրան: Դա մեծ սեր է, Հրաչյա: Բայց հեռու եւ մասամբ անհասանելի է քեզ, որովհետեւ բաժակի հակառակ պատին է՝ հաղթանակին ներհակ պատին է: Բայց քանի որ մեծ սեր է, դու կհասնես նրան: Բայց նա քոնը չի լինի... Թե դա ի՞նչ է նշանակում, դժվարանում եմ ասել...

Հետո նաեւ գուշակեց Սերգեյի եւ իր բախտը: Բայց այս անգամ չկար այն կենտրոնացումը, այն լարված ուշադրությունը, որով նայում էր Հրաչի բաժակը: Խոսեց ինչ-որ ճանապարհներ հաղթահարելու մասին: Իրենց բաժակներում էլ հայտնվեց հաղթությունը նշանավորող Վ նառը: Պարզվեց, որ իրենք նույնպես բախտի ու երջանկության մատույցներում են, որ երջանկությունը հեռու չէ իրենց տնից եւ այլն, եւ այլն:

Երեկոն գիշերվա էր փոխվել, երբ թողեց իր հյուրընկալներին եւ անհետացավ թանձր մթության մեջ: Ամուսինները մի երկու պարտիա պրեֆերանս խաղացին, մի խաղ, որի հաղթողը միշտ եղիսաբեթն էր լինում: Բայց ի հաճույս եւ հուրախություն Սերգեյի, այս անգամ կինը խաղում էր ցրված ու անտարբեր եւ տանուլ տալը պատճառաբանեց հոգնածությամբ եւ ցանկացավ հանգստանալ: Զրույցը սկսեց Սերգեյը.

- Ելիզավետա, մի բան ասեմ քեզ: Դու այդ Ռադիկի մման սիրում, այն էլ առնական գեղեցկությամբ տղամարդ երբեւ տեսե՞լ ես...

- Նա դեռ տղամարդ չէ, Սերգեյ, նա դեռեւս պատանի է... Բայց իրոք լավն է...

- Լավը քիչ է, գերազանց ասա: Լսի՛ր, նրա աչքերը խոսել գիտեն: Ինձ նայում էին ու ասում՝ բախտավոր ես, Սերգեյ, որ մման գեղեցկուհի կին ունես: Քեզ նայում էին եւ ասում՝ երանի քո ամուսնուն, ախ, եթե ես էլ քեզ մման մի Ելիզավետա ունենայի...

- Լսի՛ր, Սերգեյ, դու հնարո՞ւմ ես, թե՞ նրա աչքերն իրոք մման տրամադրություններ էին արտահայտում: Չեմ ցանկանում ոչ գովել, ոչ էլ փնտձել այդ տղային, բայց նրա աչքերը նայելիս ասես գրկում էին ինձ, համբուրում: Ի՞նչ զգացողություն էր, չգիտեմ, նրան նայելը վերջում այնքան դժվարացավ, որ չէի նայում այլեւս, վախճնում էի չլինի բռնվեմ իմ հետաքրքրության մեջ եւ

տեղիք տամ նրան սխալ մեկնաբանությունների.

- Ինչո՞ւ սխալ եւ ոչ ճիշտ մեկնաբանության: Ախր, դու էլ նրան նայելիս ասես հանդիպման էիր հրավիրում: Մի տեսակ ավելի գեղեցկանում եւ խոստովանում էին աչքերդ: Ես քեզ վրա չեմ զարմանում: Այսօր դու կին էիր եւ այնպիսին, որպիսին քեզ երբեք չեմ տեսել, բայց կուզենայի միշտ այդպիսին տեսնել...

- Մի հնարիր, Սերգեյ, քո ցանկացածը իրական փաստի մի վերածիր եւ մի բամբասիր այդ խեղճ տղային ինձ սիրահարվելու եւ ինձ՝ նրա հետ ապօրինի սեր խաղալու մեջ, այսինքն՝ անբարոյական հեռանկարի մեջ: Ես նրան տեսնում եմ առաջին անգամ, հետեւաբար, կարիք չկա իմ ուշադրությունը դեպի այդ տղան ուղղելու...

- Դու ինձ ճիշտ չես մեկնաբանում, Ելիզավետա, ես խոսում էի միայն աչքերի մասին...

- Իսկ աչքերը, Սերգեյ, հոգու արտահայտիչներն են: Կարելի է կասկածել լեզվին, երդումներին, բայց աչքերին՝ երբեք: Աչքերը չեն խաբի... Քո ասելով այդ տղան ինձ է սիրահարված, իսկ ես նրա՞ն, ըստ մեր աչքերի խոստովանության... Դու այդ էիր ցանկանում ասել... - Այդ չէի ցանկանում, Ելիզավետա, բայց այդպես ստացվեց: Չէ՛, դուք սիրահարված չեք: Դու սիրահարված չես, սակայն այդ պատանին սիրահարված է քեզ: Նրա աչքերը քեզ սեր էին խոստովանում, նրանք երդվում էին, Լիզա, այդ աչքերն աղոթում էին քեզ համար: Դա սեր է առաջին հայացքից: Առաջին հայացքից սիրուն ես հավատում եմ: Դա միշտ մաքուր է լինում...

- Եթե նույնիսկ սիրահարվում եմ ամուսնացած կնո՞ջը...

- Այո՛, նույնիսկ ամուսնացած կնոջը: Բայց դու մի նեղանա, ինձնից, Լիզա: Քո սիրով, քո ազնվությամբ ու հավատարմությամբ ես երջանիկ եմ: Սակայն ես, սիրելիս, գուցե դժբախտ եմ քո գեղեցկությամբ: Սեր ծանոթ տղամարդիկ, չասենք բոլորը, այլ նրանցից ոմանք, պարտադիր սիրահարվում են քեզ եւ ինձ մատնում ծանր մտորումների եւ արթնացնում խանդ իմ մեջ, որը կեղեքիչ է, անգի՛նս, կեղեքիչ է...

* * *

Այդ օրը երեկոյան մի զարմանահրաշ դեպք տեղի ունեցավ: Երեկոյան, քաղաքում պարեկային խմբի շրջակայքի ժամանակ, դատարկ ու լքված քաղաքի իրիկնային ամայության մեջ, հանկարծ դողանցեցին քաղաքային եկեղեցու զանգերը: Ռումբ չէր, արկ չէր, այլ զանգերի հրավառություն: Շրջող զինվորական պարեկի ասկյարները հրացանները հորիզոնադիր բռնած վազեցին դեպի եկեղեցին, մահին հանձնելու այն հանդուգներին, ովքեր արթնացնում են հայ հավատի ծայներն այն ժամանակ, երբ հայոց Աստվածը վաղուց լքել է իր նստավայրը, ուր արդեն բավական ժամանակ չի լսվում մայրկային աղոթքն առ Աստված եւ չեն բուրվառում խուճկն ու մոմը, ուր կորցրել են միմյանց Աստվածն ու նրան երկրպագող ու պաշտող ժողովուրդը: Վազե-

ցին դեպի եկեղեցին ու կանգ առան դարպասի առաջ: Երեկոյան կիսախավարի մեջ դղրդում էր մայր զանգը, նրա հետ ծլվում էին մյուս զանգերն ու զանգակները, իսկ զանգահար չկար: Ձանգերի պարաններն անգործ կախված էին զանգակամուտեն ի վար, իսկ զանգերի լեզվակները եռանդուն աշխատում էին, պղնձյա փափուկ հնչյունների ձայնը թելում էր քաղաքի վրա, հաղթահարելով հեռուների արգելքները գնում էր դեպի լեռներն ու լեռնագագաթները՝ արթնացնելու գաղթական Աստծուն եւ նրա աստվածային գութը, որ նա ետ բերեր իր բռնագաղթված զավակներին: Այս տեսիլքն այնպիսի սարսափելի ներգործություն ունեցավ ասկյարների վրա, որ թափվեցին գետնին եւ երեսները հողին քսելով, հայցում էին իրենց ալլահի օգնությունը հայոց Աստծուց, որը կարող էր ըստ նրանց, անուղղելի չարիքներ պատճառել խեղճ ու կրակ թուրքերին: Այդ պահին վրա հասավ քաղաքի պարետը մերկացրած ատրճանակը ձեռքին եւ առանց որեւէ խոսքի կրակեց մեծ զանգի վրա: Գնդակը չհասա՞վ զանգին, թե հե՞տ թռավ հարվածեց պարետին, ոչ ոք չիմացավ, բայց պարետի աջ ձեռքը թուլացած կախվեց, ատրճանակն ընկավ գետնին եւ նա սարսափից սկսեց թավալվել ու ճանկոտել գետինը, հորը լցնել գլխին, որովհետեւ կուրանում էր նաեւ աջ աչքը: Սարսափն այն աստիճան շուլալվեց մարդկանց հոգիներին, որ նրանք ոռնալով ու լացով արդեն խնդրում էին հայոց Աստծո օգնությունը, իրենց մեղավոր հոգիների փրկության համար: Եվ այդ օգնությունը չուշացավ: Ասկյարների աչքերի առջեւ գմբեթի վրա սավառնում էր Տիրամայրը՝ ձեռքերը տարածած: Նրա շուրթերը շարժվում էին, սակայն թուրքերն ի վիճակի չէին հասկանալու աստվածային լեզուն: Հետո Տիրամայրը սկսեց բարձրանալ երկնքի մթությունն ի վեր, շողի նման խրվելով մթության մեջ եւ արեւի շողքի սյուն կանգնեցնելով իր երկնագնա ճանապարհին: Տիրամայրը լողում էր դեպի երկինք եւ նրա հեռանալու հետ մեկտեղ կամաց հանդարտվում եւ հանգչում էին եկեղեցու զանգերի ձայները: Ի վերջո, երբ աստվածամայրը խառնվեց երկնային լուսատուներին, լռեցին նաեւ զանգերի դողանքները եւ քաղաքը նորից ընկղմվեց մթության եւ անայության մեջ: Մնացին միայն եկեղեցու դարպասի առջեւ գետնատարած ասկյարները, որոնք աշնանային սառն սալահատակին քսելով իրենց երեսները մրմնջում էին ինչ-որ չհամարձակվելով գլուխները բարձրացնել: Իսկ մի քանիսն էլ ուշաթափ ու անկյանք ընկած էին գետնին: Երեւացին օգնության շտապող գորքերը: Նրանք քաղաք մտան չիմանալով իրենց անելիքը: Պարետատունը դատարկ էր, ոչ ոք չկար, քանի որ նրանք լսել էին զանգերի ձայները, փութով վազեցին դեպի եկեղեցի եւ կանգ առան գետնին թափված մարդկանց մոտ:

- Ի՞նչ է պատահել, ո՞ր է պարետը,- ձայնեց հրամանատարը:

Ոչ մի պատասխան, թեւ մարդիկ, ասկյարները աղոթում էին, լալիս, կյանք էին աղերսում եւ իրենց ալլահից, եւ հայերի Աստծուց: Հրամանատարը գազազեց:

- Ուրեմն, հայերի Աստվածը ձեզնից հալածեց ալլահին, հա՞, իթողիներ... Ձայն հանեք, թե չէ շանսատակ կանեմ...

Այդ պահին նրա առջեւ ծագեց շանթահար պարետը: Նա անճանաչելի էր եւ սպան նրան ճանաչեց միայն տարբերանշաններից: Դեմքը ծոմոված էր, աջ աչքն ուռած էր ու գոց: Նա մրմնջում էր ինչ որ չէր հասկացվում: Միաչքանի, բվեճի նման նայելով սպային, ծախ ձեռքով գոցեց ինքն իր բերանը:

- Մ՛ւ՛ս՛ւ՛... Նա կլսի...

Միայն այսքանը հասկացան ներկաները: Հետո հավաքեցին ասկյարներին, բարձեցին երկու ֆուրգոնի մեջ եւ տարան զինվորական ավան: Երկու օր շարունակ շտաբում քննարկում էին այս դեպքը եւ իսկությունն այդպես էլ չկարողացան պարզել: Ջանգերի դողանջը շատ հստակ լսելի էր զինավանում եւ դժվար էր մտածել, որ հայ ֆիդայիների հերթական հոգեբանական տրյուկներն են գոռնափշտիկներից եւ նման օյինբազություններից հետո: Ասկյարները երդվում էին, որ զանգերի լեզվակներն աշխատում էին առանց մարդկային միջամտության, իսկ երբ խոսքը կենտրոնանում էր հայերի Աստվածամոր հայտնությանը, բոլորը հենց խալիս բեյի ներկայությամբ, նրա աչքերի առջեւ ընկնում ու թավալվում էին հատակին, օգնության հայց ու ճիչով: Իսկ հայոց Աստծո զոհը՝ պարետն իր այլամոլակված դեմքով ու կաթվածահար մարմնով կասկածի տեղ չէր թողնում կատարվածի իսկության մասին:

Խալիս բեյը վախեցավ: Նրա հոգին սեղմվեց երկու աստվածությունների թնջուկում: Ի՞նչ անել: Հայերը մարտի են նետում իրենց աստվածությունները: Հէ՛, չէ՛, Աստված ինքն է գալիս օգնության իր զավակներին: Խալիս բեյը նման անքակտելի հանգույցի առջեւ երբեք չէր կանգնել: «Ի՞նչ անել» հարցականը յաթաղանի նման կախվել էր նրա գլխին: Նա փորփորում էր իր հիշողությունները՝ ցանկանալով դուրս ինչ նման փաստերի հայտնությամբ որոշել իր հետագա անելիքը, բայց գլուխն անկեղծան էր այնքան, որ չէր հիշում երեկվա, նախանցյալ օրվա նման երեւոյթները, որոնց մասին գիտեր ողջ թուրքիան: Նրա մտորումներին ի պատասխան հետախուզության սպան Ելույթ ունեցավ քննադատական խոսքով առ Աստված եւ ի պաշտպանություն ալլահի ու Մոհամեդի:

- Այո՛, նրանց Աստվածը, մանավանդ Տիրամայրը շատ են խառնվում երկրայինների գործերին: Օրինակ, Դիլմանի ճակատամարտում հայերի փայլուն հաղթանակը, գիտե՞ք, թե ինչի արդյունք էր: Ես այդ մասին անձամբ լսել եմ ավագ եղբորիցս, որ պատմում էր, թե մենք, մեր ամենալավ նշանառուները, որոնք նույնիսկ կարող էին խփել եղնիկին իր սլացքի մեջ, նշան էին բռնում խրամատների վրա հանգիստ զբոսնող Անդրանիկի վրա, որին գնդակները դիպչում եւ առանց վնասելու թափվում էին ներքեւ, որովհետեւ տեսնում էինք Անդրանիկին սատարող հայոց Տիրամորը, որ թռչում էր նրա գլխավերելում, չթողնելով, որ մեր քաջերը սպանեն իր հովանավորյալին:

- Հա՛, այ՛ թե գործ է դա, Տիրամայրն իսկական մայրություն է անում, վրա բերեց մեկ ուրիշ սպա:

- Կարելորն այն չէ, որ այսօր Տիրամոր պատճառով մենք կորուստներ կան նահանջներ ննք ունենում: Ես վախենում եմ, որ նման ելույթները

եթե կրկնվեն, մեր տղաները դեմքով շրջվեն դեպի քրիստոնեությունը եւ դավաճանեն ամենազոր ալլահին,- ավարտեց իր խոսքը հետախուզության սպան եւ նստեց:

- Նրա ասածի մեջ ճշմարտություն կա,- ուղքի կանգնեց առաջին գումարտակի հրամանատարը,- մեր այս տուժած ասկյարների օրինակը շատ հատկանշական է: Մի անգամ, միայն երեւաց Աստվածամայրը եւ տղաները աղոթում են եւ նրա օգնությունը հայցում: Իսկ պարետը երեսին խաչ է հանում: Հիմա նա այդ գործով է զբաղված: Անընդհատ խաչակնքում է, այն էլ ձախ ձեռքով: Թունդ վախեցել է...

- Նա ոչ միայն վախեցել է, այլ խելագարվել:- Խոսեց գնդի հոգեւոր առաջնորդը՝ մոլլան,- իսկ թուրքերի հավատափոխությանը չհավատաք, թուրքը քրիստոնյա չի դառնա, մահմեդականությունը ուժեղ եւ դիմացկուն հավատ է: Պարետատան տղաների վիճակը վատացել է եւ շատ պարզ պատճառով: Հայի Աստվածը նրանց հանկարծակիի է բերել: Վախեցել են, կանցնի վախը եւ նրանք կարգի կգան: Ես խնդրում եմ ձեզնից չենթարկվել վախին, որովհետեւ մեր թշնամին այսօր ոչ թե միայն հայերն են եւ նրանց Աստվածը, այլ վախը, որը եթե մտավ մարդկանց հոգիները, կարող է այնպիսի ավերածությունների ենթարկել, որ որքան էլ հավատն ամուր, հոգու վնասվածքն անհնար կլինի փրկել, վերականգնել:

- Բայց պարետի հոգու հետ միասին վնասվել է նաեւ մարմինը: Վնասվել է նաեւ հավատը...

- Դուք լավ չեք լսում ինձ, պարետը խելագարվել է: Նրա համար արդեն միեւնույն է՝ քրիստոնյա, թե մուսուլման: Զգուշացեք, այո՛, այո՛, զգուշ եղեք, որ աստվածային հարվածը չհասցնի հոգեկան եւ մարմնական վնասվածքներ, այլապես խելագարությունն անխուսափելի կդառնա: Ըստ իս, պարետը լուրջ սխալ է թույլ տվել՝ կրակելով զանգի վրա, ասել է, թե՛ Աստծո վրա: Եվ նրա պատժաչափը եղել է հանցանքի գնահատականը:

- Վերջացնենք,- վերջապես խոսեց Խալիս բեյը,- հաշվենք, թե անցկացրինք այս փորձանքը եւս եւ, գոհություն ալլահին, հեշտ պրծանք: Կարող էր ավելի վատը պատահել: Բայց ես ի՞նչ մեղքս թաքցնեմ, չեմ հավատում Աստծո միջնորդությանը այս հարցում, չեմ հավատում եւ վերջ: Սա մի լավ կազմակերպված խորամանկ գործողություն էր, որը սկսվել էր զանգերի դողանքից եւ գիտեք ինչպես, ոչխարի ջիլը շատ ամուր է եւ կիսամութի մեջ բուրրովին անտեսանելի: Ահա՛,- եւ գրասեղանի դարակից հանեց ջիլի կապուկը,- այ՛ սրանով են զնգացել զանգերը: Պարեկի կրակոցը զանգերի դողանքին խառնված մի քանի անգամ ուժեղացրել է կրակոցի արծագանքը, որից վախեցած պարեկը կաթվածահար է եղել: Մնացածը, Աստվածամոր հայտնությունը, պարետատան վիճակն էլ օգնել են պարետատան այս էլ քանիեորոր անգամ թալանելուն: Տարել են ինչ կա, չկա, ոչինչ չեն թողել: Աստվածամոր հայտնությունը ծնվել է վախից: Վախից մեծ չարիք չկա, որովհետեւ վախի աչքերը մեծ են: Ահա պարզ բացատրությունն այն ամենի, որ այսպես ալեկոծեց՝ մեր հոգիները:

- Որտեղի՞ց, խալիս բեյ, կամ ո՞վ քո ձեռքը հանձնեց այդ ջիլի կապուկը, ո՞վ լուծեց առեղծվածը...

- Դա արդեն գաղտնիք է: Դա ինձ հանձնել է մեր հայ հետախույզը: Նա էլ բացահայտեց ամբողջ գաղտնիքը: Այսքանը...

* * *

- Այդ ինչպե՞ս հաջողվեց այդքան մաքուր աշխատել, Զրաչ,- ժպտալով խոսեց Սեւ Արսենը,- ավր, դա մի հոգու գործ էր...

- Մեկ հոգի չէ, երկուսով էինք՝ Քամի Զարուքի հետ: Նա չլիներ՝ գործը գլուխ չէր գա: Նա բարձրացավ զանգակատուն: Թելը նա կապեց զանգերի լեզվակներին, մնացածն արդեն դատարկ բան էր: Ես ծխական դպրոցի կտուրի խոտերի մեջ պանկած քաշում էի զանգերի բարակ պարանը: Ես սարքեցի, ես էլ բացեցի գաղտնիքը, առեղծվածը: Հիմա առաջադրանք եմ ստացել գտնել եւ մատնել հանցագործին: Հասկանալի է, որ ինքս ինձ մատնել չեմ կարող: Կորոնեմ, կորոնեմ եւ չեմ գտնի: Վերջը բարին լինի...

- Ախր, ես վախենում էի քեզ համար, տղաս: Մինչեւ վերջ դեպքի վայրին շատ մոտ էի... Հա, մոռացա, այս հանդիպմանը Եղիսաբեթի մասին այդ ներքինին բան չասա՞ց: Ես վախենում եմ այդ կնոջը փորձանքի քաշի շունը: Տղամարդ, իսկական տղամարդ, որ լիներ այդքան չէի անհանգստանա: Բայց քեզ նորից եմ զգուշացնում՝ հանկարծ ինքդ Եղիսաբեթի մասին հարց չտաս նրան: Դու սիրահար ես, ուրիշ ոչինչ...

- Լավ, խմբապետ: Թույլ տուր զնայու:

Իսկ տունդարձի ճանապարհին սիրտը խլրտում էր առաջին տեսակցության ջերմությունից, որով ապրում էր վերջին օրերին: Ի՞նչ էլ աներ՝ Եղիսաբեթն իր հետ էր, կարգավորում էր իր գործողությունները, զգուշացնում էր վտանգից: Հաճախ ինքը մտքում խոստովանություն էր անում նրան եւ փոխադարձ սիրո խոստովանություն լսում, որով ապրում էր մինչեւ արթնություն, մինչեւ այս կամ այն առաջադրանքի զնայլը: Ամենամեծ երազանքը նոր հանդիպումն էր, որ ինչպես իրեն էր թվում ճակատագրական նշանակություն պիտի ունենար երկուսի համար:

... Դուռը բացեց Եղիսաբեթը, ու նրանք հայտնվեցին միմյանց գրկում: Այնքան անսպասելի ու հանկարծակի տեղի ունեցավ այդ, որ առաջին պահ երկուսն էլ շնչասպառ եղան: Հրաչը նույնիսկ կորցրեց խոսելու ունակությունը: Խեղդվում էր երջանկությունից, որպես իր գրկում էր, որ ինքը շոշափելիորեն զգում էր նրա ձիգ, առածգական կրծքի խենթացնող հպումն. իրեն, որ տեսնում էր իր ուսին նրա սքանչելի դեմքը՝ հաճույքից փակ աչքերով, որ երկուսով էլ որոնում են միմյանց շուրթերը, որ ժարավի էին իրար, բայց հարյուր տարի էլ այդպես գրկված մնային, երեւի չէր սպառվի նրանց

կարոտն ու կիրքը: Առաջինը ուշքի եկավ Եղիսաբեթը.

- Խեղդեցի քեզ, Յրաչյա, անգի՛նս... Խեղդեցի...

Յրաչն ուշ արթնացավ: Նա ե՛լ կար, ե՛լ չկար: Արթնությունից հետո ե՛լ աստված էր, ե՛լ սատանա: Ե՛վ դրախտում էր, ե՛լ դժխքում: Բայց արթնությունը, որ զգաստության էր հուշում, չկարողացավ քանդել Եղիսաբեթին խեղդող նրա բազուկները, որ այնպիսի ուժով էին սեղմել կնոջ մեջքը, որ կարծես ձուլվում էին միմյանց, մի մարմին եւ մի հոգի դառնալու ոչ թե ցանկությամբ, այլ մոլուցքով: Յետո բարոյական հիշեցման շողը բացեց նրա լեզուն.

- Եղիսաբեթ, մենք մենա՞կ ենք տանը... Իսկ ո՞ւր է Սերգեյը...

- Նա ուշ կգա, նա շուկայում է, անգի՛նս: Մի՛ խոսիր, Յրաչյա, ինձ խեղդի՛ր, սիրի՛ր...

Նրանք փռվեցին հատակին: Դուռը ծածկվեց ինքն իրեն: Վայելքը հրամայող էր, իրենք վայելքի եւ կրքի ոչ հեզ, այլ մոլեգին ստրուկները: Ի՞նչ պատահեց, ինչպե՞ս մերկացավ այդ դիվական գեղեցկուհին, ինչպե՞ս ընկավ խալաթը վրայից, թե՞ ինքը դուրս սողաց խալաթի միջից եւ նախամոր նման մերկ այծմ գալարվում էր գրկում: Յրաչը խենթանում էր: Կինն՝ օգնեց եւ նա վայելեց նրան: Տիրեց եւ հարբեց նրանով, վայելեց խայտացող մարմնի սարսուռները, որ կինն առանց խնայելու նվիրաբերում էր նրան: Յետո նրանք պառկել էին եւ տեւական երանությունը թույլ չէր տալիս բաժանվել միմյանցից: Յետո կինը ճիգ արեց եւ բարձրացավ: Նա կամաց քայլեց դեպի սենյակ: Վերստին աչքերով գուրգուրեց նրա մարմնի գեղեցկությունն ու երանի տվեց իրեն, որ թույլտվություն ստացավ նման երջանկություն ապրելու համար: Սենյակում Եղիսաբեթը կարգի էր բերում իրեն, հարդարում քանդված, խառնված մազերը: Տղան ուշադիր նայում էր հագնվող կնոջը, աշխատելով նրան տեղավորել հիշողության ամենազգայուն մասում, որպեսզի հիշողությամբ էլ կարողանար նրան պահել իր հետ, վայելել նրա ներկայությունը, չբաժանվել նրանից:

- Յրաչյա՛, այդ ի՞նչ հայացքով ես նայում ինձ, քիչ է մնում կրկնակի մերկացնես ինձ, ախր, ես ամաչում եմ... Այդ ի՞նչ հայացք է...

- Չեմ հավատում, որ իրականություն է մեր ապրածը: Չեմ հավատում, որ ես աստված չեմ: Չեմ հավատում նաեւ, որ դու եւ ես, անմեղ ենք քո պարտականության ու պարտքի առջեւ, սիրելիս...

-Մի՛ խոսիր, Յրաչյա, Սերգեյի հետ մենք որոշել ենք նման հարցերում չխանգարել միմյանց, չբռնանալ: Ճիշտ է նաեւ, որ մենք գրանցված էլ չենք որպես ամուսիններ: Չենք երդվել Աստծուն հավատարիմ ամուսիններ լինելու համար, սակայն կան չգրված օրենքներ, որոնց նկատմամբ հավատարմությունը նույնպես բարոյական արժեք է: Ես այժմ փորձում եմ ինձ ներել Սերգեյին դավաճանելու համար, բայց ոչ մի արդարացում չեմ գտնում բացի քո սիրուց, որն ավելի զորեղ է, քան կատարածս մեղքը, մեղքի զգացումը: Սերը պիտի միջնորդ հանդիսանա պարտականության եւ դավաճանության միջեւ: Ճի՛շտ չեմ ասում...

- Սիրողը միշտ էլ ճիշտ է: Իսկ պարտականությունը նրբեք պետք չէ

թերագնահատել, որն այժմ անանցանելի պատի մեծ կանգնել է մեր միջել եւ սահմանափակում է սիրո իրավունքները: Ես, օրինակ, կցանկանայի քեզ միշտ ունենալ իմ գրկում, բայց չեմ կարող, որովհետեւ ուր որ է կժամանի այդ իրավունքն ունեցողը: Ես իրավունք չունեմ դառնալու քո ամուսինը, որովհետեւ դու ամուսին ունես, անգի՛նս...

- Արի չխոսենք վաղվա մասին եւ ապրենք այսօրով: Այնպիսի անթափանց մշուշով է լեցուն մեր ապագան, այնպիսի ծանր փորձության մեջ է մեր ժողովուրդը, որ դժվար է նույնիսկ կռահումներով որոշել վաղվա եղանակի տեսությունը: Մենք սիրում ենք իրար եւ այսօրով լիքն է մեր կյանքը: Բայց դու, ամենաթանկս, չե՞ որ գնալու ես թուրքին դեմ-հանդիման: Չե՞ որ ես չգիտեմ ինչ եմ որոճում այդ չարագործներն իմ մասին: Այդ ծանր հարցի շուրջ խորհելիս դեմ եմ առնում հոգեկան մի այնպիսի փակուղու, որ պատեպատ եմ դիպչում չզտնելով վաղվա հեռանկարը՝ իմ, քո, մեր ժողովրդի լինելության առումով: Հավատանք մեր ժողովրդի հազարամյա դիմացկունությանը, իմաստությանն ու փորձին, սակայն չենք կարող աչք փակել նրա արյան վիթխարի կորուստներին, նրա տառապանքներին: Մեզ, իհարկե, այս պարագայում խելոք խորհրդատու չի կարող լինել անհույս հոռետեսությունը եւ ոչ էլ անհիմն լավատեսությունը: Մի խոսքով, հավատանք վաղվան ու ապրենք... Տեսնում ես առանց մեր ճակատագրի քննարկման սիրել էլ չենք կարող: Հայրենիքն ու ժողովուրդը միշտ ամենօրյա կիզակետում են...

Դուռը բացվեց ու մտավ Սերգեյը: Բռնավորված էր մթերքներով: Հոգնած էր եւ որքան նկատվեց նաեւ հուզված: Կինը նկատեց առաջինը եւ ընդառաջ գնաց ամուսնուն: Սերգեյը ջերմորեն բարեւեց Հրաչին:

- Ի՞նչ է պատահել, Սերգեյ: Երեսիդ գույն չկա:

- Ինձ բան չի պատահել, բայց թուրքերն ամեն առավոտ արթնանում են սպանելու, կախելու նորանոր որոշումներով: Ձորքը բերել են քաղաք, լցրել ռուսական եկեղեցու տարածքը եւ պատժում են սիֆիլիսով հիվանդացած երեք ասկյարներին եւ նրանց վարակած երեք աղջիկներին: Ի դեպ, մեր կայագրի անձնակազմը հիմնականում փոխվել է: Հնաբնակները գնացել են Ալեքսանդրապոլի կողմերը եւ զորամասը համալրվել է նորակոչիկներով: Երբ կախում էին ասկյարներին, նորակոչիկներից մի քանիսը չդիմացան եւ ուշագնաց եղան: Նրանք հիմնականում պատանիներ են: Պարզվում է, որ Խալիս բեյն այս ցուցադրական մահապատժով հետապնդում է դաստիարակչական նպատակներ. պաշտպանել ասկյարների բարոյական մաքրությունը: Չի խրախուսում անառականոցների կանանց հետ ասկյարների շփումը: Ինքն այն կարծիքին է, որ ավելի ճիշտ է բռնաբարել կանանց, ովքեր չեն համաձայնվում անառակության, քան թե հեշտությամբ տրվող կանանց թակարդն ընկնել ու հիվանդանալ: Ահա գիմվորներին մաքուր պահելու թուրքական տեսակետը: Բարոյականության նրանց ըմբռնումը: Անհնար էր նայել ու լսել կախադան բարձրացվող կանանց աղաղակներն ու վայնասունը: Մի խոսքով, թուրքերը մի զարմանալի հետեւողականությամբ որոնում ու գտնում են մարդ ոչնչացնելու առիթներ: Այնպես որ, սիրելի իմ բարեկամներ,

գնացի սովորական տրամադրությամբ եւ ահա վերադառնում եմ մի տեսակ ջախջախված եւ վիատված: Իմիջիայլոց, նման պարագայում նույնիսկ նշանակություն չունի ազգային պատկանելությունը: Ես միշտ մտածել եմ, որ կարող եմ սառնասրտորեն եւ նույնիսկ չար հրճվանքով նայել, թե ինչպես են թուրքերն իրար հոշոտում: Բայց այդպես չեղավ: Սարսափելի բան է նայել մարդու մահվան ջղաձգումներին: Հավատացնում եմ՝ մարդ մոռանում է դիմացինի ազգությունը եւ իր դիմաց մնում է մարդ արարածն իր տանջանքներով ու ջղաձգումներով: Չգիտեմ, դուք ապրե՞լ եք նման պահեր:

- Իհարկե, ինձ ծանոթ է այդ ապրումը: Ասեմք ոչ թե ծանոթ է, այլ ես ապրել եմ, սիրելիս, այդ ամենը, երբ այստեղ դու քո ձեռքերով խեղդամահ արիր Նազըմ բեյին: Մի քանի օր շարունակ ինձ ուրիշ միտք էր չարչարում: Ցավում էի, որ զոհվեց մի մարդ, որ մեղքը սիրելն էր, որը, սակայն, ցանկանում էր սիրել անթույլատրելի, անմարդկային կերպով...

- Նրա մեղքը հենց մարդկայնությունից նահանջելու մեջ էր, ոչ սիրելու,- ճշտեց Սերգեյը,- ես եթե վստահ լինեի, որ դու սիրում ես նրան, երբեք չէի սպանի, վատագույն դեպքում կզցեի տանից դուրս:- Վերջացրեց Սերգեյը անուղղակի պատասխանելով նաեւ Հրաչին տանջող հարցերին: «Երեւի քաղաքակրթությունն այլ օրենքներ ունի: Նույնիսկ սկսել են խոսել սեռական կյանքի հեղափոխության մասին: Ասել է՝ խանդից գլուխը կորցնելը չպետք է հասնի մարդասպանության: Ասել է՝ գնում ենք մի մտածողության, երբ բանականությունը պետք է իրեն ենթարկի զգացմունքայնությունը: Ես դեռեւս չեմ կողմնորոշվել, դրական է, թե՞ բացասական նման մտայնությունը: Նույնիսկ մեկ-մեկ թվում է, թե պահպանողականությունը սիրային հարցում ավելի գերադասելի է առաջադիմության անդիմությունից...»:

- Ինչո՞ւ է լռում մեր հարգելի հյուրը,- նորից խոսեց Սերգեյը:

- Ի՞նչ խոսեմ, խորհում էի թուրքերի վայրենության մասին: Ախր, նրանք ասես հիվանդ են սպանելու մոլուցքով: Եթե սպանելու թեկնածու հայ, հույն եւ այլ ազգերի ներկայացուցիչներ չկան, նրանք շրջվում են դեպի յուրայինները եւ սպանում նրանց: Նույնիսկ հավատացած եմ, որ եթե չճարեն յուրայինների, կշրջվեն արյունակից բարեկամների վրա: Գուցե՞ ես սխալվում եմ եւ, տա Աստված, որ սխալ լինեմ, բայց այդ տպավորությունն եմ ստացել, տեսնելով նրանց սպանելու, խոշտանգելու ահավոր կիրքը...

- Եթե սխալվում ես, հարգելի Ռադիկ, ապա մեծ չէ այդ սխալը: Սպանության հակվածությունը թուրքի մեջ ավելի մեծ է, մի քանի անգամ մեծ է, քան մյուս ազգերի մեջ: Դրա պատճառները շատ են՝ անկրթությունն ու տգիտությունը, կրոնական մոլեռանդությունն ու պանթուրքիստական վարդապետությունը: Ես կարծում եմ, եթե վերանան այս պատճառները, թուրքերը զուցե փրկվեն այդ չարիքից եւ 12-13-րդ դարերից գան հասնեն մեր դարը, թեւեւ մեր դարը կարծես թե հանդուրժում է նրանց վայրագությունները...

Հետո երեքով նստեցին ընթրելու: Խոսեցին զանգահարության եւ նրա արդետալի հետեւանքների մասին, որի հերոսը Հրաչն էր: Ծիծաղեցին: Մանավանդ երբ Հրաչը պատմեց Խալիս բեյին հանդիպելու մանրամասները:

- Այդ ներքինին նստած էր բազկաթռոփն, աչքերը փակ, ձեռքերն ականջներին: Տեսնելուն պես բացեց եւ նորից արագ փակեց աչքերն ու դողալով հարցրեց. «Դու լսո՞ւմ ես հայոց եկեղեցու արթնության զանգերի ձայնը: Ես լսում եմ: Ասում են՝ նրանց աստվածուհին էլ է խառն այդ գործին: Ի՞նչ անենք, որ լռեն՝ եկեղեցու զանգերի ձայները: Ես ամուր փակել եմ լուսամուտները, որ Աստվածամայրը չկարողանա թափանցել իմ աշխատասենյակը: Դու հայ ես, կարո՞ղ ես ինձ օգնել, որ զանգահարություններն ավարտվեն»: Ես նրան ասում եմ. «Բե՛յ, զանգահարությունը երեկ էր եւ տեւել էր ընդամենը մեկ ժամ: Այլեւս չկա նման բան: Երկինք է համարձակել նաեւ Աստվածամայրը, ճիշտն ասած նա երբեք էլ չի երեւացել: Դա վախեցած թուրք ասկյարների հիվանդոտ երեւակայության արդյունքն է, բե՛յ, հանգստացե՛ք...»: Նա զարմացած նայում եւ չէր հավատում: «Իսկ ինչո՞վ կապացուցես, որ դա Աստծո գործը չէր»: «Բե՛յ, ասում եմ, դու ինձնից փաստեր ես ուզում, որպեսզի ես քեզ ասեմ ճշմարտությունը: Դու էլ ինձ խոսք տուր, որ Ձեյնաբ խանուհի կյանքը կպահպանվի, չէ՞ որ այդ մասին քեզ խնդրել եմ, չէ՞ որ նրա սիրո համար դարձել եմ ազգիս դավաճանն ու քո լրտեսը: Եթե դու երդվես այս գործում օգնելու համար, ես կդառնամ քո աչքն ու ականջը, կթեթեւացնեմ քո վիճակը»: Եվ պատկերացնո՞ւմ եք՝ երդվեց ձեռքը «Դուրանին»: Իսկ ես հանդիսավորապես գրպանիցս հանեցի ոչխարի ջիլից պատրաստած այդ թելն ու տվի իրեն: «Եթե կարող ես կտրիիր այս թելը կամ կանչիր քո զորամասի ամենաուժեղ ասկյարին, տեսնենք ուժը կպատի՞, կկարողանա՞ կտրել այս թելը, որով քաշել են զանգերը»: «Իսկ կասե՞ս ովքեր են քաշել եւ որտեղի՞ց, որ մերոնք նույնիսկ չեն նկատել»: «Ես դեռեւս չգիտեմ, թե ովքեր են եղել այս գործի հեղինակները, բայց կարող եմ անսխալ ասել, թե որտեղ են թաքնվել նրանք: Եկեղեցուն կից է ծխական դպրոցը: Նա հողածածկ կտուր ունի, փարթամ խոտով: Չանգահարը թաքնվել է կտուրի խոտերի մեջ եւ զանգը քաշել: Ուզում եք մարդ ուղարկեք եւ հավաստիացեք, որովհետեւ կտուրի այդ տեղում չորացող խոտն անմիջապես տրորվել է»: «Իսկ Աստվածամոր երեւալուն ի՞նչ կասես...»: Ասկյարներն ու պարետը վախեցել են եւ նրանց վախից էլ ծնվել է Աստվածամոր երեւույթը»: «Խոստանո՞ւմ ես, որ մեղավորներին կհանձնես մեր ձեռքը...»: «Եթե դու, բեյ, խոստումդ կատարես, ես էլ կաշխատեմ պարտքի տակ չմնալ...»:

162

* * *

Այդ տարի գարունը շուտ սկսեց իր ծննդաբերությունը: Ձյունից ազատված կաճաչ կղզիների վրա ծլեցին եւ բացվեցին ձնծաղիկները: Շատ

չանցած քանուց եւ ցրտից պատսպարված ժայռերի տակ եւ նրանց ճեղքերում իր կապույտ գլխիկը հանեց մանուշակը, եւ գարունը, որ ճմլկտում էր իր քնաթաթախ աչքերը, զարթնեց ու եռաց: Տուն էին վերադառնում թռչունները: Երկինքը լցված էր վերադարձողների կարոտի խանդավառ ձայներով: Բայց երկիրը լռում էր: Տունդարձող արագիւնները զարմանքով էին մայում արթնացող, բայց ամայի արտերին: Պատի ձորի ջրաղացը հսկող ծառաշարքում բույն դրած արագիւնները չլսեցին ոչ նուվերի մեջ ջրի անկման մռնչոցը, ոչ էլ ջրաղացքարերի եւ դինգերի ախորժալուր աղմուկն ու նեղացած աշխարհի նման անտարբերությունից ու ամայությունից՝ գնացին դոխաբորների գյուղերում բներ հյուսելու: Ծաղկում էր Ջավախք աշխարհը: Ջրերն ուռչում էին ոգեւորությունից եւ խենթացած քանդում իրենց ճանապարհին եղած արգելքները, խեղդում փերի ծառերն ու սանձակոծ նետվում փերն ի վեր, մռնչում երկինքն ի վեր: Ջավախքի արքան՝ Աբուլը սպասում էր գարնան հզորանալուն, որ արդեն հասել էր նրա ստորոտները եւ ճիգ էր անում բարձրանալու լանջերն ի վեր: Սակայն ծյունն ու ձմեռը զորահավաքի ենթարկելով իրենց ողջ հզորությունը պատրաստվում էին մի վերջին այնպիսի ճակատամարտի, որ կարողանային ետ բերել ձմեռն ու բուքը, նույնիսկ որոճում էին խեղդել պառավի ուլերն ու աշնանացանը սառեցնել: Բայց ոչ աշնանացան հերկեր կային, ոչ պառավներ կային եւ ոչ էլ խեղդվելու պատրաստ ուլեր, եւ ձմեռը քիթը կախած կամաց քաշվում էր լեռնագագաթները՝ արտասուքներով ողողելով իր ճանապարհն ու ցասման հեղեղներ սարքելով: Գարունը որոնեց լեռնաստանի տերերին եւ հերկերում ու ամայացած գյուղերում գտավ անթաղ կմախքացած դիակներ, որոնք ակնախոռոչները երկնքի անտարբերությամբ հառած՝ երազում էին մայր հողում ննջելու իրենց մարդկային իրավունքը եւ անհծում աշխարհի քարացած խիղճն ու կորցրած գոթությունը:

Թուրքական զորամասը կամաց նոսրանում էր: Ստորաբաժանումներն իրար հետեւից գնում էին առավել թեժ տեղամասեր եւ համալրում չկար: Թուրքիան պարտվել էր, երկնչում էր մեծերի հետ բախվելուց եւ վրեժխնդիր էր լինում փոքրերից այնպիսի դաժանությամբ, որպիսին կարող է լինել միայն թուրքը: Քաղաքի հայ վրիժառուների վիճակը դրանից, այսինքն՝ զորամասի նոսրացումից ոչ լավանում էր, ոչ թեթեւանում: Ջորամասը մի բուռ հայերի հետ կռվելու ուժ միշտ էլ ուներ. խալիս բեյը միշտ թեժ էր պահում իր արյունոտ վրեժխնդրության կրակը: Հայերը բավական թեթեւացած էին զգում այն իրողությամբ, որ խալիս բեյը կարծես մոռացել էր Եղիսաբեթի գոյությունը: Բայց իրականում խալիս բեյը քնած չէր, նա ուշադիր հետեւում էր վրիժառուների գործողություններին, նրանց շարքից չառանձնացնելով Եղիսաբեթին ու Սերգեյին: Թեեւ քաղաքում ծլել էին երկու-երեք հասարակաց տներ, խալիս բեյը չէր բացառում, որ իր զորամասի սպաները միշտ հոտոտում էին հայ կնոջ բնակարանի դռները եւ նույնիսկ թափանցում նրա տունը: Այդ հաստատում էին նաեւ թուրք հետախույզների զեկույցները: Վերջերս, ավելի հաճախ էին անհայտանում զորամասի սպաները: Հայտնի էր, որ անառականոցներում որեւէ կորուստ թուրքերը չունեին, բայց ոչ մի փաստ

չկար նրանց անհայտանալու պատճառների մասին: Չետախուզությունը մի քանի անգամ նկատել էր թուրք սպաների, որոնք սլացել էին Եղիսաբեթի խորհրդավոր դռնից ներս, սակայն անվնաս դուրս էին եկել: Իհարկե, Խալիս բեյը չէր կարծում, որ հայ վրիժառուներն իր հետախուզության վրա կարգել էին իրենցը: Եթե պարզվում է, որ թուրքերը գիտեն այս կամ այն սպայի տուն թափանցելու մասին, ապա նրան վերացնելու մասին խոսք անգամ լինել չէր կարող: Մշակված էր տանտիրուհու եւ նրա ամուսնու կողմից նմաններին բարձր մակարդակով ընդունելուն, համոզելու եւ տանից հեռացնելու գործողությունը, որ ոչ քյաբաբից զրկվեն, ոչ էլ գինուց: Բայց եթե հաստատվեր, որ թուրքերը, նրանց հետախույզները չեն նկատել սպայի մուտքը Եղիսաբեթի տուն, ապա այդ սպան այլեւս դուրս չէր գալիս տանից եւ համալրում էր Եղիսաբեթի սիրուն խնկարկող սպանված թուրք սպաների հավաքածուն՝ թոնրատան ներքնահարկում: Լինում էին նաեւ Եղիսաբեթին տիրելու փաստեր, երբ անհնար էր լինում վնասագերծել թշնամուն, երբ նրանք գալիս էին երկուերեք հոգով, զինված եւ կնոջը ձեռք զցելու վճռականությամբ: Ատրճանակի սպառնալիքի տակ կապոտում, շղթայում էին Սերգեյին, կատարում իրենց սեւ գործն ու քրքջալով հեռանում: Այդ օրերին ֆիզիկապես եւ հոգեպես ջարդված Եղիսաբեթը այնպիսի ապրումներ էր ունենում, երբ մեռնելը գերադաս էր համարում ապրելուց: Երկու անգամ կարողացավ թույն ընդունել, սակայն Սերգեյն ու Սեւ Արսենը, առաջինի՝ բժշկական, երկրորդի բարոյական միջամտության շնորհիվ կարողացան ոտքի կանգնեցնել իրեն պատվազրկված համարող կնոջը:

Մի անգամ այսպիսի խոսակցություն տեղի ունեցավ Խումար Չրաչի եւ Եղիսաբեթի միջեւ: Սերգեյն այն ժամանակ ինչ-որ գործ էր անում բակում: Ընդհանրապես, երբ երեւում էին ֆիդայի բարեկամները, եթե չէին խնդրում իր մասնակցությունը զրույցին, նա երբեք չէր խանգարում նրանց իր ներկայությամբ: Երբ Չրաչն իմացավ, որ Եղիսաբեթի զոհերի թիվն անցնում է տասից, համբուրեց սիրած կնոջը եւ ցանկանում էր գովեստի խոսքեր շռայլել, սակայն Եղիսաբեթը ձեռքի ափով փակեց նրա բերանը.

- Մի ասա քաջալերանքի ոչ մի խոսք, սիրելիս, եթե իմանաս ինչո՞վ եմ հատուցել դրանց դիմաց, կզգվես ինձանից...

- Ես քեզնից զզվել չեմ կարող, իմ սրբություն... Երբեք, սակայն ասա, ինչո՞վ ես հատուցել...

- Իմ պատվով: Բռնաբարվել եմ, կեղտոտվել... Դու ասա, կարո՞ղ էիր անպատիժ կերպով, հեշտությամբ այդքան թուրք կպանել, ուղարկել գողղի ծոցը: Այնպես որ, թանկագի՞նս, խնդրում եմ ինձ սրբի տեղ չդնես եւ այդքան չխնկարկես մեկին, որը ոչ թե հրեշտակ է, այլ սատանա...

Չրաչը վատ զգաց իրեն: Գունատվեց: Նա չէր էլ մտածել, որ կարող է բռնաբարվել իր աստվածուհին, որին համարում էր անձեռնմխելի ու անհասանելի թուրք բարբարոսների համար: Բայց ժամանակն էր տասնինը-քսան տարեկան երիտասարդին երկնային բարձունքներից երկիր իջնելու եւ իմանալու, որ ոչ մի հաղթանակ ձեռք չի բերվում առանց արյան, առանց հատուց-

ման: Եթե արյամբ չի հատուցվել Եղիսաբեթի հաղթանակը, ուրեմն պարզ է, որ գեղեցիկ կինը պիտի խաղաթղթի վրա դնել իր պատիվը եւ հատուցել իր պատվով: Հայրենասիրությունն իր պահանջներն ու օրենքներն ունի: Հայրենասեր կինը նման դեպքերում ոչ թե պատվազրկվում է, այլ հերոսանում եւ սրբանում: Սակայն այդ պահերն այնքան խորն էր ապրել Եղիսաբեթը. տասնյակից ավելի զոհերը նրան հոգեկան այնքան բավականություն չէին պարգևել, ինչ երկու անգամ թուրքերից անպատվելը, վիրավորել էին նրա ինքնասիրությունը, արատավորել պատիվը: Հրաչը լռում էր:

- Այ, տեսնո՞ւմ ես, Հրաչ, դու եւս չես դիմանում ցավին ու դառնությանը: Այս պարագայում ես զգում եմ, որ քո ցավին միանում է խանդը, որը գուցե խանդի ամենատանջալից, ամենանենգ տեսակն է, երբ սրբությունը պղծվում է պիղծ մարդկանց կողմից եւ ոչ թե արժեքավորվում իսկական սիրող եւ սիրո գինն իմացող մարդկանց կողմից...

- Դու պղծվել չես կարող, Եղիսաբեթ, դու անպատիվ լինել չես կարող: Ինձ թվում է դու հիմա նույնքան մաքուր ես եւ նույնքան սուրբ, որքան քո օրհորդ ժամանակ: Այս ի՞նչ բան է սերը, որ մարդուն կարող է հասցնել մինչեւ Աստծուն եւ միաժամանակ մարդկային սիրտն այնքան ցավեցնել, որ ցավից ոռնացող մարդը երանի տա նույնիսկ մահվանը...

Հրաչի աչքերը խոնավացան: Եղիսաբեթը զգաց նրա ցավի մեծությունն ու խորությունը. «Երեւի սխալ թույլ տվի, խոստովանելով, թե իրականում ո՞վ եմ ես: Նա տակավին երեխա է եւ անկարող է զսպել իր հուզումները: Սակայն ճշմարտության դեմ աչք փակելն եւս ճիշտ չի լինի: Նա ինձ նայում է այնպիսի գորովով եւ պատկառանքով, ինչպես Աստվածամորը: Մինչդեռ ես չեմ կամենում ստանձնել նման սրբազան դերեր: Թող նա իմանա ճշմարտությունը, եթե նրա սերը լոկ հրապուրանք չէ, ուրեմն, կդիմանա նաեւ ճշմարտության դառնությանը: Ի վերջո, իմ հոգու խորքում ես չեմ ցանկանում կանգնել այս հրաշալի տղայի ճամփին եւ փակել նրա առջեւ ընտանիքավորվելու ճանապարհը: Թեեւ եթե՞ Դա հեռանա ինձանից, լքի ինձ, ապա դժվարանում եմ ասել, որ մահն ինձ ավելի ընդունելի կլինի, քան թե կյանքը: Ես մինչեւ վերջ կշտացել եմ սիրային խաղերից, որ իմ վզին փաթաթեցին թուրքերը, քաղցրումեղցր խոստումներով եւ գիշատիչ մտայնությամբ: Հոգնել եմ նույնիսկ Սերգեյի ոչինչ չպարտադրող, հնազանդ սիրուց, որը մեծ պատրաստականությամբ եւ քաջությամբ սատար եղավ իմ պատվին, որի անձնուրացության եւ սիրո զոհերը դարձան իմ թուրք հոգեհաններից ոչ քչերը: Ես նոր, միայն նոր եմ ճանաչում սերը, որ գտել եմ հանձին Հրաչի եւ չգիտեմ այն պաշտպանել եւ փրկել՝ է հարկավոր, թե՞ հեռացնել ու մերժել, որ գնա ավելի ընդունելի ճանապարհով: Թող Աստված ների ինձ, ների իմ անքավելի մեղքերը, որ ես գործել եմ որպես կին, տրվելով իմ սերերին՝ սիրով եւ ոչ ամուսնությամբ: Եվ թող ների ինձ իմ հայրենիքը, որի սերն անաղարտ պահելու համար ես դարձա կերակուր իմ թշնամուն եւ նրա կրքերի զոհը: Այնպես որ միշտ փորձիր ինձ ներել նաեւ դու, իմ երիտասարդ բարեկամ, եւ իմացիր, որ մենք խաղալիք ենք նախախնամության եւ ճակատագրի ձեռքին: Մենք

անկարող ենք ընդառաջ չգնալ անխուսափելիին, դեմ նետել մեզ հասանելիք մեր փայաբաժին երջանկությունն ու դժբախտությունը, սերն ու ատելությունը եւ կյանքն ու մահը: Ների՛ր ինձ...»:

- Հիմա, Հրաչյա, երբ դու գիտես ճշմարտությունն իմ մասին, վճռիք անելիքը, եթե դու մերժես իմ սերը, ինձ համար շատ ծանր կլինի, բայց կհաղթանակի ճշմարտությունը: Եթե չլքես ինձ, ես երջանիկ կլինեմ, բայց այդ երջանկությունը կառուցված կլինի քո խաբվածության վրա:

- Դու ճիշտ չես ասում, Եղիսաբեթ, ես ընտրություն կատարել եմ առաջին հայացքից, առաջին անգամ քեզ տեսնելուց հետո: Դու մի բամբասիկ քեզ, քո բարոյականությունը: Դու մաքրամաքուր ես ինձ համար: Դու գիտես սիրո հարզը, դու գիտես նաեւ քո հայրենասիրությամբ ողջակեզի ենթարկել քո կյանքն ու պատիվը եւ սրբագործել քո չունեցած մեղքերը: Աստված, քեզ հետ է, անգի՛նս: Հայրենիքը կտրբացնի քեզ, իսկ ես կաստվածացնեմ...

- Է՛հ, Հրաչյա, մենք իրար հետ խոսում ենք ասպետական ժամանակների հերոսների նման: Մենք սովորական, շատ սովորական մարդիկ ենք, որ հայտնվել ենք ոչ սովորական պայմաններում եւ ճարահատյալ փոխել մեր խաղաղ գործը՝ պատերազմական օրերին համապատասխան: Ես չեմ կարող սրբանալ եւ աստվածանալ, Հրաչյա: Այդպես որ լինի կսրբանան եւ կաստվածանան բոլոր հայրենասերները: Խնդրում եմ ներել իմ մեծախոսությունը, ես աստվածանում եմ քո գրկում: Այդ պահերին ինձ թվում է, որ ես՝ մեղավորս, մաքրվում եմ, ազնվանում:

- Բայց իրոք մենք դադարել ենք սովորական լեզվով խոսելուց: Երեւի սերը պահանջում է նաեւ լեզվի գեղեցկացում: Հայրս սիրում էր մորը՝ տատիս, կոչել մայր Աստվածածին, իսկ այդ հրաշալի պառավը նեղանում ու խռովում էր որդու՝ այդ «անաստվածությունից»: Հերի՛ք է, Ցոլակ, ամոթ է, մե՛ղք է, ինձ՝ ութ երեխա ծնած մեղավոր հոգուս, մայր Աստվածածին կոչես: Տերը կնեղանա, ես կնեղանամ: «Ութ երեխա ցավով ծնելու, այդքան թուրաշիկ-պուպուշիկ իմ մորը հենց դրա համար էլ մայր Աստվածածին եմ կոչում, ով ուզում է, թող նեղանա: Ես իմ մորը աստվածուհի եմ ասում: Ո՛ւմ ինչ գործն է կամ ի՞նչ իրավունքով են նեղանում...»: Հիմա, անգի՛նս, մենք ենք: Ես քո մեջ տեսնում եմ Աստվածուհուն, որը սիրելիս էլ, մարտնչելիս էլ բարձրանում է աստվածների շարքը: Սրա մեջ ի՞նչ մեղք կա: Թող քեզ ասեմ սրտիս ուզածը՝ գեղեցիկ խոսքն ավելի է գեղեցկացնում, պաշտելի դարձնում նրան, ում սիրում ենք: Թող գեղեցկացնենք մեր դժվարին, մեր անտանելի գոյությունը՝ հայրենասիրությամբ, սիրով, սիրո եւ հայրենիքի պաշտամունքով...

* * *

Ընդհարումները թուրքական զորամասի եւ վրիժառունների միջեկ գնալով ահագնանում եւ դառնում էր հաճախակի: Խալիս բեյը որոշել էր մեկընդմիշտ վերջ տալ այն խայտառակ վիճակին, երբ հաղթական բանակի

ասկյարները եւ սպաները ոչ միայն չէին կարող ազատ ու անկաշկանդ զգալ զրաված սանջակում, այլ վախենում են նույնիսկ արտաքնոց զնալ: Մի բուռ հայեր պարզապէս զորանոցի պատին են սեղմել այն քաջարի թուրքերին, որոնց առջեւից նապաստակի նման փախչում էին հայերը, լքելով տունուտեղ, հող ու ջուր: Իհարկե, բինբաշին չէր ասում, թե խոսքը ինչ հայերի մասին է: Ոչ, նա չէր մոռանում, որ թուրքական զորամասերից փախչում էր ժողովրդի այն մասը, որը նույնիսկ ուժ չունէր, անկարող էր փախչել: Ծերեր, երեխաներ, կանայք, որոնք փախչում էին կատաղած հրոսակներից՝ պահպանելու համար երեխաների կյանքը եւ կանանց պատիվն ու արժանապատվութիւնը: Իսկ ահա նա խոստովանում էր, որ քաջարի թուրքերն առանց ամաչելու թրջում եւ մուռտառում են շալվարները մի բուռ հայերին հանդիպելու ահից: Դե ինչ, ասում են՝ լեզուն ոսկոր չունի: Ձարմանալի, շահ զարմանալի կովողներ են թուրքերը: Քաջ են, երբ թշնամին փախչում է եւ նապաստակ են դառնում, երբ ոտխը դեմքով շրջվում է իրենց: Բաց ճակատամարտում նրանք սարսափելի վախենում են ուղիղ նայել մահվան աչքերին եւ գերի են մահվանը, իսկ երբ հանդիպում են իրենց չնկատող հակառակորդին, այդ պահին կատուն, լուսանը, ձեզ օրինակ, անմիջապէս թաթերի միջից դուրս են մետվում ահռելի ճանկերը, բացվում են սուր ժանիքներն ու ցատկ է կատարում իր զոհի վրա: Ահա այս պարագայում հերոս է թուրքը: Իսկ դեմդիմաց անգոր է եւ ողորմելի՝ խղճալու աստիճան: Հիմա նրանց ոտքի է հանել բինբաշին. «Ջավախքի սանջակում վերջ տալու հայկական հարցին»:

Սեւ Արսենը, որ թուրքերի աշխուժանալուց կռահել էր բինբաշու մտադրութիւնը, իհարկե չէր կարող ընդունել ճակատամարտ տալու հանդուգն որոշումը, որը մի քանի թուրքերին, իրոք, կլուծէր հայկական հարցը զավառում: Բանն այն է, որ խուճը երկար ամիսների ընթացքում, թեւ թուրքերից հինգ-վեց անգամ պակաս զոհեր է տվել, բայց քանի որ խուճը երբեք չի համալրվել եւ չի կարող համալրվել, մնացել են մի երկու-երեք տասնյակ մարտիկներ, որոնցից մի մասն ինքն էլ վիրավոր ու արյունաքամ քարշ են տալիս իրենց գոյութիւնը՝ տառապելով ցրտից ու քաղցից: Իսկ երկուսը, որոնք առանձնացվել են բոլորից, հիվանդ են տիֆով եւ մի ավերակում, Սերգեյի հսկողութեան տակ (որն, ի դեպ, նրանց ամեն օր այցելել չի կարող) կռվում են վերահաս մահվան դեմ: Տիֆի արշավանքը խմբին եւ նրա հրամանատարին ավելի հոգս ու մտահոգութիւն պատճառեց, քան բինբաշու նախապատրաստվելու ցուցադրումը: Սեւ Արսենն արդեն շոշափելիորեն տեսնում էր իր խմբի կործանման հեռանկարը: Իհարկե, սկզբից էլ նրա համար պարզ էր, որ իր խմբի կողմից պատճառած վերքերը զորամասի համար մահացու լինել, նրան ոչնչացնել չեն կարող: Սակայն զորամասն, իվերջո, լուծելու է հայերին ոչնչացնելու իր ծրագիրը: Սեւ Արսենը ներքուստ հասկանում էր, որ իր խմբի կյանքն ավելի երկար եղավ, քան ի գորու էր լինելու: Սակայն Սեւ Արսենը չէր կարծում եւ չէր նախատեսել, որ խմբի վրա միանգամից կարող են հարձակվել թուրքերին համերաշխված ցուրտն ու քաղցը, ֆիդայիների շարքերի նուրանալն ու տիֆը, զինանթերքի եւ պարենամթերքի պակասութիւնը: Սպառ-

վում էր նաև դեղորայքը, որ այնպես խնամքով պահեստավորել էր Սերգեյը: Եվ չնայած այս ամենին, խումբը չէր ցանկանում զենքը վայր դնել: Չէր ցանկանում հայրենի վայրերը լքել եւ կապիտուլացվել: Խումբն իր առջեւ մի խնդիր ուներ միայն. ոչնչացնել թուրքերին առանց խտրության, առանց շարքային ու սպա հաշվի առնելու, քանի որ չունեի թշնամուն ջախջախելու ուժ ու զորություն, սպա նրա գործողությունները սրվեցին մեկ ուղղությամբ, որքան կարելի է շատ կոտորել, շատ զոհեր պատճառել թշնամուն, գոնե չնչին չափով փոխհատուցել հայերի ահռելի կորուստները: Վիրավորել, ցավեցնել թուրքերի սրտերը, քանզի հայերի արտասուլքն անգամ չորացել էր՝ սպառովելով նրանց սպառվող արյան հետ միասին: Քանզի այնպես էին ցավել հայ մայրերի ու մամիկների սրտերը, որ ցավը պիտի արձագանքեր հարյուրամյակներ շարունակ, հիշեցնելով այս ջարդերն ու կոտորածը, հիշեցնելով՝ ոչ թե վրեժխնդիր լինելու, այլ մարդկությունը, մարդկային գեներտիկ հարստությունը նորից չենթարկելու վայրենի ցեղերի սանձազերծած աղետին ու ոչնչացմանը: «Մենք ուխտել ենք վրեժխնդիր լինել մեր թշնամուց, որովհետև այդ բոլոր խժոժությունների ու արյունահեղության ականատեսներն ենք: Ոչ ոք չի կարող մեղադրել հայ վրիժառուին, որի աչքերի առջեւ սպանել են մորը, վրեժխնդիր լինելու սպանողից, եթե նույնիսկ նա ահից բարձրացրել է ձեռքերը: Իհարկե, մենք, որ չորս հազար տարի առաջ ստեղծել ենք պետականություն ու քաղաքակրթություն, չենք կարող բռնաբարել, պատվազուրկ անել մեր թշնամիներին: Չենք կարող իջնել նրանց մակարդակին, որը մնացել է քարե դարի մատույցներում եւ չի կարողանում առաջանալ դեպի մարդն ու մարդացումը, համարել մեր ժամանակի կնճռոտ հարցերը լուծելու բանալին: Մենք առաջնորդվելով՝ «Մահվան դիմաց՝ մահ, արյան դիմաց՝ արյուն» կարգախոսով, միաժամանակ չպետք է մեզ հանձնենք ջարդի ու սպանության մոլուցքին, որը կարող է մեզ սպանել բարոյապես, ինչպես սպանել է թուրքին, զրկելով նրան մարդկության հետ հաղորդակցվելու բարոյական արտոնությունից: Բայց ահա մենք, մեր փոքրիկ խումբն այսօր սպառվելու վրա է: Աշխատենք հերոսության նոր բռնկումներով երկարացնել մեր գոյությունը: Կռվենք, քանի դեռ կարող ենք, քանի ուժ ունենք: Կռվենք, որպեսզի թշնամին մեր հայրենիքը իրենը համարելու վստահություն չունենա...»:

... Իսկ տիֆն արեց իր սեւ գործը: Մեռավ Քամի Դարութը, խմբի ամենաքաջ մարտիկներից մեկը: Նրան թաղեցին գիշեր ժամանակ: Թաղեցին երեք հոգով: Չգուշության համար, որ նոր վարակվողներ չլինեն: Լավ էր, որ Սերգեյի մոտ ախտազերծող դեղի պակաս չկար: Մինչև մահացածին մոտենալը եւ նրան գերեզմանելը ախտազերծեցին այն ավերակը, ուր Դարութը կնքել էր իր մահկանացուն եւ թաղողներին, որոնց մեջ էր նաև Սեւ Արսենը: Ուրիշ ոչ ոքի մոտ չթողին: Գիշերով, նաև այն պատճառով, որ թուրքերը չնկատեն, կռիվ չբորբոքվի, որ վերստին զոհեր ու գերիներ չլինեն: Գիշերն օգնեց թաղողներին արտասուլքը թաքցնելու դժվարությունից: Երեքն էին եւ երեքով՝ անձայն արտասվում էին: Երբ կարպետի մեջ փաթաթված Դարութի դին իջեցնում էին փոսը, ասես օգնելու համար, ասես գթասրտությունից մղ-

ված դուրս եկավ մի հսկայական, սակայն սառցակտոր հիշեցնող լուսին, որի լույսն ասես մոտեցրեց լեռնաշխարհը պահակող լեռներից, որոնք հուղարկավորի մեծան շարվեցին գերեզմանատան շուրջքուրը՝ դառնալով Հարութի անխոս հուղարկավորները:

- Գնաս բարով, Հարութ, չմոռանաս տղաներին մեր կողմից բարեւել: Գնաս բարով, որդի՛ս...

Եվ գնացին: Գերեզմանատան շիրիմներից պոկվեց մի ստվեր ու մոտեցավ: Կանգնեցին.

- Ո՞վ է: Կանգնիր, կխփենք,- խոսեցին թուրքերեն:

- Ես եմ, չկարողացա քնել, որ սպանեիք էլ պիտի գայի: Ախր, Հարութն իմ ընկերն էր ու տարեկիցը:

- Դո՞ւ ես, Հրա՛չ: Ուրեմն, չդիմացար, եկար: Թաղելիս որտե՞ղ էիր...

- Ձեզնից երկու քայլ հեռու: Նայում էի ու մտքումս հրաժեշտ էի տալիս նրան: Համբուրում էի նաեւ...,- եւ փղծկաց: Լացեց բարձրաձայն, առանց համաչելու, առանց թաքցնելու խեղդող հեկեկոցը: Սեւ Արսենը մեկ ուզեց դիտողություն անել. «Ի՞նչ է, կնիկ հո չես...», - բայց ոչինչ չասաց. «Քիչ առաջ դու չէի՞ր արտասվողը, Արսեն...»: Եվ լուռ բռնեց տղայի ուսերից:

- Գնանք,- ասաց: Եվ քայլեցին:

- Հա՛, Հրաչ, այսօր կամ վաղը տես այդ կոտածին: Նրան առանց վախենալու նսա, որ տիֆի համաճարակը հնձում է տղաներին: Եթե կասկածեն, ասա թող գնան հիվանդներին իրենց աչքով տեսնեն: Միեւնույն է, դատապարտված է նաեւ Դիոլ Միհրանը: Թող գան, տեսնեն: Հավատացած եմ, որ չեն գա, կվախենան: Կարծում եմ մեզ որոշ ժամանակ հանգիստ կթողնեն:... Կյանքը թանկ արժե, Հրա՛չ...

Հաջորդ օրը Հրաչը քայլեց զինվորական ավանի ճանապարհով: Խալիս բեյի դեմքին զարմանք երեւաց: Պայմանավորված չէին: Ձեռքը պարզեց բարեւելու համար, ձեռքը մնաց օդում կախված: Բինբաշին ավելի զարմացավ: Կիսակենդան դեմքը թնդաց.

- Այդ ի՞նչ է, որոշել ես ստուգել իմ համբերությունը...

- Ո՛չ, բեյ, ցանկանում եմ քեզ հեռու պահել տիֆով վարակվելուց...

- Դու հիվանդ չես երեւում, տղա՛, ի՞նչ տիֆի մասին է խոսքը:

- Դեռ հիվանդ չեմ, բեյ՛, բայց շփվել եմ հիվանդի, նույնիսկ հանգուցյալի հետ...

- Ել ինչո՞ւ ես եկել ինձ մոտ, վարակելո՞ւ, տո իթօլի... Հիմա, որ գլխատել տամ քեզ...

- Ավելի վատ, եթե ես վարակված եմ: Ողջ ավելի անվնաս եմ, քան գլխատված: Ես եկա զգուշացնելու, որ առայժմ քաղաք չմտնեք: Ի դեպ, եթե չեք հավատում, ուզում եք մեկին ասեք ինձ հետ գա, ես նրան ցույց կտամ տիֆով հիվանդներին...

- Չքվիր, լակո՛տ, տեսեք, թե ի՞նչ փրկարար եմ ճարել, եկել է զորամասը կործանելու...

Հրաչը փախավ: «Համա թն՝ վախեցրի, լեղաճաք եղավ: Շուն, տե՛՛»

Գենք՝ ով՛ ում... Ձարմացավ, որ շուտ եմ գնացել: Հանդիպմանը երկու օր դեռ կար: Ախր, այդ հանդիպմանը պետք է ես նրա հետ, այդ արվամուլ շան հետ մտնեի անկողին, թե չէ խոստացել էր գլուխս նվեր ուղարկել Սել Արսենին: Լա՛վ պրծա... Հետաքրքիր է որեւէ մեկի միջոցով կարո՞ղ է ստուգել ասածիս ճշմարտությունը: Չեմ հավատում, բայց ո՞վ գիտե...»:

Խմբապետի հետ հանդիպեց որոշված վայրում: Հաց էր ծամում:

- Ասացի, խմբապետ: Լեղաճաք եղավ այդ ներքինին: Ասացի՛ չեք հավատում, եկեք, տեսեք... Ինձ վռնդեց...

- Քեզ սիրահարված է, Հրաչ... Ուրեմն, ի՞նչ...

- Էլ ինչ սեր, ինչ բան: Կարծում եմ բավական ժամանակ հանգիստ կթողնի ինձ... Կարծում եմ առայժմ չի էլ ընդունի ինձ... Դե, ես գնամ, խմբապետ: Իմ տրամադրությունը լավ չէ: Հարուստ անընդհատ ինձ հետ է: Գիտեք, խոսում է ինձ հետ, ինձ իրենից քշում է հեռու... Ասում է՝ չեմ ցանկանում հիվանդանաս... Ես վարակիչ եմ, հեռացիր...

- Ես փափուկ սիրտ չունեմ, բայց ես էլ չեմ կարողանում վայրկյան անգամ մոռանալ այդ տղային: Նա մեր խմբի աչքն ու ականջն էր: Առանց նրա կույր ու խուլ կլինեմք եւ հիմա, երբ նա չկա: Կիւլանանք եւ կկուրանանք: Բացի դրանից նա նաեւ կապավոր էր: Լուրերը քամու արագությամբ էր մեզ հասցնում: Անփոխարինելի էր, Հրաչ... Եվ գլխավորը, նա լավ մարդ էր, հրաշալի տղա: Մեծ կորուստ էր, մե՛ծ...- Սել Արսենը լռեց: Լուռ էր նաեւ Հրաչը: Նա հասկանում էր, որ խմբապետը եւս ծանր է տանում այդ կորուստը: Եվ կամաց դուրս եկավ սենյակից, որպեսզի ազատության մեջ վերստին հանդիպի իր ընկերոջ կարոտին, որպեսզի քուն կամ արթմնի կարողանա տեսնել նրա թուխ եւ ազնիվ դեմքը, որը ոչ մոռանալու, ոչ էլ տեսնելու հնարավորություն ունի:

Հաջորդ օրը զինվորական ավանի մուտքին ուղեփակոց էր դրված: Դեպի քաղաք ելք ու մուտք չկար: Հրամայված էր նույնիսկ շների ու կատուների վրա կրակ բանալ, որպեսզի տիճը չթափանցեր զինվորական ավան: Ժամանակավորապես փակվեց նույնիսկ քաղաքի պարետատունը: Քաղաքից կամաց հեռանում էին սպաների ընտանիքները, փակվում փոքրիկ սրճարանները, խորտկարանները եւ անառականոցները:

* * *

- Պարոնայք սպաներ, ես զեկույց էի ներկայացրել բանակի հրամանատար Վեհիբ փաշային մեր զորամասի վիճակի մասին, որ թեւեւ Ախալքալաքի սանջակը, որը մեր փառապանծ զորքերի կողմից նվաճվել է ոչ մեծ կորուստների գնով, նախորդ անտաղանդ ու ապիկար հրամանատարների վատ աշխատանքի հետեւանքով, փոխանակ ուժեղացնելու ռազմական ունակությունն ու զենքի իմացությունը, մեր զորամասը վերածել են գնչուական թափառախմբի՝ ցածր կարգապահությունը, հրամանների կատարման նկատմամբ ոչ պահանջկոտ վերաբերմունքը ասկյարների, մանավանդ սպաների մեջ մեռցրել են հայրենասիրական ոգին, մեծ Թուրքիայի հզորությանը

սատար լինելու ձգտումը: Բանը հասել է այնտեղ, որ ասկյարների մեջ նկատվել է գեշ հիվանդության բռնկում, որը կանխելու համար մենք դիմել ենք ծայրահեղ միջոցների՝ կախելով եւ հիվանդներին, եւ անառակ կանանց, եւ փա՛ռք ալլահի, կանխել հիվանդությունը: Սակայն այդ չէ կարելորագույնը, այլ այն, որ մի քանի տասնյակ, այսպես կոչված, ֆիդայիներ ազատ գործելու ասպարեզ են ունեցել եւ ասպատակել են գավառի կենտրոնը՝ քաղաքը դարձնելով իրենց տեղակայման վայրը: Նրանք, այդ քյալլագոզները լավ են կատարել իրենց խնդիրը՝ կործանելով, մաշելով մեր սպայակույտը, որը, ինչպես մեծ մարտերի ժամանակ, անընդհատ համալրվել է, հարյուրից ավելի սպաներ, երկու-երեք հարյուր ասկյարներ զոհ են գնացել հայ ֆիդայիների վրեժխնդրությանը: Բանը հասել է այնտեղ, որ վրիժառուներին զոհ են դարձել նաեւ գնդի հրամանատարները՝ Օմար փաշան եւ Նազըմ բեյը: Այս է իրական վիճակը: Իսկ նման ամոթալի վիճակի պատճառներից մեկը, ըստ տվյալների, այդ բարձրաստիճան սպաների սիրային արկածախնդրությունն է, ավելի ճիշտ սեռական սանձարձակությունը: Մեր զորամասի տարածքում բնավորվել է մի հայ գեղեցկուհի՝ իր բուլղար ամուսնու հետ: Նա սպաների հոգեառն է: Նրանք երկուսով ունեն բարձրագույն կրթություն, ընդ որում, ամուսինը բժիշկ է, իսկ կինը՝ լեզվաբան: Ասում են, որ հրապուրիչ այդ կնոջ դռնից մտնողն այլեւս լույս աշխարհ չի տեսնում: Մեր հետախույզներն ու դիտորդները թեւեւ ոչինչ կասկածելի բան չեն գտնում, բայց այդ գայթակղիչ ու խելոք կինը հեշտ ձեռք ընկնողներից չէ: Խնդրում եմ վերջին անգամ, փաշա՛, համալրեք մեր զորամասը, գոնե երկու տասնյակ սպաներով եւ, մեր հետագա անելիքների համար տալ քո իմաստուն հրամանը: Այս է իմ զեկույցի բովանդակությունը: Իսկ հիմա քաղաքում սկսվել է տիֆի համաճարակ, այն էլ ֆիդայիների մեջ: Մեր ստացած տեղեկությունները հաստատեցին նաեւ մեր հետախույզները:

- Է՛հ, ալլահը վկա, լավ է, շա՛տ լավ...- ուրախացած արծագանքեցին ներկաները,- ինչ չհաջողվեց անել մեզ, անում է ալլահը, փա՛ռք իրեն, հավիտյանս հավիտենից...

- Փա՛ռք, փա՛ռք...- ձեռքերը վերեւ պարզած վեր թռան սպաները: Խալիս բեյի անշարժ դեմքը սկսեց ցնցվել կատաղությունից ու զայրույթից:

- Չայներդ կտրեք, է՛շէ՛շե՛ր,- շվկացրեց:- Դուք լաց լինելու փոխարեն ուրախանում եք: Դուք չգիտեք, թե ինչ է տիֆը, եթե, ալլահը մի արասցե, ընկավ զորքի մեջ, գիտե՞ք ինչ հունձ կանի: Օրական տասնյակ էշեր նալերը կտնկեն արեւին... Իսկ դուք զոռում եք ուրախությունից... Թողեք ձեր օյինբագությունները եւ թույլ տվեք շարունակել ասելիքս...

Լռություն տիրեց: Վերստին Խալիս բեյի դեմքն անշարժացավ: Մեռավ: Դեմքի անշարժության վերստանալը նշանակում էր, որ կատաղությունն անցել է:

- Բանակի հրամանատարի պատասխանն ավելի խիստ է, քան ենթադրում էի: Նա գրում է. եթե դու, Խալիս բեյ, չես ցանկանում, որ քո գունդը վերածվի ոչխարի հոտի, ուրեմն, ինքդ դարձիր օրինակելի եւ խիստ չորան,

ունեցիր գայլախեղդ քո գամփռները, որ հոտոդ վերածվի իսկական մարտունակ գորամասի: Ինչե՛ր են լսում ականջներս. ուրեմ, քո ասկյարները եւ սպաները սիրահարներ են, բոզեր են, սիֆիլիտիկներ են, իսկ ավաճ սպաները սիրո զոհե՛ր: Կարգի բեր, Խալիս բեյ, քո զինվորական գործերը, որ դու էլ չարժանանաս նախորդներիդ բախտին: Տեսե՞ք, ինչպե՞ս է ջարդում իմ ինքնասիրությունը, ասելով, թե՛ քո զեկույցից երեւում է, որ դու էլ ես սիրահարված այդ կնոջը, որը սպաներիդ եւ հրեշտակն է, եւ հոգեառ հրեշը: Գործիր վճռականորեն, այլեւս չլսեմ հայ բառը քո զեկույցներում: Իմացիր, հայերը օրենքից դուրս են հայտարարված, նրանց մահվան ենթարկելը ոչ թե պատժի, այլ պարզեւի արժանի արարք է: Այդ լավ իմացիր եւ գործիր ըստ մեր ցուցումի եւ քո հայեցողության: Տեսա՞ք, ինչ է պահանջում փաշան: Քանի նրա ատամների տակ չեք ընկել, խելքերդ գլուխներիդ հավաքեք, շան ցկնածներ...

Սպաները թողեցին խորհրդակցության դահլիճը խոր վիրավորվածությամբ: Գնդի հրամանատարը իր եւ նախորդների մեղքերը խառնել էր իրար եւ մեղքը գցել նախորդների վրա: Միաժամանակ, խիստ անվայելուչ էր զեկույցում արտահայտվում թուրք սպաների մասին, շոշափելով եւ ցեխոտելով նրանց արժանապատվությունը, թքելով նրանց թափած արյան վրա, չխոսելով այն կորուստներից, որ պատճառել են նրանք հայերին, կոտորելով ու տեղահանելով իրենց դարավոր հողերից ու հայրենիքից: Այդ ո՞ր հրամանատարն է մատնում կամ մատնանշում իր սպաների սեռական սանձարձակության մասին, մանավանդ որ զոհերը մեծ մասամբ եղել են հայուհիները, իսկ գեշ հիվանդության տարածողները՝ թրքուհիները, որոնց զոհերը եղել են ոչ թե սպաները, այլ ասկյարները: Ինչո՞ւ են զորամասի սպաներին բամբասում ոչ մարտունակության, անկարգապահության եւ զանազան մահացու մեղքերի մեջ: «Կռտած արվամու: Ինքը փչացնում է ասկյարներին եւ կենակցում նրանց հետ, իսկ թուրք ու մուրը բաժին հանում սպաներին»:

* * *

- Խմբապետ, հարկավոր է շտապել,- շնչասպառ թաքստոց նետվեց Խումար Չրաչը:- Թուրքերն այսօր-վաղը սկսելու են մարտական գործողություններ մեր դեմ, որին մասնակցելու է ամբողջ գունդը: Ամեն ինչ մանրամասնորեն ես լսեցի զորամասի շտաբում, միայն անհայտ է, թե ե՞րբ, ո՞ր օրը եւ ո՞ր ժամին են սկսելու ռազմական գործողությունները: Նրանց միտքը հետեւյալն է. շրջապատել քաղաքն այնպես, որ անկարելի լինի մուտքն ու ելքը, զորաշղթաները ամեն կողմից լցվեն քաղաք եւ սանրելով քաղաքի յուրաքանչյուր տունն ու բակը, քաղաքի կենտրոնում միանան իրար, սեղմելով շղթան, սկսեն իսկական որսը, այն հաշվով, որ ոչ ոք չկարողանա դուրս արժնել շղթայից: Դա մոտավորապես նույն ձեւով է արվելու, ինչպես փոքր ջրերում ձկան որսը, երբ գետի հունը փոխում են եւ ցամաքած հունի ծանծաղ ջրերով կամաց առաջանում է ձկնորսների շղթան, իրար գլխի բերելով ձկների վտառներն ու մինչեւ վերջին ձուկը դուրս նետելով ափ: Որքան մտածում

եմ, խմբապետ, չեմ կարողանում գտնել փրկության ելքը: Ի՞նչ անել...

- Իմացիր, տղա՛ս, եթե այսօր ի կատար չածվի նրանց հարձակումը, եթե մինչեւ վաղը մենք խորհելու ժամանակ ունենանք, ես կարծում եմ կարող ենք գտնել փրկության ելքն ու ճանապարհը: Տղաներից մնացել են ընդամենը տասնյոթ հոգի: Դա փոքր ուժ չէ: Միայն հարկավոր է գեներով ու զինամթերքով նրանց անվնաս դուրս բերել քաղաքից, իսկ դրա համար ժամանակ է պետք: Պիտի որոշել նաեւ, թե ո՞ւր եւ որտե՞ղ են գոնե ժամանակավորապես բնավորվելու մեր տղաները այս Աստծո կրակ ցրտին: Հա՛, հիմա թռիր Եղիսաբեթենց տուն եւ հենց այսօր ձորով նրանց հասցրու Կորիս գյուղի տակ գտնվող քարայրները, այնտեղ տաք է ու չոր: Վաղը կամ մյուս օրը մենք կգանք ձեր հետեւից: Հա՛, չմոռանամ զգուշացնել. քո հարաբերությունների մեջ եղիր այնպես, որ չնեղացնես Սերգեյին: Գիտեմ, գիտեմ, ամեն ինչ գիտեմ: Ուզում եմ, որ դու էլ իմանաս, որ ժամանակները սիրային չեն եւ Եղիսաբեթն էլ գլխատեր ունի... Այսքանը...

Հրաչը դուրս մետվեց եւ մի շնչում հասավ Եղիսաբեթենց տուն: Ամուսիններն ընթրում էին: Նրանց մերկայացրեց իրավիճակը եւ հաղորդեց խմբապետի հրամանը: Նրանք լուռ լսեցին եւ առանց առարկելու սկսեցին հավաքել ամենաանհրաժեշտ իրերը, արագ ճանապարհ ընկնելու համար: Կարմիր կամուրջ հասնելուն պես նրանց ճանապարհը կտրեց հսկիչ կետի պահակը: Մղտեցան բանակցելու համար եւ անձայն, սուսուփուս, առանց կրակոցի, առանց ավելորդ աղմուկի խեղդեցին նրան:

- Ջուրը միանգամից գցել կարելի չէ: Քարը կապենք վզից, որ սուզվի... Չերեւան հետքերը,- խորհուրդ տվեց Սերգեյը: Ճանապարհի մնացած մասն անցան առանց միջադեպի եւ արեգակն արդեն զենիթին էր հասել, երբ հասան Կորթ գյուղի քարայրները: Ընտրեցին հարմարագույնը եւ մատչելին: Չոր քարայր էր, արելը մեջը: Սակայն ներս մտնելուն պես Եղիսաբեթը ծռռեց սիրունիկ մռուփկը:

- Չհավանեցի՞ր, Եղիսաբեթ,- հարցրեց Հրաչը:

- Աղբի եւ թրիքի հոտը խեղդում է,- գանգատվեց կինը:- Մնացածը ոչինչ, մնում է միայն ցուրտը...

- Իսկ դու օժանելիքի բուրմունք էիր ուզո՞ւմ մի քարայրից, ուր միշտ մակաղել է ոչխարի հոտը,- խոսեց Սերգեյը,- մի վախենա, նախ կմաքրենք, հետո օժանելիքի բուրմունքը կանի իր գործը, եւ ամենակարելուրը, մարդը շուտ է ընտելանում թրիքի հոտին: Իսկ ցրտից մենք պաշտպանվել կարող ենք միայն տաք վերմակներով: Կրակ անելով նախ կխեղդվենք ծխից, հետո կմատնենք մեր տեղը, եղա՞վ...

- Եղա՞վ,- հեշտ ու հնազանդ խոսեց կինը:

Իսկ Հրաչը, որ զբաղված էր քարայրի մաքրությամբ, խոսում էր ինքն իրեն, իր մեջ. «Թե միայն մենք լինեինք, մտահոգվելու կանիք չէր լինի: Կգրկեի քեզ, սիրունս, կսեղմեի սրտիս եւ ցուրտը կչքվեր անվերադարձ: Կգրկեի եւ դու քուն կմտնեիր գրկիս ու ես կհսկեի քո քունը: Բայց հիմա էլ ցուրտն ինձ չի վախեցնում, դու ինձ հետ ես եւ աշխարհը տաք է, ջերմացած քո շնչով: Մի

երկնչիր ցրտից...» եւ ապա բարձրաձայն.

- Լսիր, Սերգեյ, գուցե աղյալով ծածկենք մուտքը, այլապես կարող ենք ցրտահարվել... Մանավանդ Եղիսաբեթը...

Շուտով քարայրը դարձավ մի ռոմանտիկ, ռոմանտիկ անկյուն՝ լցված կյանքով, սիրով ու ջերմությամբ: Սկսեցին թարթել մոմերի լեզվակները: Ծանապարհից հոգնած Եղիսաբեթը գլուխը դրեց շորերով փափկեցրած քարին ու քնեց: Սերգեյը գնաց ցախ հավաքելու, զոնե սուրճ եփելու համար: Իսկ Յրաչը նստեց իր Աստվածուհու կողքը պահպանելու, հսկելու նրա քունը: Եղիսաբեթը քնել էր երեխայի նման ձեռքը կզակին, բերանը թեթևակի բաց եւ ժպտում էր՝ ասես ձեռքերով գուրգուրելով տիկնիկը: Յրաչը խղճաց նրան: «Ի՞նչ գործ ունեիր այս թրիքահոտ քարայրում, անգինս, ի՞նչ գործ ունեիր... Ախր, քեզ նման կնոջ տեղը այս աշխարհում պալատը պիտի լիներ, իսկ դու, կամավոր զինվորդ, ֆիդայիդ, կռվի ես ելել՝ քո հայրենիքի զոհասեղանին դնելով քո պատիվը: Քո գեղեցկությամբ կռելով ոչ միայն քո ինքնապաշտպանությունը, այլ թշնամուն հարվածելու այն զենքը, որի անունը պատիվ է ու նամուս: Այդ զենքը, անգինս, որպես պաշտպանական միջոց, չարդարացրեց իրեն եւ քանի՞ անգամ վնասվեց քո պատիվն ու արժանապատվությունը: Իսկ որպես հարձակողական միջոց, զենք գործեց անվրեպ, մեկ ու կես տասնյակ թուրք սպաների գլխահան անելով եւ ապա ուղարկելով գրողի ծոցը: Դու, հերոսուհիս, սերս, երջանկությունս...

Սերգեյը վերադարձավ մի խտիտ մասրենու չորացած ճյուղեր գրկին: Յանեց սրճեփը եւ կից քարայրում անցավ սուրճ եփելու գործին:

* * *

Քաղաքում այդ օրը ոչ մի արտակարգ բան տեղի չունեցավ: Ոչ մի ասկյար չերեւաց: Սակայն զինվորական ավանում ամբողջ զորամասի անձնակազմը ոտքի վրա էր: Բոլորին՝ ե՛ւ սպաներին, ե՛ւ ասկյարներին, հրահանգավորում էին արդեն նոսրացող վրիժառուններին ոչնչացնելու իրենց ծրագիրը: Խալիս բեյը հարցական նշան դարձած կախվել էր զորամասի վրա: Դժվարությամբ շարժվող նրա շրթունքները խեղդեցին ամբողջ գործողությունների ծրագիրը: Այդ բանը հասկացավ նաեւ ինքը, որովհետեւ շրջվեց դեպի շտաբի պետը.

- Բացատրի՛ր, մանրամասնի՛ր մեր վաղվա անելիքներն այնպես, որ ոչ միայն յուզբաշիններն ու օնբաշիններն իմանան իրենց վաղվա անելիքները, այլեւ ասկյարներից յուրաքանչյուրն իմանա իր տեղն ու դերը մարտի ընթացքում:

Շտաբի պետը սկսեց իր երգեցիկ ձայնով, ծոր տալով ոչ թե բացատրել, այլ երգել ծրագիրը, ոչ միայն շարժելով բինբաշու դժգոհությունը, այլեւ զայրույթը: Նա մոտեցավ շտաբի պետին.

- Քո երգը, բաբա՛մ, կռվի երգ չէ, նամազ ես անում, թող իմ տեղակալը խոսի...

Շտաբի պետը գնաց: Առաջ եկավ հրամանատարի տեղակալը: Նրա

լեզուն չխոտանվեց: Հստակ ու պարզ նա պարզաբանեց, որ ժամանակն է, որ պարտված, դատարկված քաղաքը վայր դնի զենքերը: Իսկ եթե չի ցանկանում այդ անել, հարկավոր է ոչ միայն ստիպել կատարելու բանակի պահանջը, այլև ոչնչացնել նրանց՝ վերջնականապես լուծելով հայկական հարցը սանջակում: Հրամայված է ոչ ոքի գերի չվերցնել, նույնիսկ նրանց, ովքեր կամավոր կհանձնվեն մեր ողորմածությանը: Հայերի նկատմամբ բացառվում է ամեն տեսակի մարդասիրական վերաբերմունք, միջամտություն: Մահ հայերին...

- Մա՛հ, մա՛հ,- փողփողաց զորամասի թունավոր կանաչագույն դրոշը, որոտաց զորամասի միահամուռ ձայնը: Հետո երկար, ժամից ավելի տեղակալը բացատրում էր, ճշգրտում, պարզաբանում գումարտակների, վաշտերի եւ մյուս ստորաբաժանումների տեղերը, հարծակման ուղղությունները, զնդացրային, հրետանային եւ հեծելազորային ստորաբաժանումների տեղաբաշխման եւ մարտի մեջ մտնելու ժամկետները եւ այլն: Խալիս բեյի դիմումին, թե՛ հարցեր չկա՞ն, գումարտակներից մեկի, հրամանատարը հարցրեց.

- Որքան հասկացա, մարտական գործողություններին պետք է մասնակցի ամբողջ զորամասը: Բայց մենք չգիտենք, թե՛ ի՞նչ ուժեր են կանգնած մեր դիմաց, ի՞նչ թվաքանակ ունեն եւ ի՞նչ զինվածություն... Գուցե հետախուզության պետը կլրացնի գնդի հրամանատարի զեկույցը:

- Քաղաքում, ըստ մեր տվյալների, գոյություն ունեն տասնյոթ ֆիդայի, տիֆով վեց ֆիդայի էլ պառկած են քաղաքամերձ ավազահանքում... Նրանք զինված են...- սպայի խոսքն ընդհատվեց զորամասի խմբական ծիծաղով, հռհռոցով: Ծիծաղում էին բոլորը, սպաներն ու շարքային ասկյարները: Ծիծաղում էին խրխնջալով: Պատկերացնել է հարկավոր հազարավոր մարդկանց խմբական ծիծաղը: Իվերջո, Խալիս բեյի կտրուկ շարժումները-մի կերպ դադարեցրին ծիծաղի սանձակոծ հորձանքը.

- Ինչո՞ւ եք խրխնջում, քուռակներ՛ր, բաց ոռ եք տեսե՞լ, ի՞նչ է... Դուք գիտե՞ք ով եւ ինչ է ֆիդային: Դուք գիտե՞ք, որ նրանց տրամադրության տակ կա երկու զնդացիր... Դուք դա գիտե՞ք...- ճչում էր սուլելով Խալիս բեյը:

- Իսկ դուք, բե՛յ, մեզ իզուր եք դնում երկարականջների տեղ: Ինչո՞ւ ես յուրաքանչյուր հայի դեմ հանում երկու-երեք հարյուր թուրք, ի՞նչ է, հայերը գերանդիավորներ են, մենք՝ գարու արտ: Ի՞նչ է, հայերը գայլեր են, մենք ոչխարներ... Իմ կարծիքով մեկ վաշտը լիուլի բավական է նրանց որսալու համար: Ամոթ է թուրք ասկյարին այդքան ստորացնել: Դու, բե՛յ, ավամայից քառակի անգամ ավելացնում ես մեր կորուստները: Այդքան շարժվող, կենդանի թիրախների առկայության դեպքում, իմացիր, ոչ մի զնդակ գետնին չի ընկնի: Բոլորը կհասնեն նպատակին՝ թուրք ասկյարին: Խնդրում եմ լավ մտածել...

- Ձա՛յնդ, յուզբաշի՛, այդ ինչպե՞ս ես համարձակվում այդքան կեղտաջուր լցնել քո հրամանատարի վրա: Մենք պատժիչ գործողություններ ենք կիրառում այն հաշվով, որ ոչ միայն ոչնչացնենք այդ տասնյոթ վրիժառուներին, այլև իրենց բներից հանենք նրանց, ովքեր այսօր-վաղը կարող են

համալրել եւ տասնյոթը դարձնել հարյուր տասնյոթ: Մենք կամենում ենք այս սանջակում հավիտյան թաղել ֆիդայական շարժումը: Ես, ի սեր ալլահի եւ թուրքական տերության, պարտավոր եմ, ո՛վ Աբդուլ, զբաղվել քո լինել-չլինելու հարցով: Նման տրամադրություններով դու հեռուն գնալ չես կարող, իմացի՛ր...

- Լսի՛ր, բինբաշի, ամեն ինչից երեւում է, որ դու ոչ մի կապ չունես զինվորական գործի հետ եւ պատահական մարդ ես, ով իմանա, ո՞ւմ ձեռքով հասած բինբաշու աստիճանին: Դու հազարավոր զինվորներով ցանկանում ես վերջ տալ տասնյոթ սոված ու հիվանդ հայի, որոնք քո ձեռքը չընկնելու համար պիտի կռվեն գազանի կատաղությամբ: Ես վախենում եմ, որ տասնյոթ հոգի վերացնելու համար հանկարծ չկորցնենք հարյուր յոթանասուն հոգի: Իսկ իմ լինել-չլինելու հարցը միայն քեզանից չի կախված: Շատ կուզենայի տեսնել, թե գունդը կարողանալո՞ւ է տասնյոթ մարդ ուղարկել գրողի ծոցը, գոնե նրանց քանակով մարդ կորցնելու գնով...

«Այ՛ քեզ սրիկա, փչացրեց, նավսեց իմ գործը: Ի՞նչ է սրա ուզածը: Թողնենք, որ մեր թուրքերին անպատիժ կերպով կոտորեն այդ երիցս անիծված հայերը: Ուզում է, որ մենք մուրացկանի նման ափերս պարզած մուրանք այդ Ձեյնաբ կոչված բոգի սերն ու մարմնական հրապուրանքները: Ի՞նչ է ցանկանում այս Աբդուլը, որ հողին ու քարերին է քսում իմ հեղինակությունը: Սրա համարձակության պատճառը չգիտեմ: Չլինի՞ թե փաշայի բարեկամներից է, հը՞»:

- Շարունակիր քո խոսքը,- Խալիս բեյը շրջվեց դեպի իր տեղակալը,- իսկ ես խոստանում եմ զբաղվել յուզբաշի Աբդուլին խելքի բերելու հարցով...

* * *

Քարայրի կիսախավարում թույլ առկայծում էր մոմի լեզվակը: Սերգեյն ու Գրաչն ամեն բան արին, որ քարանձավում գոնե մի երկու-երեք օր հնարավոր լիներ ապրել: Մուտքը փակելուց հետո, քարանձավը զգալիորեն տաքացավ: Ջավախքի վերադարձած խստաշունչ ձմռան առջեւ արգելք դրվեց: Թույլ քամին այլեւս չէր խուժում ներս: Իսկ դրսում համենատաքար տաք էր, որովհետեւ ձյուն էր մաղում: Թել-թել, փաթիլ-փաթիլ իջնում էր ձյունը՝ երեկոյան կապույտը դարձնելով ցանցավոր ու կախարդական: Վեհապանծ լռությամբ սպիտակում էին ձորալանջերը, կենդանակերպ ժայռերը, որոնց ոտքերի տակ սառցե կապանքների մեջ գալարվում է Թափարվանը:

- Այս ամենը հիշեցնում է թատերական դեկորացիա: Թվում է՝ նայում ես մի ներկայացում, որի գործող անձինք մենք ենք՝ երեքս,- խոսեց Սերգեյը: - Եթե եղանակը չցրտի, պետք է ենթադրել, որ գիշերն այնքան հոգսաշատ չի լինի: Գիշտն ասած, Ելիզավետան մրսկան է: Մենք երեւի կդիմանանք...

- Եթե ցուրտը գոռի, ձյունը կտրվի, ապա մեր գործը կդժվարանա: Գիշերը, մանավանդ լուսադեմին կարող է խիստ սառնամառիք անել: Եթե ձյունը շարունակվի, սառնամանիքը չի կարող խստանալ: Այդպիսին է ձմռան բնա-

վորությունը...

Եղիսաբեթը լռում էր: Ասելիք չուներ: Տղաներն այնպես էին արել, որ ցուրտը չհանդգնի մոտենալ նրան: Տաք եւ մանավանդ փափուկ էր նրա ներքնակը: Հրաչը բարձրացել էր գյուղ եւ հրաշքով հայտնաբերել խոտի մի փոքրիկ դեզ: Հետո Սերգեյի հետ նրանք բավականաչափ խոտ իջեցրին քարանձավ, որը փափկացրեց եւ տաքացրեց նրանց քարե մահճակալները: Քարանձավի խորքում հարդարեցին Եղիսաբեթի անկողինը, որը խստապահանջ տանտիկինը գնահատեց գերազանց եւ խոստովանեց, որ համարյա անկողնու փափկություն ունի: Հիմա նրանք իրար կողք պառկած կամացուկ զրուցում էին, պատմում յուրաքանչյուրն իր կյանքի գլխավոր դեպքերը: Հրաչն այստեղ իմացավ այնպիսի նորություններ Եղիսաբեթի եւ Սերգեյի փոխհարաբերություններից, որ համարյա կորցրեց ինքնիրեն: Հետո արիությունն ի բուռ՝ հավաքեց ինքնիրեն այնքան, որ ի զորու եղավ լսելու ողջ ճշմարտությունն իր սիրած էակի եւ նրա կյանքի ընկերոջ մասին: Հրաչը զգաց նաեւ, որ նրանք իրենց կյանքն ու սիրային փոխհարաբերությունները պատմում են իր համար, որ իր ականջին օղ անի, գնահատի նրանց մտերմությունը, նրանց կապի անքակտելիությունը:

- Ես ազատամիտ աղջիկ էի,- կամացուկ խոսում էր Եղիսաբեթը,- Ախալքալաքի, այս փոքրիկ գավառական քաղաքի պայմաններում ազատության, ազատ վարքագծի միակ գնահատականը անբարոյականությունն է, որը եթե կպավ կնոջը կամ աղջկան, այլևս փրկություն չկա: Կկաչի ու չի պոկվի: Ինձ ուղարկեցին սովորելու Ախալցխայի Օրիորդաց ուսումնարան եւ ապրում էի այնտեղ մորաքրոջս տանը: Մի անգամ անտառապահ Սենոն վիրավոր արջը սայլին զցած բերել էր քաղաք: Փոցխով գետի կամուրջին ես հանդիպեցի մարդկանցով շրջապատված սայլին: Ուրքս կախ զցեցի, որ տեսնեմ ի՞նչ է կատարվում: Իսկ կատարվեց սարսափելին: Տեսնելով, որ արջը չի շարժվում, աչքերը փակ, անշարժ պառկած էր սայլի մեջ, փորձված անտառապահը ճակատագրական սխալ թույլ տվեց: Եվ քանդեց գազանի կապանքները: Վիթխարի գազանն ասես դրան էր սպասում: Գոռաց ու թռավ սայլից: Ես սարսափով տեսա, որ նետվում է ինձ վրա: Վախից ուշաթափվել էի ու ընկել փողոցի սալահատակին: Մնացածն ինձ հետո պատմեցին: Տեսնելով, որ բանս բուրդ է, Սենոն անմիջապես խանչալը հանում եւ հարձակվում է արջի վրա: Կռիվը երկար չի տևում: Արջը ոլորում եւ ջարդում է Սենոնի ձախ ձեռքը, իսկ Սենոյին հաջողվում է ցավը կուլ տալով, խանչալը մինչեւ վերջ խրել գազազած գազանի երախը: Արջն, իհարկե, անմիջապես փչում է շունչը: Վիրավոր Սենոյին տեղափոխում են հիվանդանոց, իսկ ինձ՝ տուն: Լսելով փրկվելուս պատմությունը, ես դարձա անտառապահ Սենոյի երկրպագուն: Հաջորդ օրն իսկ տանից ուղարկած փողով գնեցի ծաղիկներ ու մրգեր եւ թռա հիվանդանոց: Նվիրեցի ծաղիկները նրան: Մրգերն իմ ձեռքով կտրտեցի եւ մատուցեցի նրան: Հետո տեսա, որ իմ սիրելին նաեւ գեղեցիկ տղամարդ է, շատ բարյացակամ իմ նկատմամբ եւ, ինչպես ասում են, մինչեւ ականջներս սիրահարվեցի այդ ամուսնացած տունուտեղի տեր մարդուն:

Ամբողջ օրերով դաս ու ուսում թողած, թափառում էի հիվանդանոցի շուրջն ու ծիկրակում պատուհանից նրան տեսնելու տենչանքով: Իմ այս անառարկայական ռոմանտիկ սերն ընկել էր նրա կնոջ ականջը, որն ինձ մի երկու անգամ համոզեց թողնել հիվանդանոցի պաշարումը, իսկ մի անգամ ստիպված, այո՛, այո՛, ստիպված ինձ այնպես ծեծեց, որ անկողին ընկա: Մորաքույրս տեսնելով, որ անկարող է զսպել ինձ իմ ձեռնարկումներում, բերեց ինձ Ախալքալաք, այստեղ՝ արժանացա ծնողներիս նախատինքին: Հայրս ինձ աննամուս անվանեց ու մազերս փաթաթելով թեւին մի լավ ջարդեց ինձ: Բան դուրս չեկավ: Մի քանի օր անց, մորս փոքրիկ գանձատուփից վերցնելով հարկավոր չափով դրամ եւ նրա ոսկեղենը, նամակ թողնելով կադարածս քայլի մասին, ես տանից փախա Խարկով: Ահա այստեղ ես դարձա օտար լեզուների ուսումնարանի ուսանողուհի: Եվ սկսեցի վաստակել, որ ապրել ու սովորել կարողանամ: Չունենալով ապրուստի միջոցներ ես գնացի փողոց: Ավելի ճիշտ, հասարակաց տուն՝ վաճառքի հանելով իմ գեղեցկությունն ու իմ մարմինը: Օ՛, թանկ էր իմ գինը, մի քանի անգամ թանկ մարմնավաճառ իմ ընկերուհիներից: Կարծում եմ, որ դուք տղամարդկային ասպետություն կունենաք ինձ չհարցնելու իմ հոգեվիճակից, որովհետեւ իմ արարքի ամենախիստ դատավորն իմ խիղճն էր, ես էի: Քանի անգամ որոշեցի եւ չկարողացա իրագործել ինքնասպանության իմ մտադրությունը, որովհետեւ թույլ էի, կամազուրկ եւ չթաքցնեմք, ցանկանում էի ապրել, սպասելով ավելի լավ ժամանակների: Չգիտեմ, ի՞նչ կլիներ իմ վերջը, եթե մի գեղեցիկ օր ինձ մոտ չմտներ իմ Սերգեյը...

- Թույլ տուր, Ելիզավետա, մեր կյանքի հաջորդ էջերին ես ծանոթացնեմ Ռադիկին:- Եղիսաբեթն ավելի հարմարորեն շուլալվեց շալի մեջ եւ հեկեկաց: Նա այդ պահին նման էր մրսած աղջնակի, դեմքը մոմի լույսի տակ մի տեսակ հարթվել էր: Միայն աչքերն էին առանձնանում լցված լիքը արտասուքով, որի մեջ խեղդվում էին մոմի առկայծումները: Տղաները զգաստացան: Սերգեյն անվարան հայտարարեց.- եթե մեր պատմությունը պետք է ուղեկցվի արտասուքով, սրտի նվաղումով եւ այլ էքսցեսներով, ավելի լավ է թողնենք ավելի հարմար ժամանակների եւ փորձենք քնել... - Ո՛չ, Սերգեյ, շարունակիր,- բողոքեց Եղիսաբեթը,- մենք Հրաչյայից թաքցնելու ոչինչ չունենք: Եվ հետո ո՞ւր կարող ենք փախչել ճշմարտությունից:

Իսկ Հրաչը լուռ էր: Նրա վիճակն այնպիսին էր, որ նույնքան դժվար էր ե՛ւ այո, ե՛ւ ոչ ասելը: Նա նման էր մի մարդու, որի պատվի նկատմամբ կատարվել էր անուղղելի հանցանք, հանցագործը նույն ինքն էր՝ տուժողը: Նա ամաչում էր Սերգեյից, իրենից, նա մեղադրել էր ցանկանում Եղիսաբեթին: Սակայն ցանկանում էր մեղանչել նրա առջեւ, ցանկանում էր անիծել այն աշխարհը, ուր կատարվում է սրբությունների կործանում եւ աշխարհն ու մարդիկ այդ սրբապղծությունը կարողանում են անտրտունջ տանել. «Եղիսաբեթն անառարկանոցի մեջ: Աստվածամայրը՝ վարձու պողոնիկ: Մեղա՛քեզ, Տեր: Եվ մարդիկ վայելել են նրան, վճարել են եւ անփութորեն հեռացել: Եվ ինչպե՞ս Աստված չի քանդել, չի մոխրացրել սրբապիղծներով: Լեցուն աշ-

խարհը: Չի շանթել աշխարհի տերերին: Գուցե եղիսաբեթն ինձ է փորձում կհավատա՞մ արդյոք իր անկմանը: Դա ինքնախարագանում է, ինքնասպանության բարոյական, անարյուն տեսակը, երբ ցանկանում են իրենցից հեռացնել, մերժել խելագար սիրահարներին...»:

- Չեմ հավատո՞ւմ...- հանկարծ երկարածիզ գայլի ոռնոցի նման հնչեցին Յրաչի շրթունքները: Եղիսաբեթն ու Սերգեյը ցնցվեցին, սակայն կիսախավարը պարզապես գոցել էր նրանց ե՛ւ այլայլվելը, ե՛ւ գունատվելը:

- Քեզ ի՞նչ պատահեց, Յրաչյա, սիրելի՛ս,- քնքշանքով դողաց եղիսաբեթի ձայնը:

- Չգիտեմ, եղիսաբեթ՞, չգիտեմ ինչ է կատարվում ինձ հետ: Երեւի այս զգացողությունն այն է, ինչ կոչվում է ճշմարտության աչքերին ուղիղ նայել: Ինչպես երեւում է դա դժվարագույն բանն է աշխարհում: Երեւում է իմ ուժերից վեր է ճշմարտության աչքերին ուղիղ նայելը: Այնուամենայնիվ, ես չեմ հավատում նման ճշմարտությանը: Ձեր ինչի՞ն է պետք իմ աչքին երեւալ աղտոտված, սարքված աղտոտվածության դիմակով: Չե՞ որ դուք խաղում եք ուրիշի՞ դժբախտ ու անվանարկված կնոջ դեր: Ասացե՛ք, եթե պետք է հեռանալ ձեր ճանապարհից, մի՞թե կարելի է գերադասել այս բարոյական ինքնասպանությունը, որն ինձ երիտասարդ անփորձիս համար ոչ այլ ինչ է, քան սպանություն: Դուք մի գնդակով ցանկանում եք խփել երկու նպատակի: Սուտ ճշմարտությամբ, սիրելի՛ս, դուք հասաք դրան...

Երկար ժամանակ լուռ էին բլուրը: Եղիսաբեթն ու Սերգեյը չգիտեին Յրաչի ընդվզումները, նրա վիճակը թեթևացնելու կերպը: Յրաչն, այնուամենայնիվ, սպասում էր իր ասածի ճշմարտությունը հաստատող, այսինքն՝ Եղիսաբեթի բարոյական անկումը ժխտող խոստովանություն, որն, ավա՛ղ հնարավոր չէր: Եվ չեղավ:

- Ավելի լավ է դաժան ճշմարտությունը գեղեցիկ ստից: Իվերջո, մեծ դժվարություն չի ներկայացնում քեզ խաբելը, ասելով, որ նման բան տեղի չի ունեցել, որ մենք ցանկալ՝ մ էինք այսինչ բանի պատճառով, ասենք ստուգել քո նվիրվածության չափն իմ հանդեպ: Բայց նման մոտեցումը, ստելն առավել անբարոյական արարք կլիներ իմ կողմից, քան այն ճշմարտությունը, որ այժմ ցավեցնում է քո հոգին, խռովում քո ներաշխարհը: Համբերի՛ր, սիրելի՛ս, թող ինձ ցեխից ու կեղտից հանելու ճշմարտությունը պատմի Սերգեյը, հետո կփորձենք առանց էնոցիաների քննարկել իմ կեղտոտվելու եւ մաքրվելու մեր մոտեցումները...

Սերգեյը երկար խոսեց, թե ինչպես է հասարակաց տանը հանդիպել Եղիսաբեթին եւ առաջին հայացքից սիրահարվել նրան: Եվ հանդիպումները շարունակվել են ամեն օր: Բժշկական ինստիտուտի վերջին կուրսի ուսանողը, բուլղարացի հարուստ ծնողների որդին, ամուսնանալու համար բավական մեծ գումար է պահանջել, որն անառարկելի կերպով կատարվել է ծնողների կողմից, մանավանդ երբ նրանք իմացել են, որ հարսնացուն հայուհի է: Յայերի հեղինակությունը Բուլղարիայում միշտ էլ բարձր է եղել, իսկ տասական թվականներին զորավար Անդրամիկի քաջագործություններն էլ ավելի

են բարձրացրել հայերի վարկը Բուլղարիայում:

- Իսկ մինչ այդ ես առաջարկություն էի արել Ելիզավետային,- շարունակեց իր պատմությունը Սերգեյը,- որ թերահավատորեն էր ընդունել իմ խնդրանքը: Նա չէր հավատում, որ խելոք մարդը կարող է պոռնկատմից ընտրել իր հարսնացուն: Իսկ իմ երդումն ընդունում էր թերահավատությամբ: Բայց ես փողով գնեցի Եղիսաբեթին պոռնկատան տիրոջից, իսկ երախտագետ Լիզան ինձ՝ իր ազատարարը համարելով ընդունեց իմ կինը դառնալու առաջարկը:

- Ես դեռ Սենյոյի հետ էի իմ երազներով, իմ անիրագործելի ու հիմար ցանկություններով,- ընդմիջեց Եղիսաբեթը,- ավելի ճիշտ, չէի սիրում իմ փրկարարին, բայց հանձնվեցի նրան հոժարությամբ, հավատալով, որ համատեղ կյանքը, նաեւ կամակոր ու քմահաճ սերը, որ երբեմն գալիս է մեծագույն տվայտանքներով ու տանջանքներով, դժվարությամբ, բայց գալիս է: Ահա այդ օրերին Ռուսաստանում գահընկեց արին ցարին եւ սկսվեց քաղաքացիական մի վայրենի, եղբայրասպան պատերազմ, որից փախչելն իսկ հերոսական արարք էր: Ավերածություն, արյուն ու ավեր էր Ռուսաստանում, եւ փակ էին ճանապարհները: Յեռագիրը հայրենիքից չուշացավ: «Մայրդ ծանր վիճակում է: Շտապիր»: Նույն օրերին ստացա նաեւ մորս նամակը, որն ինձ հասել էր համարյա մեկ ամսում: Նրանում այլ մտահոգություն կար. «Մեր հարեւան թուրքերն անհանգիստ են: Ասում են՝ շուտով թուրքական կանոնավոր բանակը ռազմական գործողություններ է սկսելու Անդրկովկասում: Ժողովուրդը խուճապի մեջ է: Յանկարծ չսկսվեն ջարդեր մեզանում, ավելի շուտ Արեւելյան Չայաստանը հանկարծ չենթարկվի Արեւմտյան Չայաստանի աղետին: Այնպես որ, աղջիկս, արի, խաղաղ ժամանակ միասին չէինք, գոնե ծանր օրերին կարողանանք տանել ճակատագրի ծանր հարվածները: Մանավանդ որ հայրդ էլ չկա»: Ուրեմն, մայրս հիվանդացել էր նամակը գրելուց հետո: Դժվարությամբ, մեծ դժվարությամբ, երեք շաբաթվա ընթացքում մի կերպ հասանք Ջավախք: Յասս մորս վերջին շնչին. «Քեզ էի սպասում, աղջիկս, որ մեռնեմ...», - մի կերպ արտաբերեց: Յաջորդ առավոտյան մեռավ: Իսկ թաղման հաջորդ օրը թուրքական բանակն արդեն ասպատակում էր իմ ծննդավայրը: Իմ բարեկամ Սեւ Արսենը, որ օգնեց եւ կազմակերպեց մորս թաղումը, ինձ քաշեց իր հայրենասիրական ձեռնարկության մեջ, որը ես ընդունեցի մեծագույն իմացությամբ եւ հայրենիքի նկատմամբ պարտքի կատարման ցանկությամբ... Իմ մասին հայտնեց դիմադրության կենտրոնին: Եվ եթե դուք տղամարդիկդ, ցանկանում եք ճիշտն իմանալ իմ արարքի բարոյական արժեքը, կարող եմ ասել, որ իմ արարքներում հայրենասիրությանը զուգընթաց ես ծրագրել էի իմ բարոյական մաքրության խնդիրը: Ես յուրաքանչյուր թուրքի մահվան մեջ տեսել եմ իմ բարոյական վերածնունդը: Այսօր մեր թոնրատան նկուղում թաղված են տասներեք թուրք սպաներ, մեկն էլ՝ տան կտուրին: Չգիտեմ, դուք ինչպես եք գնահատում բարոյամբ մաքրագործվելու իմ ջանքերը, դաժան ջանքերը, բայց ես մի տեսակ թեթևացել եմ, ասես մաքրվել անքավելի մեղքերից եւ թվում է իրավունք ունեն ուղիղ նայելու ձեր աչ-

քերին, ինձ համար թանկ մարդկանց աչքերին:

Եղիսաբեթը լռեց: Թաշկինակը սեղմեց աչքերին: Անկարող խոսքերով արտահայտելու իրենց շնորհակալությունը, տղամարդիկ մոտեցան եւ համբուրեցին նրա ձեռքը: Դրսում գիշեր էր: Մոտակայքում ինչ-որ տեղ ոռնում էին գայլերը: Տղաները նայեցին ծորի սպիտակ մաքրությանը եւ ոչինչ չտեսան: Ձյունը կտրվել էր եւ սաստկացել էին ցուրտն ու սառնամանիքը: Որպեսզի գայլերի կողմից հարձակման չենթարկվեն, Յրաչը հրացանը լցրեց փամփուռներով, իսկ Սերգեյը՝ նագանը: Եղիսաբեթն այնպես էր փաթաթվել, կուլովել շալերի ու աղյալների մեջ, որ միայն քիթն ու աչքերն էին երևում մոմի աղոտ լույսի տակ: Տղամարդիկ նստած էին մեջք-մեջքի՝ փաթաթված նույնպես աղյալներով: Իսկ գայլերի ոռնոցը մոտենում էր ու մոտենում: Յրաչը քարայրի մուտքը ծածկող քաթանի արանքից նայեց դուրս եւ աւմիջապես նորից ծածկեց: Նա գիտեր, որ գազանները սպասում են իրենց շարժմանը, որպեսզի հարձակվեն: Դա գայլերի սովորությունն է: Իսկ նրանք գտնվում էին մոտ հիսուն քայլ հեռավորության վրա: Երեքն էին: Նստած էին ճանապարհին: Պահակում էին նրանց կացարանը, եւ ամենայն հավանականությամբ պատրաստվում գրոհի: Յարկավոր էր կանխել նրանց: Գայլերի նկատմամբ անփութությունն ու ինքնավստահությունը կարող է ավարտվել ողբերգությամբ: Եվ նրանք հետ տանելով ծածկոցը՝ համազարկեցին: Արագ-արագ եւ դիպուկ: Գայլերը հանկարծակիությունից ասես օդ թռան: Գնդակները հասան իրենց նպատակին: Նրանք արձակվում էին մոտ տարածությունից: Սկսվեց գայլերի փախեփախը, որ անօգուտ էր, որովհետեւ վիրավոր էին եւ արագ շարժվելու անկարող: Եվ չնայած դրան, փորձում էին կրծել ու հոշոտել միմյանց, որովհետեւ արյան հոտն ավելի էր գազանացրել նրանց: Այժմ կարելի էր հանգիստ գնդակահարել գայլերին, որովհետեւ գիշերը ցերեկվա նման լուսավոր էր եւ գայլերը՝ վիրավոր: Շատ չանցած գայլերի շրջափակումն արդեն վերջացել էր: Եվ գիշերը կիսվել: Նրանք քնեցին մինչեւ կեսօր: Արթնացան եւ բացին վարագույրը: Արեւը ծյունի մեջ ընկել եւ ծյունը հուլունքների էր վերածում: Շքեղ էր: Ձյունի սպիտակ մաքրություն եւ արեւի ոսկու հրավառություն: Վիպականորեն հանդարտ ու վեհ էր ձորն իր խորությամբ եւ ձորալանջերն իրենց ժայռերի ահռելիությամբ: Իսկ գետի ձայնն իջել էր, ավելի խլացել: Սառույցներն ափերից արշավել էին գետի վրա: Գետը պպշտպանվել էր: Նրա միջին հոսանքին չէր հասել սառույցը, որ ցանկացել էր սառցե կամուրջով կապել արդեն իրար: Մի խոսքով, տեսարանն աչք էր շոյում, թեւ ցուրտը սառեցնում էր մարդկանց: Յետո զարմանքով տեսան, որ գիշերային իրենց որսը տեղում չէր: Գայլերը չկային: Ճանապարհին փռված էին նրանց ոսկորներն ու պատառ-պատառ մորթիները: Ենթադրեցին, որ գայլերի, գուցեւ աղվեսների գիշերային արշավանքներ են եղել, եւ այնքան խորն է եղել իրենց քունը, որ ոչինչ չեն լսել, իսկ ավելի հավանականն այն է, որ գիշերային այցելուները կենդանական բնազդի անսխալականությամբ չեն մատնել իրենց ներկայությունը վտանգավոր հարեւանների: Առավոտյան տաք սուրճը արթնացրեց նրանց: Իսկ Յրաչը մինչեւ գետուն մերկացած,

ձյունով շփում էր իր մարմինը, վաստակելով եղիսաբեթի հիացմունքը եւ միաժամանակ մրսեցնում, դողացնում էր նրան: Այսօր նրանք սպասում էին լուրերի: Սպասում էին կապավորների: Գիտեին, որ քաղաքում հասունացել էր բախումը մի բուռ վրիժառուների եւ թուրքական զորամասի միջեւ: Գիտեին, որ տղաները որոշել էին ընդունել թուրքերի կռվի հրավերը, պիտի մեռնեին՝ մեռցնելով թշնամուն: Գիտեին, որ նահանջը բոլորի մահն էր: Ո՞ւր կարող էին նահանջել ձմռան ցրտին ու բքին: Ինչպե՞ս պիտի ազատվեին թուրքական հեծելավաշտի հետապնդումից, նրանց յաթաղաններից: Ճարահատյալ պետք է ընդունեին պարտադրվող մարտը: Պետք է պատվով ընդունեին իրենց անխուսափելի մահը, որ իրենց թվից մի քանի անգամ ավելի կորուստ պատճառեն ատելի թշնամուն: Եվ երեքը սպասում էին հրաշքի. գուցե մեկնումեկը կազատվի, կենդանի կմնա եւ կբերի խմբի ոչնչացման գույժը կամ նրանց հերոսական անկման լուրը: Չէին խոսում իրար հետ: Վախենում էին մտքեր փոխանակել խմբի լինելության մասին: Վախենում էին ենթադրություններից: Սպասողական վիճակը, լարվածությունը կեղեքում էին մարդկանց սրտերը:

* * *

Մարտը, ավելի ճիշտ, թուրքական բանակի պատժիչ գործողությունները սկսվեցին ոչ միանգամից: Խալիս բեյի ծրագիրը՝ մեկընդմիջտ վերջ տալ վրիժառուներին, միանգամից չսկսվեց: Դիմադրում էր գնդի սպայությունը, որովհետեւ մեկուկես տասնյակ վրիժառուների որսը մի քանի հազար հոգով սկսելն աննախադեպ բան էր: Գունդը չէր կարող ծավալել մարտական գործողություններ առանց մեծ զոհերի: Քաղաքը շրջապատելու եւ միանգամից քաղաք մտնելու, ներխուժելու փորձը կարող էր տեղիք տալ յուրայինների կորուստներին՝ յուրայինների գնդակներից: Ասկյարների բազմությունը պիտի որ խանգարեր այդ գործողություններին: Խալիս բեյը պաշտոնաձև արեց գումարտակի հրամանատար Աբդուլին, եւ իր հրամանը քննադատող սպաները սկսվեցին: Սեւ Արսենն իր մարդկանց դասավորեց քաղաքի հյուսիս-արեւելյան, հին գերեզմանոցի բարձրադիր մասում: Ճգնավորի քարափին, մատչելի միայն հայերին, որտեղից էլ հույս ունեին նահանջելու խմբի տղաները: Ստրատեգիական տեսակետից առավել բարենպաստ տեղ անկարելի էր պատկերացնել: Թուրքերը, հասկանալի է, քաղաք ներխուժելու գործողություններն այստեղից՝ ձորից սկսել չէին կարող: Քարագնացներ չունեին: Եթե ունենային էլ քարափից կարելի էր առանց դժվարության ներքեւ նետել հանդգնողներին: Հայերը, զանց առնելով նույնիսկ Ծուրտն ու սառնամանիքը, խրամատավորվեցին: Թուրքերը նրանց պետք է որոնեին քաղաքում, իսկ նրանք թողել էին քաղաքը եւ ամրացել քաղաքի անառիկ քարափին: Նրանց մոտենալու համար թուրքերը պետք է հաղթահարեին մոտ երկու հարյուր հիսուն մետր հարթ տարածություն, որ գերեզմանի բարձրադիր մասից երեւում էր, ինչպես ափի մեջ: Թուրքական զորաշղթաները մինչեւ հաս-

նեին հայոց խրամատներին, երկու գնդացիորդ եւ մեկուկես տասնյակ հրաձիգներն այնպիսի անբուժելի կորուստներ կպատճառեին նրանց, որ խալիս բեյը մտքովն իսկ կորուստների մեծությամբ չէր հավատա:

Առավոտյան սկսվեց քաղաքի շրջապատումը: Տղաների աչքերի առջեւ ասկյարների զորաշղթան, թիկունքը վրիժառուններին, կուզեկուզ մտավ քաղաք: Կրակում էին յուրաքանչյուր տան վրա, վերստին քանդում քանդվածները, ավերակում ավերակները: Մարտ էր սկսվել ոչ ոքի դեմ: Կրակելով չորս կողմից շարժվում էին կենտրոն: Հետո տղաների զարմանքից լայնացած աչքերի առջեւ, թիկունք էին տեղափոխում վիրավոր ասկյարների: Անհասկանալի եղելություն:

- Ովքե՞ր են կոտորում դրանց,- հարցնում էին միմյանց:

- Ընկնում են հանդիպակաց կրակից, յուրայիններից, թող կոտորվեն,- Սեւ Արսենը բացահայտեց եղելության ոչ այն է ողբերգական, ոչ այն է կոմիկական էությունը,- իմիջիայլոց, այս կորուստները սպասելի էին: Այդքան կոպող գործ փոքր քաղաքի նեղլիկ փողոցներում, երբ կրակը թափվում է չորս կողմից, չի կարող ընթանալ առանց կորուստների...

Հետո տեղ-տեղ բռնկվում էին խմբական կրակոցներ, տկտկում էին գնդացրային կրակահերթեր: Մի խոսքով, քաղաքում ընթանում էին մարտեր: Իվերջո, երկարատեւ կրակոցները հանդարտվեցին: Հետո կրակոցներ լսվեցին ավազահանքից:

- Այդ մերոնց են գնդակահարում,- խոսեցին ցավով տղաները:

- Բայց նրանք ավազահանքում են, այնտեղից հազիվ թե այսքան հստակ լսվեն կրակոցները...

- Ուրեմն, ցուցադրական գնդակահարություն են կազմակերպել,- խոսեց Սեւ Արսենը,- որ արդարացնեն իրենց հիմարությունը, որ կասկածողները տեսնեն վեցի գնդակահարությունը եւ ասեն, որ իզուր չէին գնդի պատժիչ գործողությունները: Հիմա, տղաներ, եղեք զգոն, ուր որ է նրանք կերելան նաեւ այստեղ... ճակատամարտը նոր է սկսվելու... Թող ամեն մեկը զբաղեցնի իր տեղը...

... Թուրքերը դուրս եկան քաղաքից զորաշղթա կազմած: Գալիս էին արմունկները կիպ իրար սեղմած: Գալիս էին ասես հարբած արյան հոտից: Գալիս էին վերացած, ապավինած իրենց ալլահին: Եվ նրա անունն իրենց շուրթերին: Գալիս էին ջեննեթ ընկնելու ամուր հույսով եւ խուլ մռլտալով: Հայերը սպասում էին նրանց: Դեմքերին կենտրոնացում կար եւ նահատակվելու պատրաստ աստվածային մի էություն, որն անուն չունի եւ բացահայտվում է միայն ծանր կացության, մահվան հետ հանդիպելիս: Մահվան հետ գոտենարտելիս: Մահվանը հաղթելիս կամ նրան ենթարկվելիս: Սեւ Արսենը տեսավ, որ սպաներն ընկան շարքերի առջեւ, ուր որ է կսկսվի գրոհը մի բուռ քաջերի վրա.

- Գնդացիներ, պատրաստ...

- Պատրաստ ենք, խմբապետ...

- Հրաձիգներ...

- Պատրաստ ենք, խմբապետ...

Թուրքերը մոտենում էին: Արդեն երեւում էին ասկյարների դեմքերը: Լարվածությունն ավելանում ու ավելանում էր: Լսվում էին հայիոյանքի եւ աղոթքի խառն ձայներ, աղմուկ, ժխոր: Յետո լսվեցին կտրուկ հրամաններ: Ջորաշղթան քանդվեց եւ ցրվեց ու վազբով նետվեց առաջ: Գալիս էին հրացանները հորիզոնադիր բռնած, գալիս էին ջարդելու, ոչնչացնելու տենդով բռնված: Արդեն շոշափում էին գրոհի բնագիծը:

- Խմբապետ, հրամայիր կրակ բանանք...

- Մենք այնքան հարուստ չենք, որ փամփուշտ կորցնենք, կրակեցեք նշանառությամբ: Դե, ձեզ տեսնեմ, կրակ...

Եվ մահը լեզուն հանած դուրս թռավ գնդացիներից եւ հրացաններից եւ սկսեց իր ամենի գործը: Մահը շրջում էր թուրքական զորքի վրա, չանթելով առավել քաջերին եւ առավել վախկոտներին: Մահը խրախճանում էր: Առաջին հանդգնողները տափակեցին գրոհի բնագծին չհասած: Եվ այլեւս չբարձրացան: Մնացածներն իրենց հանձնեցին հողի ապահովությանը՝ մտնելով գերեզմանափոսերը, թաքնվելով գերեզմանաթմբերի հետեւում: Սպաների հորդորները՝ բարձրացնելու զորաշղթաները՝ ապարոյուն էին: Հայիոյանքներով համեմված հրամանները եւս չէին օգնում: Քաղաքի վերջին տներից մեկում տեղակայված էր գնդի հրամանատարի դիտակետը, որտեղից կապավորները կրակի առաջին գիծ էին հասցնում Խալիս բեյի հրամանները: Բինբաշին խելագարվել էր զայրույթից եւ արյունելու աստիճան սեղմում էր շրթունքները, որ չհայիոյի ասկյարներին եւ սպաներին, նրանց հավատն ու ալլահին:

- Էշեր, իշու ձագեր, առաջին համազարկից հետո բոլորը կպել են հողին ու սատկել: Ինչո՞ւ չեն բարձրանում, ինչո՞ւ...

- Չեն կարող, բինբաշի, թուրքերը կռվում են ոչ մեռնելու համար: Իսկ հայերը իրենք իրենց դատապարտել են մահվան: Նրանք խաղաթղթի վրա են դրել իրենց գոյությունը: Տես, թե որտե՞ղ են նրանց դիրքերը՝ հետեւում անհատակ անդունդ, առջեւում՝ թուրքական գունդը: Գիտակցաբար, գիտակցաբար կտրել են իրենց նահանջի ճամփան, որ կռվեն մինչեւ վերջին մարդը, մինչեւ վերջին փամփուշտը...

- Բայց մեր տավջանները (նապաստակները) մի համազարկից հետո հոբոլորը չմեռա՞ն, արխեին պառկել են հայերի մեռելների հետ եւ սաղանալու ոչ մի փորձ չեն անում: Խայտառակություն, յուզբաշի՛, խայտառակություն...

- Հրամայիր, բինբաշի, գործի դնեն թնդանոթները: Առանց հրետանու գործն առաջ չի գնա...

- Լսիր, յուզբաշի, ես դեռ խելքս հացի հետ չեմ կերել, որ իմ ձեռքով ոչնչացնեմ իմ գունդը: Մեր թնդանոթածիգները, ախպերս, էշեր են, աղոթած էշեր, մինչեւ ճշտեն նշանակետերը, որք գունդը կդարձնեն մսի գունդ ու շաղախ: Այ ուրիշ էին հայ հրետանավորները, որոնց գլուխը մենք կերանք: Նրանց գլխում խելք կար, ոչ թե դարման, մերոնց գլխի նման...- «Այս առավոտից հայիոյում է թուրքերին: Չլինի ինքը թուրք չէ: Քո խելքը սիրեմ, կտած շանորդի, ա՛յ ըրզողլան (հերմոֆրոդիտ), դու մարտի ծրագիրը կազմելուն նույնիսկ ինձ, որ շտաբի պետն եմ, մոտ չթողիր: Քո մարտական ծրագիրը փուչ դուրս եկավ քո տղամարդկության

պես, քո մուտառածը դե կեր...»:

- Լսիր, օմբաշի,- ավագ կապավորին իր մոտ կանչեց Խալիս բեյը,- իմ հրամանն արագ հաղորդեք ստորաբաժանումների հրամանատարներին. հրամայում եմ շրթաները բարձրացնել զենքի ուժով, այսինքն՝ գլուխ պահողին գնդակահարել տեղնուտեղը...

Կապավորը գնաց: Մարտադաշտում կռվի աղմուկ գոյություն չուներ: Թուրքերը չէին հարձակվում, գլուխ բարձրացնելը համազոր էր մահվան: Հայերը չէին կրակում գետնին սեղմված թուրքերի վրա, խնայում էին փամփուշտները: Մեկ-մեկ հայ նշանառուները կրակում էին, եթե համոզված էին, որ չեն վրիպի: Դրությունն այնպիսին էր, որ կարծես թուրքերն ի վերուստ դատապարտված են մահվան, իսկ հայերը՝ երկնքի հրամանն ի կատար ածողներն են: Կապավորները հրամանը հասցրին ստորաբաժանումներին: Եվ սկսվեց սողոմ-գոմորը: Ասկյարներն ընկան երկու կրակի մեջ: Բարձրացողներին հասնում էին հայերի, իսկ պառկածներին՝ իրենց սպաների գնդակները: Ասկյարները երեւի բնազդով որոշեցին իրենց անելիքը, այսինքն՝ մահը մահ է, բայց ավելի պատվավոր է գնդակը ստանալ սրտին, քան թե թիկունքին: Ավելի լավ է առաջ գնալ, քան թե գնդակահարվել: Շրթաները բարձրացան: Այս անգամ աղմուկ-աղաղակով: Գոռալով, հայհոյելով սիրտ էին տալիս իրենք իրենց եւ վազում մահվանն ընդառաջ:

- Թե՛գ, թե՛գ, արա՛գ, արա՛գ,- հետեւում էին հրամանները:

Պողոսի նշանացույցի մեջ էր ընկել թուրք սպան, որն աջ ու ձախ ատրճանակը թափահարելով, տեղահան էր անում պառկած զինվորներին: Ջանում էր աչքի ընկել: Հերոսություն էր բեմադրում: Չէ՛, չէ՛, ի՞նչ բեմադրել, թուրք սպան քաջ մարդ էր, որովհետեւ գնդակների սուլոցն ականջների մեջ դեսուդեն ընկած՝ ցանկանում էր կազմակերպել իր վաշտի հարձակումը: «Չէ՛, ես քեզ հիմա կուղարկեմ այն աշխարհը, ուր ոչ վախ կա, ոչ էլ քաջություն ցուցադրելու հնարավորություն: Ես այդ իրավունքն ունեմ, որովհետեւ մտել ես իմ տունը...»: Սեղմեց ձգանը: Սպան դեսուդեն մայեց, հետո փաթաթվեց իր իսկ զինվորին եւ միասին գրկված՝ ընկան:

- Դո՛ւ էիր, Պողո՛ս,- հարցրեց Թովալ Արսենը:

- Իսկ զինվորը քո փա՞յն էր...

Տղաները կռվում էին սառնասրտորեն, հաշվենկատ: Թուրքերն աշխատում էին նախ եւ առաջ շարքից հանել գնդացրորդներին: Կորուստներն ահռելի էին: Գնդացրորդները՝ առաջին համարները՝ Ասպետ Սկոն ու Հերոս Սկոն, փորձառու էին, նրանց ոչ մի կերպ չէր հաջողվում «բռնել» թուրք նշանառուները: Հայերը գիտեին, որ ծանր կորուստներ են պատճառում թուրքերին եւ զարմանում էին թուրք հրամանատարների անհմաստ համառության վրա, որ չեն որոնում մարտավարության այլ հնարքներ ու միջոցներ: Թուրքերը մղվում էին ճգնավորի բարձունքն ու թափվում էին բարձունքի փեշերին չիասած: Թուրք նշանառուին, որը դիրքավորվել էր աջ կողմում՝ երկու գերեզմանաքարի արանքում, ուշ նկատեցին, երբ նրա գնդակին զոհ դարձան Դիուլչի Մինասն ու հացթուխ Աշոն: Սեւ Արսենի սիրտը մոռոաց ցավից: Սկսեց ուշադրությամբ որոնել նշանառուին: Պե՛տք էր հայտնաբերել նրան, այլապես անխուսափելի կլինեին նոր զոհերը:

Խրամատից սվինի ծայրին բարձրացրեց իր ականջակալներով փափախը, գնդակը չուշացավ: Ծակել էր աջ ականջակալը: «Լավ աչք ունի, շանորդին...»: Տեղը փոխեց: «Թո՛ղ մտածի, որ երրորդ կրակոցն էլ զուր չանցավ, մինչեւ նրան ուղարկեմ իր պապերի մոտ»: Նայեց եւ աչքը դիպավ երկու իրար մոտ կանգնած գերեզմանաքարերին: Հայացքը կպավ ու մնաց: «Այստեղ պիտի լինի շունը...»: Հետո տեսավ հրացանի փողը, որ մի վայրկյան միայն երեւաց ու չքացավ: Անգգուշուքունից էր: Գնահատեց իրադրությունը: Նայում էր սեւեռուն, անթաթ: Հեշտ չէր ձյան սպիտակությանն անթաթ նայելը: Հետո քարերի արանքից զգուշորեն նայեց ասկյարը: «Ահա՛, ահա՛: Հիմա ես կառնեմ մերոնց վրեժը»: Կրակեց: Թուրքը բարձրացավ ու կանգնեց: Նրա ձեռքին հրացան չկար: Երկու ձեռքով բռնել էր իր կոկորդն ու կարծես խեղդում էր ինքն իրեն: Հետո մեկն ասես բարձրացրեց ու նետեց տափակ գերեզմանաքարին: Նա մեջքով ընկավ քարի վրա եւ մի քանի վայրկյան ասես չարչարվում էր գերեզմանաքարին ավելի հարմար տեղավորվելու վրա: Հարմարավետ կերպով պառկեց քարին եւ հանգստացավ ու անշարժացավ: Սպաներից մեկը բեղավոր երկարահասակ մի սպա, խլեց իր կողմից վազող ասկյարի հրացանն ու մի քանի ոստյուն կատարելով՝ հայտնվեց Սեւ Արսենի դիտակետից մի քանի քայլի վրա: Աչքերից շանթ ու կրակ էր ցայտում, նկատելով շարժվող մարդկանց, գոռալով խոյացավ դիտակետի վրա: Սեւ Արսենը քիչ բարձրացավ, նայեց թշնամուն, հայացքները ասես դանակներ խրվեցին, մեխվեցին իրար մեջ: Խմբապետը կրակեց առաջինը՝ ուղիղ սպայի սրտին: Սա հանկարծ արգելակվեց, բերանը լայն բացեց, աղմուկով շնչեց, կլանեց օդն ու խռխռոցով օդի հետ արտաշնչեց արյուն: Հետո կողքին ընկած երկար չարչարվում էր, մինչեւ հանգավ ու հանգստացավ: Խմբապետն անընդհատ ավելացնում էր կրակային ճնշումը, որպեսզի թուրքերը չնետվեն գրոհի, որովհետեւ եթե հասնեին խրամատին եւ սկսվեր մենամարտը, խուճբն անմիջապես կոչնչանար բազմամարդ հակառակորդի կողմից: Խմբում հազիվ մնացած լինեին տաս հոգի: Արշավող թշնամուն նորից սեղմեցին գետնին: Խուճբը վերջին պատրաստություններն էր տեսնում, մարտադաշտը ուր որ է մնալու էր թուրքերին: Գնդացորդը Հերոս Մկոն խփվեց ճակատից եւ գլուխը գնդացրի բռնակին անծայն մեռավ: Փամփուշտածապավենները տվին Ասպետ Մկոյի գնդացրային հաշվարկին:

- Դեհ, տղանե՛ր, վերջացնենք,- հնչեց Սեւ Արսենի ձայնը: Եվ հնչեց «Մեր Հայրենիքը»: Խմբի ողբերգական եւ հերոսական վերջերգը:

Ամենայն տեղ մահը մի է, Մարդ մի անգամ պիտ մեռնի, Բայց երանի ով յուր ազգի Ազատության կզոհվի...

Գիտեին, որ պիտի ընկնեն, մահը հաղթականորեն մտել էր խրամատները: Բայց մահի երեսին նայող չկար: Երգում ու կոչվում էին ոգեշնչված, վերացած: Երգում էին: Երգը դարձել էր զինվոր, ֆիդայի: Հետո հանկարծ թուրքերի աչքերի առջեւ փողփողաց, ծածանվեց եռագույն մետաքսե դրոշը: Չմեռային թեթեւ քամին բացեց դրոշը խրամատների, երկրի, աշխարհի վրա, որի անտարբեր, քարացած հայացքի տակ հոգեվարում էր մի հին ու դասական ժողովուրդ, չմեռնելու գերագույն ճիգով: Թուրքերը մարտի ընդհանուր աղմուկի մեջ լսում էին երգի անպարտելի հնչյունները, տեսնում էռագույնի ծածանվելը: Եվ նրանց սարսափած

աչքերի առջեւ եռագույնը մեծանում էր, վեհանում, գրավելով մարտադաշտն ամբողջությամբ, եռագույն շառափով ներկելով հորիզոնը: Հետո դրոշը դուրս լողաց խրամատներից եւ քայլեց դեպի անդունդի պռունկը, հետո կախվեց անդունդի վրա, հետո նետվեց ու լռք սվեց անդունդից... Ու չքացավ...

- Նրանք նահանջում են...- գոռացին գրոհի բնագիծ հասած թուրքերն ու բարձրացան գրոհի: Եվ նորից լցվեցին խրամատները հույսի լուսավոր երգով, երգեցին զենքերը՝ մահվան ահեղ երգը: Նորից տապալվեց թուրքերի զորաշղթան: Հիմնի հնչյուններին խառնվեցին թուրքերի վայնասունը, ճիչերն ու անեծքները: Գրոհը տապալվեց.

- Բինբաշի, հայերին փախցրինք...

- Ահրիմանն է հիմա հայերին ընդունողը... Բարձրացրեք զորքը, նորից գրոհեցեք...

Թուրքերը նորից բարձրացան եւ նորից ընկրկեցին, փախան: Արդեն չգիտեին, կորցրել էին հայերին, որոնք՝ այստեղ կանգնեցնում էին իրենց գրոհները եւ, ըստ աչքի տեսածի, պետք է, որ ջախճախված լինեին՝ նետվելով անդունդի երախը:

Խալիս բեյը ցանկացավ փետել գլխի մազերը, բայց գլուխը մազաթափ էր, ճաղատ:

- Ես ինչպե՞ս որսամ այդ սրիկա հայերին, ո՞ր հողն ու մոխիրը լցնեմ գլխիս...- Ոռնում էր բինբաշին:

- Այս ահավոր գոհերը քո իշուքյան արդյունքն են, բինբաշի: Քո փոխարեն ես կկրակեի գանգիս, որ մարտավարության փոխարեն փինաչություն եմ արել: Քո հաշիվների մեջ մեր դեմ կռվող հայկական գումարտակը տասնյոթ մրսած ու սոված հայերն են: Մենք դեմ ենք առել այս անիծված հայոց գերեզմանոցին եւ քո հաշվով, սպառելով հայերի կենդանի ուժը, այժմ կռվում ենք հազար տարվա մեռելների հետ...- Եվ ծիծաղեց, հռիռաց արտասովախառն ու հիստերիկ:

Բինբաշին կատաղության նոպայով բռնկված, զնդակահարեց իր տեղակալին: Նրա կիսախուփ աչքերից չարություն ու թույն էր թափվում: Վերստին ցանկացավ կրկնել գրոհը, բայց սպաների ատելավառ հայացքները հաջողության հույս չէին խոստանում: Եվ տատանեց, ընկրկեց:

- Նայիր, բինբաշի, ջախջախված հայերին, նայիր...

Անդունդի հակառակ ափին, ուր արդեն նրանց վնասել չէին կարող զենքերը, վեհապանծորեն եւ հաղթականորեն փողփողում էր եռագույնը: Ֆիդայիները բարձրանում էին լեռները: Ճակատամարտն ավարտված էր: Եվ շարունակվում էր պայքարը...

1991թ.

հուլիս-սեպտեմբեր
Կիրովական-Երեւան

Մկրտիչ Դիվինի Սարգսյան
Խաչված քաղաքը
վեպ
Распятый город
роман

Նկարիչ՝
Գեղ. խմբագիր՝
Տեխն. խմբագիր՝
Վերստուգող սրբագրիչ՝
Ա. Յարայան
Գ. Դովհաննիսյան
Է. Մարիկյան
Ն. Դարբինյան

Համակարգչային շարվածքը եւ մակետավորումը՝ «Նոյան Տապան»
հրատարակչության:

Մակետավորող՝ Ռ. Սահակյան

ИБ 7746

Հանձված է շարվածքի 07.08.96: Ստորագրված է տպագրության :
15.10.96: Ֆորմատ՝ 84x108 1/32: Թուղթ տպագրական N1: Տառատեսակ
«Գրքի սովորական»: Տպագրություն օֆսեթ, հրատ. մամ 12: Տպաքանակ
1000: Գինը՝ պայմանագրային:

«Հայաստան» հրատարակչություն, ՓԲԸ, Երևան - 9, Ա. Իսահակյան 28:
Издательство "Айастан", АОЗТ, Ереван 9, ул. А. Исаакяна, 28.
Հեռ. 52 85-20, 52 44-96

Տպագրված է «Արտաշատի տպարան» ՓԲԸ
տպարանում:
Արտաշատ, Մանուշյանի 7:



«Հայաստան» 1996

